Ս. Ս. ՄԱՅԻԼԵԱՆ

ՈՍԿԵՓՈՐԻՆ

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ

ՄԱՍ Բ



1993

Ս. Ս. ՄԱՅԻԼԵԱՆ

ՈՍԿԵՓՈՐԻԿ

կամ

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ

ՄԱՍՆ Բ

1993

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱՉԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցու հաւատաւոր զաւակներից Սարգիս Մայիլեանը իր «Ոսկեփորիկ»-ի երկրորդ պրակով շարունակում է հաղորդութեան պահերը՝ սահուն եւ անկեղծ հարց ու պատասխաններով Հայ Եկեղեցու մասին: Պարզ և անպաճոյճ, բայց եւ իւրայատուկ այս **Քրիստոնէականով,** հեղինակը բնաւ էլ յաւակնութիւն չունի սպառելու Հայ Եկեղեցուն վերաբերող բոլոր հարցերը, այլ նախորդ պրակին հարազատ մնալով, իր հաւատակիցներին է ներկայացնում Հայ Եկեղեցին իր էութեան եւ դերի մէջ:

Օգտակար գիտութիւն դարձնելով եկեղեցու մասին գիտելիքները, հեղինակը ցանկանում է իր զրոյցներին մասնակից դարձնել բոլորին հավասարապէս: Երանի՜ նրան, որ ճշմարտութեանը մօտենալու հանդիսարան կդառնայ, հաւատքով լոյսի եւ յոյսով՝ սիրոյ:

Սիրելի ընթերցող, բա՛ց «Ոսկեփորիկ»-ի էջերը եւ կարդա, լծակից եղիր հաւատքին ու սաղմոսերգուի նման օրհնաբանիր, «Տէրն է իմ օգնականը եւ փրկիչը»: Ամէն:

ԱՍՈՂԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՐԻՍՏԱԿԷՍԵԱՆ

Ա. ԾԻՍԱԿԱՆ ԵՒ ԴԱՒԱՆԱԿԱՆ ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՒ ԱՅԼ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՄԻՋԵՒ

1. ՊԱՏԿԵՐԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ

Հարց.- Ի՞նչ է պատկերապաշտութիւնը:

Պատասխան.- Պատկերապաշտութիւնը պատկերներին պաշտամունք մատուցելն է, երկրպագելը: Պատկերապաշտութիւնը յոյն Եկեղեցու առանձնայատկութիւնն է: Դրան հակառակ, բոլոր նրանք, ովքեր դէմ են աստուածապաշտութեան ժամանակ պատկերների գործածութեանը, կոչուեցին պատկերամարտներ: Յոյն Եկեղեցու պատմութիւնը լեցուն է այդ երկու ուղղութիւնների անզիջում պայքարով: Բիւզանդական շատ կայսրեր (Լեւոն Իսաւրեցի, Կոստանդին Կոփրոնիմոս, Լեւոն Դ, Լեւոն Ե Հայկազն եւ այլն), լինելով համոզուած պատկերամարտներ, փորձեցին վերացնել պատկերների գործածութիւնը: Ընդդիմադիր կողմն էլ իր հերթին պայքարում էր նրանց դէմ: Երկուստէք հիմնաւորում էին իրենց գաղափարները, տարբեր փաստարկներ բերելով թէ՛ Ս. Գրքից, թէ՛ Աւանդութիւնից: 754 թ.-ին Բիւզանդիայի պատկերամարտ կայսրերը մի ժողով գումարեցին Պոլիսում, ուր 338 հոգեւորականների մասնակցութեամբ դատապարտուեց պատկերապաշտութիւնը եւ կայսրութեան տարածքում սկսեցին հալածել պատկերապաշտներին: Որոշ ժամանակ անց յաղթանակեցին պատկերապաշտները եւ Նիկիայում գումարեցին եօթներորդ Տիեզերական ժողովը (787 թ.): Ժողովն անօրինական համարեց նախորդ ժողովը՝ իր որոշումներով հանդերձ: Չնայած, որ յետագայում պատկերամարտները գլուխ բարձրացրեցին եւ ընդդիմացան, Տիեզերական է ժողովը ընդունուեց որպէս վերջնական, եւ պատկերամարտութիւնը պարտուեց: Յետագայ ժողովները հաստատեցին է Տիեզերական ժողովի որոշումները եւ պատկերապաշտութեան ուղղափառութիւնը: Այսպիսով, աւելի քան հարիւր տարի տեւած այս «պատերազմը» աւարտուեց պատկերապաշտութեան վերջնական յաղթանակով, որն էլ մինչ հիմա գոյութիւն ունի Ուղղափառ եկեղեցիներում: Լատին եկեղեցին եւս ընդունեց պատկերապաշտութիւնը (Նիկիայում գումարուած է Տիեզերական ժողովը եղաւ վերջինը, որի տիեզերականութիւնը ճանաչեցին մի-

աժամանակ եւ՝ Հռոմի եկեղեցին, եւ՝ Ուղղափառ եկեղեցին):

Այժմ մի քանի խօսք Հայ եկեղեցու դիրքորոշման մասին:

Հայոց եկեղեցիները ունեն խաչաձեւ կառուցուածք, ուր չորս սիւների վրայ ամրացուում է վեղարաձեւ գմբէթը՝ համաձայն Լուսաւորչի տեսիլքի: Եկեղեցու բեմը միշտ նայում է դէպի արեւելք, որպէս օրինակ արեգակի՝ լոյսի, իսկ մուտքը՝ արեւմուտք, խորհրդանշելով հեթանոսութիւնից դէպի աստուածային լոյսի գալը: Հայ եկեղեցին իր ամենօրեայ կարիքների համար օգտագործում է զանազան եկեղեցական սպասքներ, աստուածապաշտական տարբեր իրեր: Բոլոր այդ պարագաները՝ խաչերը, պատկերները եւ այլն, օրինում են եւ օծում՝ յետագայ օգտագործման համար: Պատկերները եկեղեցում ընտրւում եւ ընդունւում են յատուկ սկզբունքով: Մերժւում են կուռքերին յիշեցնող հեթանոսական պատկերներ: Հայ եկեղեցին սովորեցնում է երկրպագել միայն Աստծուն: Սրբերի պատկերները յարգելի են մեզ, որովհետեւ պատմում են նրանց աստուածահաճոյ վարքը, գործերը, որոնք Աստուած կատարել է նրանց միջոցով: Առհասարակ, ինչ պատկեր որ օրինւում է, միշտ շեշտւում է աղօթքի մէջ, որ Աստուած այդ պատկերը դարձնի «պատճառ երկրպագութեան համագոյ Երրորդութեան»:

Հայ եկեղեցում, ի տարբերութիւն պատկերապաշտութեան՝ գոյութիւն ունի պատկերայարգութիւն, որը յորդորում է հաւատացեալներին ձգտել աստուածահաճոյ կեանքի: Պատկերների յարգութիւնը երկրպագութիւն չէ: Պատկերապաշտութիւնը նշանակալից տեղ չի գրաւել Հայ եկեղեցու կեանքում: Հայ մատենագրութեան մէջ քիչ են այն երկերը, որոնք նուիրուած են պատկերապաշտութեանը կամ պատկերամարտութեանը: Առաւել յայտնի աշխատութիւնն է Վրթանէս Քերթողի «Պատկերամարտների մասին» երկը (7-րդ դար): Իր վարդապետական դիրքորոշումը այդ խնդրի վերաբերեալ, Հայ եկեղեցին ճշտել էր դեռ իր սկզբնաւորման ժամանակ եւ ամենեւին էլ նպատակայարմար չի գտել խառնուել երկու մեծ կայսրութիւններում (Բիւզանդիա, Հռոմ) ծաւալուող դաւանական վէճերին, որոնք իրենց դիրքորոշումը ճշտեցին միայն 8-9-րդ դարերում: Այդպիսի վէճերից օգուտ չկար՝ վնասից բացի:

Դեռեւս առաջին դարում հայոց մէջ յայտնի էին Ս. Դաստառակի եւ Աստուածամօր պատկերի պատմութիւնները: Ս. Դաստառակը (դաստառակ՝ նշանակում է թաշկինակ, երեսի սրբիչ) կամ Յիսուսի «անձեռագործ պատկերը», ըստ աւանդութեան Հայաստան է բերել Աբգարի դեսպաններից մէկը՝ Անանը: Նրանք գնացել էին Յիսուսի մօտ՝ Աբգար թագաւորի նամակը յանձնելու: Այնտեղ Անանը փորձում է նկարել Քրիստոսին, բայց չի կարողանում: Յիսուսն էլ վերցնում է մի դաստառակ եւ դնում իր երեսին, որից յետոյ իր պատկերը նկարւում է դաստառակի վրայ: Այդ դաստառակը նա յայնձնում է Անանին, որն էլ բերւում եւ պահւում է Եդեսիայում:

Միւս աւանդութիւնը կապուած է Աստուածամօր պատկերի հետ: Երբ մահանում է Տիրամայրը, Բարդուղիմէոսը առաքեալների հետ չի լինում, եւ երբ նա վերադառնում է, նրան նուիրում են Ս. Կոյսի պատկերը՝ նկարուած փայտի վրայ: Նա էլ, գալով Հայաստան, իր հետ բերում է այդ պատկերը, որն ըստ աւանդութեան, պահւում է Անձեւացեաց գաւառում:

Այստեղից է գալիս պատկերայարգութիւնը հայոց մէջ:

Հարց.- Բայց մի՞թէ եկեղեցում պատկեր դնելը ճիշտ է:

Պատասխան.- Ինչպէս տեսանք, Հայ եկեղեցու դիրքորոշումը պատկերների հարցում ուղղուած է ոչ թէ «անշունչ» պատկերին, այլ պատկերի միջոցով մարդկանց «համագոյ Ս. Երրորդութեան» երկրպագութեանն ուղղելու: Այդպէս էլ գրուած է «Մաշտոցում»՝ պատկերի օծման եւ օրհնութեան կարգում. «Սուրբ Տէր, սրբեա՛ զկենդանագիր պատկերս զայս սրբոց քոց վկայից՝ ի պատիւ եւ յերկրպագութիւն ամենասուրբ Երրորդութեանդ»:

Հարց.- Իսկ ինչո՞ւ են օծում պատկերները:

Պատասխան.- Հայոց մէջ օծում են ոչ միայն պատկերները, այլ նաեւ եկեղեցու շէնքը: Նոր կառուցուած եկեղեցին առանց օծուելու միայն շինութիւն է ու ոչ թէ՝ եկեղեցի: Այդպիսի շէնքում չի կարելի կատարել եկեղեցու խորհուրդներից եւ ոչ մէկը: Ինչպէս գիտենք, մկրտուելուց յետոյ քահանան դրոշմում է մկրտուածին Ս. Միւռոնով: Կնքուելուց յետոյ մկրտուածը դառնում է կենդանի տաճար Աստծու համար (Ա Կորնթ. Գ, 16): Եկեղեցու շէնքն էլ օծուելուց յետոյ է դառնում եկեղեցի, ուր կարելի է կատարել Ս. Պատարագը եւ խորհուրդները:

Հարց.- Ինչո՞վ են հիմնաւորել օծման այդ կարգը:

Պատասխան.- Յակոբ նահապետի յայտնի պատմութեան մէջ (Ծննդոց ԻԸ, 10-18), նա օծում է եւ Բեթէլ (թարգմանւում է՝ Աստծու տուն) անուանում այն քարը, որի վրայ դրել էր իր գլուխը: Այդ պատմութեան մէջ հայրերը տեսել են ապագայ եկեղեցու խորհրդանիշը: Ուրեմն, ամէն մի սպասք, պարագայ, որ մտնում է եկեղեցի՝ օգտագործման համար, պէտք է օծուի եւ օրհնուի, որպէսզի առանձնացուի միւս առարկաներից: Այս «առանձնացումն» էլ յաճախ կարելի է տեսնել եկեղեցիներում, երբ հաւատացեալները համբուրում են պատկերները: Իհարկէ, դա ոչ թէ երկրպագութիւն է, այլ՝ յարգանքի համբոյր, եւ ոչ թէ անշունչ առարկային, այլ նրա վրայ պատկերուած նախակերպարին:

2. ԱՆԱՐԱՏ ՅՂՈՒԹԵԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

Հարց.- Ի՞նչ է «Անարատ յղութեան» վարդապետութիւնը:

Պատասխան.- Քրիստոնէական Եկեղեցին իր պատմութեան գրեթէ բոլոր ժամանակներում միշտ եղել է պայքարի մէջ: Միշտ էլ փչել են զանազան վարդապետական քամիներ, զանազան գաղափարներ, որոնք, որպէս կանոն, իրենց համարել են ճիշտ, իսկ Եկեղեցուն՝ սխալ: Եւ միշտ էլ այդ վարդապետութիւնները եւ գաղափարները հակահարուած են ստացել Եկեղեցու կողմից՝ անարատ պահելով ճշմարիտ դաւանութիւնը:

Քրիստոսի մարդեղութեամբ սկսւում է նրա աստուածմարդկային կեանքը: Քրիստոս կատարելապէս ազատ էր մեղքից, որովհետեւ եթէ մեղաւոր լինէր, չէր կարող ներկայացնել այն կատարելութիւնը, որով նա միջնորդ դարձաւ մարդկանց եւ Աստծու միջեւ: Իր երկրաւոր կեանքում նա միշտ յաղթող էր: «Հաւատամքում» արտայայտուած է այն պարզ դաւանանքը, որ Քրիստոս կատարեալ մարդ է եւ Աստուած: Այս սկզբունքի դէմ էլ ժամանակին տարբեր մոլորեցնող վարդապետներ ելան եւ վէճեր առաջացրին Եկեղեցում:

Դրանցից ոմանք ժխտում էին Քրիստոսի Աստուածութիւնը, ոմանք՝ մարդկութիւնը, ոմանք խախտում Սուրբ Երրորդութեան դաւանանքը, ոմանք փրկագործութեան խորհուրդը, ոմանք բաժանում գցում Քրիստոսի Աստուածութեան եւ մարդկայնութեան մէջ եւ այլն:

Մինչեւ երրորդ դար, հայրերը իրենց ջատագովութեամբ հաստատեցին եւ փաստեցին քրիստոնէական ճշմարտութիւնները՝ միաբանութեամբ հանդէս գալով յունական գիտեմականների (գնոստիկներ), էբիոնիտութեան, մարկիոնականութեան եւ այլոց դէմ: Այնուհետեւ երեւան եկաւ սաբելականութիւնը, յետոյ՝ արիոսականութիւնը, նեստորականութիւնը: Սաբելականութիւնն ու արիոսականութիւնը դատապարտուեցին Ա եւ Բ Տիեզերական ժողովների կողմից, նեստորականութիւնը՝ Եփեսոսի Գ Տիեզերական ժողովում:

Ե դարում, Եկեղեցու մէջ նոր վիճաբանութիւններ սկսեց Եւտիքէսը, որը Քրիստոսի մէջ անտեսում էր մարդկային տարրը: Այնուհետեւ Պելագիոս անունով մի վանական սկսեց քարոզել, թէ մարդը մահկանացու է ստեղծուած եւ ծնւում է առաքինութեամբ ու առանց մեղքի. իր կատարեալ ազատութեամբ նա գնում է կամ դէպի առաքինութիւն, կամ էլ՝ դէպի մեղք: Ըստ Պելագիոսի, մարդկանց մի մասը իսկապէս մեղքից ազատ է եւ կարող է ապրել անմեղ կեանքով: Այսինքն՝ Ադամի մեղքը մեր մեղքը չէ, այլ միայն՝ Ադամի: Հետեւաբար, Պելագիոսը մերժում է «սկզբնական մեղքը»-ի գոյութիւնը: Եկեղեցին, իհարկէ, դուրս եկաւ Պելագիոսի դէմ:

Թ դարում Հռոմի Եկեղեցին, ազդուելով Պելագիոսի գաղափարներից, սկսեց դաւանել Ս. Կոյսի անարատ յղութիւնն ու ծնունդը՝ Յովակիմից եւ Աննայից, բայց յետոյ հրաժարուեց այդ դաւանանքից: Մօտ հազար տարի անց՝ 1854 թ.-ին, Պապն ընդունեց եւ կանոնացրեց այդ սկզբունքը, դաւանելով, որ Ս. Կոյսը ծնուել է Յովակիմից եւ Աննայից առանց ադամական մեղքի: Այս է «Անարատ յղութեան» վարդապետութիւնը: Հայ եկեղեցին մերժում է այդ վարդապետութիւնը եւ ընդունում է, որ Ս. Կոյսը ծնուել է ադամական մեղքով, բայց Աստուածային մեծ ուխտի կատարման համար վայելել է մի առանձին շնորհ, իւրայատուկ օրհնութիւն (Ղուկաս Ա, 30), որովհետեւ մայր պիտի լինէր Աստուածորդու: Այդ առանձնաշնորհման մասին գրուած է Ղուկասի Աւետարանի առաջին գլխում:

Հարց.- Հռոմի Եկեղեցին ինչպէ՞ս է հիմնաւորում «Անարատ յղութեան» վարդապետութիւնը:

Պատասխան.- Հիմնականում վկայակոչում է Ծննդոց Գ, 15-ը, Ղուկաս Ա, 28 -ը եւ ուրիշ համարներ:

Ղուկաս Ա 28. - *«Ողջոյն քեզ, ով շնորհընկալ կոյս, Տէրը քեզ հետ է. դու օրհնեալ ես կանանց մէջ»:*

Ըստ կաթոլիկների, այս առանձնաշնորհումը պիտի արտայայտուէր նրա «անարատ յղութեամբ», մինչդեռ Աստուածամօր մեծութիւնն այն է, որ նա լինելով մեզ նման մեղաւոր, Աստուածային ծրագրի իրականացման միջոց դարձաւ: Դրանով իսկ մեզ համար օրինակ եղաւ թէ՛ նրա հաւատը, թէ՛ նրա վստահութիւնը Աստծու խօսքին, թէ՛ նրա խոնարհութիւնը:

Ծննդոց Գ 15. - *«Եւ ես թշնամութիւն եմ դնում քո եւ կնոջ մէջտեղ, քո սերունդի եւ նրա սերունդի մէջտեղ. նա քո գլուխը կջախջախի եւ դու նրա գարշապարը պիտի խայթես»:*

Այս համարում տեսնելով այն *«կնոջը»,* որի սերունդը (Քրիստոս) պիտի ջախջախէր օձին, Հռոմի եկեղեցին ընդունում է, որ ի սկզբանէ Աստուած պատրաստել եւ պահել էր «այդ կնոջը», նրան ազատելով ադամական մեղքից, այդ մեծ գործի համար:

Ինչ խօսք, որ «այդ կինը» պիտի օրհնեալ լինէր բոլոր կանանցից, բայց նա եւս պիտի կարիք ունենար փրկչի, որի մասին Ս. Կոյսը ասում է իր օրհներգութեան մէջ (Ղուկ. Ա, 46-47). «Իմ անձը փառաւորում է Տիրոջը, եւ իմ հոգիս հրճւում է իմ Փրկիչ Աստուծով»: Այդ *«թշնամութիւնը»* պարզ երեւում է ամբողջ Ս. Գրքի մէջ. նրա բոլոր էջերում հանդիպում ենք այդ *«թշնամութեանը»,* որն իրականացաւ Ս. Կոյսի միջոցով: Քրիստոսն էր այդ *«թշնամութեան»* գագաթնակէտը, որը ջախջախեց օձի գլուխը: Դա թշնամութիւն էր բարու եւ չարի, խաւարի եւ լոյսի միջեւ: Եկեղեցու հայրերը այդ համարի մէջ տեսել են ոչ թէ Եւային, այլ՝ Ս. Կոյսին, որի մէջ այդ *«թշնամութիւնը»* մարդեղացաւ: Առաջին կնոջ եւ օձի բարեկամութիւնից մեղքն ու մահը առաջացաւ, իսկ այս «թշնամութիւնը» փրկարար եղաւ մարդկանց համար: Հետեւաբար, Ծննդոցի այդ համարը մարգարէութիւն է Ս. Կոյսի եւ նրա սերնդի մասին եւ ամենեւին էլ այստեղից չի հետեւում, որ Ս. Կոյսը պիտի ծնուէր անարատ յղութեամբ: Ս. Կոյսն իր կեանքով, վարքով, հաւատով, խոնարհութեամբ այնքան մեծ է եւ վեհաշուք, որ ամենեւին կարիք չունի մարդկանց կողմից աւելորդ անհարկի «փառաբանման»:

3. ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ԲԽՄԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

Հարց.- *Ի՞նչ է «Ս. Հոգու Բխման» վարդապետութիւնը:*

Պատասխան.- Ս. Հոգու մասին Տիեզերական Ա-Գ ժողովներում ընդունուել է հետեւեալ սկզբունքը. Սուրբ Հոգին բխում է միայն Հայր Աստծուց, բայց Որդին կարող է ուղարկել նրան: Այս ձեւակերպումը ընդունելի է եղել Նախնի Եկեղեցում: Զ-է դարերում այդ սկզբունքին աւելացուեց «յՈրդւոյ» (լատիներէն՝ ֆիլիօքուէ) յաւելումը, որը Կարլոս Մեծ կայսրը պահանջեց մտցնել Հաւատամքի մէջ, սակայն Յովհան Ը Պապը չընդունեց եւ դատապարտեց այդ արարքը: Յետագայում (ԺԱ դար) Հռոմի Բենեդիկտ Պապը ընդունեց այդ յաւելումը եւ այն աւելացրեց Հանգանակին: Դրանով իսկ Կաթոլիկ Եկեղեցին դուրս եկաւ իր իսկ վարդապետութեան դէմ: Եթէ Հռոմի Պապը անսխալական է դաւանական հարցերում, ապա այդ անսխալականութիւնը ժամանակային սահմանափակում պէտք է չունենայ: Հետեւաբար, եթէ Պապը ընդունում է որեւէ որոշում, իսկ մի ուրիշ Պապ ընդունում է դրան հակառակ որոշում, ապա խախտւում է Պապի «անսխալականութիւնը», անկախ այն բանից, թէ երբ է ընդունուել այդ որոշումը: Ինչպէս արդէն գիտենք, այդ յաւելման պատճառով էլ Հռոմի եւ Բիւզանդիայի եկեղեցիները վերջնականօրէն բաժանուեցին:

Հայ եկեղեցին հաւատարիմ մնալով Նախնի Եկեղեցուն, չընդունեց այդ յաւելումը եւ մերժեց այն:

Ինչ խօսք, որ այս դժուարութիւններն ու հակամարտութիւնները հետեւանք են Ս. Երրորդութեան մասին եղած վարդապետութեան, որն անչափ դժուար եւ անհնար է հասկանալ կամ պատկերացնել միայն տրամաբանութեամբ. անհրաժեշտ է որպէս մեկնակէտ ունենալ ե՛ւ հաւատը, ե՛ւ Ս. Գիրքը, ե՛ւ Հայրերի մեկնութիւնները եւ այլն:

Աւետարանում Ս. Հոգին ներկայացւում է որպէս մի զօրութիւն, որ գործում է մարդկանց մէջ զանազան կերպերով: Ս. Հոգին մի դէպքում ներկայացւում է որպէս շունչ, քամի, մի ուրիշ դէպքում՝ աղաւնի, հրեղէն լեզու եւ այլն: Այս ամէնը բնորոշում է ոչ թէ նրա էութիւնը, այլ՝ գործունէութիւնը: Մենք գիտենք, որ Ս. Հոգին Երրորդութեան մի անձն է. իբրեւ կատարեալ Աստուած

նա հաւասար է Հօրը եւ Որդուն: Եւ բոլոր ստորոգելիները, որ տրուած են Հօրը եւ Որդուն, կարելի է վերագրել նաեւ Ս. Հոգուն:

Ինչպէս Քրիստոսի աստուածային եւ մարդկային բնութիւնների փոխյարաբերութեան հարցի քննարկումը տրոհեց Արեւելեան Եկեղեցին (Քաղկեդոնի ժողովը), այնպէս էլ Ս. Հոգու բխման հարցը պատճառ եղաւ Արեւելեան եւ Արեւմտեան եկեղեցիների մեծ պառակտմանը: Այդ ժամանակներում հարցը դրուել էր այսպէս. Ս. Երրորդութեան առաջին անձը՝ Հայրը, անսկիզբ է եւ անպատճառ, երկրորդ անձը՝ Որդին, ծնունդ է Հօրից եւ երրորդ անձը՝ Ս. Հոգին, բխելիութիւն է: Հետեւաբար, հարց է ծագում, թէ այդ բխելիութիւնը ումի՞ց է՝ Հօրից, Որդո՞ւց, թէ՞ երկուսից:

Բոլոր Արեւելեան եկեղեցիների ընդունած դաւանանքի համաձայն (այդ թւում նաեւ Հայ եկեղեցու) Ս. Երրորդութեան մէջ մէկ բացարձակօրէն «անսկիզբ» էակ կայ, Հայրը՝ որպէս պատճառ եւ միակ սկզբունք միւս երկու անձերի՝ մէկի ծննդի եւ միւսի բխման: Այս ըմբռնումը ընդունելի էր նոյնիսկ Քաղկեդոնից յետոյ՝ մինչեւ Զ-է դարերը: Այդ ժամանակներում յոյն եւ լատին եկեղեցիները վէճ չունէին «բխման» հարցում: Սկսած է դարից Եւրոպայում սկսեցին օգտագործել նաեւ «եւ յՈրդւոյ» յաւելումը, որն էլ ԺԱ դարում առաջ բերեց մեծ պառակտումը:

Եւ այսպէս, Հռոմի Եկեղեցին ընդունեց, որ Սուրբ Հոգին բխում է ոչ միայն Հօրից, այլ նաեւ՝ Որդուց, մինչդեռ Յոյն Եկեղեցին (Ուղղափառները) ընդունեց, որ Ս. Հոգին բխում է միայն Հօրից:

Հայ եկեղեցու դիրքորոշումը այդ խնդրի վերաբերեալ հիմնուած Աւետարանի այն պարզ վկայութեան վրայ, ուր Յիսուս ասում է. *«Երբ գայ Մխիթարիչը, որին առաքելու եմ Հօրից, Ճշմարտութեան Հոգին, որն ելնում է Հօրից, նա կվկայի իմ մասին» (*Յովհ. ԺԵ, 26): Գրաբարում՝ *«զոր ես առաքեցից ձեզ ի Հօրէ, զՀոգին Ճշմարտութեան՝ որ ի Հօրէ ելանէ»:* Այսինքն՝ Սուրբ Հոգին բխում, ելնում է միայն Հօրից: Բայց կայ մի ուրիշ համար (Յովհ. ԺԶ, 14), ուր Յիսուս ասում է. *«Նա ինձ կփառաւորի, ինձնից կառնի եւ ձեզ կպատմի»:* Գրաբարում՝ «Նա զիս փառաւորեսցէ, զի յիմմէ անտի առնուցու եւ պատմեսցէ ձեզ»: Այս երկու վկայութիւններում օգտագործուած բայերը բնագրում տարբեր են: «Բխման» ջատագովները նոյնացնում են այդ բայերը եւ այդպիսով ստանում «Բխման» հիմնաւորումը: Բայց, եկեղեցու հայրերը երբեք էլ չեն նոյնացրել այդ բայերը, աւելին, օգտագործման ձեւն ու տեղը համոզում են, որ երկրորդ դէպքում *«կառնի»* բայը օգտագործուած է ոչ թէ «ելնել» կամ «ծագել» իմաստով, այլ՝ առաքելութեան: Այսպէս՝ «Ինձնից կառնի եւ ձեզ կպատմի» դարձուածքում Յիսուս ակնարկում է աշակերտների առաքելութիւնը, քանի որ Մխիթարիչն արդէն խոստացուած էր աշակերտներին: Յաջորդ համարում (Յովհ. ԺԶ, 15) Յիսուս ասում է. *«Ամէն ինչ, որ Հայրն ունի, իմն է, դրա համար ասացի ձեզ, որ իմից կառնի ու ձեզ կպատմի»:* Բնագրում այս երկու համարների մէջ օգտագործուած բայերը («առնել», «ընդունել») նոյնն են եւ տարբերւում են միայն ժամանակով. ԺԶ, 15-ում ժամանակն ապառնի է, իսկ ԺԶ, 16-ում՝ ներկայ: «Բխման» ջատագովները այստեղից եզրակացնում են, որ եթէ ամէն ինչ, որ ունի Հայրը, նաեւ Որդունն է, ուրեմն Ս. Հոգին, որ բխում է Հօրից, բխում է նաեւ Որդուց: Այս տրամաբանութիւնը անընդունելի է եղել հայրերի կողմից (տե՛ս Տաթեւացու մեկնութիւնը ստորեւ), որովհետեւ նման դատողութեամբ կստացուի, որ Որդին էլ ծնուած է Ս. Հոգուց, որովհետեւ ինչ որ իր բնութեան մէջ ունի Հայրը, նոյնն էլ պէտք է ունենայ Սուրբ Հոգին, որպէս «համագոյ» Հայր Աստծուն: Մինչդեռ Հաւատամքը թելադրում է, որ Որդին «ծնուած է Հայր Աստծուց», եւ «Ս. Կոյս Մարիամից կատարելապէս ծնուեց Ս. Հոգիով»: Ուրեմն, «առնել» բառն այստեղ օգտագործուած է առաքելութիւն ստանալու իմաստով, բայց ոչ երբեք բնութեան, էութեան բխումով: Միւս կողմից «Բխման» վարդապետութեան համաձայն ստացւում է երկու սկզբնապատճառ, երկու աղբիւր եւ հետեւաբար ոչ թէ Երրորդութիւն, այլ՝ չորրորդութիւն, մինչ կայ մէկ սկզբնապատճառ, որից ծնւում է Որդին եւ բխում է Հոգին:

Ս. Հոգին քրիստոնէական վարդապետութեան մէջ կարեւոր տեղ է գրաւում, քանի որ ոչ միայն Երրորդութեան մի անձնաւորութիւնն է, այլ նաեւ Աստծու շնորհքի միջնորդը: Նրա միջոցով Աստուած իր շնորհքները պարգեւում է մարդկանց: Մարդը միշտ ձգտում է չարին աւելի, քան բարուն: Ուստի Աստուած Ս. Հոգին ուղարկեց, որպէսզի օգնի մարդկանց յաղթելու չարին եւ արժանացնելու աստուածային սրբութեանն ու փառքին:

Այսպիսով, մեր եկեղեցին Որդու համար ասում է «Յաւիտենից ծնունդ»,

իսկ Ս. Հոգու համար՝ «Յաւիտենից բխումն»: Ինչպէս տեսանք, դժուար է բացատրել այս երկու բառերի տարբերութիւնը, սակայն նրանք ամենեւին նոյնը չեն: Հայրերը Ծնունդի եւ Բխման այդ յարաբերութիւնը բացատրելու համար բերել են հետեւեալ պարզ օրինակը.

գաղափարի ծնունդը մարդու մէջ - Ծնունդ, եւ

խօսքի արտաբերումը - Բխում,

որոնք չնայած միեւնոյն խորհուրդն են արտայայտում, սակայն իրարից տարբեր բաներ են: Մենք չենք կարող իմանալ, թէ ինչո՞ւ Որդին Ծնունդ է, Հոգին՝ Բխում կամ թէ ինչո՞ւ Որդին Ծնեալ է եւ ոչ թէ Ծնող եւ բխող. կամ ինչո՞ւ Հոգին բխեալ է եւ ոչ Ծնող, եւ կամ ինչո՞ւ Հայրը ծնող է եւ բխող, եւ ոչ ծնեալ եւ բխեալ: Այս ամենի մէջ առանց Աստծու ամենազօր օգնութեան եւ յայտնութեան անհնար է գլուխ հանել, ուստի եւ վստահելով մեր հայրերին, հիմնուելով Ս. Գրքի ու Եկեղեցու Աւանդութեան վրայ, այդ բարդ գաղափարները պէտք է հաւատով ընդունել եւ պաշտպանել ամէն մի նորահնար հերձուածից այնպէս, ինչպէս ժամանակին մեր հայրերն այդ արեցին՝ մեզ աւանդելով ճշմարիտ դաւանութիւնը:

Հարց.- Ինչպէ՞ս են հիմնաւորել «Բխման» վարդապետութիւնը կաթոլիկ հայրերը:

Պատասխան.- Վերեւում արդէն նշեցինք Բխման վարդապետութեան հիմնական ակունքները: Աւելի ամփոփ այս մասին կարդում ենք Տաթեւացու «Գիրք հարցմանցում» (էջ 62):

«Նրանք («Բխման» ջատագովները) ասում են, որ Ս. Հոգին բխում է Որդուց, քանի որ.

ա. յաճախ Ս. Հոգին անուանւում է Քրիստոսի Հոգի (Հռոմ., Ա, 9, Գաղ., Դ, 6 եւ այլն),

բ. Յիսուս փչեց առաքեալների վրայ եւ ասաց՝ *«Առէք Հոգին Սուրբ...»* (Յովհ., Ի, 22),

գ. Յիսուս ասաց. *«Գնամ եւ կառաքեմ Ս. Հոգին...»* (Յովհ., ԺՁ, 7),

դ. Յիսուս ասաց. *«Ինձնից կառնի եւ ձեզ կպատմի»* (Յովհ., ԺՁ, 14),

ե. Յիսուս ասաց. *«Նա ինձ կփառաւորի»* (Յովհ., ԺՁ, 14) եւ այլն»:

Եւ Տաթեւացին նոյն տեղում հերքում է այդ փաստարկները եւ տալիս իր մեկնութիւնը.

«ա. Քանի որ Ս. Հոգու գործունէութիւնը սկսուեց Քրիստոսի աշխարհ գալով, դրա համար էլ նրան անուանում են Քրիստոսի Հոգի:

բ. Եթէ փչելը նշանակում է բխելը, ուրեմն Որդին էլ Ս. Հոգու ծնունդն է (ինչպէս ասաց հրեշտակը Ղուկ. Ա, 35-ում), այնինչ դրանով յայտնւում է միմեանց գործակից լինելը:

գ. Եթէ ասենք, որ Հոգին առաքեց Որդին, ապա նոյն ձեւով էլ Որդին ե՛ւ Հօրից է, ե՛ւ Հոգուց, մինչդեռ այդտեղ ցոյց է տրուած Աստծու Կամքի հաճութիւնը:

դ. Այստեղից ոչ թէ բխումն է հետեւում, այլ՝ նրանց միութիւնը:

ե. Եթէ Հոգին փառաւորում է Որդուն եւ այդտեղից հետեւի, որ Հոգին ծնւում, բխում է Որդուց, ապա քանի որ Հայրն էլ փառաւորում է Որդուն (Յովհ. ԺԲ, 12), ուրեմն Հայրն էլ ծնւում է Որդուց. մինչդեռ այստեղ ցոյց է տրւում պատուի հաւասարութիւնը Որդու եւ Ս. Հոգու միջեւ»:

Հայ կաթոլիկ հայրերն էլ միշտ ձգտել են ապացուցել «Բխման» վարդապետութեան ուղղափառութիւնը եւ մեղադրել են Հայ եկեղեցուն, այն չընդունելու համար: Որպէս կանոն, նրանք (Չամչեան, Աւետիքեան) «փաստարկներ» են բերել Հայ եկեղեցու հայրերի երկերից, ցոյց տալու համար, որ նրանք ընդունել են «Բխման» վարդապետութեան ուղղափառութիւնը: Ամենայայտնի օրինակներն են Ս. Գրիգոր Լուսաւորչի Վարդապետութիւնից մի համար (Ագաթանգեղոս, §362), Նարեկացու Մատեանի ԽԸ գլխի վերջին տողերը եւ այլն:

Ագաթանգեղոս, § 362. «Հայր յանձնէ, Որդի ի Հօրէ, Հոգին ի նոցունց՝ ի նոսին», որ թարգմանւում է. «Հայրը ինքն իրենից է, Որդին՝ Հօրից, Հոգին՝ նրանցից ու նրանց մէջ»:

Այստեղից էլ եզրակացնում են, որ Լուսաւորիչը նկատի ունէր Ս. Հոգու ելնելը Որդուց: Մինչդեռ հայրերը Լուսաւորչի այդ ասածը հասկացել են ոչ թէ որպէս բխումն երկուսից, այլ որպէս երկուսի բնութիւնից եւ մէկը նրանցից: Եւ ամենեւին «նրանցից մէկը» ասելը չի նշանակում նրանցից ծնուած լինել:

Մատեան, գլուխ ԽԸ.

«Եւ քեզ միայնոյ՝ սկզբանդ եւ անսկզբանդ,

ընդ սկզբանդ եւ սկզբնաւորիդ սկզբանց,

Սուրբ Երրորդութեանդ եւ միում Աստուածութեանդ

Փա՜ռք եւ իշխանութիւն յաւիտեանս»:

Այստեղից էլ եզրակացնում են, որ վերջին մասում Նարեկացին ակնարկում է «Բխումն» Որդուց. «սկզբնաւորիդ» եւ «սկզբանց», այսինքն՝ ե՛ւ Հօրից, ե՛ւ Որդուց է սկիզբ առնում Հոգին:

Մինչդեռ Նալեանը («Գիրք մեկնութեան») այդ հատուածը մեկնում է այսպէս.

«Եւ քեզ միայնոյ՝ սկզբանդ եւ անսկզբանդ» - վերաբերում է Հօրը, որը սկիզբն է Որդու ծննդեան եւ Հոգու բխման:

«Ընդ սկզբանդ» - Որդին է, ստեղծուածների գոյութեան սկիզբը:

«Սկզբնաւորիդ սկզբանց» - Հոգին է, սկզբնաւոր է Հօր Արարչութեան գործին, այսինքն՝ Արարչութեան ժամանակ (Սկզբում) Հօր եւ Որդու հետ էր»:

4. ՍՐԲԵՐԻ ԲԱՐԵԽՕՍՈՒԹԻՒՆԸ

Հարց.- Ի՞նչ է սրբերի բարեխօսութիւնը:

Պատասխան.- Բարեխօսութիւն նշանակում է բարեխօսել, միջնորդել մէկի համար: Քրիստոնէական ընկալումով բարեխօսութիւնը լինում է երկու տեսակ. մարդկանց համար Յիսուս Քրիստոսի բարեխօսութիւնը Աստծու առաջ եւ սրբերի բարեխօսութիւնը: Վերջինն էլ երկու տեսակ է լինում. ննջեցեալ սրբերի բարեխօսութիւնը եւ կենդանի հաւատացեալների բարեխօսութիւնը: Ննջեցեալ սրբեր ասելով պէտք է հասկանալ ննջեցեալ հաւատացեալներին, որոնք Յիսուսին միանալով կազմում են սրբերի բանակը: Յիսուսի ամբողջ կեանքը մի բարեխօսութիւն եւ միջնորդութիւն է մեզ համար, մարդկութեան համար: Հաւատացեալներն էլ միմեանց կարիքն ունենալով միշտ բարեխօսում են՝ աղօթելով միմեանց համար: Նոյնն էլ վերաբերում է ննջեցեալ հաւատացեալներին, որոնք իրենց աղօթքներով բարեխօս են մեզ համար: Բարեխօսութեան այսպիսի ընկալումը Նախնի եկեղեցում եւ բոլոր ուղղափառ եկեղեցիներում (նաեւ հայ եկեղեցում) համարւում էր ի սկզբանէ պարզ եւ երբեք վիճաբանութեան առարկայ չի եղել: Բարեփոխման շրջանից սկսած, կասկածի տակ դրուեց սրբերի բարեխօսութեան խնդիրը: Այն

նոյնացուեց Յիսուսի բարեխօսութեան հետ եւ մերժուեց: Այնինչ, երբեք էլ աւանդական եկեղեցիները սրբերի բարեխօսութեան իմաստը եւ երեւոյթը չեն շփոթել մեր Տիրոջ՝ Յիսուսի բարեխօսութեան եւ միջնորդութեան հետ: Ներկայ ժամանակներում էլ, «սրբերի բարեխօսութիւնը» քննադատւում է տեղի-անտեղի քրիստոնէական նոր ուղղութիւնների կողմից, որոնք մեծաւ մասամբ ծանօթ չեն հարցի ո՛չ պատմական եւ ո՛չ էլ դաւանական հիմնաւորումներին: Անգամ ոչ ծիսական եկեղեցիների հաւատացեալները դրանում տեսնում են որոշ «յետամնացութիւն», կարծելով, թէ հազարամեակների ընթացքում ձեռք բերուածը ժխտելով, դառնում են «առաջագնաց»: Ուստի, մինչ յիշեալ հարցին անցնելը, պէտք է լաւ պատկերացնենք, թէ ի՞նչ է Եկեղեցին, Քրիստոսի Եկեղեցին, որը Նա հիմնադրեց Իր կեանքը տալով, Իր արիւնը թափելով:

Բառացի «եկեղեցի» նշանակում է մարդկանց ժողով, եւ համարեա բոլոր լեզուներում այն ծագում է յունարէն «էքլիսիա» բառից, նոյն նշանակութեամբ: Այսինքն, եկեղեցին Յիսուս Քրիստոսի վարդապետութիւնը եւ Ս. Երրորդութեան դաւանանքն ընդունող հաւատացեալների ժողովն է, բազմութիւնը: Եկեղեցին Քրիստոսի մարմինն է: Եկեղեցին բաժանւում է երկու խմբի՝ Յաղթական եկեղեցի եւ Զինուորեալ եկեղեցի: Յաղթական եկեղեցին ննջեցեալ հաւատացեալների բազմութիւնն է, որոնք Յիսուսին հաւատարիմ եւ հնազանդ կեանք ապրելով՝ կռուեցին աշխարհի անհաւատութեան, մոլութեան, անիրաւութեան, մեղքի դէմ եւ յաղթական մահուամբ փոխուեցին առ Աստուած (Եբր., ԺԱ, 33-38): Յաղթական եկեղեցին անուանւում է նաեւ Անդրանկաց եկեղեցի:

Զինուորեալ եկեղեցին, Յիսուսի անունը դաւանող հաւատացեալների կենդանի բազմութիւնն է, ժողովուրդը, որ ապրում է այս աշխարհում, պայքարելով մեղքի, անիրաւութեան եւ Սատանայի չար զօրութիւնների դէմ, որպէս հրամանատար ու թագաւոր ունենալով Յիսուս Քրիստոսին: Զինուորեալ եկեղեցուն յաճախ անուանում են նաեւ Մարտնչող եկեղեցի: Զինուորեալ եկեղեցու հաւատացեալները զինուած լինելով Աստծու սպառազինութեամբ՝ պայքարում են այս կեանքում, դաւանելով Յիսուսին, վկայելով եւ քարոզելով Աւետարանի փրկարար վարդապետութիւնը:

Հաւատն է միացնում եկեղեցու անդամներին, եւ հաւատով են նրանք միանում Քրիստոսի հետ: Քրիստոս անհատի մէջ բնակուելով նրան դարձնում է Իր Եկեղեցու անդամ: Հաւատով է անհատը դառնում Աստծու զաւակ, որոնք իրար միանալով կազմում են Աստծու տաճար, որ սկիզբ է առնում երկրից եւ բարձրանում երկինք: Ս. Վարդան Մամիկոնեանն իր յայտնի ճառում ասում է. «Թէեւ մարմնով երկրի վրայ ենք, բայց հաւատով երկնքում ենք հաստատուած» (Եղիշէ):

Հետեւաբար Յաղթական եւ Զինուորեալ եկեղեցիները չի կարելի բաժանել, քանի որ այդ դէպքում խախտւում է Եկեղեցու միութիւնը: Յաղթական Եկեղեցին բաժանուած է Զինուորեալից միմիայն մարմնապէս, ըստ որում նրանք կապուած են իրար անքակտելի միութեամբ: Ուրեմն, ճշմարիտ եկեղեցին գոյութիւն չունի ո՛չ առանց Յաղթականի եւ ո՛չ էլ առանց Զինուորեալի: Յաղթական եկեղեցին Զինուորեալի յաղթութեան երաշխիքն է, իսկ Զինուորեալը՝ Յաղթականի հանդէսը: Որեւէ մէկի մերժումը զրկում է Եկեղեցուն իր էութիւնից: Ինչպէս մարդը, ժողովուրդը, ազգութիւնն ունի իր ներկան, անցեալը եւ ապագան, այնպէս էլ Եկեղեցին: Որպէս կենդանի միութիւն, նա ունի իր անցեալը՝ Յաղթական եկեղեցին եւ ներկան՝ Զինուորեալ եկեղեցին: Եկեղեցու ապագան Յիսուս Քրիստոսն է, Երկնքի թագաւորութիւնը, ուր նա առաջնորդում է իր հօտին՝ ժողովրդին, այսինքն՝ «եկեղեցուն»: Ուրեմն Յաղթական եւ Զինուորեալ եկեղեցին միասին են, մի են եւ բաժանուած չեն, ընդհակառակը՝ մէկ են Յիսուսի մէջ:

Այս միութեան մէջ է յաւիտենականութիւնը եւ ժամանակն այլեւս գոյութիւն չունի այնտեղ, քանի որ այն արժէք ունի միայն ներկայ՝ Զինուորեալի եկեղեցու համար, իսկ Յիսուսի մէջ այն անիմաստ է դառնում, որովհետեւ նա Սկիզբն է եւ Վերջը: Հետեւաբար, ամէն ինչ սկիզբ է առնում Յիսուսից, ընթանում է Յիսուսով եւ աւարտւում Յիսուսի մէջ: Ուրեմն, Եկեղեցու միութիւն նշանակում է, որ մէկ է բոլոր եկեղեցիների գլուխը՝ Յիսուս, մէկ է նրանց առաջնորդողը՝ Ս. Հոգին, մէկ է յոյսը, մէկ է հաւատը:

Եկեղեցին նաեւ Ընդհանրական է, քանի որ կախուած չէ որեւէ բանից. ամէն ոք, ով ընդունում է Յիսուսի վարդապետութիւնը եւ դաւանում Ս. Երրորդութիւնը, դառնում է նրա անդամ: Եկեղեցու ընդհանրականութիւնը

հիմնւում է նրա միութեան վրայ, որովհետեւ ընդհանրական կարող է լինել միայն այն, որ մէկ է:

Եկեղեցին նաեւ Առաքելական է, քանի որ հաստատեցին առաքեալները: Եկեղեցու առաքելականութիւնն էլ հիմքն է ընդհանրականութեան: Առանց առաքելականութեան Եկեղեցին չէր կարող ընդհանրական լինել:

Եկեղեցին նաեւ Սուրբ է, քանի որ սուրբ է նրա հիմնադիրը եւ գլուխը՝ Յիսուս Քրիստոս, որը սրբում եւ մաքրում է իր եկեղեցին:

Եւ այսպէս, Եկեղեցին ունի հետեւեալ չորս յատկանիշները. մի, ընդհանրական, առաքելական եւ սուրբ: «Հաւատամքն» աւարտւում է հէնց այդպիսի խօսքերով. «Հաւատամք եւ ի մի միայն ընդհանրական եւ առաքելական սուրբ Եկեղեցի», ուր նշուած է Եկեղեցու մի լինելը, ընդհանրականութիւնը, առաքելականութիւնը եւ սրբութիւնը:

Ընդհանրական Եկեղեցին իր մէջ ընդգրկում է մասնաւոր եկեղեցիներ՝ Հայաստանեայց, Հռոմէական Կաթոլիկ, Ուղղափառ եւ այլ եկեղեցիներ: Ըստ այդմ էլ, Հայ եկեղեցու ամբողջական անունն է՝ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցի, քանի որ՝

-Հայ եկեղեցին հիմնադրել են Թադէոս եւ Բարդուղիմէոս առաքեալները (առաքելականութիւն),

-Հայ եկեղեցին պահպանել է իր նախնականութիւնը (ընդհանրականութիւնը):

Այս հարցերում էլ միութիւն չկայ եկեղեցիների միջեւ. Հռոմի Կաթոլիկ եկեղեցին դէմ է Եկեղեցու Ընդհանրականութեանը, եւ ընդունում է, որ միայն ինքն է ճշմարիտ, ընդհանրական («կաթոլիկ» բառացի նշանակում է «ընդհանրական»): Ուղղափառներն էլ նոյնն են ասում իրենց համար, իսկ բողոքականութիւնը Ընդհանրականութիւնը դիտում է որպէս վերացական գաղափար:

Ընդհանրական Եկեղեցին ունի նաեւ սրբարար խորհուրդներ, որոնք եօթն են. Մկրտութիւն, Դրոշմ, Ապաշխարութիւն, Հաղորդութիւն, Պսակ ամուսնութեան, Ձեռնադրութիւն եւ Կարգ հիւանդաց:

Եօթը խորհուրդներից Բողոքական եկեղեցիները ընդունում են միայն երկուսը՝ Մկրտութիւնն ու Հաղորդութիւնը: Ըստ նրանց, եօթը խորհուրդները թուարկուած չեն Ս. Գրքում. բայց երկուսն էլ թուարկուած չեն: Ուստի, բաւա-

ռար է, որ այդ մասին յիշատակուած լինի Ս. Գրքում եւ հաստատուած՝ հայրերի գրուածներում:

Ամփոփելով, կարող ենք ասել, որ «Բարեխօսութեան» սկզբունքը հետեւանքն է Եկեղեցու միութեան, ընդհանրականութեան: Երկնային եւ երկրաւոր Եկեղեցիները (Յաղթական եւ Զինուորեալ), իբրեւ մի Եկեղեցի, մի Մարմնի տարբեր անդամներ, իհարկէ կապուած են իրար հետ. Յաղթական Եկեղեցին՝ իր բարեխօսութեամբ եւ Զինուորեալը՝ իր աղօթքով, քանի որ Եկեղեցու անդամները միմեանց աղօթքի կարօտ են:

Հարց.- Մի՞թէ բացի Յիսուսից ընդունելի է այլոց միջնորդութիւնը:

Պատասխան.- Ինչպէս արդէն խօսուեց նախորդ հարցում, պէտք չէ նոյնացնել Յիսուսի բարեխօսութիւնը սրբերի բարեխօսութեան հետ: Յիսուսի բարեխօսութիւնն ու միջնորդութիւնը մարդկային ազգը դատապարտութիւնից ազատելու եւ փրկելու համար է: Մինչդեռ Յաղթական եկեղեցու աղօթքը (բարեխօսութիւն) եւ Զինուորեալ եկեղեցու աղօթքը (ննջեցեալների համար) այլ են եւ համաձայն են Ս. Գրքի վարդապետութեան հետ (տես ստորեւ): Սրբերը նահատակուելով կամ ազնիւ, հաւատարիմ կեանք ապրելով թողել են իրենց աստուածահաճոյ գործերը եւ ուրախանում են, տեսնելով Զինուորեալ եկեղեցուն: Պարզ է, որ սրբերի հոգիները անձամբ բարեխօսում են Զինուորեալ եկեղեցու եւ նրա իւրաքանչիւր անդամի համար: Մենք էլ նրանց յիշելով, աստուածապաշտական կարգերի ժամանակ, հաստատում եւ պահում ենք Յաղթական եւ Զինուորեալ եկեղեցիների կապը: Յիշելով Աստծու առաջ նրանց սրբութեամբ ապրած կեանքը՝ խնդրում ենք, որ Աստուած նոյնպիսի կենցաղավարութիւն շնորհի նաեւ մեզ: Ամէն կիրակի հայ եկեղեցում, Պատարագի ժամանակ քահանան յիշատակում է սրբերին, այդպիսով խորհրդաւորաբար հաստատելով Եկեղեցու միութիւնը: Պատարագի այդ մասում, սարկաւագները անցնում են Սեղանի աջ կողմը եւ ձեռնամած կանգնում՝ սրբերին յիշատակելու համար: Աջ կողմն են կանգնում, որովհետեւ սրբերը արդէն արժանացել են աջակողմեան դասին՝ Յիսուսի հետ (Սեղանը Աստծու ներկայութիւնն է): Քահանան յիշատակում է գլխաւոր սրբերին, իսկ սարկաւագները՝ միւս սրբերին.

«Աստուածածնի Սրբոյ Կուսին Մարիամու եւ Յովհաննու Մկրտչին, Ստեփաննոսի Նախավկայի եւ ամենայն սրբոց եղիցի յիշատակ ի սուրբ Պատարագ աղաչեմք»:

Ժողովուրդը պատասխանում է.

«Յիշեա Տէր եւ ողորմեա»:

Այս պահին ժողովուրդը (զինուորեալները) միանում է սրբերին (Յաղթական Եկեղեցուն) եւ իրենց միասնական աղօթքով, որպէս մի եկեղեցի, մի մարմին, մէկ հոգի, փառաբանում Աստծուն:

Հարց.- Ի՞նչով է հիմնաւորւում սրբերի բարեխօսութիւնը:

Պատասխան.- Նախ Զինուորեալ եկեղեցին պարտաւոր է միշտ յիշել Յաղթական եկեղեցուն: Հանէք այդ յիշողութիւնը, եւ ոչինչ չի մնայ: Երբ մարդը կորցնում է իր յիշողութիւնը, կորցնում է իր մարդկայնութիւնը նոյնպէս: Եթէ մէկը մոռանում է իր մանկութիւնը, իր անցեալը, իր ժողովրդի անցեալը, ապա նա դադարում է պատկանել այդ ժողովրդին: Նոյնը կարելի է ասել նաեւ եկեղեցու համար, որպէս կենդանի մարմնի, կենդանի շինութեան, որի անցեալը Յաղթական եկեղեցին է: Ուստի զինուորեալ հաւատացեալները պարտաւոր են յիշել յաղթական հաւատացեալներին: «Յիշատակ յաւիտենից եղիցի արդար», - ասում է Դաւիթը (Սաղմոս ՃԺԱ, 6) կամ ինչպէս Սողոմոնն է ասում՝ «Յիշատակ արդարոց հանդերձ գովութեամբ» (Առակ. Ժ, 7): Եկեղեցու հայրերն էլ միշտ նշել են ննջեցեալներին յիշատակելու անհրաժեշտութեան մասին. Պօղոս առաքեալի աշակերտ Ս. Դիոնէսիոսն ասում էր. «Տօնեցէք, պատարագ մատուցէք նրանց յիշատակի համար, որոնք իրենք պատարագուեցին (զոհուեցին) Աստծու համար», իսկ Ոսկեբերանն ասում էր. «Մի՛ յապաղէք յիշատակել ննջեցեալներին, աղօթք մատուցելով նրանց համար, քանի որ բոլորս մի մարմին ենք Քրիստոսի մէջ եւ նրա անդամները»: Այդ միութեան մասին է գրում նաեւ Ս. Գրիգոր Լուսաւորիչը. «Իսկ նրանք, որ Քրիստոսի սիրոյ մէջ հաստատուած են, ազատւում են երեւացող վշտերից, ապրում են, գործակից եւ բարեխօս ունենալով սրբերին ու արդարներին» (Յաճախ., ԺԲ): Նախնի եկեղեցում միշտ էլ աղօթքների ժամանակ յիշել են սրբերին՝ խնդրելով նրանց բարեխօսութիւնը: Մեր շարական-

ներն յաճախ են աւարտւում Աստուածամօրն ուղղուած խնդրանքով՝ բարեխօսելու մեզ համար.

«Սրբուհւոյ Աստուածածնին բարեխօսութեամբ յիշեա՛,

Տէ՛ր, եւ ողորմեա՛»:

Ս. Գրքում (թէ՛ Հին եւ թէ՛ Նոր Կտակարանում) նկարագրուած մի քանի պատմութիւններում առկայ են ոչ միայն սրբերի աջակցութիւնը ապրողների կեանքում, այլեւ նրանց մասունքների միջոցով կատարուած հրաշագործութիւնները: Այսպէս, Եղիսէ մարգարէի ոսկորներին դիպչելուց յետոյ մեռած մի մարդ է կենդանանում (Դ Թագ., ԺԳ, 21), իսկ Պօղոսի թաշկինակով շատերն էին բժշկւում (Գործք ԺԹ, 12): Հետեւաբար, եթէ ննջեցեալ սրբերի մասունքները կարող են հրաշքներ գործել, ապա որքան առաւել են նրանց կենդանի աղօթքները (բարեխօսութիւնը):

«Ուստի վկաների այսքան բազմութիւն ունենալով մեզ շրջապատած»՝ մենք պարտաւոր ենք յիշել նրանց վարքը, նուիրումը, հաւատը, որպէս օրինակ ունենալով մեր կեանքի դժուարութիւնների ու փորձութիւնների ժամանակ: Հայ եկեղեցու Տօնացոյցի մէջ ընդգրկուած յիշատակելի սրբերը, իհարկէ չեն կարող ընդգրկել այդ բազմութիւնն ամբողջովին: Այդ առումով էլ, Հայ եկեղեցու հայրերը սահմանել են մի ընդհանուր տօն բոլոր սրբերի համար՝ «Տօն ամենայն սրբոց՝ հնոց եւ նորոց, յայտից եւ անյայտից»: Սրբերի այս ցանկը սկսւում է, բայց չի աւարտւում. այն ընդգրկում է մինչ հիմա եղող բոլոր սրբերին, վկաներին, Յիսուսի եւ Աւետարանի համար զոհուածներին եւ կընդգրկի նաեւ ապագայի վկաներին ու սրբերին:

Որեւէ սկզբունք, որ ընդունում է եկեղեցին, պէտք է բաւարարի նուազագոյնը երկու պայմանի.

ա. համաձայն լինի Ս. Գրքի սկզբունքների հետ, եւ

բ. հաստատուած եւ ընդունուած լինի հայրերի կողմից:

Ինչպէս տեսանք, «Սրբոց բարեխօսութեան» սկզբունքը բաւարարում է այդ պայմաններին:

Զինուորեալ եւ Յաղթական եկեղեցիների անքակտելի կապի մասին վկայութիւններն ու պատմական փաստերը անչափ շատ են: Եւ քանի որ այս կապը երկկողմանի է, ուրեմն ճիշտ է նաեւ հակառակը՝ սրբերի բարեխօսութիւնը:

Հարց.- Ինչ վկայութիւններ կան Ս. Գրքից, որ հաստատում են «Բարեխօսութեան» ճշմարտացիութիւնը:

Պատասխան.- Այդպիսի վկայութիւններով Ս. Գիրքը լեցուն է: Բայց քանի որ սրբերի բարեխօսութեան սկզբունքի «թշնամիները» պնդում են, թէ նման փաստարկ չկայ Ս. Գրքում, ուստի ստորեւ կթուարկենք «Բարեխօսութեան» վերաբերող կարեւոր համարներից մի քանիսը:

Ա. Աբրահամը բարեխօսում է մեղքի մէջ կորած սոդոմացիների համար (Ծննդոց ԺԸ), իսկ Աստուած պատասխանում, որ եթէ այնտեղ գտնուեն թէկուզ տասը արդարներ, ապա քաղաքը չի կործանուի:

Արդէն ասացինք, որ Եկեղեցու միութեան տեսակէտից կարեւոր չէ, թէ բարեխօսողը այդ պահին կենդանի է, թէ ննջեցեալ: Նրանք միշտ կենդանի են Աստծու առաջ, թէեւ բերուած օրինակներն ընդգրկում են երկու դէպքն էլ:

Բ. Եզեկիա թագաւորի օրօք, զատկի տօնակատարութեան ժամանակ ժողովուրդը մեղք գործեց եւ առանց մաքրուելու ճաշակեց զատիկը: Եզեկիա թագաւորը աղօթեց. *«Տէր Աստուած, ներիր այս բոլորին, որ չեն մաքրուել սրբութեան համեմատ»:* Եւ Աստուած լսեց Եզեկիային ու ներեց ժողովրդին (Բ Մնաց., L, 19):

Գ. Յոբ Երանելին միշտ աղօթում էր իր որդիների համար (Յոբ, Ա, 5): Յոբի բարեկամները յիշեցնում են Յոբին, թէ սրբերը նրա ձայնը չեն լսի՝ իբրեւ ամբարիշտի ձայն (Յոբ, Ե, 1): Այսինքն՝ ակնյայտ է բարեխօսական աղօթքի ներգործութիւնը: Այս օրինակներն առաւել արդիական են հիմա, երբ իրար համար աղօթելու փոխարէն, դատապարտում ենք իրար:

Դ. Պօղոս առաքեալը աղօթում էր իր ժողովրդի համար (Եփես., Գ, 14): Ամէն մէկի պարտքն է աղօթել ժողովրդի համար: Մեր հայրերի, սուրբ նահատակների բարեխօսական աղօթքն է, որ մենք այսօր ապրում ենք եւ կանք ու պիտի լինենք, եթէ հիմա միանանք սրբերի բանակի բարեխօսական աղօթքին:

Ե. Ժողովուրդն աղօթում է Պետրոսի համար, որ բանտում էր (Գործք, ԺԲ, 5): Այստեղ էլ առկայ է հակառակ ուղղուածութիւնը՝ ժողովուրդն է աղօթում անհատի համար: Այսինքն՝ բարեխօսական աղօթքն երկու դէպքում էլ ունի կենսական ներգործութիւն:

Զ. Ստեփանոս Նախավկան աղօթում է իրեն սպանող ժողովրդի համար (Գործք, Ե, 59): Մահուան շեմին կանգնած մարդը բարեխօսում է իրեն սպանողների համար ու այդպէս միանում Յաղթական եկեղեցուն եւ բնականաբար շարունակելու է իր բարեխօսութիւնը:

Է. Երբ Կայէնը սպանեց իր եղբօրը՝ Աբէլին, Աստուած ասաց. *«Քո եղբօր արեան ձայնը գետնից բողոքում է»* (Ծննդոց, Դ, 10): Պօղոս առաքեալն էլ ասում է, որ արդար Աբէլի արիւնը *«հիմա էլ խօսում է, թէեւ մեռել է»* (Եբր., ԺԱ, 4): Ո՞վ է այստեղ բողոքողը եւ խօսողը. անշուշտ ոչ թէ թափած արիւնը, այլ նրա կենդանի հոգին:

Ը. *«Եւ Տէրն ասաց. Եթէ Մովսէսն ու Սամուէլն էլ կանգնեն իմ առաջ, իմ սիրտը այս ժողովրդի վրայ չի լինելու»* (Երեմ., ԺԵ, 1): Այսինքն՝ Աստծու առաջ ննջեցեալները (Մովսէս, Սամուէլ) կարող են բարեխօսել ապրողների համար:

Թ. Մովսէսը Աստծու շնորհն է խնդրում ի սէր Աբրահամի, Իսահակի եւ Յակոբի, ինչպէս եւ Սողոմոնն Աստծու աղաչելով՝ լսել է տալիս իր ձայնը՝ Դաւիթ մարգարէի անուամբ. ինքն էլ աղօթում էր իր հօր հոգու համար (Բ Օր., Թ, 27, Բ Մնաց., Զ, 1-42, Բ Թագ., Ա, 12):

Ժ. Աբրահամի եւ հարուստի պատմութեան մէջ (Ղուկ., ԺԶ, 27-31) Յիսուս ասաց, որ անարժանների բարեխօսութիւնը եւ աղօթքը Աստուած չի ընդունի, ինչպէս որ Աբրահամը չլսեց հարուստի աղաչանքը՝ իր եղբայրների համար: Այդ հարուստը մեղադրուեց ոչ թէ նրա համար, որ Ղազարոսի հանդէպ յանցանք էր գործել, այլ որ հնարաւորութիւն ունենալով բարիք գործելու՝ չէր գործել: Իսկ այգեգործի առակում, հակառակն է, այգու տէրը լսում է բարեխօսողին եւ խնայում թզենուն (Ղուկ., ԺԹ, 6-9):

ԺԱ. Բաբելոնի գերութիւնից ժողովրդին ազատելու համար հրեշտակը բարեխօսում է Աստծուն եւ Աստուած ընդունում է նրա բարեխօսութիւնը (Զաք., Ա, 12, 13): Այստեղ տեսնում ենք, որ հրեշտակներն էլ կարող են բարեխօսել:

ԺԲ. Դանիէլի մարգարէութեան մէջ (Գ, 35-36) երեք մանուկներն աղաղակում են (այս համարները կան միայն գրաբարում, բողոքական կանոնում չկան). *«Քո սիրելիների՝ Աբրահամի, Իսահակի, Յակոբի համար մեզ մի մատնիր անօրէնների ձեռքը»:* Երբ սադուկեցիները Յիսուսին փորձելու համար եօթ եղբայրների ու մի կնոջ պատմութիւնը (Մատթ., ԻԲ, 32) պատմեցին, Յիսուս պատասխանեց, որ Աստուած մեռելների Աստուած չի, այլ կենդանիների, եւ երկնքում մարդիկ հրեշտակների պէս են լինելու ու բերեց մի համար, ուր Աստուած ասում է. *«Ես եմ Աբրահամի Աստուածը եւ Իսահակի Աստուածը ու Յակոբի Աստուածը»* (Ելից, Գ, 6): Ինչպէս գիտենք, սադուկեցիները չէին հաւատում մեռելների յարութեանը եւ ընդունում էին միայն Հին Կտակարանի առաջին հինգ գրքերի՝ Հնգամատեանի վաւերականութիւնը: Դրա համար էլ, չնայած որ Հին Կտակարանը լեցուն է յարութեան մասին բազում աւելի պարզ վկայութիւններով, Յիսուս մէջբերում է անում միայն Հնգամատեանից՝ սադուկեցիների ընդունած կանոնից: Այստեղից երեւում է, որ ննջեցեալները կենդանի են եւ որ նրանք հրեշտակների պէս են: Իսկ վերեւի օրինակներում տեսանք, որ հրեշտակներն էլ կարող են բարեխօսել Աստծու առաջ, ուրեմն՝ ննջեցեալներն էլ: Աւելին, չընդունել «Բարեխօսութեան» սկզբունքը, նշանակում է յարութեան մասին թերի պատկերացում ունենալ:

ԺԳ. *«Ամէն մէկը ունէին քնարներ եւ ոսկէ բուրվառներ խնկով լիքը, որ սուրբերի աղօթքն է»* (Յայտն., Ե, 8): Սրբերի աղօթքը այստեղ ոչ այլ ինչ է, եթէ ոչ նրանց աղօթքը ապրողների համար (բարեխօսութիւնը

ԺԴ. Յիսուս զգուշացնում է՝ չանարգել հաւատացեալ փոքրերից որեւէ մէկին, որոնց հրեշտակները երկնքում միշտ Աստծոյ առաջն են (Մատթ., Ժ, 41): Այսինքն, Յիսուս ուզում է ասել, որ հրեշտակները երկնքում բարեխօս են մանուկների համար:

ԺԵ. Յիսուս Պրոբատկիէի քարոզում ասաց. *«Մի կարծէք, թէ ես ամբաստանելու եմ ձեզնից Հօր մօտ. կայ մէկը, որ ամբաստանելու է ձեզ՝ Մովսէսը, որին դուք յուսացել էք»* (Յովհ., Ե, 45): Այս համարում «ամբաստանել» բայը թարգմանութիւնն է յունարէն «կատէգորէո» բայի, որ նշանակում է մեղադրել, ամբաստանել եւ չարախօսել: Մալխասեանցի բառարանում գտնելով «չարախօսել» բայը՝ կտեսնենք, որ նա ունի հէնց այդ երկու նշանակութիւնները. մեղադրել, ամբաստանել եւ չարախօսել՝ այսօրուայ նշանակութեամբ: Այդ իսկ պատճառով գրաբարում այդ համարները Մաշտոցը թարգմանել է «չարախօսել» բայով. *«Մի կարծէք, թէ ես չարախօսելու եմ ձեզնից Հօր մօտ.*

կայ մէկը, որ կչարախօսի ձեզ՝ Մովսէսը, որին դուք յուսացել էք»: Եթէ ննջեցեալը (Մովսէս) կարող է *«չարախօսել»*, ապա նա կարող է եւ «բարեխօսել» («չարախօսելու» հակառակը):

ԺԶ. Հրեշտակներն էլ են ուրախանում (բարեխօսում, երբ աշխարհի վրայ մէկը ապաշխարում է (Ղուկ., ԺԵ, 7): Իր ուրախ աղօթքով Յաղթական եկեղեցին միանում է մեզ ու չի կարող Աստծու առաջ կանգնել, եթէ իր հաւատի ու յոյսի հետ վառուած չպահի նաեւ աստուածային ճշմարիտ սէրը դէպի իր երկրաւոր անդամակիցները:

5. ՀԱՆԴԵՐՁԵԱԼ ԿԵԱՆՔ

Հարց.- Ի՞նչ է հանդերձեալ կեանքը:

Պատասխան.- Հանդերձեալ կեանքի մասին ուսմունքը համարւում է քրիստոնէական վարդապետութեան մի օղակը: Այս մասին խօսելիս կամ խորհելիս պէտք է առաջնորդուել աստուածաբանական հետեւեալ կարեւոր սկզբունքով.

«Պէտք չէ անյայտ բաների մասին ստեղծել նոր յայտնութիւններ» (Օրմանեան):

Երբ որեւէ բան Ս. Գրքում յայտնուած չէ, ապա որքան էլ մարդիկ ուզենան հասկանալ եւ ստեղծել այս կամ այն վարդապետութիւնը այդ հարցի վերաբերեալ, միեւնոյն է, այն չի կարող յաւակնել բացարձակ ճշմարտութիւն լինելու: Բնական է, որ նման դէպքերում տարբեր եկեղեցիներ կունենան տարբեր կարծիքներ: Եկեղեցու պատմութեանը յայտնի են բազմաթիւ դէպքներ, երբ վիճել են երկար տարիներ, հարիւրամեակներ եւ այդպէս էլ չեն յանգել մի որեւէ ընդհանուր եզրակացութեան: Ճիշտ է, հանդերձեալ կեանքի մասին Ս. Գիրքը մեզ տալիս է բաւականին ընդարձակ տեղեկութիւններ, բայցեւայնպէս մանրամասների մէջ լռում է: Ուրեմն, կարեւոր է իմանալ, թէ ինչ է ասում քրիստոնէական ուսմունքն այդ կեանքի մասին եւ կամ ինչպէ՞ս պէտք է լինի հատուցումը, ե՞րբ եւ ինչպէ՞ս է կատարուելու այդ, ո՞ւր են գնալու հոգիները մահանալուց յետոյ եւ այլն: Նախորդ հարցերում արդէն խօսեցինք քաւարանի «ուսմունքի» մասին եւ տեսանք, թէ այդ հարցում ինչքան են

տարբերւում Արեւելեան եւ Արեւմտեան եկեղեցիները: Կարելի է ասել, որ «Հանդերձեալ կեանքի» հարցում էլ տարբեր եկեղեցիներ ունեն տարբեր մօտեցումներ եւ ըմբռնումներ:

Խօսելով Յաղթական եկեղեցու մասին, անհրաժեշտաբար հարց կառաջանայ, թէ ի՞նչ է այն յոյսը, որին վստահելով քրիստոնեաները ննջեցին ի Քրիստոս, կամ այլ խօսքով՝ ի՞նչ է յաւիտենական կեանքը. մի՞թէ մարդն անմահ է ստեղծուած եւ պիտի ապրի յաւիտեան: Շատերն են շատ բաներ ասել յաւիտենականութեան մասին, բայց միայն Յիսուս եկաւ աշխարհ եւ ցոյց տուեց այդ ճանապարհը, հաւաքեց իր հօտը՝ Եկեղեցին, եւ առաջնորդեց դէպի անմահութիւն: Այդ ճանապարհը նկարագրուած է Աւետարաններում, եւ դրա համար է կոչւում Աւետարան, այսինքն՝ Բարի լուր: Բարի է այդ լուրը, քանի որ ճանապարհն է կեանքի եւ ոչ թէ մահուան: Այդ ճանապարհին կան երկու շատ կարեւոր հանգրուաններ՝ Գողգոթան եւ դատարկ գերեզմանը: Գողգոթան ճանապարհն է բնութագրում (խաչը, խաչի ճանապարհը), իսկ դատարկ գերեզմանը՝ յաղթութիւնը (յարութիւնը) Միայն Գողգոթայի ճանապարհով կարելի է հասնել յարութեան եւ իւրաքանչիւր մարդու կեանք մի ինքնատիպ Գողգոթայի ճանապարհ է, ճանապարհ, ուր ամէն մէկն իր խաչն է տանելու եւ այդպիսով միանալու Յիսուսի հետ Գողգոթայում՝ այնտեղ, ուր Ինքը խաչուեց: Մեռելների յարութիւն ասելով՝ հասկանում ենք, որ ամէն բանական արարած յարութիւն է առնելու՝ հոգին կրկին մարմնի հետ է միաւորուելու Քրիստոսի երկրորդ գալստեան ժամանակ: Տարբեր եկեղեցիներ տարբեր ձեւով են պատկերացնում գալիք դէպքերը, նրանց ընթացքը: Բայց այն, ինչում բոլորն են համամիտ, գալիք դէպքերի յաջորդականութիւնն է, որ շարադրուած է Նոր Կտակարանում: Այդ բանում համամիտ են համարեա բոլոր քրիստոնէական եկեղեցիները (չհաշուած վերջին ժամանակների նորահնար աղանդները, որոնք իրենց անդամների թուի չափ «տեսութիւններ» ու «կարծիքներ» ունեն ցանկացած հարցի վերաբերեալ): Ստորեւ ներկայացնում ենք բողոքական եկեղեցիների տեսակէտը. այսպէս, ժամանակների լրումին յաջորդելու է՝

ա. Քրիստոսի երկրորդ գալուստը, որն իր հերթին ունենալու է երկու կերպ.

բ. սկզբում Նա գալու է «գողի» նման, այսինքն՝ աշխարհը չի իմանալու այդ մասին եւ,

գ. յետոյ, որոշ ժամանակ անց (եօթ տարի): Նա կգայ տեսանելի կերպով, որպէս Թագաւոր թագաւորների:

Ս. Գիրքը սովորեցնում է, որ Նրա Գալստի ժամանակ

-ոչ ոք Նրան չի սպասելու (Մատթ. ԻԴ, 4),

-աշխարհը զբաղուած է լինելու իր առօրեայ գործերով (Ղուկ., ԺԷ, 26),

-ծանր ու դժուար օրեր են լինելու (Բ Տիմ., Գ, 15),

-հաւատը տկարանալու է (Ա Տիմ., Դ, 1):

«Գողի նման» գալուստի ժամանակ տեղի են ունենալու մի քանի դէպքեր, որոնք նկարագրուած են Պօղոսի թղթերում (Կորնթացիներին, Թեսաղոնիկեցիներին):

դ. յարութիւն են առնելու բոլոր Քրիստոսով ննջածները՝ Յաղթական եկեղեցին (Առաջին յարութիւն),

ե. իսկ նրանք, ովքեր կենդանի են լինելու այդ պահին, այսինքն, Ձինուորեալ եկեղեցին, մի ակնթարթում փոխուելու են եւ առանց մահ ճաշակելու Յաղթական եկեղեցու հետ միասին համբառնալու են երկինք: Այս երեւոյթը կոչւում է «Եկեղեցու յափշտակութիւն», քանի որ Եկեղեցին իր ամբողջութեամբ (թէ՛ կենդանիները եւ թէ՛ ննջեցեալները) գնալու է իր յաւիտենական օթեւանը՝ Քրիստոս Յիսուսի հետ Քրիստոս Յիսուսի մօտ՝ Երկնքի Թագաւորութիւն: Ըստ այդմ այդ յարութիւնը կոչւում է «Կենաց» յարութիւն:

զ. Եկեղեցու յափշտակութիւնից յետոյ երկրի վրայ այլեւս չի լինելու «Եկեղեցին», այսինքն՝ Ս. Հոգին, որն արգելում էր Հակաքրիստոսին իր գործունէութիւնը ծաւալելու: Սկսուելու է մի ժամանակաշրջան, որի մասին այդքան երկար երազում էին ու ձգտում միջնադարի եւ վերջին ժամանակների ուտոպիստ համայնավարները (որին այդպէս էլ չհասան). աշխարհում չի լինելու քրիստոնէական եկեղեցի, այն տեղափոխուած է լինելու երկինք: Հէնց այդ ժամանակ էլ Հակաքրիստոսը հանդէս է գալու որպէս «իսկական մեսիա»: Բայց նրա թագաւորութիւնը կարճ է տեւելու. որոշ ժամանակ անց Յիսուս գալու է տեսանելի ձեւով եւ «իր բերանի շնչով կործանելու է Հակառակորդին», ու Սատանան կապուելու է հազար տարի:

է. Սկսուելու է Յիսուսի հազարամեայ թագաւորութիւնը՝ Եկեղեցու հետ միասին:

ը. Հազար տարի անց մնացած մեռածներն են յարութիւն առնելու (Երկրորդ յարութիւն): Այդ յարութիւնը կոչւում է «մահուան յարութիւն», քանի որ յարութիւն են առնելու դատաստանի համար:

թ. Վերջին Դատաստանը եւ

ժ. Դժոխքը, ուր պիտի նետուեն Սատանան իր արբանեակների ու բոլոր դատապարտուածների հետ միասին:

Համառօտ այս է քրիստոնէական Վախճանաբանութիւնը, այսինքն՝ վերջին ժամանակների մասին գիտելիքները (յունարէն՝ էսխատոլոգիա): Ինչպէս ասացինք, դէպքերի այս յաջորդականութեան հետ համամիտ են համարեա բոլոր եկեղեցիները, բայց մանրուքներում՝ տարակարծիք:

Մարդու կեանքը, հետեւաբար, կարելի է բաժանել երեք մասի. ներկայ կեանք, միջինք եւ վերջին կեանք: Ներկայ կեանքը զինուորեալ եկեղեցին է, միջինքը մահուանից յետոյ մինչեւ յարութիւնն է եւ վերջին կեանքը՝ յաւիտենական, արդէն անփոփոխ կեանքը: Ներկայ կեանքը սկիզբ է առնում ծնունդով, միջինքը՝ հոգու եւ մարմնի բաժանումով, եւ վերջապէս վերջին կեանքը՝ հոգու եւ յարուցեալ մարմնի միացումով:

Հարց.- Որտե՞ղ է անցնում մարդու միջին կեանքը:

Պատասխան.- Նախօրօք ասենք, որ այս հարցն էլ վիճելի է եւ տարբեր եկեղեցիներ ունեն տարբեր կարծիքներ: Այս խնդրի համար մեկնակէտ է հանդիսանում աղքատ Ղազարոսի պատմութիւնը (Ղուկ. ԺԶ 19-31):

«Երբ աղքատը մեռաւ, հրեշտակները նրան տարան Աբրահամի գոգը. մեծահարուստն էլ մեռաւ եւ թաղուեց: Եւ դժոխքում, մինչ սա տանջանքների մէջ էր, բարձրացրեց իր աչքերը, հեռուից տեսաւ Աբրահամին եւ Ղազարոսին էլ՝ նրա գրկում հանգստացած» (22-23 համարներ):

Յիսուսի պատմած այս առակում շատ իւրայատուկ ձեւով են ներկայացուած աղքատը եւ մեծահարուստը: Այստեղ երկու ձեւի մահուան մասին է խօսւում. աղքատը մեռաւ, եւ հրեշտակները նրան տարան Աբրահամի գոգը (Յիսուս աղքատի համար չի ասում, թէ թաղուեց), իսկ հարուստը մեռաւ ու

թաղուեց: Առաջին դէպքում հոգին գնում է կենաց «կայան», իսկ երկրորդում՝ մահուան «կայան»: Հայերէնում եւ յունարէնում (բնագրում) այդ համարները ունեն համարեա նոյն կէտադրութիւնն ու նշանակութիւնը: Լատիներէնում կէտադրութեան տարբերութիւն կայ յունարէնի (ուրեմն եւ հայերէնի) համեմատ. 22 եւ 23-րդ համարները բաժանող վերջակէտը տեղափոխուած է մի բառ աջ եւ ստացւում է այսպէս. «Եւ հարուստը մեռաւ ու թաղուեցաւ ի դժոխս»: Այստեղից էլ Կաթոլիկ եկեղեցին յանգում է «առանձնական դատաստանի» վարդապետութեանը. մարդ մեռնելով միանգամից ստանում է իր գործերի հատուցումն ու յարութեան ժամանակ վարձատրւում: Այսինքն՝ բացակայում է «կայանների» կամ միջինքի սկզբունքը: Հայ եկեղեցին մերժում է այս «առանձնական դատաստանի» վարդապետութիւնը, որը չի համապատասխանում միջինքի կամ «կայանների» աւետարանական սկզբունքներին: Այդպէս, մի փոքրիկ կէտադրական նշանի տեղափոխութիւնը կարող է առաջ բերել վարդապետական մեծ նշանակութիւն ունեցող տարբերութիւններ եկեղեցիների միջեւ: «Եւ ի վերջոյ, ի՞նչ է Աբրահամի գոգը, ո՞ւր էր Ղազարոսը. ամէն պարագայի մէջ, յաւիտենական վարձքի արքայութիւնը չէր այդ, դժոխքն էլ, ուրեմն, յաւիտենական տանջանքի տեղը չէ այդ առակում» (Օրմանեան): Ըստ Տաթեւացու կան երկու կայաններ, մէկը երկնքից վերեւ եւ միւսը՝ ներքեւ: Առաջինի մէջ հաւաքւում են բոլոր նրանք, որ թողնելով ամէն ինչ՝ Յիսուսի ետեւից գնացին եւ երկրորդում՝ բոլոր նրանք, ովքեր շարժուեցին աշխարհի մեղաւոր սկզբունքներով, աստուածուրաց ճանապարհներով: Առաջին կայանը կոչւում է Աջակողմեան, իսկ երկրորդը՝ Ձախակողմեան: Ինչ խօսք, որ Աջակողմեան եւ Ձախակողմեան ասելով՝ նիւթական իմաստով չենք հասկանում, այլ Քրիստոսի բարի ու քաղցր հայեցողութիւնը, որ Աջն է եւ դառը հայեցողութիւնը, որ Ձախն է (Օրմանեան): Շնորհալին իր յայտնի աղօթքում (Հաւատով խոստովանիմ, ԻԱ) ասում է.

«Լոյս ճշմարիտ Քրիստոս,
արժանաւորեա զհոգի իմ ուրախութեամբ տեսանել
զլոյս փառաց քոց ի կոչման աւուրն,
եւ հանգչել յուսով բարեաց յօթեւանիս արդարոց,
մինչեւ յօր մեծի գալստեան քո»:

Ինչպէս տեսնում ենք, այստեղ էլ «արդարների օթեւանը» միջինքն է, «կայանը», ուր հոգիները սպասում են «Գալստեան օրուան»:

Հարց.-Ի՞նչ է Վերջին կեանքը:

Պատասխան.- Քրիստոնէական հաւատքի եւ վարդապետութեան անմիջական հետեւանքն է մեռելների յարութիւնը: Եկեղեցին փրկագործելով մարդկանց, իրականացնում է Աստծու Արքայութիւնը, սկսելով այս կեանքից, տանելով հաւատացեալ ժողովրդին փրկութեան ճանապարհով դէպի յաւիտենական կեանք: Աստուած սէր լինելով սիրոյ հաղորդութիւն ունի իր ստեղծած մարդու հետ. եթէ այդ հաղորդութիւնը ժամանակաւոր եւ անցողիկ լինէր, ապա մարդ չէր կարող մասնակից լինել Աստծու յաւիտենական սիրուն:

Ս. Գիրքը ամենից շատ հէնց այդ փաստի մասին է ասում ու վկայում: Մինչեւ իսկ Յիսուսի ժամանակներում կային Վերջին կեանքը ժխտողներ (սադուկեցիները): Պօղոսն էլ քահանայապետի ատեանում, սադուկեցիներին յանդիմանելու համար, յարութեան հարցը առաջ քաշեց:

Ինչպէս տեսանք, գալիք դէպքերի յաջորդականութեան մէջ, Վերջին կեանքը մարդն անց է կացնում կամ Յիսուսի հետ, կամ էլ՝ Նեռի: Այսինքն, այդ է մարդու վերջնական, արդէն անփոփոխ կեանքը, աւարտը մարդու գոյութեան եւ սկիզբը յաւիտենութեան:

Հարց.- Ինչպէ՞ս են կատարում յուղարկաւորութիւնը հայոց մէջ: Մի՞թէ վերջին ժամանակներում լայն տարածում գտած արարողութիւնները ունեն որեւէ հիմնաւորում:

Պատասխան.- Յուղարկաւորութեան ծէսը հայոց մէջ վաղուց է կարգաւորուել եւ սահմանուել: Այսօր, մոռանալով դարերով մշակուած ծէսը, հնարում ենք անիմաստ, անսկզբունք ու անկապ բաներ, որոնցում արտայայտելով մեր «գիտելիքները» հանդերձեալ աշխարհի նկատմամբ, ուղղակի անարգում ենք հանգուցեալի յիշատակը: Դեռեւս Աշտիշատի ժողովը (365 թ.) դատապարտել է ննջեցեալի վրայ «լաց ու կոծ անելը, անկարգ շարժումներով եւ ոճրագործութիւններով սուգ կատարելը»: Այսօր, թաղումների ժամանակ մենք ականատես ենք լինում «անկարգ շարժումների եւ ոճրագործութիւնների»:

Անդրանկաց եկեղեցու ցնծութիւնը մեզ արգելում է հանգուցեալին սգալ հեթանոսական անյուսութեամբ, լաց ու կոծ բարձրացնելով, «զոր անմիտ կանայք բարբառեն ի ցոյց կեղծաւորութեան եւ զկռապաշտիցն զգործն գործեն ի վերայ քրիստոնէից» (Մանդակունի), քանի որ դա անարգանք ու թշնամանք է հանգուցեալի թէ՛ մարմնի, թէ՛ յիշատակի դէմ: Հնում այդպէս անողներին մերժում էր եկեղեցին եւ կարգ կատարող քահանային էլ պատժում:

«Յուղարկաւորութիւն» բառը կազմուած է գրաբար «յ+ուղի +արկանել» բառերից, որ նշանակում է ճանապարհ գցել, ճանապարհել: Այսինքն՝ քրիստոնէական ըմբռնումով ննջեցեալին ճանապարհ ենք դնում դէպի մի նոր կեանք ու ոչ թէ չգոյութիւն: Թաղման ծէսի ժամանակ քահանան ամէն պարագայում յարութեան յոյսով մխիթարում է սգաւորներին: Հողն օրհնելով՝ գցում է գերեզման, քանի որ անիծուած հողում չի կարելի ննջեցեալին իջեցնել: Ահա մի հատուած ծէսի ժամանակ քահանայի աղօթքից. «Տէ՛ր, տուր նրանց զգաստութեան հոգի, մխիթարութեան հոգի եւ մխիթարիր վշտակիր սրտերը եւ բժշկիր տրտմութեան վէրքերը: Որպէսզի քո փառաց հաստատուն յոյսով տրտմութեան սգից առողջացածները փառաւորեն քեզ»: Հետաքրքիր է, որ թաղման կարգում բաւական տեղ են գրաւում ապրող մերձաւորներին ուղղուած մխիթարական խօսքերը, ամէն անգամ ցոյց տալով Աստծոյ Թագաւորութեան յաւիտենական ճանապարհը եւ ներկայ կեանքում մեր անձնական ճանապարհների ուղղելը, փոխելը: «Այլ մահ արդարոյն ամենեւին իսկ ցնծութիւն է եւ ուրախութիւն՝ լուսեղէն հաստատութեան մէջ», ուստի եւ ննջեցեալին յուղարկաւորում ենք այն ճանապարհով, որով բոլորս ենք գնալու: Եւ քանի որ հանգուցեալին ճանապարհ ենք դնում դէպի կեանք, ուստի յուղարկաւորութիւնն էլ պէտք է կատարուի սաղմոսներով, հոգեւոր երգերով եւ օրհնութիւններով: Հիմնականում այս սկզբունքներն են արտայայտուած թաղման կարգում, որ կատարում է Հայ եկեղեցին համաձայն Մաշտոցի (Հայ եկեղեցու արարողութիւնների ծիսագիրքը): Ըստ Մաշտոցի հայոց մէջ կայ երեք տեսակ թաղման ծէս՝ հոգեւորականների, մեծահասակ աշխարհականների եւ երեխաների:

Հայոց մէջ ընդունուած է յուղարկաւորութեան հետեւեալ կարգը:

Ա. Մարմինը լուանում են, որն արտայայտում է մտերիմների սէրը եւ յարգանքը ննջեցեալի նկատմամբ:

Բ. Մարմինը փաթաթում են սպիտակ պատանով, որը խորհրդանշում է անապականութեան զգեստը, այսինքն՝

-սկզբնական անմեղութիւնը, որ ունէր մարդը նախքան մեղք գործելը:

-աշխարհի ունայնութիւնը, որ թողնում ենք ամէն ինչ՝ հարստութիւն, գանձ, ունեցուածք եւ միայն պատանն ենք տանում մեզ հետ:

-ննջեցեալը թողնում է այս աշխարհը եւ հագնում իր բարի, լուսաւոր գործերը: «Մերկ եկաւ եւ մերկ պիտի դառնայ», - ասում է Յոբը (Ա 21):

-Յիսուսի արեամբ լուացուած, մեղքերից ազատուած եւ արդարացուած գնում ենք մեր Տիրոջ մօտ՝ համաձայն Իր խոստումի, որ մեզ երբեք որբ չի թողնի (Յովհ. ԺԴ, 18): Յիսուսի այդ խոստումն իրական է թէ՛ ներկայում, թէ՛ ապագայում: Այսինքն՝ նա մեզ հետ է այս աշխարհում եւ մեզ հետ կլինի նաեւ հանդերձեալում: Մենակ լինելը մարդու համար կատարեալ դժոխք է թէ՛ այստեղ եւ թէ՛ հանդերձեալում:

Գ. Երկու մոմ են վառում՝ մէկը գլխի մօտ, միւսը՝ ոտքերի: Այս յիշեցնում է մեզ այն երկու հրեշտակներին, որ նստած էին Յիսուսի գերեզմանում՝ մէկը գլխի կողմը, միւսը՝ ոտքերի (Յովհ. Ի, 12), եւ աւետեցին կանանց Յիսուսի յարութեան լուրը: Այսինքն՝ ննջեցեալին յուղարկաւորում ենք յարութեան երանելի յոյսով:

Դ. Խունկ են ծխում հանգուցեալի վրայ, այսինքն՝ հանգուցեալը կենդանի եւ ընդունելի է Աստծու մօտ, ինչպէս անուշահոտ խունկ: Նրա անուշահոտ վարքն ու պայծառ հաւատն է ներկայացնում իրեն Աստծու առաջ:

Ե. Երեսն ուղղում են դէպի արեւելք: Առաքելական կանոնների համաձայն, աղօթք անելիս երեսը պէտք է ուղղել դէպի արեւելք: Ննջեցեալին էլ թաղում են նոյն դիրքով՝ դէպի արեւելք, քանի որ այսուհետեւ նրան մնում է միայն սրբերի բարեխօսական աղօթքին միանալ:

Զ. Աւետարան եւ սաղմոսներ են կարդում: Այս անելը երկու նշանակութիւն ունի. նախ ննջեցեալի հանդէպ մեր յարգանքն ու երախտիքն է արտայայտում, որ նա տեղափոխուել է մի նոր, աւելի լաւ բնակարան եւ երկրորդ՝ ապրող վշտակիր մերձաւորներին էլ ցոյց է տալիս, որ մխիթարուեն միայն Աստծու խօսքով, քանի որ մարդկային ոչ մի խօսք եւ իմաստութիւն չի

կարող որեւէ կերպ մխիթարել սգաւորներին:

Է. Ամբիծք են ասում: Ամբիծքը կամ անբիծքը, որ նշանակում է անարատութիւն, սկսում են թաղման նախորդող օրուայ երեկոյեան, երբ մայր է մտնում արեւը՝ ընթերցանութիւններով եւ հոգեւոր երգերով, ննջեցեալի հոգու հանգստեան համար: «Մարմինը եւ արիւնը երկինք չեն ժառանգելու եւ ապականութիւնը՝ անապականութիւն» (Ա Կորնթ. ԺԵ, 50): Ամբիծք ասելով հաստատում ենք, որ ննջեցեալը, հագնելով «անբիծ» զգեստ, ժառանգելու է Աստծու Թագաւորութիւնը:

Ը. Թաղման յաջորդ օրը, առաւօտեան կատարում են այգուց կամ այգելաց, այգեհող (էգնահող) գնում են գերեզման եւ կարգ կատարում, ցոյց տալով անմոռանալի սէրը հանգուցեալի նկատմամբ: Այդ այցելութեամբ խոստանում են, որ նրա յիշատակը անմոռանալի է, եւ սերունդները անմոռաց պիտի պահեն այդ կապը: Յիսուսի մահուանից յետոյ էլ իւղաբեր կանայք գնացին գերեզման՝ խունկ ծխելու: «Երեկոյեան լաց է գալիս, իսկ առաւօտեան՝ ուրախութիւն» (Սաղմոս ԻԹ, 6), քանի որ «եղաւ երեկոյ» (լացը, տխրութիւնը եւ «եղաւ առաւօտ» (ուրախութիւն, ցնծութիւն, - «օր առաջին»: Ննջեցեալը այս խաւար աշխարհից (երեկոյ) տեղափոխուեց լոյսի աշխարհ (առաւօտ): Այս կեանքը երկդռնանի քաղաք է, մէկով մտնում ենք, միւսով դուրս գալիս:

Թ. Եօթնօրէից են կատարում:

Ժ. Քառասնից են կատարում:

ԺԱ. Տարելից են կատարում: Տարին մէկ անգամ յիշում ենք՝ հոգեհանգիստ կատարելով, նշելով, որ քրիստոնեաների համար դա երկրորդ ծնունդն է: Տարելիցին ննջեցեալի մերձաւորները հոգեհանգստի մատաղ են կազմակերպում աղքատների համար կամ որեւէ բարեգործութեամբ յիշում հանգուցեալին:

ԺԲ. Գերեզմանն են օրհնել տալիս՝ այն հաւատով, որ ընդհանրական յարութեան յոյսը ամօթով չի թողնի:

ԺԳ. Մեռելոց յիշատակի օրերին գնում են գերեզման. որպէս կանոն, հնում այդ օրերին յիշատակի համար բարեգործութիւն էին անում, կերակրելով աղքատներին, օգնելով կարիքաւորներին եւ այլն:

Վերջապէս, ապրողների տրտմութիւնն ու սուգը միայն մարմնապէս բաժանուելու կսկիծն է, այն էլ ժամանակաւոր, քանի որ մենք բոլորս էլ գնալու ենք այդ ճանապարհով եւ Յարութեան օրը միասին մտնելու ենք Աստծու Թագաւորութիւն:

Մնացած սովորութիւնները, որ տեսնում ենք շատ յաճախ, անմիտ եւ անիմաստ բաներ են, ուղղակի անգիտութեան դրսեւորում: Այդպիսի սովորութիւններից է, օրինակ, հանգուցեալի ետեւից ծաղիկներ շաղ տալը: Չի կարելի այդպէս զարդարել հանգուցեալի գնալու «ճանապարհը», դրանով աւելի անարգում ենք ննջեցեալին:

Հարց.- Մի՞թէ ճիշտ են վարւում նրանք, ովքեր կերակուր են տանում գերեզման եւ այնտեղ օղի խմում:

Պատասխան.- Այդ, այսպէս կոչուած «ողորմաթաս» խմելը գերեզմանում եւ մի մասն էլ գերեզմանի վրայ թափելը, որպէս թէ ննջեցեալի «բաժին», անյարիր է քրիստոնէական վարքին ու կենցաղին: Փոխարէնը պէտք է առանձին սեղան պատրաստել տանը եւ կերակրել մարդկանց, նախօրօք օրհնել տալով սեղանն ու կերակուրը:

Հարց.- Ի՞նչու են գնում գերեզման եօթներորդ եւ քառասուներորդ օրը:

Պատասխան.- Հին Կտակարանում մեռելի վրայ սգում էին եօթ օր (Ծննդոց Ծ, 10), ուստի եւ սգաւորները եօթներորդ օրն էին գնում գերեզման՝ եօթնօրէից կարգ կատարելու: Համաձայն Տաթեւացու եօթնօրէքը կատարում ենք ըստ եօթը շնորհների եւ եօթը առաքինութիւնների: Այդ շնորհներն ու առաքինութիւններն են զարդարում մարդու կեանքի ճանապարհը մինչեւ գերեզման եւ գերեզմանից էլ մինչեւ յաւիտենութիւն, ու ոչ թէ՝ ճանապարհին սփռուած ծաղիկներն ու թանկարժէք գերեզմանաքարերը: Առաքելական ժամանակներից ընդունուած էր կատարել քառասնիցը կամ քառասունքը՝ հոգեհանգիստ կատարելով: Ինչպէս Յիսուս քառասուներորդ օրը համբարձուեց ու նստեց Հօր Աջ կողմը, նոյնպէս էլ քառասնից կատարելով, աղօթում ենք, որ Տէրն ընդունի ննջեցեալին սրբոց օթեւանի մէջ՝ Աջ կողմում: Մաշտոցի համաձայն, եօթնօրէքի եւ քառասունքի կատարման կարգը նոյնն է:

Հարց.- Ի՞նչ խորհուրդ ունի տապանաքարը:

Պատասխան.- Հայոց մէջ որպէս շիրմաքար ընդունուած է տապանաքար կամ խաչքար դնելը: Մնացած ձեւերի շիրմաքարերը, որ տարածուած են այսօր, կռապաշտութեան, հեթանոսութեան եւ աթէիզմի հետեւանք են: Այդ բոլորը մերժում է Հայ եկեղեցին: Ձանազան պատկերներ, արձաններ, դամբարաններ կառուցելը բացարձակ անգիտութեան արդիւնք է. հայոց թագաւորներն անգամ հանգչում էին համեստ տապանաքարերի տակ:

Ըստ Տաթեւացու, տապանաքարը ցոյց է տալիս, որ

-ինչպէս այդ քարը անպիտան է գործի համար, այնպէս էլ ննջեցեալը՝ աշխարհի:

-յարութիւնը լինելու է վէմի նման՝ անապական մարմնով ու ոչ թէ ադամական հողածին մարմնով:

Բ. ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

1. ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հարց.- Ի՞նչ է խորհուրդը:

Պատասխան.- Աստուածապաշտութեան մէջ կան շատ խորհուրդներ, որոնցից եկեղեցին առանձնացնում է մի քանիսը, անուանելով նրանց «Սրբազան Խորհուրդներ» կամ «Եկեղեցու Խորհուրդներ»:

Նախ բառի մասին. «խորհուրդ» նշանակում է մեզնից ծածկուած իրողութիւն կամ անտեսանելի իրողութեան արտայայտութիւն: Տաթեւացին ասում է, որ «խորհուրդ է ծածկելոյ իրաց յայտնութիւնը»: Ս. Գրքի միջոցով յայտնուածների մէջ շատ բան է մեզ ներկայանում որպէս խորհուրդ, այսինքն ըմբռնելի միայն հաւատի աչքերով: Ուրեմն խորհուրդ ասելով հասկանում ենք խորհրդաւոր՝ աստուածային մի բան, որ տեսանելի կերպով չենք կարող ընկալել, այլ՝ հոգեւոր աչքերով, այսինքն՝ հաւատով: «Խորհուրդ» բառը թարգմանութիւնն է յունարէն «միսթէրիոն» բառի, որ նշանակում է ծածկուած բան, թաքնուած: Այսպէս, Ծննդեան յայտնի շարականի սկզբում պատկերուած է մարդեղութեան խորհուրդը.

«Խորհուրդ մեծ եւ սքանչելի,
որ յայսմ աւուր յայտնեցաւ,
հովիւք երգեն ընդ հրեշտակս,
տան աւետիս աշխարհի:
Ծնաւ նոր արքայ,
ի Բեթղեհէմ քաղաքի,
որդիք մարդկանց օրհնեցէք,
զի վասն մեր յայտնեցաւ»:

Մեծ եւ սքանչելի է այդ խորհուրդը, քանի որ անհնար է բանականութեամբ ըմբռնել, անհնար է Նոր Արքայի ծնունդը՝ մարդեղութեան խորհուրդը, ընկալել տեսանելի աչքերով: Ուստի եւ շարականագիրն այն անուանում է խորհուրդ, այն էլ՝ մեծ եւ սքանչելի: Մեծ, քանի որ Ս. Գրքում աւելի մեծ խորհուրդ չկայ յայտնուած եւ սքանչելի, քանի որ զօրութիւն ունեցող խորհուրդ է (Եսայի Թ, 6):

Եկեղեցին Քրիստոսի մարմինն է, նրա մէջ է բնակւում Ս. Հոգին: Եկեղեցին Յիսուսի գործի շարունակողն է աշխարհում: Եկեղեցիով է Քրիստոս ներկայ աշխարհում: Քրիստոսի զօրութիւնն էլ եկեղեցիով է ի յայտ գալիս մարդկանց՝ խորհուրդների միջոցով: Այսինքն՝ խորհուրդը արտաքին զգալի նշանն է, որով տեսանելի ձեւերի տակ, Ս. Հոգու անտեսանելի շնորհներն են ստացւում: Խորհուրդը կատարւում է նիւթական իրերի միջոցով, որոնք Ս. Հոգու ներգործութեամբ նշանակութիւն եւ արժէք են ստանում, փոխանցելով հոգեկան իրողութիւնները մարդկանց: Խորհրդակատարութեամբ աստուածայինը տեսանելի իրի միջոցով մօտենում է մարդուն:

Եկեղեցին խորհուրդներից առանձնացնում է մի քանիսը, որոնց անուանում է «Եկեղեցու Խորհուրդներ» կամ «Սրբազան Խորհուրդներ»: Դրանք եօթն են: Այդ խորհուրդները աստուածապաշտութեան արարողութիւններ են, որոնց մասնակիցները Քրիստոսի եկեղեցու անդամն են ճանաչւում եւ Քրիստոսի հետ միանալով Աստուածային շնորհներին հաղորդ լինում: Խորհուրդների արարողական մասը տեսանելի է, բայց մենք չենք տեսնում, թէ ինչպէս է այդ տեսանելի ծէսը Ս. Հոգու անտեսանելի շնորհների միջոց դառնում եւ ներգործում մասնակիցների վրայ: Հէնց խորհուրդների առանձնա-

յատկութիւնն էլ այն է, որ Ս. Հոգու անտեսանելի եւ աննիւթական շնորհները ծածկուելով տեսանելի եւ նիւթական իրերի մէջ, ընդունւում են արտաքին զգայարաններով:

«Ս. Խորհուրդը Աստուածային անտեսանելի շնորհի տեսանելի նշանն է», - ասում է Ս. Օգոստինոսը: Բողոքականութեան առաջացման շրջանում (ԺԵ-ԺԶ դդ.) խորհուրդների վերաբերեալ որոշ տարբերութիւններ առաջացան Նոր եւ Հին եկեղեցիների միջեւ: Բողոքական եկեղեցին ընդունեց եօթ խորհուրդներից երկուսը միայն եւ այն էլ որոշ վերապահումներով: Այսպէս, նրանք «խորհուրդի» տակ տեսնում են միայն «նշան եւ յիշեցում, որոնց արժէքը կախուած է անհատի հաւատից»: Լիւթերը դրանք դիտում է որպէս «հաւատն արթնացնելու միջոց», իսկ Կալուինը՝ «Քրիստոսի խօսքերի վրայ ընտրեալի մէջ վստահութիւն առաջացնող միջոց»: Այսինքն՝ խորհուրդներից հեռացւում են շնորհի ներգործութիւնը, թողնելով այնտեղ միայն արտաքին ծէսը:

Պարզ է, որ այսպիսի ձեւակերպումը չի համապատասխանում աւանդական ըմբռնմանը, անգամ Ս. Օգոստինոսի սահմանմանը, թէեւ նմանութիւնը առկայ է բառերի մէջ: Ըստ Օգոստինոսի խորհուրդը «տեսանելի նշան է», բայց Աստուածային շնորհների, այլ ոչ թէ՝ «յիշեցում» կամ «վստահութիւն»: Պօղոսն անգամ դատապարտում էր անարժանօրէն ճաշակողներին (Ա Կորնթ., ԺԱ, 27-30), այսինքն ճաշակելը (խորհուրդը) միայն «նշան եւ յիշեցում» չէր, այլ էութեան մէջ Աստուածային զօրութիւն ունէր:

Եւ այսպէս Հին Եկեղեցին ընդունում է միայն եօթ սրբազան խորհուրդների գոյութիւն: Չնայած Արեւմտեան եւ Արեւելեան եկեղեցիների դաւանական մեծ տարբերութիւնների, խորհուրդների թուի հարցում բոլորը մէկ կարծիք ունեցան, այսինքն՝ եօթ: Հայոց մէջ եօթ խորհուրդների մասին հանդիպում ենք արդէն Տաթեւացու մօտ, ուր թուարկւում են բոլոր եօթ խորհուրդները անուանապէս, եւ նկարագրւում: Այդ համաձայնութիւնը, ըստ Օրմանեանի, կարելի է բացատրել այն կերպ, որ բոլոր եկեղեցիները մինչ այդ առանձին-առանձին արդէն ընդունել էին եօթ խորհուրդները, ուստի եւ միանգամից համաձայնուեցին:

«Որովհետեւ ոչ եկեղեցին եւ ոչ առաքեալները չէին կարող իրենց կողմից

արտաքին նշաններին ներքին շնորհի զօրութիւն պարգեւել: Եւ ինչ որ վերաբերում է այդ եօթին, չի կարելի վերագրել նաեւ այս եօթից բացի ուրիշներին, որովհետեւ եօթնեակ թուի ճշմարտութիւնը ոչ միայն իր ետեւից բերում է եօթնեակի հաստատականութիւնը, այլ նաեւ ժխտականութիւնը դրանցից դուրս եղած բաների վրայ» (Օրմանեան): Տաթեւացին եւ ուրիշներ եօթ խորհուրդները կապում են Ս. Հոգու եօթ շնորհների (Առակաց Թ, 1) եւ եօթ առաքինութիւնների հետ: Դրանք են.

Ա. Մկրտութիւն: Խորհրդանշում է հաւատը, քանի որ հաւատում ենք եւ յետոյ մկրտւում՝ սկզբնական, ադամական մեղքից ազատուելու համար: Նաեւ խորհուրդների մէջ առաջինն է, ուստի եւ «մուտքի» խորհուրդ է: Առանց այս խորհրդին մասնակցելու, որեւէ մէկը չի կարող մասնակցել միւս խորհուրդներին:

Բ. Դրոշմ: Մկրտուածը դրոշմւում է Ս. Հոգու կնիքով՝ միւռոնով, այսինքն՝ ցոյց է տալիս յոյսի խորհուրդը, քանի որ յուսով Ս. Հոգու զօրութիւնը կարողանում ենք ընդունել թշնամու դէմ պայքարելու համար: Խորհուրդը մեր տկարութիւններն է վերացնում:

Գ. Հաղորդութիւն: Սիրոյ խորհուրդն է, քանի որ սիրով ենք միաւորւում Յիսուսի հետ: Խորհուրդը չարութեանը դիմակայելու համար է, վերստին զօրանալու եւ այլն:

Դ. Ապաշխարութիւն: Արդարութեան խորհուրդն է, քանի որ զղջմամբ եւ խոստովանութեամբ արդարանում ենք մեղքերից: Խորհուրդը մեղքերից ազատուելու եւ վերստին կանգնելու համար է:

Ե. Չեռնադրութիւն: Իմաստութեամբ եւ գիտութեամբ սպասաւորելու խորհուրդն է: Իշխանութիւն է տալիս խորհուրդները կատարելու եւ Ս. Հոգու շնորհները փոխանցում:

Զ. Պսակ: Ողջախոհ ամուսնութեամբ զսպում է բղջախոհ ցանկութիւնները: Խորհրդանշում է նոր զինուորների մուտքը Եկեղեցի:

Է. Օծում: Պատերազմական դաշտում եղածներին արիութիւն է տալիս եւ բժշկում: Ամոքում է մեր հիւանդութիւնները:

Այս խորհուրդներից միայն Չեռնադրութիւնն է, որ կատարում է եպիսկոպոսը, մնացած վեցը քահանայական պաշտօնին են վերապահուած: Խոր-

հուրդներից անկրկնելի են Մկրտութիւնը, Դրոշմն ու Ձեռնադրութիւնը, որը միանգամ եւ ընդմիշտ սրբում է ենթակային, զինում եւ շնորհագործում: Մկրտութիւնը, Դրոշմը, Ապաշխարութիւնը եւ Հաղորդութիւնը ամէն մի հաւատացեալի համար անհրաժեշտ խորհուրդներ են:

Հարց.- Ինչպէ՞ս են հիմնաւորում խորհուրդները Ս. Գրքով:

Պատասխան.- Բոլոր Խորհուրդները Ս. Հոգու շնորհներն են փոխանցում: Խորհուրդների մի մասը (Մկրտութիւն, Հաղորդութիւն) հաստատեց Ինքը Յիսուս: Միւս Խորհուրդներն էլ հիմնուած են Ս. Գրքի ուսմունքի, Յիսուսի ուղղակի կամ անուղղակի խօսքերի վրայ: Նրանց կատարելու ձեւերը եւ կերպերը հաստատուել են յետոյ, Եկեղեցու կողմից՝ առաջնորդուելով Ս. Հոգով:

Հիմնական համարները, որոնք հաստատում են խորհուրդները հետեւեալն են.

Ա. Մկրտութիւն - Մատթ., Գ, 16, ԻԸ, 19, Յովհ., Գ, 22,

Մարկ. ԺՁ, 16:

Բ. Դրոշմ - Յովհ., Ի, 22, Ղուկ., ԻԴ, 49, Գործք Բ, 4:

Գ. Ապաշխարութիւն - Մատթ., Գ, 2, Ղուկ., ԺԷ, 3:

Դ. Ձեռնադրութիւն - Ղուկ., ԻԲ, 19, Յովհ., Ի, 23,

Մատթ., ԺԸ, 18:

Ե. Հաղորդութիւն - Մատթ., ԻՁ, 26, Յովհ., Ձ, 56:

Զ. Պասկ - Յովհ., Բ, 2, Մատթ., ԺԹ, 4:

Է. Օծում - Յակ., Ե, 14:

Հարց.- Ինչպէ՞ս են կատարում խորհուրդները:

Պատասխան.- Խորհուրդները կատարելու անհրաժեշտ պայմաններն են.

Ա. Կատարողը, օրինաւոր եւ իրաւասու պաշտօնեան (եպիսկոպոս կամ քահանայ

Բ. Խորհուրդի արտաքին նշանը. բաժանւում է երկու մասի՝ ա. նիւթ եւ բ. ծէս կամ արարողութիւն:

Գ. Խորհրդի յատուկ բանաձեւը, խօսքը, աղօթքը, որը սրբագործում է ենթակային եւ

Դ. ենթական:

Օրինակ, մկրտութեան դէպքում նիւթը միւռոնն ու ջուրն են, բանաձեւը՝ «Մկրտի ծառայս յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ», իսկ ենթական՝ մկրտուողը:

Այս յատկանիշները բնորոշ են բոլոր եօթ խորհուրդներին:

Որեւէ առարկայի եւ նրա անուան միջեւ չկայ որեւէ իրական կապ, այլ անունը միայն նշանակում է այդ առարկան: Խորհուրդների դէպքում դրութիւնն այլ է. նիւթական եւ տեսանելի արարողութեան հետ սերտօրէն կապուած են Ս. Հոգու անտեսանելի շնորհները եւ դրանք իրարից բաժանուած չեն: Այսինքն՝ Ս. Խորհուրդների տեսանելի նիւթով եւ արարողութեամբ մասնակիցները ստանում են իրապէս աստուածային փրկարար շնորհներ եւ ներգործութիւն: Այսպէս, Աստուածապաշտութեամբ (աղօթք, Աւետարանի ընթերցում եւ այլնմենք Աստծու հետ սերտ յարաբերութեան մէջ ենք մտնում, սակայն այդ յարաբերութիւնները միայն ներքին են եւ անտեսանելի, իսկ Ս. Խորհուրդներով Քրիստոս իրապէս եւ տեսանելի կերպով է յարաբերւում մասնակիցների հետ, օգնում, հաւատքը զօրացնում եւ ճշմարտութեան ճանապարհով առաջնորդում:

Հարց.- Յաճախ են ոմանք ցոյց տալիս Ս. Խորհուրդի պաշտօնեայի այս կամ այն թերութիւնը, ասելով, որ Խորհուրդն այդ դէպքում դառնում է անվաւեր: Մի՞թէ պաշտօնեայի անձը կարեւոր է Խորհրդի կատարման համար:

Պատասխան.- Նախքան պաշտօնեայի անձի մասին խօսելը, հարկաւոր է սկսել ենթակայից: Խորհրդի ժամանակ շատ կարեւոր է ենթակայի անձի խնդիրը, եթէ նա չափահաս է, եւ ծնողների, եթէ ենթական երեխայ է: Ով ընդունում է Ս. Խորհուրդները հաւատով եւ երկիւղածութեամբ, նա կստանայ աստուածային օրհնութիւն եւ շնորհ, մինչդեռ ով անհաւատութեամբ է մօտենում Ս. Խորհուրդներին եւ այն դիտում որպէս նշան, արարողութիւն, նա օրհնութեան փոխարէն ընդունում է անէծք եւ դատապարտութիւն: Քրիստոնէական խորհուրդները արդէն իսկ կատարուած, իր աւարտուն ձեւով ներկայացուած իրողութիւններ են, եւ ոչ թէ նշան կամ յիշեցում այն բանի, որ պիտի գայ կամ լինի: Այդպէս էր Հին Կտակարանի տնտեսութեան ժամա-

նակ, երբ խորհրդաւոր արարողութիւնները (զոհը, սրբուելը, քաւութիւնը եւ այլն) գալիք դէպքերի մասին յիշեցումներ եւ քրիստոնէական ծէսերի նախատիպերն էին: Այդ առումով էլ Աստուածաշունչն ընթերցելիս պէտք է սկզբում կարդալ Հին Կտակարանը, այնուհետեւ՝ Նոր Կտակարանն ու յետոյ՝ Նոր Կտակարանով զինուած, դարձեալ անդրադառնալ Հին Կտակարանին, քննելով արդէն «Նորկտակարանեան» աչքերով: Այս դէպքում շատ խորհուրդներ կբացուեն ու հասկանալի կլինեն: Ընդհանրապէս Քրիստոնէութիւնը հասկանալի է միայն «ներսից», եկեղեցու մէջ եղող մարդկանց համար, իսկ «դրսից» կամ եկեղեցուց դուրս, այն մնում է որպէս խորհուրդ, ծածկուած մի բան (Մատթ., ԺԳ, 11): Պօղոսն ասում է, որ *«Հին Կտակարանի ընթերցումների վրայ քօղ կայ, եւ միայն Քրիստոսով է այն խափանւում..., բայց երբ դառնան դէպի Տէրը, այնժամ քօղը կվերանայ»* (Բ Կորնթ., Գ, 14-15): Այդպէս է նաեւ հիմա. քանի դեռ ենթական չի դարձել *«դէպի Տէրը»*, բոլոր խորհուրդները նրա համար մնում են ծածկուած, քօղի տակ: Խորհրդի մասնակիցներից հաւատ չունեցողների համար էլ խորհուրդը կմնայ ծածկուած, «քանի որ, ինչպէս դժուար է ջրային կենդանիներին ցամաքում ապրելը եւ ցամաքայիններին՝ ջրում, առաւել եւս դժուար է առանց հաւատի Ս. Հոգու պարգեւը ընդունել» (Եղիշէ): Այսպիսով, հաւատն է մարդուն դարձնում վերին շնորհների ընդունարան, իսկ անարժան եւ անհաւատ մարդկանց վրայ Ս. Խորհուրդները փրկարար ներգործութիւն չեն ունենայ: Այս խնդրում հակառակ կարծիքն ունի Կաթոլիկ եկեղեցին: Ըստ կաթոլիկների, քրիստոնեան հակառակ իր արժանիքների եւ հաւատի, Ս. Խորհուրդների միջոցով ստանում է ամէն բարիք: Բաւական է միայն, որ նա ձեւականօրէն մասնակցի ծէսին, մինչդեռ Աստծու շնորհները բռնութեամբ չեն տրւում, այլ՝ հաւատով, ազատութեամբ:

Ս. Խորհուրդների միջոցով Եկեղեցին ներկայացնում է քրիստոնէական վարդապետութեան էութիւնը: Դրա համար էլ խորհուրդ կատարողը պէտք է լինի անպայման ձեռնադրեալ պաշտօնեայ: Խորհուրդների մէջ ամէն ինչ նրա հիմնադիրի կամքից է կախուած, ուստի եւ կատարողը պէտք է լինի միայն նա, ով այդ անելու արտօնութիւնն ունի: Ուրեմն, ոչ բոլոր մարդիկ եւ ոչ բոլոր քրիստոնեաները կարող են ընդունել այդ պաշտօնը, այլ միայն

նրանք, ովքեր ձեռնադրուած են եւ որոշուած Քրիստոսի կողմից: Հետեւաբար Ս. Խորհուրդների ետեւում կանգնած է անձամբ Ինքը՝ Քրիստոս, եւ Ինքն է առաջին ու գլխաւոր գործիչը: Ուրեմն, Խորհրդի արդիւնքը կախուած է միայն Քրիստոսից, այսինքն, պաշտօնեայի անձը եւ անձնական հանգամանքները չեն կարող արգելք լինել Խորհուրդը կատարելու համար, որովհետեւ «գործը գործուածքի գործից եւ ոչ թէ գործողի ձիրքերից է առնում իր զօրութիւնը» (Օրմանեան): Իհարկէ, հակառակուողները կարող են ասել, թէ մէկը չի կարող մի բան տալ, որ չունի: Սակայն, տեսանք, որ պաշտօնեան իրենից չէ, որ պիտի տայ, այլ՝ վերից. ուրեմն կարեւորն այստեղ ոչ թէ պաշտօնեայի անձն է, այլ՝ իշխանութիւնը, որն ունի պաշտօնեան:

Ամփոփենք. Ս. Խորհուրդին մօտեցողները յոյսը պիտի դնեն ոչ թէ պաշտօնեայի արժանաւորութեան վրայ, այլ՝ հաստատողի զօրութեան վրայ, այսինքն՝ Քրիստոսի: Ենթակայից էլ պահանջւում է, որ նա լինի մկրտուած քրիստոնեայ, քանի որ չմկրտուածների մասնակցութիւնը Ս. Խորհուրդին վաւերական չէ: Բացառութիւն է կազմում մկրտութիւնը, քանի որ լինելով առաջին անհրաժեշտ խորհուրդը, դառնում է մուտքի խորհուրդ:

Նոր Եկեղեցին չի ընդունում ծէսերի արժէքը, այն համարելով աւելորդ: Բայց քանի որ մարդն առանց ծէսի չի կարող ապրել կամ էլ որեւէ բան անել, նրանք՝ ծէսերը մերժողները ստիպուած են լինում ստեղծել նոր ծէսեր: Միշտ էլ ծիսական պահանջը անհրաժեշտ է դառնում, անկախ այն բանից ընդունում թէ մերժում են այն: Հայ եկեղեցին, լինելով աւանդապահ, միշտ էլ մեծ նշանակութիւն է տուել ծէսերին, որոնք հաստատուել են դեռեւս Առաքելական շրջանից եւ հղկուել դարերի ընթացքում:

Քրիստոս, հաստատելով խորհուրդները, նրանց կատարման մանրամասները թողեց առաքեալներին: Ամէն օրէնսդիր եւ իշխող ինքն է որոշում սկզբունքները եւ օրէնքները, գործադրութեան պայմանները թողնելով կարգուած պաշտօնեաներին: Այստեղից էլ գալիս է տարբեր եկեղեցիներում միեւնոյն խորհրդի կատարման թէ՛ ձեւի թէ՛ նիւթի տարբերութիւնը: Պօղոս Առաքեալը գրում էր կորնթացիներին. *«եւ ուրիշ բաներ պիտի պատուիրեմ ձեզ՝ երբ գամ»* (Ա Կորնթ., ԺԱ, 35): Եկեղեցու հայրերը այդ պատուէրների մէջ տեսել են խորհուրդների կատարման մանրամասները:

Հարց.- Ի՞նչ արժէք է ներկայացնում Ս. Խորհրդի արտաքին նշանը՝ նիւթը:

Պատասխան.- Նիւթն այն շօշափելի եւ տեսանելի առարկան է, որը շնորհների նշան եւ միջոց լինելու համար, Քրիստոսի կողմից հաստատուած գործողութեամբ գործադրւում է որեւէ անձի վրայ: Բնականաբար հարց կառաջանայ, թէ այդ տեսանելի նիւթը ինչպէս կարող է պատճառ դառնալ ներքին հոգեկան շնորհների: «Չենք կարող նիւթին՝ իբրեւ նիւթի, վերագրել որեւէ գերբնական կամ բարոյական զօրութիւն, միայն ասում ենք, որ ինչքան որ շնորհների տւչութիւնը Քրիստոսի կամքից է գալիս, Քրիստոս կարող է տնօրինել որեւէ բան, որ իր Կամքի միջոց լինի» (Օրմանեան): Այսինքն, ամէն բան կախուած է հաստատողի կամքից եւ ոչ թէ նիւթի բնութիւնից: Նիւթը Խորհրդի ժամանակ, ձեւի միջոցով առանձնանում է, որոշակիանում: Ըստ Ս. Օգոստինոսի «մերձենայ բանն առ տարրն եւ կատարի խորհուրդն», իսկ ըստ Հայ եկեղեցու՝ «միանայ նիւթն ընդ ձեւոյն եւ լրանայ խորհուրդն»: Բանի (Խորհրդի խօսքը, բանաձեւը) եւ տարրի հետ միացման առաջին հեղինակը Քրիստոսն է, որ պատուիրեց «մկրտել յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ»: Այստեղ նիւթը ջրով լուացումն է, եւ ձեւը՝ խօսքը, որով կատարւում է լուացումը «յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ»:

Հարց.- Անհաժեշտ է՞ արդեօք ուրիշ անձանց ներկայութիւնը խորհրդի կատարման ժամանակ:

Պատասխան.- Խորհուրդների կատարման ժամանակ բացի պաշտօնեայից ու ենթակայից ներկայ են լինում նաեւ այլ անձինք: Մասնակիցները, որպէս կանոն ունեն երկրորդական նշանակութիւն: Նրանք միայն վկաներ ու երաշխաւորներ են կատարուած իրողութեան: Բացառութիւն է մկրտութեան ժամանակ կնքահայրը: Ըստ Մաշտոցի (Հայ եկեղեցու Ծիսագիրքը) նա նոյնպէս մասնակցում է կատարմանը. քահանայի հարցին, թէ «երախայս զի՞նչ խնդրէ», կնքահայրը պատասխանում է. «հաւատք, յոյս, սէր եւ մկրտութիւն»: Մանկամկրտութեան ժամանակ, երբ երեխան անկարող է հասկանալ եւ ընկալել խորհուրդը, հոգեւոր դաստիարակման պատասխանատւութիւնը, մինչեւ մանուկի չափահաս դառնալը ընկնում է կնքահօր վրայ: Այստեղից էլ հետեւում է, որ կնքահայրը անպայման պէտք է նոյն եկեղեցու անդամ

լինի, որպէսզի մանուկին կարողանայ ուսուցանել քրիստոնէական ոգով եւ Հայ եկեղեցու վարդապետութեամբ: Օրինակ, հայ եկեղեցում այլազգի քրիստոնեան չի կարող կնքահայր դառնալ, որովհետեւ նրա դաւանութիւնը տարբեր է Հայ եկեղեցու դաւանութիւնից: Կնքահայրը հայոց մէջ պէտք է բաւարարի հետեւեալ պահանջներին.

-տեղեակ լինի Ս. Գրքին:

-ծանօթ լինի եւ ընդունի Հայ եկեղեցու դաւանութիւնը, անգիր իմանայ «Հաւատամքը» եւ այլն:

-լինի մկրտուած քրիստոնեայ: Եթէ կնքահայրը մկրտուած չէ, ապա պաշտօնեան նախ նրան պէտք է մկրտի եւ յետոյ սանիկին:

Այս ամէնը չի նշանակում, որ ծնողները պատասխանատու չեն երեխայի դաստիարակութեանը: Կնքահայրը եւ ծնողները միմեանց գործակից պէտք է լինեն եւ միասին հոգ տանեն, մինչեւ երեխան դառնայ ինքնուրոյն եւ գիտակից: Որեւէ մէկի բացակայութեան դէպքում է, որ ամբողջ պատասխանատւութիւնը ընկնում է միւսի վրայ: Ուստի եւ կնքահայրը անհրաժեշտ է դառնում նաեւ չափահաս մկրտուողի համար:

Կնքահայրը չի կարող կին լինել եւ անչափահաս: Այս երեւոյթը շատ է տարածուած մեր ժամանակներում: Տաքեւացին մերժում է «կնքամօրը», գտնելով, որ նա չի համապատասխանում խորհրդի էութեանը, քանի որ «կնքամայրը եկեղեցին է»: Աւելին, «Կինը երաշխաւոր եւ վկայ չի կարող լինել եւ մկրտութեան ժամանակ պէտք է դուրս գայ եկեղեցուց», - ասում է նա:

Այս հարցում նոյնպէս տարբեր եկեղեցիներ ունեն տարբեր կարծիքներ: Օրինակ, յոյների մօտ ընդունուած է եւ՛ կնքահայրը, եւ՛ կնքամայրը: Անգամ աղջիկ երեխայի մկրտութեան ժամանակ նախապատւութիւնը տալիս են կնքամօրը:

Մեր օրերում շատ յաճախ հանդիպում ենք նաեւ անչափահաս կնքահայրերի, որոնք չեն բաւարարում Խորհուրդի անհրաժեշտ պայմաններին, ուստի եւ մերժելի են: Անչափահասը չի կարող դաստիարակութեան գործը ստանձնել, քանի որ ինքը դեռ կարիք ունի խնամքի: Հայոց մէջ կնքահայրութիւնը համարւում է նոր ազգականութեան հիմնաւորում, ուստի եւ կնքահօր, եւ սանիկի ընտանիքները համարւում են հարազատ: Այդ պատճառով էլ, մասնաւորաբար բացառւում է մերձամուսնութիւնը նրանց միջեւ:

2. ՄԿՐՏՈՒԹԻՒՆ

Հարց.- Ի՞նչ է մկրտութիւնը:

Պատասխան.- Մկրտութիւնը այն սրբարար խորհուրդն է, որ սրբում է մեզ մարդկային նախնական (սկզբնական) մեղքից, վերստին ծնունդ տալիս Ս. Հոգու շնորհած նորոգ կեանքով եւ Քրիստոսի Եկեղեցու մէջ ընդունում: Մկրտութիւնը Եկեղեցու առաջին խորհուրդն է, որից յետոյ միայն հաւատացեալը կարող է մասնակցել միւս խորհուրդներին:

Երբ չափահասը որոշում է ընդունել քրիստոնէութիւնն ու մկրտուել Հայ եկեղեցում, նախապէս պէտք է լաւ դաստիարակուի, կրթուի քրիստոնէական ոգով եւ ապա ճշմարիտ հաւատով մկրտուի:

Չափահաս մկրտուածը պէտք է ձգտի միանալ իր Փրկչի՝ Յիսուս Քրիստոսի հետ: Մկրտութեան ամբողջ արարողութիւնը խորհրդանշում է հէնց այդ ճանապարհը: Իսկ եթէ մկրտուողը մանուկ է, ապա նրա մէջ սկիզբ է դրւում նոր գիտակցութեան, նոր ստեղծագործութեան: Եթէ անգամ յետագայում նա մոլորուի իր ճանապարհների մէջ, բայց նորից դառնայ դէպի Քրիստոս, տարիներ առաջ մկրտութեամբ հիմ դրած շէնքը կնորոգուի եւ կդառնայ լուսաւոր՝ չկորցնելով իր սրբարար ազդեցութիւնը: Մանուկները մկրտւում են ծնողների հաւատով եւ նրանց կամքն էլ փոխարինւում է ծնողների կամքով: Այսինքն՝ մանուկի հոգեւոր դաստիարակութեան ամբողջ պատասխանատուութիւնը ընկնում է նախ ծնողների, ապա՝ կնքահօր եւ յետոյ՝ եկեղեցու վրայ: Առաքեալները մկրտում էին երեխաներին եւ ամբողջ ընտանիքը միայն այն դէպքում, երբ ծնողները եւ չափահասները դաստիարակուած էին լինում քրիստոնէական ուսմունքով (Գործք Ժ, 24, ԺՁ, 15-33, ԺԸ, 8, Ա Կորնթ., Ա, 16 եւ այլն):

Մկրտողը անպայման պէտք է լինի ձեռնադրուած պաշտօնեայ: Ս. Նունէի վարքից իմանում ենք, որ նա վրացիներին չմկրտեց, այլ Ս. Գրիգոր Լուսաւորչից քահանաներ պահանջեց մկրտելու համար: Նոյնիսկ եթէ երեխան մահամերձ է, իրաւունք չկայ, որ ոչ ձեռնադրեալ մէկը խորհուրդը կատարի: Եթէ չափահասները մկրտուելու փափագ ունենան եւ չիրագործուած մեռնեն, փրկւում են իրենց հաւատով, իսկ երեխաների դէպքում, երբ նրանց չեն

կարողանում մկրտել, նրանք փրկւում են ծնողների անկեղծ փափագով եւ հաւատով: Եթէ հասակաւորները փափագում են մկրտուել, բայց իրենց կամքից անկախ պատճառով չի յաջողւում եւ մեռնում են, այդ ջերմ փափագի համաձայն մկրտուած են համարւում, եւ եկեղեցին թոյլատրում է նրանց վրայ թաղման կարգ կատարել:

Մկրտութեան խորհուրդը կրկնել չի կարելի, այսինքն Հայ եկեղեցին արգելում է կրկնամկրտութիւնը, քանի որ

-ինչպէս մարդ ծնւում է մէկ անգամ, այնպէս էլ մէկ անգամ է մկրտւում, որպէս հոգեւոր ծնունդ.

-մկրտութիւնը սկզբնական մեղքի դէմ է, իսկ սկզբնական մեղքը մէկ է, ուրեմն մկրտութիւնն էլ մէկ պէտք է լինի.

-ով մկրտւում է, Քրիստոսի մահուանն է մկրտւում, իսկ Քրիստոս մի անգամ մեռաւ. այսինքն, երկրորդ անգամ մկրտուողը Քրիստոսին կրկին խաչն է հանում:

Հայ եկեղեցին նորից է մկրտում միայն նրանց, որոնք չեն մկրտուել Ս. Երրորդութեան անունով: Այսպէս, եթէ «Եհովայի վկան» դառնայ Հայ եկեղեցու գիրկը, ապա նրան կմկրտեն նորից, քանի որ «Եհովայի վկաների» մկրտութիւնը Ս. Երրորդութեան անունով չի:

Տարբեր եկեղեցիներում մկրտութեան խորհրդի կարգը նոյնպէս տարբեր է: Այսպէս, Հայ եկեղեցում մկրտութեան բանաձեւն է. «(մկրտուողի անունը) ծառայս Աստուծոյ եկեալ յերեխայութիւնէ ի մկրտութիւն, մկրտի յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ»: Կաթոլիկ եկեղեցում բանաձեւը որոշ փոխուած է, եւ աւելի շեշտում է մկրտողի, այսինքն՝ պաշտօնեայի դերն ու իշխանութիւնը. «Ես մկրտում եմ (անունը) յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ»: Այսինքն՝ մկրտողի անձը գերադասւում է Քրիստոսի անձից:

Ընդհանրապէս մկրտութիւնը կատարւում է երեք ձեւով՝ հեղմամբ, ընկղմամբ կամ թաղմամբ (ջրի մէջ) եւ սրսկմամբ (ջուր ցանելով): Հայ եկեղեցին (ինչպէս նաեւ յոյն եկեղեցին) մկրտութիւնը կատարում է ընկղմամբ եւ հեղմամբ: Կաթոլիկները՝ միայն հեղմամբ (թէեւ մինչեւ ԺԴ դար նրանց մօտ էլ ընդունուած էր ընկղմամբ մկրտելը): Բողոքական եկեղեցում մկրտութեան կարգի մէջ մէկութիւն չկայ. նրանցից ոմանք մկրտում են հեղմամբ, ոմանք՝

լուացումով, ոմանք՝ սրսկումով, ոմանք էլ՝ ընկղմամբ: Նրանց մէջ կան ուղղութիւններ, որոնք ընդհանրապէս մկրտութիւն չեն անում:

Տասներկու Առաքեալների Աւետարանը պատուիրում է.

«Մկրտեցէք այսպէս. նախօրօք յայտարարէք այդ մասին եւ մկրտեցէք կենդանի ջրում՝ Հօր, Որդու եւ Ս. Հոգու անունով: Եթէ այդպիսի ջուր չկայ, մկրտեցէք մի ուրիշ ջրում. եթէ չես կարող մկրտել սառը ջրում, ապա մկրտեցէք տաք ջրում: Իսկ եթէ չկայ ոչ մէկը եւ ոչ միւսը, ջուր լցրու նրա գլխին երեք անգամ յանուն Հօր, Որդու եւ Ս. Հոգու: Մկրտելուց առաջ թէ՛ մկրտուողը, թէ՛ մկրտողը, ինչպէս նաեւ ուրիշներ պէտք է պահք պահեն, եթէ կարող են: Մկրտուողին պատուիրիր պահք պահել մէկ կամ երկու օր առաջ» (Դիդախէ, 7):

Բոլոր Արեւելեան եկեղեցիները հնում մկրտութիւնը կատարում էին ընկղմամբ: Կաթոլիկները յետագայում թողեցին այդ սովորութիւնը եւ սկսեցին մկրտել միայն հեղմամբ, այն էլ ցօղելով ոչ թէ ամբողջ մարմինը, այլ՝ միայն գլուխը: Այդ սովորութիւնն անցաւ բողոքականներին, որոնք սակայն ընդունեցին հին ձեւը, ինչպէս արեւելեանները եւ սկսեցին մկրտել հեղմամբ:

Ըստ Մաշտոցի (Ծիսագիրքը) երեխային պէտք է ընկղմել ջրի մէջ, ինչպէս եւ ընդունուած է: Հայ եկեղեցին կաթոլիկներից դարձածին երբեք անկնունք չի համարել, այսինքն՝ վաւերական է համարել նրանց հեղմամբ կատարուող մկրտութիւնը: Տաթեւացին գրում է. «Իսկ լուանալն պարտ է լինիլ ի մարմինն բոլոր, իսկ եթէ հարկաւոր ժամանակ հանդիպի զպատուական մասունքն միայն եւ կամ զերեսս միայն բաւական է լուանալ»:

Բողոքականութիւնից դարձածներին Հայ եկեղեցին մկրտում է ոչ թէ մկրտութեան նիւթի համար, այլ պաշտօնեայի թերութեան համար, քանի որ նա ձեռնադրութիւն չունի: Հեղումի եւ ընկղման համար շատերը կարծում են, թէ վնասակար է նորածինների համար կամ հիգիենիկ չէ: Բայց այս բոլոր մտածումները որեւէ արժէք չունեն, որովհետեւ դարեր շարունակ այս սովորութիւնները շարունակւում են եւ նման դէպք չի պատահել երբեք:

Հարց.- Ի՞նչ է սկզբնական մեղքը:

Պատասխան.- Մարդ ծնուելով ադամական ցեղից՝ ծնողներից, ստանում է Ադամի պատկերը իբրեւ հին մարդ, բայց ծնուելով վերստին «ջրից եւ

Հոգուց» ստանում է Քրիստոսի պատկերը, իբրեւ նոր մարդ:

«Ո՞վ է մարդը» - հարցնում էր Դաւիթը (Սաղմոս Ը, 4) մօտ երեք հազար տարի առաջ: Այսօր էլ այդ հարցը կարեւոր է ամէն մէկի համար: Բազմաթիւ պատասխանների մեծ մասը միայն վերջերս սխալ դուրս եկան, ուստի մեզ համար աւելի կարեւոր է, ոչ թէ այն, ինչ ասել են այս կամ այն մարդիկ, այլ՝ ինչ ասում է Ս. Գիրքը: *«Աստուած իր պատկերով եւ նմանութեամբ ստեղծեց մարդուն»:* Համաձայն Ս. Գրքի, ոչ միայն մարդը, այլ ամբողջ Տիեզերքը որեւէ կոյր պատահականութեան արդիւնք չեն, այլ նպատակաուղղուած արարչութեան հետեւանք: Հէնց Ս. Գրքի առաջին տողերից ի յայտ է գալիս այդ արարչութիւնը. Աստուած ստեղծեց նիւթը, նիւթից՝ կենդանական աշխարհը եւ մարդուն: Առաջին մարդը Ադամն էր: Ոմանք մարդու առաջացման պատմութիւնը դիտում են որպէս այլաբանութիւն, սակայն Ս. Գիրքը պարզ խօսում է Ադամի մասին որպէս անհատի եւ անձի:

Անկման պատմութիւնից իմանում ենք, որ մարդը կորցրեց իր սկզբնական վիճակը: Հիմա նա կարիք ունի նորոգուելու (Եփես., Դ, 23-24), դառնալու «նոր մարդ»՝ Քրիստոսին միանալով: Նորոգուել նշանակում է վերստին գտնել այն, ինչ կորցրել ենք: Ի սկզբանէ մարդն ազատ է, կարող է ընտրել բարին կամ չարը: Ադամը մեղանչեց իր ազատ կամքով եւ նրա ողբերգութիւնը դարձաւ ամբողջ մարդկութեան ողբերգութիւնը. *«Ինչպէս որ մէկ մարդու միջոցով մեղքը աշխարհ մտաւ, եւ մեղքով էլ՝ մահը, այնպէս էլ բոլոր մարդկանց մէջ տարածուեց մահը, որովհետեւ բոլորը մեղանչեցին»* (Հռոմ., Ե 12): Այսպիսով Ադամը մեղանչելիս ներկայացնում էր ամբողջ մարդկութիւնը: Հետեւաբար մեղքը մեր գործերով սկիզբ չի առնում, այլ նախորդում է դրան: Այլ խօսքով մենք մեղաւոր ենք, ոչ թէ նրա համար, որ մեղք ենք գործում, այլ մեղք ենք գործում, քանի որ մեղաւոր ենք: Սկզբում Աստուած աշխարհը մարդուն ենթարկեց, բայց մարդը մեղանչելով ինքը ենթարկուեց աշխարհին: Մեղքը, որ գործեցին Ադամն ու Եւան, եւ որի համար Աստծու պատիժն իջաւ նրանց վրայ (Ծննդոց Գ գլուխ), չսահմանափակուեց միայն նրանցով, այլ նաեւ ժառանգաբար փոխանցուեց նրանց սերունդներին ու նրանք էլ Աստծոյ առաջ մեղաւոր գտնուեցին: Այսինքն, նախնական կամ սկզբնական մեղքը տարբերւում է անձնական մեղքերից, որ գործում է ամէն

մի անհատ: Սկզբնական մեղքը այն արմատն է, որից ծնուում են մնացած մեղքերը: Հետեւաբար բոլոր մարդկանց մէջ գոյութիւն ունի սկզբնական մեղքը, եւ Ադամի իւրաքանչիւր զաւակ Ադամի մէջ արդէն մասնակից է եղել այդ մեղքին, եւ չկայ մէկը, որ ազատ լինի այդ մեղքից, իհարկէ, բացի Քրիստոսից: Պօղոս Առաքեալը իր նամակներում բացայայտ է խօսում այդ մասին (Հռոմ., Ե, 12-19, Ա Կորնթ., ԺԵ, 22, Բ Կորնթ., Ե, 14 եւ այլն): Այս առաքելական վարդապետութեան հիման վրայ էլ, նախնի եկեղեցում մկրտում էին նաեւ մանուկներին, առանց հաշուի առնելու հասակը, քանի որ «Հրաժարիմքը» ասելիս նկատի չէին ունենում գործած մեղքերը եւ յանցանքները, այլ՝ սկզբնական մեղքը:

Յայտնի է, որ եկեղեցին սրբերի դասին է կարգել Ադամին: Համաձայն Հայ եկեղեցու Տօնացոյցի, մի օր նուիրուում է մեր նախահայրերին՝ Ադամին, Աբէլին, Սէթին, Նոյին եւ այլն: Այսինքն, Ադամի փրկութեան հարցը կասկած չի յարուցում (այսօր մեզանում կան քրիստոնեաներ, որոնք հաճոյքով Ադամին «դժոխք են ուղարկում»): Ուրեմն եկեղեցին առաջին մեղաւորին արդարացուած է համարում, բայց Ադամով մեղանչած սերունդներին՝ ոչ: Այստեղ էլ Քրիստոսի փրկագործութիւնն է ջնջում այդ մեղանչածների սկզբնական մեղքը: Բնականաբար հարց կառաջանայ. եթէ մկրտուածները սրբւում են նախնական մեղքից, ապա ինչո՞ւ նրանց զաւակները կրկին պէտք է մկրտուեն: Չէ՞ որ ծնողները չեն կարող փոխանցել իրենց որդիներին մի բան, որ չունեն: Այս կարգի դժուարութիւնները առաջ են գալիս մեղքի փոխանցման մասին սխալ պատկերացումից:

Ադամը դրախտում, անհնազանդութեան մեղքը գործելիս, իր մէջ ընդգրկում էր ամբողջ մարդկութիւնը, որը եւ ընկաւ դատապարտութեան տակ: Իսկ ինչ որ Ադամը գործեց յետագայում, անձնական էր, իր անձի համար դատապարտելի կամ գովելի եւ ոչ թէ սերունդների: Ուրեմն, սկզբնական մեղքը տարածւում է ամբողջ մարդկութեան վրայ, անկախ արտաքին պարագաներից: Մկրտուողները իրենց անձի համար են սրբւում եւ ազատւում սկզբնական մեղքից ու նրա հետեւանքներից եւ ամենեւին ոչ իրենց սերունդների համար:

Հարց.- Ինչո՞ւ է Հայ եկեղեցին մկրտում անչափահասներին:

Պատասխան.- Անչափահասների մկրտութիւնը կամ մանկամկրտութիւնը շատ հին սովորութիւն է: Առաքելական ժամանակներից սկսած Եկեղեցում ընդունուած է եղել նման կարգը: Մանկամկրտութեան հակառակորդները ջանում են ցոյց տալ, որ մանուկի համար խորհուրդը անօգուտ է եւ պնդում, որ անչափահասը պիտի դառնայ գիտակից ու նոր միայն մկրտուի: Որպէս ապացոյց բերում են Յիսուսի օրինակը, ասելով, թէ Նա մկրտուեց չափահաս՝ երեսուն տարեկանում, Յովհաննէս Մկրտչի ձեռքով: Պարզ է, որ նման փաստարկները լուրջ սուրբգրային հիմնաւորումներ չեն, մանաւանդ որ Յովհաննէսի մկրտութիւնը, որն ընդունեց Յիսուս, էապէս տարբերւում է քրիստոնէական մկրտութեան խորհրդից: Միւս կողմից էլ Ս. Գրքում չենք գտնի եւ ոչ մի հրաման, ուր ասուի, թէ պէտք է մկրտել միայն չափահասներին, իսկ մանուկներին՝ արգելել: Բոլոր եկեղեցիները մկրտութեան անհրաժեշտութիւնը հիմնաւորում են սուրբգրային այն հրամանով, համաձայն որի *«եթէ մէկը չծնուի Հոգուց ու ջրից, չի կարող մտնել Աստծոյ Արքայութիւնը»* (Յովհ. Գ, 5): Այդ համարը վերջին ժամանակներում տարբեր եկեղեցիներ եւ աղանդներ տարբեր ձեւերով են մեկնում եւ ըստ այդմ էլ հիմնաւորում իրենց դիրքորոշումը: Մեզ համար, իհարկէ, աւելի կարեւոր եւ հետաքրքիր է, թէ մեր եկեղեցին ինչպէս է մեկնել այն: Ահա Որոտնեցու մեկնութիւնը.

«Այստեղ նկարագրուած է Ադամի ստեղծումը: Ջուրը մարմինն է ցոյց տալիս (արարչութեան նիւթը) եւ հոգին, որ փչեց ու նա կենդանի հոգի եղաւ, ցոյց է տալիս Աստծոյ Հոգին, քանի որ ով ունի այդ Հոգին, նա է մտնելու Աստծոյ Արքայութիւն: Նաեւ ցոյց է տալիս ինչպէս առաջին ծնունդը, որն առանց հաւատի չենք կարող հասկանալ, այնպէս էլ երկրորդ ծնունդը՝ ջրից եւ հոգուց, որը նոյնպէս անքննելի է, եւ միայն հաւատով ենք կարողանում ծնուել եւ հասկանալ: Ինչպէս որ *"Աստծու Հոգին շրջում էր ջրերի վրայ"* (Ծննդոց Ա, 2), այսինքն՝ ուզում էր ստեղծել թռչուններ ջրից, որոնք պիտի վերանային երկինք, այնպէս էլ այստեղ, ծնուելով ջրից եւ հոգուց՝ վերանում ենք (մտնում ենք) Աստծու Արքայութիւն»: Ուրեմն, պարզ է դառնում, որ «հոգուց ու ջրից» ծնուելը նոր ստեղծագործութիւնն է, ի տարբերութիւն առաջին՝ հին ստեղծագործութեան: Ընդ որում երկու դէպքում էլ նոյնն է նիւթը՝

ջուրը: Իսկ որեւէ պահանջ կամ սահմանափակում ենթակայի վրայ այստեղ չկայ: Այդ պատճառով էլ Եկեղեցին մկրտում է մանուկներին ու չափահասներին անխտիր, ընդ որում խստիւ հետեւում է, որ չափահասը լաւ դաստիարակուած լինի քրիստոնէական հոգով եւ Աւետարանով, իսկ մանուկի դէպքում՝ դաստիարակողները (ծնողները, կնքահայրը) դաստիարակուած լինեն նոյն հոգով:

Հարց.- Ինչպէ՞ս է հիմնաւորում մանկամկրտութիւնը եկեղեցին:

Պատասխան.- Ս. Գրքում կան բազմաթիւ վկայութիւններ ի նպաստ մանկամկրտութեան: Ահա մի քանիսը.

Ա. Գործք, ԺԶ, 15: Այստեղ մկրտւում է Լիդիա անունով ծիրանավաճառը իր տան հետ միասին: Իսկ *«տունը»*, իհարկէ, միայն չափահասները չեն:

Բ. Գործք, ԺԶ, 31-33: Փիլիպէի բանտապետը հաւատաց, մկրտուեց ինքը եւ իր ամբողջ տունը, այսինքն՝ նաեւ երեխաները:

Գ. Գործք, ԺԸ, 7: Կորնթոսի Կրիսպոս ժողովրդապետը եւ իր տունը հաւատացին ու մկրտուեցին:

Դ. Ա Կորնթ., Ա, 16: Պօղոսը ինքն է մկրտել Ստեփանէսի ընտանիքը:

Այս օրինակներից կարելի է եզրակացնել, որ Առաքելական ժամանակներում մանուկների մկրտութիւնը ընդունուած կարգ էր:

Մանկամկրտութեան հակառակորդները ասում են, թէ՝ «պէտք է հաւատալ ու յետոյ մկրտուել, մինչդեռ երեխաները չեն կարող հաւատալ (Մատթ., ԻԸ, 19, Մարկ., ԺԶ, 16 եւ այլն), եւ հետեւաբար մկրտուել»: Բայց Մկրտութեան Խորհրդի առանձնայատկութիւնն էլ այն է, որ կատարողը Աստուած է, եւ խորհրդի արդիւնքն էլ Իրենն է: Ուրեմն, եթէ բաւարարւում են խորհրդի կատարման պայմանները, ապա կստացուի նաեւ սպասուած արդիւնքը: Եւ բնական է, որ Աստուածային այս զօրութիւնը, որ տարածւում է բոլոր մարդկանց վրայ, չէր կարող չտարածուել նաեւ երեխաների վրայ:

Հայ եկեղեցում մկրտութեան կարգը սկսւում է Ը սաղմոսի ընթերցումով, որը յայտնի է որպէս «ապաշխարութեան սաղմոս»: Ընթերցումը սկսւում է դեռ եկեղեցի չմտած, դռան մօտ: Այսինքն, առանց զղջումի մօտենալ Աւազանին անթոյլատրելի է: «Անօրէնութեամբ յղացաւ, եւ ի մեղս ծնաւ զիս մայրիմ», - ասում է սաղմոսի հեղինակը՝ Դաւիթը: Իհարկէ, այստեղ խօսքը ոչ թէ գործած մեղքերի մասին է, այլ «սկզբնական» մեղքի, որն ի ծնէ է, անկախ մկրտուողի տարիքից: Իսկ պաշտօնեան իր աղօթքի մէջ ասում է. «Եւ արժանի արա զսա ի ձեռն սուրբ աւազանին՝ լուանալ զինութիւն մեղաց իւրոց եւ նորոգիլ լուսով շնորհաց քոց»: Հասկանալի է, որ խօսքը «մեղքի հնութիւնից», այսինքն՝ «սկզբնական մեղքից» լուացուելու եւ նոր ստեղծագործութեան հիմ դնելու մասին է: Ուրեմն, խորհուրդը հիմնականում «սկզբնական մեղքից» ազատուելու համար է եւ հետեւաբար չկայ որեւէ տարիքային սահմանափակում: Այս պատճառով էլ, հնում հայոց մէջ ընդունուած էր մանուկներին մկրտել շատ վաղ հասակում՝ ութ օրականում:

Հարց.- Արդեօք անհրաժե՞շտ է մկրտութիւնը:

Պատասխան.- Մկրտութիւնը ոչ միայն անհրաժեշտ է, այլ նաեւ պարտադիր: Խորհուրդը բացայայտօրէն հաստատել է Ինքը՝ Յիսուս (Մատթ., ԻԸ, 19, Մարկ., ԺԶ, 15, Յովհ., Գ, 5) եւ Ինքն էլ մկրտուել է Յովհաննէս Մկրտչի կողմից: Բայց Նրա մկրտութիւնը խորհուրդ չէր, քանի որ Յիսուս Ինքը մկրտութեան խորհրդի արդիւնքի (սկզբնական մեղքից մաքրուելը) կարիք չունէր: Այդ առումով էլ Յիսուսի մկրտութիւնը «օրինական» էր եւ ոչ թէ «խորհրդական»: Նոր Կտակարանից իմանում ենք, որ Յովհաննէսի մկրտութիւն ունեցողներն էլ փափագում էին մկրտուել Յիսուսի մկրտութեամբ (Գործք, ԺԹ, 4-5):

Վերջին ընթրիքի ժամանակ Յիսուս հաստատեց հաղորդութեան խորհուրդը եւ իշխանութիւն տուեց նրանց (առաքեալներին) նոյնը անել Իրենից յետոյ: Քանի որ մկրտութիւնը առաջին եւ մուտքի խորհուրդն է, ուստի կարելի է ասել, որ առաքեալները առանց մկրտութեան խորհրդին մասնակցած լինելու չէին կարող հաղորդութեան խորհրդին մասնակցել: Այսինքն, նրանք արդէն մկրտուել էին Յիսուսի մկրտութեամբ: Հետեւաբար Յիսուս արդէն հաստատել էր մկրտութեան խորհուրդը իր քարոզութեան սկզբում, որով եւ հասկանալի է դառնում Նիկոդեմոսին տուած բացատրութիւնը, քանի որ նման խօսակցութիւն տեղի չէր ունենայ, եթէ մկրտութեան խորհուրդը հաստատուած չլինէր: Իսկ յարութիւնից յետոյ Յիսուսի պատուէրը (Մատթ., 28, 19) վերաբերում էր բոլոր ազգերին՝ մկրտուելու երրորդութեան անունով:

Հայրերից ոմանք գտնում են, որ Տիրամայրն էլ է մկրտուել Քրիստոսի կողմից, մինչդեռ կաթոլիկները դա աւելորդ են համարում, քանի որ դաւանում են Ս. Կոյսի «անարատ յղութեան» վարդապետութիւնը:

Հարց.- Իսկ ինչո՞ւ մկրտուեց Յիսուս, չէ՞ որ նա զերծ էր սկզբնական մեղքից:

Պատասխան.- Երբ Յիսուս եկաւ Յովհաննէսի մօտ մկրտուելու, Յովհաննէսը զարմացաւ, քանի որ ինքը պէտք է մկրտուէր Յիսուսի կողմից: Յովհաննէսի մկրտութիւնը մեղաւորների համար էր, ապաշխարութեան համար: Եկեղեցու հայրերն էլ շատ են գրել Յիսուսի մկրտութեան մասին եւ բազում մեկնութիւններ տուել: Օրինակ, Եղիշէն այսպէս է մեկնում.

«Սկզբում Ս. Հոգին շարժւում էր ջրերի վրայ, խորհելով արարչագործութիւնը, որի պսակին՝ մարդուն, թշնամին յաղթեց, գցելով մեղքի ջրերի մէջ: Իսկ այստեղ՝ Յորդանանում, Հոգին աղաւնակերպ իջնելով՝ արարածների ապականութիւնը վերստին հրաշագործեց, յաւիտենից ծածկուած խորհուրդները բացայայտեց, յայտնելով Որդուն՝ Յիսուսին: Այն ժամանակ երկիրը ապականուեց կործանարար ջրհեղեղով, իսկ Յորդանանում՝ մկրտութեան ջրհեղեղով երկիրը կեանք գտաւ ու ոչ թէ արարածներին ընկղմեց, այլ՝ մեղաց գործերը: Այնտեղ մարդկային ազգի թաղումը ջրերի մէջ ապականութեան հետեւանք էր, իսկ այստեղ՝ թաղումը ջրերի մէջ առաջ բերեց նորոգում եւ կենաց հաղորդութիւն: Այնտեղ աղաւնին ձիթենու շիւղը բերանին աւետեց բարկութեան մեղմանալու մասին, իսկ այստեղ աղաւնու նմանութեամբ Ս. Հոգին աւետեց կենաց երաշխիքի, Սիրելի Որդու մասին»:

Տաթեւացին Յիսուսի մկրտութեան համար գրում է, որ դրանով Նա

-յայնձն առաւ մեր սրբութեան գործը.

-ջրի մէջ խորտակեց վիշապի գլուխը.

-մեր մեղքերը լուաց եւ հին Ադամին թաղեց ջրի մէջ.

-սրբեց ջուրը եւ զօրացրեց, որ վերստին ծնունդ պարգեւի մարդկանց.

-Օրէնքի կատարման համար.

-օրինակ եղաւ մեզ համար մկրտուելու.

-Երրորդութեան խորհուրդը յայտնեց:

Պօղոս առաքեալը իր նամակներում Յիսուսին անուանում է երկու ձեւով,

«երկրորդ մարդ» (Ա Կորնթ., ԺԵ, 47) եւ *«վերջին Ադամ»* (Ա Կորնթ., Ե, 45): *«Վերջին Ադամ»*-ը նշանակում է, որ Յիսուսով ադամական բնութիւնը խորտակուեց եւ սկիզբ դրուեց նոր ստեղծագործութեան՝ «երկրորդ մարդուն», որի շարքերն են մտնում բոլոր նրանք, որ ծնւում են *«ջրից եւ Հոգուց»*՝ կազմելով Քրիստոսի Եկեղեցին:

Հարց.- Ինչո՞վ է տարբերւում Յովհաննէսի մկրտութիւնը Յիսուսի մկրտութիւնից:

Պատասխան.- Նոյնն է միայն նիւթը (ջուրը) եւ ընկղմուելու ձեւը: Յովհաննէսը մկրտում էր Նրա անունով, որ պիտի գար, իսկ Յիսուս՝ Ս. Երրորդութեան անունով: Քրիստոսի մկրտութիւնը բացում է երկնքի դռները, մինչդեռ Յովհաննէսի մկրտութիւնը միայն ցոյց է տալիս այդ ճանապարհը (Տաթեւացի):

Հարց.- Ինչպէ՞ս է կատարւում մկրտութեան խորհուրդը:

Պատասխան.- Հայ եկեղեցում մկրտութեան խորհուրդը կատարւում է համաձայն Մաշտոցի (Ծիսագիրք): Սկզբից մինչեւ վերջ խորհրդակատարութիւնը աստիճանաբար պատկերում է փրկագործութեան իրականացումը, Երկնքի Թագաւորութեան անդամագրուելը, Ս. Հոգու շնորհների ընդունումը եւ այլն:

Նախ քահանան երեխային տանում է եկեղեցու դռան մօտ եւ սկսում արարողութիւնը *«Հայր մերով»* ու յետոյ ասում. «Օրհնեալ Հոգիդ Սուրբ Աստուած ճշմարիտ»: Այնուհետեւ ընթերցւում է հինգ սաղմոս (Ծ, ՃԼ, ԻԴ, ԻԵ եւ ԻԶ): Այս մասը (մինչեւ եկեղեցի մտնելը) կոչւում է ապաշխարողական, քանի որ սկսւում է Ծ սաղմոսից, որը *«զղջման»* սաղմոսն է եւ աստիճանաբար ենթակային տանում է այդ «ճանապարհով»՝ ցոյց տալով Աստծու ողորմութիւնը, գթութիւնը եւ դէպի լոյս գնացող փրկութեան ճամփան: Այսպէս՝

- Ծ սաղմոսը ցոյց է տալիս դարձի եկողների հանդէպ Աստծու ողորմութիւնը (սկսւում է *«Ողորմեա ինձ, Աստուած, ըստ մեծի ողորմութեան քում»* խօսքերով):

- ՃԼ սաղմոսը սովորեցնում է խոնարհուել Աստծու առաջ եւ յուսալ նրան:

- ԻԴ սաղմոսում խնդրում ենք մեղքերի թողութիւն, որ ճշմարտութեամբ

քայլենք եւ թշնամիներից ազատուենք:

- Ի՞ սաղմոսը սովորեցնում է, որ մենք մէկ դատաւոր ունենք եւ խոստանում ենք չքայլել ամբարիշտների հետ, այլ եկեղեցի պիտի գնանք եւ Աստծուն փառաւորենք:

- Ի՞Ձ սաղմոսը ցոյց է տալիս մեր կեանքի առաջնորդին եւ լոյսին:

Այնուհետեւ քահանան ոլորում է սպիտակ եւ կարմիր թելերով հիւսուած նարօտը, ասում «Պահպանիչը» եւ երեք անգամ աղօթում:

Ա աղօթքում խնդրում է, որ Աստուած մկրտուողին ընդունի, մաքրի, սրբի Աւազանում եւ երկնքի արքայութեան որդեգիր դարձնի:

Բ աղօթքում խնդրում է, որ Աստուած սրբի ենթակայի միտքը, խորհուրդները ամէն նենգութիւնից, մաքրի մեղքի հնութիւնից (ադամական, սկզբնական մեղքիցեւ նորոգի շնորհաց լուսով:

Գ աղօթքում խնդրում է, որ Աստուած լցնի ենթակային երկնային շնորհներով եւ զօրացնի, «քրիստոնեայ» անունը պարգեւի՝ արժանացնելով վերստին ծննդեան Ս. Աւազանում:

Այնուհետեւ երեխան (եթէ չափահաս է) երեք անգամ ծունկի գալով ասում է. «Ի Քեզ անկայ ես արգանդէ, յորովայնէ մօր իմոյ դու ես Աստուած իմ»: Իսկ եթէ երեխան անչափահաս է, նրա փոխարէն նոյնը կրկնում է կնքահայրը եւ վերցնելով երեխային, դառնում է դէպի արեւմուտք եւ ասում «Հրաժարիմքը»՝ հրաժարումը սատանայի իշխանութիւնից: Յետոյ դառնում են դէպի արեւելք եւ ասում համառօտ դաւանութեան բանաձեւը («Հաւատամք յամենասուրբ Երրորդութիւնն...»):

Երկրորդ մասում մկրտուողը լսում է Աւետարանը (Մատթ., ԻԸ, 16-20) եւ խոստովանում դաւանանքը՝ Նիկիական «Հանգանակը», որից յետոյ պաշտօնեան աղօթքով խնդրում է Աստծուց, որ ենթակային ընդունի ճշմարիտ երկրպագողների բանակը, եւ կարդում է ճԺէ սաղմոսի 1-19 համարները: Սաղմոսում պատկերուած է Տիրոջ ողորմութեան յաւիտենականութիւնը, ուր սաղմոսերգուն խոստովանում է, որ աւելի լաւ է Տիրոջը յուսալ, քան մարդկանց ու իշխաններին ապաւինել: *«Ուստի, - ասում է սաղմոսերգուն, - բացէք ինձ դռներն արդարութեան, որ մտնեմ ու Տիրոջը գոհութիւն մատուցեմ»:*

Այս պահին աւարտւում է «երդմնեցուցման» կարգը, ու բոլորը միասին

մտնում են «արդարութեան դռներով» եկեղեցի ու սաղմոսի յաջորդ համարների ընթերցանութեամբ մօտենում Ս. Աւազանին: Պաշտօնեան սկսում է երգել «Արեգակն արդարութեան» շարականը:

Երրորդ մասում կատարւում է բուն մկրտութիւնը: Նախ պաշտօնեան աղօթում է. «Եւ այժմ աղաչում եմ քեզ, բարերար Տէր, առաքիր ամենասուրբ Հոգուդ շնորհը, որ նա, օծուելով սրբալոյս իւղով, հոգեւոր իմաստութիւն ունենայ, հակառակամարտում (այսինքն՝ հոգեւոր պատերազմում) յաղթութեան հասնի, առաքինի գործերում պատուիրանապահ լինելու համար զօրութիւն ունենայ եւ կրթուի աստուածապաշտութեան մէջ»:

Այնուհետեւ ջուրը լցնում են Աւազանի մէջ, ընթերցում Լ սաղմոսից՝ *«Զայն Տեառն ի վերայ ջուրց բազմաց»,* եւ կարդում հատուածներ Եզեկիէլի մարգարէութիւնից, Գաղատացիների թղթից եւ Յովհաննէսի աւետարանից: Յետոյ ջուրն օրհնելով ու աղօթելով՝ քահանան միւռոնը երեք անգամ խաչաձեւ թափում է ջրի վրայ՝ երգելով «Առաքելոյ աղաւնոյ» շարականը:

Այստեղ երեխային մերկացնում են, եւ կնքահայրը գրկում է նրան: Պաշտօնեան աղօթում է. «Մերկացրու սրան մեղքի հնութիւնից եւ նորոգիր նոր կեանքով» եւ յետոյ երեք անգամ հարցնում է կնքահօրը. «Երեխայս զի՞նչ խնդրէ»: Կնքահայրը պատասխանում է. «Հաւատ, Յոյս, Սէր եւ Մկրտութիւն: Մկրտիլ եւ արդարանալ, մաքրիլ ի մեղաց, ազատիլ ի դիւաց եւ ծառայել Աստուծոյ»:

Այդ պահին քահանան նոր անուն է դնում երեխային եւ մկրտում՝ երեք անգամ ընկղմելով ջրի մէջ: Այնուհետեւ քահանան ասում է. «(անունը) ծառայս Աստուծոյ, եկեալ յերեխայութիւնէ ի մկրտութիւն, մկրտի յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ: Գնեալ արեամբ Քրիստոսի ի ծառայութենէ մեղաց, ընդունի զորդեգրութիւն Հօրն երկնաւոր, լինի ժառանգակից Քրիստոսի եւ տաճար Հոգւոյն Սրբոյ»: Եւ ապա երեխային յանձնում է կնքահօրը: Նրան նոր զգեստներ են հագցնում, նարօտը կապում եւ մկրտուածի ձեռքն են տալիս (եթէ չափահաս է) երկու վառած մոմ, իսկ եթէ երեխայ է, ծնողները, համբուրելով կնքահօր ձեռքը, վերցնում են երեխային, ու Աւետարանի ընթերցումով (Մատթ., Գ, գլուխ) եւ *«Հայր մերով»* աւարտում Մկրտութեան խորհուրդը: Հայ եկեղեցում մկրտութեան խորհրդից յետոյ անմիջապէս կատարւում է նաեւ երկրորդ եւ չորրորդ խորհուրդները՝ Դրոշմը եւ Հաղորդութիւնը:

Հարց.- Ինչո՞ւ է մկրտութեան կարգը սկսւում «Օրհնեալ Հոգիդ Սուրբ Աստուած ճշմարիտ» սրբասացութեամբ, որն ուղղուած է Ս. Հոգուն եւ ոչ թէ Հօրը կամ Որդուն:

Պատասխան.- Յիսուսի համբարձումից յետոյ սկսւում է մի դարաշրջան, որը կոչւում է Շնորհաց շրջան: Այդ դարաշրջանը Ս. Հոգու տնօրինութեանն է ենթակայ, ինչպէս որ խոստացաւ Յիսուս (Յովհ., ԺԴ գլուխ): Առաքեալները Հոգեգալստեան օրը լցուեցին Ս. Հոգու շնորհներով եւ հաստատեցին Եկեղեցին՝ նոր անդամներ մկրտելով: Այժմ էլ խորհրդակատար քահանան Ս. Հոգու զօրութեանն է դիմում, որպէսզի խորհուրդը կատարուի աստուածային ներգործութեամբ, ինչպէս առաքելական ժամանակներում:

Հարց.- Ինչո՞ւ են կարգը սկսում եկեղեցու դռան մօտից:

Պատասխան.- Հայոց եկեղեցիներում դուռը միշտ նայում է դէպի արեւմուտք, այսինքն՝ դռնով ներս մտնելիս մեր հայեացքն ուղղւում է դէպի արեւելք, այսինքն՝ Յիսուսին, որ Կենդանի Արեգակն է, ճշմարիտ Լոյսը: Հետեւաբար, կարգն ամբողջութեամբ խորհրդանշում է անցումը խաւարից (արեւմուտք) դէպի լոյս (արեւելք), մահուանից՝ դէպի կեանք, այնպէս, ինչպէս Յեսու Նաւէի օրօք Իսրայէլն անցաւ Յորդանանով՝ անապատից մտնելով Աւետեաց երկիր: Ուստի եւ երդմնեցուցման մասը կատարում են եկեղեցուց դուրս՝ դռան մօտ ու նոր մտնում եկեղեցի՝ խորհրդանշելով այդ զարմանալի անցումը մահուանից (եկեղեցուց դուրս) դէպի կեանք (եկեղեցում):

Հարց.- Ինչո՞ւ է հինգ սաղմոս ընթերցւում:

Պատասխան.- Հինգ սաղմոսները խորհրդանշում են մարդու հինգ զգայարանները, այսինքն՝ մարդու ամբողջ էութիւնը, որը հիմա պիտի յանձնուի Աստծու տնօրինութեան: Սաղմոսները ցոյց են տալիս մեր զղջումը (Ծ սաղմոս), խոնարհութիւնը (ՃԼ սաղմոս), մեղքից ազատուելը (ԻԴ սաղմոս), դարձը, ճանապարհների փոփոխութիւնը (ԻԵ սաղմոս) եւ աներկիւղ կեանքը (ԻԶ սաղմոս):

Հարց.- Ի՞նչ խորհուրդ ունի նարօտը:

Պատասխան.- Ըստ Տաթեւացու սպիտակ եւ կարմիր թելերը խորհրդանշում են Յիսուսի կողից բխած ջուրն ու արիւնը, այսինքն՝ Խաչելութիւնը, որով Աստուած յաղթեց աշխարհին: Պօղոսն էլ է գրում կորնթացիներին, որ ինքը չի ուզում ուրիշ բան տեսնել նրանց մէջ, այլ՝ միայն Քրիստոսին, այն էլ՝ խաչը ելած (Ա Կորնթ., Բ, 2): Ուրեմն, նարօտը խաւար աշխարհի, մեղքի ու հեթանոսութեան դէմ, քրիստոնէութեան տարած յաղթանակի նշանն է, նրա յաղթական դրօշը: Մկրտուողը, կրելով նարօտը, ի լուր աշխարհի վկայում է քրիստոնէութիւն ընդունելու իր յաղթական որոշումը:

Հարց.- Ի՞նչ են նշանակում քահանայի երեք աղօթքները:

Պատասխան.- Այդ երեք աղօթքներում քահանան խնդրում է, որ Ինքը՝ խաղաղութեան Աստուածը, մեզ բոլորովին սուրբ դարձնի՝ մեր հոգին, շունչը (միտքը, բանականութիւնը եւ մարմինը անարատ պահելով մինչեւ Յիսուսի երկրորդ գալուստը (Ա Թեսաղոն. Ե, 23):

Հարց.- Ինչո՞ւ են «Հրաժարիմքը» ասում՝ նայելով արեւմուտք, իսկ դաւանութեան խոստովանութիւնը՝ դէպի արեւելք:

Պատասխան.- Արեւմուտքը խորհրդանշում է խաւարը, չարի իշխանութիւնը, որից հրաժարւում է ենթական (երդմնեցուցման կարգը): եւ դառնալով դէպի արեւելք, խոստովանում է դաւանանքը, ցոյց տալով պատրաստակամութիւնը ընդունելու Քրիստոսի լոյսը:

Հարց.- Ի՞նչ խորհուրդ ունի դռների բացուելն ու եկեղեցի մտնելը:

Պատասխան.- Երբ աւարտւում է երդմնեցուցման կարգը եւ մկրտուողը յաջողութեամբ դուրս է գալիս փորձութիւնից՝ դաւանելով Քրիստոսի վարդապետութիւնը եւ հրաժարուելով Սատանայի իշխանութիւնից, նա արժանի է դառնում մտնելու եկեղեցի, Աստծու ներկայութեան վայրը, «հաւասարուելով» ճշմարիտ երկրպագողներին:

Հարց.- Ինչո՞ւ են օրհնում ջուրը:

Պատասխան.- Ադամի անէծքից յետոյ ջուրը, կորցնելով օրհնութիւնը, կորցնում է նաեւ կեանք տալու զօրութիւնը (Ծննդոց Ա, Գ գլուխներ): Հետե-

ւաբար այն ջուրը, որի մէջ պիտի մկրտուի ենթական, պէտք է օրհնուի, որ դառնայ մաքրութեան նիւթ, սրբուի անէծքից:

Հարց.- Ինչո՞ւ են երեք անգամ ընկղմում ջրի մէջ:

Պատասխան.- Ամէն մի ընկղմումը կատարւում է Երրորդութեան անձերից ամէն մէկի անունով. «յանուն Հօր»՝ առաջին ընկղմումը, «եւ Որդւոյ»՝ երկրորդ ընկղմումը, «եւ Հոգւոյն Սրբոյ»՝ երրորդ ընկղմումը: Այստեղ «Յանուն» բառը եզակի է, ցոյց է տալիս, որ Հայրը, Որդին եւ Ս. Հոգին ունեն մէկ անուն, որով էլ մկրտւում է ենթական, այսինքն՝ Ս. Երրորդութեան անունով: Երեք ընկղմումները խորհրդանշում են նաեւ Յիսուսի երեքօրեայ թաղումը, իսկ ջրից դուրս գալը՝ յարութիւնը: Դրա համար էլ նոր մկրտուածին հագցնում են նոր զգեստները, որը խորհրդանշում է մեղքից ազատուելը, աշխարհի համար մեռնելը եւ Աստծու համար կենդանի լինելը:

3. ԴՐՈՇՄ

Հարց.- Ի՞նչ է Դրոշմը:

Պատասխան.- Դրոշմը եօթ խորհուրդներից երկրորդն է: Խորհուրդը նաղեւ երկրորդն է ըստ ընդունելութեան կարգի: Հայ եկեղեցում այդ խորհուրդը հետեւում է անմիջապէս մկրտութեան խորհրդին: Դրոշմը (կնունք) կամ Ս. Հոգու կնիքը այն խորհուրդն է, որով նոր մկրտուածը սրբարար միւռոնի դրոշմամբ ընդունում է Ս. Հոգու շնորհը՝ հոգեւորապէս զօրանալու, քրիստոնէական հաւատն ամրացնելու եւ պահպանելու, յաղթելու սատանայական ամէն տեսակ խաբէութիւններին եւ մոլորութիւններին: «Դրոշմը հաստատութեան խորհուրդ է, զօրացնելու եւ քաջ դարձնելու համար» (Տաթեւացի): Դրոշմն ընդունելուց յետոյ է մկրտուողը դառնում քրիստոնեայ: Նարեկացին միւռոնի օրհնութեանը նուիրուած գլխում գրում է (Մատեան, Բան ՂԳ, հատուած ԺԸ): «Եւ առանց որոյ ոչ է գրիլ քրիստոսեան, եւ ոչ նազովրեցի անուանիլ»: Այսինքն՝ առանց դրոշմի ոչ մէկը չի կարող կոչուել քրիստոնեայ կամ նազովրեցի: Այստեղ շատ խորհրդաւոր է բառերի օգտագործումը. «քրիստոս» յունարէնում նշանակում է «օծեալ», իսկ «նազովրեցի» եբրայերէնում նշանակում է «պսակ, թագ ունեցող»: Հետեւաբար, Նարեկացու այդ նախադասութիւնը կարելի է ընթերցել նաեւ այսպէս. «Առանց դրոշմի ոչ ոք չի կարող լինել օծեալ, որը (դրոշմըմեր պսակն է ու թագը»: Ինչպէս որ, հարսին նշանում են նախքան հարսանիք, այնպէս էլ մեր Երկնաւոր Փեսան՝ Յիսուս, նշանում է իր ընտրեալին, դրոշմում, որ նա չպատկանի ուրիշին, այլ մաքուր ու անարատ մնայ մինչեւ Երկնային հարսանիքը:

Դրոշմեալին նոր հանդերձներ հագցնելը խորհրդանշում է նրա լուսաւոր վարքը, պայծառ հաւատը եւ անմեղութիւնը: Դրոշմը մկրտութեան խորհրդի նման անկրկնելի է, եթէ նոյնիսկ ապագայում նա ուրանայ եւ յետոյ դարձի գայ:

Դրոշմը իբրեւ խորհուրդ ունի՝

ա. ենթական՝ նոր մկրտուածը,

բ. զգալի նշանը՝ կնիքը,

գ. նիւթը՝ միւռոնը,

դ. պաշտօնեան՝ ձեռնադրուած քահանան եւ

ե. բանաձեւը. «Իւղ անոյշ յանուն Յիսուսի Քրիստոսի, հեղեալ ի վերայ քո՝ կնիք երկնաւոր պարգեւացն անապականութեան»: Դրոշմի նիւթի՝ միւռոնի օրհնութեան ժամանակ միշտ խառնում են նախորդ օրհնուած միւռոնից, եւ այդպիսով հասնում մինչեւ Ս. Գրիգոր Լուսաւորչի ժամանակները, իսկ այդտեղից էլ՝ մինչեւ Թադեւոս Առաքեալը, որն ըստ աւանդութեան Հայաստան բերեց Յիսուսի կողմից օրհնուած իւղից մի մաս:

Խորհրդակատար պաշտօնեան կամ քահանան օծում է մկրտուածի ճակատը ու կնքում՝ աջ բթամատով իւղը քսելով ու ձեռքը գլխին դնելով, ինչպէս առաքեալների ժամանակ, երբ Ս. Հոգու տուչութիւնը ձեռնադրութեամբ էր կատարւում (Գործք, ԺԹ, 2-26, Ը, 14-17, Եփես., Զ, 2):

Դրոշմի արդիւնքը Ս. Հոգու շնորհքն է, որով երկնային զօրութեան կնիքն է հաստատւում մկրտուողի ճակատին՝ նրան զօրացնելու, հաստատելու եւ պահպանելու համար: Դրոշմից յետոյ մկրտեալը դառնում է Քրիստոսի եկեղեցու անդամ, դրա համար էլ պաշտօնեան կատարում է չորրորդ խորհուրդը՝ հաղորդութիւնը: Չափահասները ճաշակում են հաղորդութեան հացը, իսկ նորածիններին միայն շրթնահաղորդ անում, այսինքն՝ շրթունքներին են հպում,

քանի որ նրանք չեն կարող ճաշակել: Հռոմի եկեղեցին այս խորհուրդը կատարում է աւելի ուշ, երբ ենթական դառնում է չափահաս (12-14 տարեկան), մինչդեռ նախնի եկեղեցում այն կատարւում էր միաժամանակ: Հռոմի եկեղեցում խորհրդի պաշտօնէութիւնը վերապահւում է միայն եպիսկոպոսներին:

Խորհուրդը չեն ընդունում բողոքական եկեղեցիները: Նրանք գտնում են, որ Ս. Գրքում նման խորհուրդ Յիսուս չի հաստատել, իսկ այն տեղերը, ուր յիշուած են օծումը կամ դրոշմը հաստատող համարները՝ համարում են դրա հետ կապ չունեցող (Մարկ., Զ, 13, Մատթ., ԺԹ, 13, Գործք, Բ, 4 եւ այլն): Մինչդեռ Գործք Ը, 15-17 - ում կարդում ենք. *«Որոնք իջնելով աղօթք արեցին նրանց համար, որպէսզի Ս. Հոգին առնեն... Այդ ժամանակ ձեռքերը դրին նրանց վրայ եւ Ս. Հոգին ստացան»:* Ինչպէս տեսնում ենք, այս պատմութեան մէջ առկայ են խորհրդին բնորոշ բոլոր պարագաները. ենթական, պաշտօնեան եւ արդիւնքը՝ Ս. Հոգու ընդունումը: Նոյնն է նաեւ Գործք ԺԹ, 5-6-ում. *«Երբ լսեցին, Տէր Յիսուսի անունով մկրտուեցին: Եւ երբ Պօղոսը նրանց վրայ ձեռք դրեց, Ս. Հոգին եկաւ նրանց վրայ»:* Կորնթացիներին Պօղոսը գրում է. *«Բայց նա, որ մեզ ձեզ հետ մէկտեղ Քրիստոսով հաստատեց ու օծեց, Աստուած է, որ մեզ կնքեց եւ տուեց Հոգւոյն գրաւը մեր սրտերում»* (Բ Կորնթ., Ա, 22): Յովհաննէս առաքեալն էլ է յիշատակում երկնային օծութեան, այսինքն՝ դրոշմի մասին. *«Բայց դուք Սուրբի օծութիւնն ունէք»* (Ա Յովհ., Բ, 22), *«Եւ այն օծութիւնը, որ դուք Իրենից ընդունեցիք...»* (Ա Յովհ., Բ, 27):

Այս եւ նման շատ ուրիշ համարների հիման վրայ էլ (Սաղմ., ճԼԲ, 2, Յովհ., Ի, 22, Եփես., Ա, 13 եւ այլն) Առաքելական եկեղեցիները դրոշմն ընդունում են որպէս խորհուրդ: Եկեղեցու պատմութիւնից էլ յայտնի է, որ հայրերը կատարում էին Դրոշմի խորհուրդը: Այսպէս, Կոստանդնուպոլսի Բ Տիեզերական Ժողովի որոշումների է կէտում ասւում է. «Հերետիկոսներից նրանց, որոնք կմիանան ուղղափառներին (այսինքն՝ կվերադառնան եկեղեցու գիրկը) ընդունեցէք դրոշմամբ, կամ Ս. Միւռոնով օծելով ճակատը, աչքերը, քիթը, բերանը եւ ականջները՝ ասելով. "Կնիք Հոգւոյն Սրբոյ"»:

Եւ այսպէս, դրոշմը Ս. Հոգու որդեգրութեան կնիքն է եւ հոգեգալուստ է ամէն մի հաւատացեալի համար, իւրօրինակ «կնիք»: Յովհաննէս Մկրտչի ասածը, թէ՝ *«Նա ձեզ կմկրտի Հոգով եւ կրակով»* (Մատթ., Գ, 11, Ղուկ., Գ, 16),

ցոյց է տալիս Յիսուսի մկրտութեան առաւելութիւնը ապաշխարողական կամ Յովհաննէսի մկրտութիւնից: Հուրը մաքրում, զտում է եւ ամէն աւելորդ բան այրում, թողնելով մաքուրը (Ա Կորնթ., Գ, 14): Իսկ մաքրելուց յետոյ իր շնորհներն է տալիս նորոգուող կեանքի համար, որպէսզի «նորաստեղծեալը» մեծանայ եւ զօրանայ Ս. Հոգու հովանու տակ, մտնելով Հայ եկեղեցու գիրկը:

Հարց.- Ինչպէ՞ս է կատարւում Դրոշմի խորհուրդը:

Պատասխան.- Մկրտութիւնից անմիջապէս յետոյ քահանան աղօթքի մէջ ասում է. «Աստուածգիտութեան լոյսը ծագեցնելով քո արարածի վրայ, Քրիստոս Աստուած, այժմ սրբեցիր, ազատեցիր այս ծառայիդ եւ տուեցիր նրան որդեգրութեան պարգեւը...», եւ միւռոնը լցնելով ափի մէջ, երգում է «Որ յառաջագոյն յօրէնս» շարականը ու կնքում սուրբ իւղով մկրտուածի ճակատը՝ ասելով. «Իւղ անոյշ յանուն Յիսուսի Քրիստոսի՝ հեղեալ ի վերայ քո՝ կնիք երկնաւոր պարգեւացն»: Այնուհետեւ պաշտօնեան օծում է մարմնի մասերն ու ասում համապատասխան բանաձեւերը.

Աչքերը - «Կնիք այս յանուն Յիսուսի Քրիստոսի, լուսաւորեսցէ զաչս քո, զի մի երբեք ննջեսցես ի մահ»:

Ականջները - «Օծումն սրբութեան եղիցի քեզ ի լսողութիւն աստուածային պատուիրանացն»:

Հոտոտելիքը - «Կնիքս յանուն Յիսուսի Քրիստոսի եղիցի քեզ հոտ անուշութեան կենաց ի կեանս»:

Բերանը - «Կնիքս յանուն Յիսուսի Քրիստոսի եղիցի քեզ պահպանութիւն բերանոյ եւ դուռն ամուր շրթանց քոց»:

Ձեռքերը - «Կնիքս յանուն Յիսուսի Քրիստոսի եղիցի քեզ պատճառ բարեգործութեան առաքինի գործոց եւ վարուց»:

Սիրտը - «Կնիքս աստուածային՝ սիրտ սուրբ հաստատեսցէ ի քեզ, եւ հոգի ուղիղ նորոգեսցէ ի փորում քում»:

Թիկունքը - «Կնիքս յանուն Յիսուսի Քրիստոսի եղիցի քեզ վահան ամրութեան, որով կարասցես զամենայն նետս մուխս չարին շիջուցանել»:

Ոտքերը - «Կնիքս աստուածային՝ ուղղեսցէ զգնացս քո ի կեանս յաւիտենից, ամէն»:

Եւ վերջում ասում է. «Խաղաղութիւն ընդ քեզ, փրկեալդ Աստուծոյ: Խաղաղութիւն ընդ քեզ, օծեալդ Աստուծոյ»: Կնքահայրը պատասխանում է. «Եւ ընդ հոգւոյդ քում»: Ապա դրոշմեալին հագցնում են նոր զգեստներ եւ կապում նարօտը, որպէս պսակ յաղթութեան եւ քահանան գոհաբանական աղօթքով («Օրհնեալ ես Աստուած, որ հագցրիր ծառայիդ փրկութեան հանդերձ եւ ուրախութեան պատմուճան, փրկութեան սաղաւարտ եւ շնորհաց պսակ») ու սաղմոսի ընթերցումով (Սաղմոս ԼԱ) աւարտում է Դրոշմի խորհուրդը ու սկսում է Հաղորդութեան խորհրդի կատարումը, որից յետոյ համբուրում են մկրտուածին ու դուրս գալիս եկեղեցուց:

Հարց.- Ինչո՞ւ են Դրոշմից անմիջապէս յետոյ հաղորդութիւն տալիս:

Պատասխան.- Մկրտութիւնից ու դրոշմից յետոյ մկրտուածի համար աւարտւում է մուտքի խորհուրդի կատարումը եւ նա արդէն կարող է մասնակցել միւս խորհուրդներին: Ուստի, որպէս Եկեղեցուն անդամագրուած ու Յիսուսի հետ միաւորուած եւ յաւիտենական ժառանգութիւն ստացած մէկը, նրան հաղորդութիւն են տալիս: Դրոշմեալին վերջում համբուրելը խորհրդանշում է նրա եւ Աստուծոյ միջեւ հաշտութեան ուխտի հաստատումը:

Հարց.- Ի՞նչ է նշանակում «Միւռոնից հանելը»:

Պատասխան.- Հնում, կնունքից յետոյ զգուշութեամբ էին վարւում նոր մկրտուածի հետ, մաքուր պահելով դրոշմուած տեղերը (չափահասները իրենք էին հոգ տանում): Եւ ինչպէս որ ընդունուած էր նորածինների համար ութերորդ օրը մկրտել (ութնօրէք), այնպէս էլ նոր մկրտուածների համար, որպէս նոր ծնուածներ, ութերորդ օրը «միւռոնից հանում էին»՝ լուանալով դրոշմած մասերը: Այսպէս, քահանան այդ օրը գնում էր մկրտուածի տուն եւ լուանալուց յետոյ ասում. «Արդարացար, սրբեցար, զօրացիր, յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ»:

Հիմա, հայոց մէջ տարածուած է ոչ թէ ութնօրէքին միւռոնից հանելը, այլ՝ երրորդ օրը, որն անշուշտ աւանդուած չէ հայրերի կողմից եւ հաւանաբար նոր սովորութիւն է: Լուանալուց յետոյ միւռոնուած ջուրը մեծ զգուշութեամբ թափում էին մաքուր տեղ կամ ցանում սեռեակի անկիւններին, որպէս օրհնուած ջուր եւ սրբութիւն:

Հարց.- Բայց չէ՞ որ երեխան լինելով անգիտակից, չի հասկանայ եւ մասնակից չի լինի Ս. Հոգու պարգեւած շնորհների զօրութեանը:

Պատասխան.- Կաթոլիկ եկեղեցին հէնց այդ նկատառումով էլ Դրոշմը յետաձգում է եւ կատարում աւելի ուշ: Բայց այդ դէպքում, նոյն տրամաբանութեամբ Մկրտութիւնն էլ պէտք է կատարուի աւելի ուշ, որն հակառակ է Նախնի եկեղեցու ընդունած կարգին: Ընդհակառակը, եկեղեցին մկրտելով ու դրոշմելով մանուկներին, նրանց իր հովանու տակ է վերցնում, խնամելով եւ ուղղելով նրա յետագայ ընթացքը, որպէսզի դրոշմուած մանուկը ապահովութեամբ ապրի ու մեծանայ: Եկեղեցին ոչ մի խտրութիւն չի դնում երեխաների եւ չափահասների միջեւ: Երկուսն էլ, ինչպէս տեսանք, հռչակւում են որպէս «Աստուծոյ օծեալ» եւ «փրկեալ», այսինքն՝ Եկեղեցու անդամ են: Եւ ինչպէս մանուկը ծնուելուց անմիջապէս յետոյ պէտք է ճանաչի իր մարմնաւոր ծնողներին, որոնք կերակրելու եւ խնամելու են իրեն, այնպէս էլ նա պէտք է ճանաչի իր հոգեւոր Ծնողին՝ հոգեւոր սնունդ տուողին: Այսինքն՝ մարմնաւոր ծնողը պէտք է իմանայ, որ այդ պահից սկսած մանուկն արդէն միայն իրենը չի, այլ նրա երաշխաւորն ու հոգաբարձուն Յիսուս Քրիստոսն է: Հէնց այդ իմաստով էլ պէտք է հասկանալ դրոշմ, քանի որ դրոշմուածը պատկանում է Դրոշմողին՝ Աստծուն:

4. ԱՊԱՇԽԱՐՈՒԹԻՒՆ

Հարց.- Ի՞նչ է Ապաշխարութիւնը:

Պատասխան.- Ապաշխարութիւնը Եկեղեցու եօթ խորհուրդներից երրորդն է: Մեղաւորը ճշմարիտ զղջումով եւ խոստովանութեամբ թողութիւն է ստանում իր գործած մեղքերի եւ յանցանքների համար: Տաթեւացու բնորոշմամբ «Ապաշխարութիւնն է ցաւել վասն մեղաց, զոր գործեաց. վասն անցեալ չարեացն լալ եւ լացովն վերստին այլ ոչ առնել»:

Նախ բառի մասին. ըստ Հայկազեան բառարանի այն առաջացել է «ապա» (յետոյ) մասնիկից եւ «աշխարել»-ից, այսինքն՝ իբրեւ աշխարհից մեկուսացուած: Ըստ Աճառեանի իրանեան փոխառութիւն է, նոյն իմաստն ունեցող բառից՝ լալ արած յանցանքի վրայ: Բառին հոմանիշ է «ապաշա-

ւել»-ը նոյն իմաստով: Մաշտոցն այդ բառով է թարգմանել աւետարանական «մեթանոյիա» յունարէն բառը, որը նշանակել է զղջալ արածի համար, ճանապարհները փոխել (Մատթ., Գ, 2, Դ, 17):

Ըստ Տաթեւացու ապաշխարութիւնն իր մէջ ընդգրկում է երեք բան. սրտի զղջում, խոստովանութիւն եւ ապաշխարութիւն գործով, «քանի որ երեք ձեւով ենք մեղանչում, - գրում է նա, - խորհրդով, խօսքով եւ գործով, ուստի պէտք է երեք ձեւով էլ ապաշխարենք»:

Ուրեմն, ապաշխարութիւնը մեղքի ճանաչումն է, նրանից հրաժարուելու որոշում ընդունելը եւ թողութիւն ստանալը: Ապաշխարութիւն էին քարոզում Յովհաննէս Մկրտիչը (Մատթ., Գ, 2), Յիսուս (Մատթ., Դ, 17) եւ առաքեալները (Գործք, Բ, 38): Յիսուս ասում էր, որ եթէ մէկը չապաշխարի, ապա նա կկործանուի (Ղուկ., ԺԳ, 3): Մկրտութիւնը լուանում է մեր մեղքերը եւ ազատում մեզ մեղքի պատժից: Բայց քրիստոնէական կեանքում, մկրտութիւնից յետոյ էլ ենք մեղք գործում, քանի որ չենք կարող մեղք չգործել (Ա Յովհ., Ա, 8-9): Մարդու կեանքն ամբողջովին անցնում է մեղքի դէմ պատերազմ մղելով, յաղթանակներով, նահանջներով, անկումներով եւ այլն: Հէնց այստեղ էլ ի յայտ է գալիս մեր Երկնային Փրկչի անսահման ողորմութիւնն ու շնորհը. Նա նորից ու նորից է կանգնեցնում ընկածներին, զօրացնում թոյլերին, ուժ տալիս պայքարելու, մեղքը մերժելու եւ նրան ասելու՝ «Ոչ»: Աստուած չի ուզում մեղաւորի մահը (Եզեկ., ԼԳ, 11), այլ ամէն կերպ նրան փրկելու, մեղքից ազատելու միջոցներ է գտնում: Ապաշխարութիւնը այդպիսի մի սրբարար զօրութիւն ունեցող խորհուրդ է, որը հաստատում է ընկածներին, վերստին կենդանացնում, նորոգում հոգեւոր կեանքը եւ հաշտեցնում Աստծու հետ: Դեռ առաքելական ժամանակներում այն ընդունուած էր որպէս խորհուրդ: Այսօր նա ունի նաեւ զրկանքներ, նեղութիւններ կրելու իմաստ, քանի որ հնում «Ապաշխարութիւնից» յետոյ մեղաւորի համար սկսւում էր ապաշխարութեան մի շրջան, ընթացք, որը նպատակ ունէր բարոյապէս զօրացնելու մեղաւորին, մեղքից հրաժարուելու համար: Ուրեմն, ապաշխարութիւնը կեանք է, մի նոր ընթացք քրիստոնեայի համար, որն ունի շարունակական բնոյթ եւ սահմանափակուած չէ ժամանակի ինչ-որ մի հատուածով, ինչպէս կարծում են շատերն այսօր: Ապաշխարութիւնը ամէն մի քրիստոնեայի համար իր անձնական Գողգոթայի ճանապարհն է, Խաչի ճանապարհը, որ տանում է մեղաւորին դէպի Խաչ, մահ մեղքի, սատանայի համար (յիշենք «Հրաժարիմքը») եւ յարուցեալ կեանք Յիսուսի համար: Ապաշխարութիւնը որպէս խորհուրդ, ունի խորհրդին բնորոշ բոլոր յատկութիւնները.

պաշտօնեան կամ ձեռնադրեալ հոգեւորականը,

ենթական կամ մեղաւոր մարդը,

նիւթը՝ զղջումը, մեղքերի խոստովանութիւնը,

արդիւնքը՝ Ս. Հոգու շնորհը թողութիւն ստանալու համար եւ

բանաձեւը. «Եւ ես կարգաւս քահանայական իշխանութեան եւ հրամանաւն աստուածային, թէ զոր արձակիցէք յերկրի՝ եղիցի արձակեալ յերկինս»:

Ս. Հոգու առաջին գործը մեղաւորին փրկութեան ճանապարհով առաջնորդելն է: Այդ ճանապարհով գնալիս մարդը հեռանում է մեղքից, լալիս նրանց վրայ, թողութիւն խնդրում Աստծուց եւ նորոգուած կեանքով շարունակում իր Խաչի ճամփան: Աստուած եւ մեղքը հակադիր բաներ են. Աստծու Սրբութիւնը դատապարտում է մեղքը եւ մեղաւորին: Ուստի Աստծու հետ հաշտուելու համար պէտք է այդ խնդիրը վերջնականօրէն լուծել: Ս. Հոգին կանչում է բոլոր մարդկանց, Աստծու խօսքով խօսում նրանց սրտի հետ, յայտնում Փրկութեան մասին, յորդորում հաշտուել Աստծու հետ, հաղորդակից լինել Աստծու Թագաւորութեանը: Այս է ապաշխարութեան ճանապարհը, երբ ազատւում ենք մեղքի ծանրութիւնից: Մարդը, բացելով իր աչքերը, հոգու տեսողութիւնը, լսողութիւնը, ձգտում է թօթափել իր վրայից մեղքի բեռը: Զղջումը գործուած մեղքից հրաժարուելն է. այն առաջ է գալիս հաւատից՝ գործած բոլոր մեղքերի համար: Զղջումով եւ անկեղծ խոստովանութեամբ ներւում է ամէն մեղք: Խորհրդի պաշտօնեան կամ խոստովանահայրը հայոց մէջ յաճախ կոչւում է նաեւ «հոգեւոր բժիշկ», քանի որ նրա անմիջական մասնակցութեամբ եւ ներկայութեամբ է ապաշխարողը ստանում իր հիւանդութեան դեղն ու միջոցը: Մարդը երբ մեղքի մէջ է ընկնում, պէտք է պատրաստ լինի նոյն պահին խոստովանելու, քանի դեռ «արեւը մայր չի մտել»: Հայ եկեղեցում ապաշխարութիւնը պէտք է լինի «առ ոտս քահանայի» եւ «ամենայն մեղք ըստ կարգի պէտք է խոստովանուի», քանի որ ինչպէս «հուրը դէզին վնասակար է, նոյնպէս էլ մեղքը՝ հոգուն»: Նախնի եկեղեցում խոս-

տովանահայրը, լսելով ենթակայի խոստովանութիւնը, որոշում էր «ապաշխարութեան շրջան», որ ենթական աւելի զգոյշ լինի եւ մեղքի մէջ չընկնի: Ապաշխարութեան կերպը լինում էր պահքի ձեւով, աղօթքի մէջ յարատեւելով, ողորմութիւն տալով եւ այլն: Նախնի եկեղեցում խոստովանութիւնը հրապարակային էր եւ մեղաւորը բոլորի ներկայութեամբ խոստովանում էր իր գործած մեղքերը եւ ենթարկւում ապաշխարութեան: Հրապարակային խոստովանութիւնը պահպանուած է Ս. Պատարագի Պատրաստութեան մասում, երբ քահանան նախքան պատարագ մատուցելը թողութիւն է խնդրում բոլորից. «Խոստովանիմ առաջի Աստուծոյ... եւ առաջի ձեր, հարք եւ եղբայրք, զամենայն մեղս, զորս գործեալ եմ»: Յետագայում այս կարգը փոխուեց եւ վերածուեց առանձնական խոստովանութեան: Ապաշխարողը կարող է մենակ խոստովանել Աստծուն իր մեղքերը, եթէ ինչ-ինչ պատճառներ արգելում են պաշտօնեայի ներկայութեամբ խորհրդի կատարմանը: Եկեղեցին, որպէս Յիսուսի մարմին եւ պաշտօնեան՝ Յիսուսից ստացած իրաւունքով եւ իշխանութեամբ իրաւասու է արձակելու մեղքերը:

Խոստովանահօր վրայ դրւում են որոշակի պարտականութիւններ: Նա, որպէս հոգեւոր բժիշկ, պէտք է հմուտ լինէր Հին եւ Նոր Կտակարաններին, որպէսզի ճիշտ «դեղը» նշանակէր, հակառակ դէպքում, չճանաչելով մեղքերը եւ նրանց բնոյթը, շատերին կարող էր վնասել: Այսպէս, եթէ հպարտութեան մեղքի համար առաջարկւում էր պահքը, օգուտը քիչ կլինէր, քանի որ դրա միակ դեղամիջոցը խոնարհութիւնն է: Հայրերը, ելնելով Ս. Գրքից եւ բազմամեայ կենսափորձից առաջարկել են հետեւեալ դեղամիջոցները, որոնք խիստ օգտակար են նաեւ ներկայ ժամանակների համար. բարկութեան դէմ՝ համբերութիւն, ամբարտաւանութեան դէմ՝ խոնարհութիւն, ագահութեան դէմ՝ ողորմութիւն տալ, որկրամոլութեան դէմ՝ պարկեշտութիւն, բղջախոհութեան դէմ՝ պահք եւ աղօթք, բարկութեան դէմ՝ հեզութիւն, ատելութեան դէմ՝ սէր, բամբասանքի դէմ՝ լռութիւն:

Այսօրուայ ընդունուած կաղապարային միջոցները եւ դեղատոմսերը, որ յաճախ կարելի է լսել, աւելի տեսական բնոյթ են կրում, քան գործնական:

Խոստովանահայրը պէտք է լինի «կողպուած պահարան» եւ չյայտնի խոստովանութիւնը ոչ մէկին: Իսկ եթէ «պահարանը» կոտրւում է, ապա կողպէքը չպէտք է բացուի: Հնում կարգալոյծ էին անում խոստովանութիւնը յայտնող պաշտօնեային (Դուինի Բ ժողովի որոշումներից):

Խոստովանահայրը պարբերաբար պէտք է այցելի նաեւ իր «հիւանդներին», մխիթարի, հաստատի փրկութեան յոյսով, որ չյուսահատուեն, քանի որ յուսահատութիւնը ծանրագոյնն է բոլոր մեղքերից: «Յուդան կորաւ ոչ թէ մեղքի ծանրութիւնից, այլ անյուսութիւնից» (Ճահկեցի, Դրախտ ցանկալի): Խոստովանահայրը պէտք է իմանայ, որ ծանր մեղք գործողին ոչ թէ պէտք է հեռացնել եկեղեցուց (կամ «կտրել»), այլ խնամելով եւ բժշկելով՝ դարձնել մեղքից: Խոստովանահայրը պէտք է ասի, որ խոստովանում են ոչ թէ մարդու առաջ, այլ՝ Աստծու: Աստուած ողորմած է, նա մեղաւորի համար եկաւ, եւ պատրաստ է ողորմել բոլորին, բոլոր ճշմարտապէս խոստովանողներին: Դաւիթ թագաւորը այդ բանը լաւ էր հասկացել, եւ մարդկանց դատաստանի փոխարէն գերադասեց ընդունել Աստծու դատաստանը, քանի որ Աստծու մօտ ողորմածութիւն կայ, իսկ մարդկանց մօտ՝ ոչ:

Ապաշխարութիւնը հետեւանքն է զղջման, որով խնդրում ենք Ս. Հոգու օգնութիւնը՝ տեսնելու, ազատուելու մեր վիճակից: Այնուհետեւ նայելով Յիսուսին, Աստծու Սրբութեանն ու Արդարութեանը՝ որոշում ենք կայացնում թողնել մեր վիճակը եւ ձգտել երկրորդին: Ճշմարիտ ապաշխարողը պէտք է կամովին խոստովանի իր մեղքերը եւ հեռանայ դրանցից: Բռնադատուած զղջումն ու ապաշխարութիւնը (այսօրուայ ստադիոնային եւ դահլիճային ապաշխարութիւնները) անօգուտ են. իսկական զղջումը մարդու ներքին համոզմունքից պէտք է բխի: Ստիպողական եւ ցուցադրական ապաշխարութիւնը աննպատակ ձեւականութիւն է (Յովէլ, Բ, 12):

Մարդը սովոր է միշտ ինքն իրեն արդարացնել եւ դրա համար բերել իր փաստարկները՝ ապացուցելու իր անմեղութիւնը: Դատարանները, քննելով այդ փաստարկները, համապատասխան որոշում են կայացնում. արդարացնում են մեղաւորին կամ դատապարտում: Այդպէս չէ Երկնային Դատաւորը. Նա մեզ արդարացնում է առանց քննելու մեր փաստարկները, քանի որ ոչ մի բանով, ոչ մի գործով չենք կարող մեր արածի համար արդարանալ Աստծու առաջ: Աստուած նայում է մեր հաւատին եւ ներում շնորհում: Խոստովանելով մեր մեղքերը եւ ապաշխարելով՝ մենք որպէս անառակ որդի ըն-

դունւում ենք հայրական տանը, որպէս լիիրաւ որդի:

«Մի վախեցիր մեղքի բազմութիւնից ապաշխարութեան գնալ, գնալ դէպի Աստուած, Նա դատաւոր չէ, այլ՝ բժիշկ, դահիճ չէ, այլ՝ գորովագին հայր», - ասում է Մանդակունին: «Ձղջալ, հաւատով զինուել եւ հաւատի համաձայն կեանք վարել», - սա է ապաշխարութեան հետեւանքը եւ մարդուն սրբութեան կեանքի առաջնորդող բանաձեւը, քանի որ «ճշմարիտ դարձն միայն եւ ուղիղ խոստովանութիւնն բաւական են փրկուելու եւ արդարանալու համար», - ասում է Մանդակունին: Հայ եկեղեցին ընդունում է, որ Ապաշխարութեան խորհուրդը ի զօրու է հէնց այդպիսի կեանք պարգեւել եկեղեցու բոլոր անդամներին, քանի որ Խորհրդի ետեւում մարդ չի կանգնած, այլ Ինքը՝ Յիսուս: Ապաշխարութեան խորհուրդը հաստատել է Ինքը՝ Յիսուս: Նրա առաքելութիւնն այս աշխարհում գլխաւորապէս դա էր. մարդկանց ազատել մեղքից, նրա կապանքներից (Մատթ., Ա, 21): Մեղքը մարդուն տանում է դէպի յաւիտենական մահ. Յիսուս եկաւ ազատելու մարդուն մահուանից, իրականացնելու փրկութեան ծրագիրը: Յիսուս մեղքի թողութին տալու իշխանութիւնը տուեց առաքեալներին, որոնք էլ այդ փոխանցեցին իրենց յաջորդներին՝ ձեռնադրութեան միջոցով:

Ապաշխարութիւնը որպէս խորհուրդ մերժում են բողոքական եկեղեցիները, գտնելով, որ այն միայն յայտարարութիւն է եւ ուրիշ ոչինչ, իսկ մեղքերը թողւում են հաւատով: Այդ դէպքում, իհարկէ, անհասկանալի կլինի Յիսուսի տուած հրամանը՝ մեղքերը արձակելու եւ կապելու մասին (Մատթ., ԺԸ, 18):

Ապաշխարութեան առաջին պայմանը զղջումն է, առանց որի ապաշխարութիւնը ձեւականութիւն է: Երկրորդ պայմանը խոստովանութիւնն է. թողութիւն ստանալու համար ենթական պէտք է սրտանց եւ անկեղծօրէն, հաւատով խոստովանի իր մեղքերը (Եսայի, ԽԳ, 24-26): Երրորդ պայմանը ենթակայի հատուցումն է, որը նշանակում է եկեղեցին՝ հոգեւորապէս եւ բարոյապէս վերաշինուելու ձգտումով, եւ ոչ թէ ենթակային չարչարելու միտումով, ինչպէս թւում է առաջին հայեացքից: Դա կատարւում է որոշուած աղօթքով, պահքով կամ նման մի այլ ձեւով: Հատուցումը (ապաշխարանքը՝մարդուն ուղղելու, կրթելու միջոց է, եւ ոչ թէ հատուցում իր գործած մեղքի: Ինչպէս մարմնաւոր շարունակական լուացումը անհրաժեշտ է մարմնի առողջութեան համար, նոյնպէս էլ հոգեւոր շարունակական նորոգումը (ապաշխարանքը) անհրաժեշտ է հոգու առողջութեան համար:

Ապաշխարութեան խորհուրդը անհրաժեշտ է բոլոր չափահաս եւ խելահաս քրիստոնեաներին, քանի որ մկրտութիւնից յետոյ անպայման մեղանչած կլինեն, գիտութեամբ կամ անգիտութեամբ: Ուստի եկեղեցին բացում է Երկրորդ Աւազանը՝ Ապաշխարութեան խորհուրդը, որպէսզի սրբի մարդկանց մեղքերից, գործած յանցանքներից եւ արժանի դարձնի մասնակցելու միւս խորհուրդներին: Հայ եկեղեցում առանց ապաշխարութեան հաղորդութիւն չեն տալիս: Ծայրայեղ դէպքերում միայն, երբ հիւանդը ի վիճակի չէ ապաշխարելու, պաշտօնեան հաղորդութիւն է տալիս, ապաշխարութիւնը թողնելով յետագայի՝ առողջանալու դէպքում:

Հարց.- Ի՞նչ է ապաշխարութեան նպատակը:

Պատասխան.- Անշուշտ, ապաշխարութիւն ասելով՝ չպէտք է հասկանալ մի որեւէ կատարուած իրողութիւն, այլ՝ տարբեր իրողութիւնների մի զարմանահրաշ շարք: Իւրաքանչիւր անհատի համար ապաշխարութիւնն ունի իր անցեալը, ներկան եւ ապագան: Անցեալը այն փաստի իրողութիւնն է, որ ապաշխարութեամբ ներուել են մեր նախկինում գործած մեղքերը եւ այլեւս չեն յիշուելու, թէեւ մենք միշտ յիշում ենք: Մենք յիշում ենք եւ պէտք է յիշենք, որպէսզի նորից չկրկնենք, չընկնենք այն տիղմի մէջ, որից դուրս ենք եկել: Ներկան մեր այսօրուայ կեանքն է, այսօրուայ ընթացքը, մեր անձնական «փորձութեան անապատը», ուր պէտք է երեւայ մեր հաւատարմութիւնը քրիստոնէական դաւանանքին, Յիսուսին: Ներկան այն հոգեւոր պատերազմն է, ուր ոչ մէկը զերծ չի մնում մեղքի, յանցանքի կրակոտ նետերի հարուածներից: Ապաշխարութեամբ մենք մաքրւում եւ ազատւում ենք օրէցօր մեր ուսերին կուտակուող մեղքի ծանրութիւնից: Ապագան այն երանաւէտ յոյսն է, որի իրականացման համար Քրիստոս աշխարհ եկաւ: Այդ յոյսը «ամօթով չի թողնում» ոչ մէկին, քանի դեռ «չի փակուել կենաց ապաշխարութեան դուռը, որ բաց է լինելու մինչեւ աշխարհի վերջը» (Յաճախապատում): Այլ խօսքով, ապաշխարութեան խորհուրդը մարդկանց տրուած երկնային պարգեւ է, քանի որ միայն այդ կերպ կարող ենք կենդանանալ «մե-

ռած գործերից»: Մեղքի ծանրութիւնը տանելու փոխարէն Յիսուս առաջարկում է իր լուծը տանել, որ քաղցր է եւ թեթեւ (Մատթ. ԺԱ, 29): Քաղցր է եւ թեթեւ, քանի որ Յիսուս պատրաստ է օգնելու մեզ, սրբելու եւ մաքրելու Իր Սուրբ Արեամբ: Մարդը մեղքի պատճառով բաժանուեց Աստծուց եւ «ապաշխարութեան առողջարար դեղի միջոցով էլ հաղորդւում է կեանքին՝ կենդանանալով մեղքի մեռելութիւնից» (Լամբրոնացի): Ապաշխարութիւնը միայն ներում ստանալ չէ, որին արժանանում է մեղաւորը, այլ նաեւ պահանջ պտուղ բերելու (Մատթ., Գ, 2, Դ, 17): Այդ ընթացքը այսպէս է նկարագրում Յաճախապատումը.

«-Զղջում եւ մեղքի խոստովանութիւն, որին յաջորդում է մեղքերի թողութիւնը՝ մեղաց ծանրութիւնից ազատուելը:

-Ատելութիւն մեղքի հանդէպ եւ այն ամենի, ինչ դրդում եւ առաջնորդում է մարդուն մեղքի, յանցանքի:

-Սիրել եւ ձգտել արդարութեան եւ առաքինութեան:

-Պատրաստ լինել այդ ճանապարհին ամէն փորձութիւնների, հալածանքների եւ նեղութիւնների՝ յանուն Յիսուսի եւ Աւետարանի:

-Կրթուել Տիրոջ ահով եւ երկիւղով, քանի որ *"իմաստութեան սկիզբը Տիրոջ վախն է"»:*

Այդ դէպքում, ինչպէս մեղքի ծնռանը յաջորդում է ծաղկաւէտ գարունը, այնպէս էլ ապաշխարութեանը կյաջորդի ապաշխարութեան բուրումնաւէտ պտուղը: Ուրեմն, անհատի ապաշխարութիւնը չի սահմանափակւում միայն իրենով եւ «մեղքից հեռանալով, այլ նաեւ պէտք է մեծամեծ բարութիւններ ցոյց տալ» (Ոսկեբերան):

Ապաշխարութեան խորհուրդը, իր մէջ աստուածային զօրութիւն ունենալով, ոչ միայն ներում է շնորհում մեղաւորին, այլեւ զօրութիւն տալիս, զօրացնում անհատին, հաստատում: Հետեւաբար, ապաշխարութիւնը նաեւ Աստծու սիրոյ արտայայտութիւնն է, քանի որ միայն այդ կերպ մարդ կարող է հաշտուել Աստծու հետ եւ հաշտուած կեանք ունենալ: Գիտենք, որ Յիսուս Քրիստոսի արիւնը մեզ սրբում է բոլոր մեղքերից, քանի որ Աստծու սէրը անսահման է: «Հետեւաբար, - մտածում են ոմանք, - ինչքան էլ մեղք գործենք, Աստուած սէր է, կների մեզ»: Մեղաւոր մարդու այս տրամաբանութիւնը մեղքի մէջ մնալու ցանկութեան արտայայտութիւնն է: Այդ մտայնութիւնը իշխում էր դեռ Պօղոսի հիմնած եկեղեցիներում: Այդպիսով ստացւում էր մի շրջան, որից դժուար կլինէր դուրս գալ. շարունակաբար միեւնոյն մեղքը գործել եւ թողութիւն խնդրել: Այդ դէպքում, Պօղոսի խօսքերով, Յիսուս դառնում է «մեղքի պաշտօնեայ» (Գաղ., Բ, 17): Ապաշխարութեան խորհրդի զօրութիւնն էլ հէնց այն է, որ ի վիճակի է մեղաւորին դուրս բերել այդ շրջանակից. Աստուած մեզ ներում է, եւ այդ ներումը չի սահմանափակւում միայն մեղաց թողութեամբ: Աստուածային ներման մէջ կայ հզօր ուժ, որ օգնում է մեղաւորին չկրկնելու եւ չյարատեւելու մեղքի մէջ, այլ ազատուելու եւ դուրս գալու այդ տիղմից: Հետեւաբար, ապաշխարութիւնը նաեւ կատարելութեան տանող ճանապարհ է: Հայ եկեղեցում Հաղորդութեան խորհրդին միշտ նախորդում է Ապաշխարութեան խորհուրդը, այսինքն՝ Քրիստոսին միանալու, նրա հետ մէկ լինելու խորհուրդը անցնում է ապաշխարութեան արահետով: Ո՞վ, եթէ ոչ միայն Յիսուս, կարող է մեզ սովորեցնել եւ տանել այդ ճանապարհով: «Ուրեմն, դուք կատարեալ եղէք, ինչպէս ձեր երկնաւոր հայրն էլ կատարեալ է» (Մատթ., Ե, 48): Այս համարն իր մէջ ամփոփում է համարեա ամբողջ «Լեռան քարոզը»: Օրէնքով չէ, որ փրկւում է մարդը, այլ՝ հաւատով: Օրէնքը բացայայտում է մարդու տկարութիւնը եւ միեւնոյն ժամանակ ցոյց տալիս մարդուն Աստծու ողորմածութիւնն ու գութը: Մարդ չի կարող Աստծու պահանջներին ամբողջական գոհացում տալ եւ միշտ էլ կսայթաքի, մեղքի մէջ կընկնի: Հետեւաբար, մարդը պէտք է գիտակցի այդ, իմանայ իր ուժերի սահմանափակ լինելը, որպէսզի չմեծամտանայ, այլ հաւատով ապաւինի իր Փրկչին, որով եւ կհասնի երանաւէտ փրկութեան:

Կատարելութեան ձգտումը յատուկ է միայն մարդկային բնութեան, եւ Քրիստոս ցոյց տուեց այդ ճանապարհը: Այդտեղ գլխաւորը ոչ թէ մարդկային միտքն ու կամքն է (այդպէս է բոլոր օտար կրօններում), այլ հաւատը, վստահութիւնը, սէրը, յոյսը: Այդ ճանապարհը Ինքը Յիսուսն է, որ գրաւելով մեր սիրտը, մեզ առաջնորդում է կատարելութեան: Նա չեկաւ գրաւելու մեր միտքը, բանականութիւնը, այլ՝ մեր սիրտը: Միտքը, բանականութիւնը կապում է մարդկանց ժամանակաւոր կապերով, քանի դեռ համընկնում են շահերը (կուսակցականութիւն), մինչդեռ Յիսուս, գրաւելով մարդկանց

սիրտը, բոլորին կապեց ու միաւորեց Իր մէջ՝ կազմելով Եկեղեցին: Քրիստոնէութիւնը Նրա անձի մէջ տեսնում է աստուածային կատարելութեան մարմնացումը: Քրիստոս մեզ համար օրինակ է, որին նայելով՝ պիտի քայլենք այդ կատարելութեան պողոտայով:

Յովհաննէս Մկրտիչը իր գործունէութիւնը սկսեց՝ ապաշխարութիւն քարոզելով, Յիսուս նոյնպէս իր առաքելութիւնը սկսեց՝ ապաշխարութիւն քարոզելով (Մատթ., Դ, 17): Մենք էլ ապաշխարութիւնով ենք սկսում մեր հոգեւոր կեանքը, ապաշխարութեամբ նորոգւում, հաստատւում եւ Յիսուսի սրբութեանը հաղորդ լինում: Քրիստոնեայի համար կեանքը մշտական ապաշխարութիւն պէտք է լինի: Ապաշխարութիւնը իւրատեսակ հաշուետուութիւն է Աստծու առաջ:

Ուրեմն, ապաշխարութիւնը հոգեւոր բժշկութիւն է, դարձ է հին ճանապարհներից եւ մուտք դէպի նոր ճանապարհը, որ տանում է յաւիտենութիւն: Ապաշխարութիւն նշանակում է սրբել մեր մեղաւոր միտքը, հոգին, խիղճը: Ապաշխարութեան նպատակն է կեանքի ճահիճներից դուրս հանել մարդկանց եւ նոր արարած դարձնել: Ապաշխարութիւնը մեռած վիճակի չի տանում, այլ հոմանիշ է վերածնութեան գաղափարին: Այդ երկուսն էլ նոր կեանքի, Երկնային Թագաւորութեան քաղաքացիներ դառնալու անհրաժեշտ պայմաններն են:

Հարց.- Ինչպէ՞ս է կատարւում ապաշխարութեան խորհուրդը Հայ եկեղեցում:

Պատասխան.- Նախ պաշտօնեան ապաշխարողին տանում է գաւթի դռան աջ կողմը եւ սկսում խոստովանանքի արարողութիւնը: Յետոյ ընթերցում է եօթ սաղմոս (ԽԱ, ԾԶ, ՀԶ, ՃԼԷ, ՃԻԲ, ԼԷ, ՃԻԱ): Ապա քահանան աղօթում է, որ բարերար Աստուած լսի մեղաւորի սրտից բխած աղաղակը եւ խոստովանութիւնը, սրբի նրան, պարգեւի զղջում, ապաշխարութիւն եւ դարձնի Ս. Հոգու տաճար, փրկի մոլորեալ Ադամին: Այնուհետ խնդրում է, որ բազմողորմ Աստուած թողնի մեղաւորի մեղքը եւ յանցանքները: Յետոյ ընթերցում է հատուածներ Եսայի մարգարէից (Ա, 16-20), Եզեկիէլից (ԺԸ, 21-23), Եփեսացիների թղթից (Զ, 10-24):

Ապա քահանան ասում է. «Երանի, ում թողութիւն եղեւ մեղաց եւ ծածկեցան ամենայն յանցանք նորա» (Սաղմոս ԼԱ, 1) եւ սկսում Անառակ որդու առակի

ընթերցումը (Ղուկ., ԺԵ, 11-32): Ընթերցումից յետոյ դառնալով դէպի արեւմուտք՝ ասում են «Հրաժարիմքը» (երեք անգամեւ դառնալով արեւելք՝ ասում դաւանութեան խոստովանութիւնը («Հաւատամքը»): Այնուհետեւ մտնում են եկեղեցի եւ պաշտօնեան կարդում է ԻԲ սաղմոսից, մարգարէութիւններից, Պօղոսի թղթերից եւ աւետարաններից, որից յետոյ ապաշխարողը ծունկի է գալիս եւ քահանան աղօթքով խնդրում է Տիրոջից, որ Նա ապաշխարողին Իր հովանու տակ վերցնի: Վերջում ապաշխարողը հաղորդութիւն է ստանում:

Ապաշխարողի զղջման արտայայտութիւնը խոստովանութիւնն է, որը յայտնի է «Մեղայ» անունով (հեղինակն է Տաթեւացին): Այնտեղ թուարկուած են՝

-մտքի չար գործերը,

-մարմնի չար հակումները,

-լեզուի պատուիրանազանցութիւնները,

-ձեռքի չարագործութիւնները,

-եօթ մահացու մեղքերը:

Ամէն անգամ, երբ թուարկւում են մեղքերը, խոստովանողը բարձրաձայն ասում է՝ «Մեղայ Աստուծոյ», փաստելով, որ խոստովանում է Աստծու առաջ: Խոստովանողը, եթէ ցանկանում է առանձնական խոստովանութիւն, «Մեղայի» փոխարէն իր գործած մեղքերն է թուարկում («Մեղայ»-ի ամբողջական մեկնութիւնը տես Յաւելուածում):

Հարց.- Ի՞նչ են նշանակում այն եօթ սաղմոսները, որոնք ընթերցւում են ապաշխարութեան խորհրդի սկզբում:

Պատասխան.- Այդ սաղմոսները նկարագրում են ապաշխարողի հոգեւոր վիճակը, այն դժուարութիւններն ու խոչընդոտները, որոնց հանդիպում է նա եւ Աստծու ողորմածութիւնն ու գութը մեղաւորի հանդէպ:

Մեղքի պատճառով մարդը հեռացել է Աստծուց եւ հիմա, զղջալուց ու խոստովանելուց յետոյ, ձգտում է Տիրոջը, ինչպէս *«եղջերուն ջրի վտակներին»* (Սաղմոս ԽԱ): Մարդն առանց Արարչի չի կարող ապրել եւ *«գիշեր ու ցերեկ նրա կերակուրը հացի փոխարէն լինելու են արցունքները»:* Քանի դեռ մարդն իր ուսերին տանում է մեղքերի բեռը, այդ արցունքները չեն անցնի: Մեր ներքին անբաւարարուածութիւնը միայն Յիսուսի՝ մեր Փրկչի

շնորհքով կարող է վերանալ, եւ միայն Նա կարող է արցունքները ուրախութեան դարձնել:

Մարդու դարձը հոգեւոր պատերազմ է, ուր զինուած թշնամիները պատրաստ են յօշոտել մեղաւորին (Սաղմոս ԾԶ): Բայց Աստուած, որին յուսացել է մեղաւորը, առաքում է իր ողորմութիւնն ու արդարութիւնը եւ կանգնեցնում ընկած մարդուն, փրկում գազանների ճանկերից, որոնց *«ատամները նետերի նման են, իսկ լեզուները՝ սրերի»:*

Ուստի ես պիտի աղաղակեմ, կանչեմ Քեզ, եւ Դու պիտի լսես նեղութեան իմ ճիչը (Սաղմոս ՀԶ): Այս վստահութեամբ եւ հաւատով է մօտենում Աստծուն ապաշխարողը եւ խոստովանում իր մեղքերը: *«Ես խոստովանեցի Քեզ, Տէր, իմ բոլոր սրտով: Եւ Դու լսեցիր բերանիս խօսքերը»* (Սաղմոս ճԼԷ): Աստուած մեծ է եւ տեսնում է խոնարհներին, իսկ հպարտներին՝ «հեռուից ճանաչում»: Այսինքն՝ հպարտները այդպէս էլ հեռուում կմնան, մինչդեռ խոնարհների վրայ է Աստծու ողորմածութիւնը:

Երկար ժամանակ գտնուելով մեղքի գերութեան մէջ՝ մենք հիմա դիմում ենք երկնքում Բնակուողին, Նրա ողորմութեանը սպասելով: *«Ողորմիր մեզ, Տէր, մենք յագեցած ենք արհամարհանքներից եւ նախատինքներից»* (Սաղմոս ճԻԲ): Ուստի ապաշխարողը որոշում է հրաժարուել նախատինքների մէջ մնալուց եւ լցուել ու յագենալ Տիրոջ ողորմածութեամբ:

«Տէր, - շարունակում է նա, - *սրտմտութիւնով մի յանդիմանիր եւ բարկութեամբ մի խրատիր ինձ»* (Սաղմոս Լէ), քանի որ մեղքերի պատճառով խաղաղութիւն չունենք, մեր անօրէնութիւնները որպէս բեռ ծանրացել են մեր ուսերին, իսկ անզգամութիւնից նեխել են վէրքերը: Ոչ մէկը չի կարող օգնել ինձ, բարեկամներս հեռու են կանգնել եւ միայն Դու ես կարող օգնել: *«Ես խոստովանում եմ Քեզ, Տէր, - շարունակում է զղջացողը, - խոստովանում եմ իմ անօրէնութիւնները եւ գիտեմ, որ չես թողնի ինձ եւ չես հեռանայ ինձնից, այլ կգաս ու կօգնես ինձ»:*

Ուստի *«ես ուրախացայ, երբ ասացին ինձ՝ գնանք Տիրոջ տուն»* (Սաղմոս ճԻԱ): Եւ ահա, կանգնել եմ դռան առաջ եւ պատրաստւում եմ մտնել Տիրոջ Տաճարն ու կանգնել Նրա առաջ:

Այսպիսով, այս եօթ սաղմոսները, որոնք կոչւում են նաեւ ապաշխարութեան եօթ սաղմոսներ, ցոյց են տալիս դարձի եկող մեղաւորի վիճակը, Աստծու ողորմութիւնն ու գութը, մեղքի ծանրութիւնից ազատուելու ճամփան՝ զղջումով եւ խոստովանութեամբ Տիրոջը յուսալով: Աստուած պատրաստ է ընդունել մեղաւորին, մաքրել, սրբել եւ առաջնորդել սրբութեան ու արդարութեան:

Հարց.- Իսկ ինչո՞ւ են խոստովանում քահանայի առաջ, մի՞թէ չի կարելի խոստովանել առանց քահանայի:

Պատասխան.- Այդ մասին Տաթեւացին գրում է. «Թէպէտ Աստուած սրտագէտ է, պէտք է խոստովանել քահանային, քանի որ՝

ա. նա ունի Քրիստոսից ստացած իշխանութիւն՝ կապելու ու արձակելու,

բ. մեղքը Աստծու օրէնքների եւ եկեղեցու կանոնների խախտումն է, ուստի զղջում եւ խոստովանում ենք թէ Աստծու առաջ, թէ եկեղեցու սպասաւորի՝ քահանայի,

գ. քահանան պէտք է լինի մեր խոստովանութեան վկան, եւ

դ. "մարդով մեղաք եւ մարդով արդարանամք", այսինքն, ինչպէս Ադամով մեղքն առաջացաւ (մարդու միջոցով), այնպէս էլ քահանայի միջոցով մեր խոստովանութիւնը պիտի ընդունուի»:

Ապաշխարութիւնը որպէս խորհուրդ, կատարւում է քահանայի կամ ձեռնադրուած պաշտօնեայի մասնակցութեամբ, եւ միայն նա իրաւունք ունի խորհուրդները կատարելու:

Մենք իրար դէմ մեղանչելով՝ մեղանչում ենք Աստծու առաջ: Ուստի միայն Աստուած պէտք է թողութիւն տայ մեր մեղքերին: Պաշտօնեան, Աստծուց ստացած իր իշխանութեամբ, աղօթքով արձակում է մեղաւորին, որը զղջում եւ խոստովանում է իր մեղքերը: Հին Կտակարանում մեղաւորը պարտաւոր էր գալ տաճար, քահանային խոստովանէր իր մեղքերը եւ իր կարողութեան չափով զոհ մատուցէր, որի արիւնն էլ սրսկելով մեղաւորի վրայ՝ թողութիւն էր տրւում (Ղեւտ., Ե, 4-10, ԻԲ, 18-20): Այդ արիւնը Քրիստոսի զոհաբերութեան խորհուրդն ունէր, եւ խորհրդանշում էր Գողգոթայում մեր մեղքերի համար Յիսուսի թափած արիւնը: Հետեւաբար, հիմա, Գողգոթայից յետոյ, դարձեալ մեր մեղքերը ներւում եւ թողւում են շնորհիւ Քրիստոսի թափած արեան: Յովհաննէսի աւետարանի, Ի գլխի 22-23 համարները (ուր Յիսուս փչում է առաքեալների վրայ եւ ասում.

«Առէ՛ք Հոգի Սուրբ») եկեղեցու հայրերը հասկացել են որպէս իշխանութեան տուչութիւն եւ ոչ թէ Ս. Հոգու ընդունում (Ս. Հոգու ընդունումը կատարուեց Հոգեգալստեան օրը /Գործք, Բ, 1-2/): Այդ իշխանութիւնն էր, որ ձեռնադրութեամբ փոխանցւում է պաշտօնեաներին, որոնք եւ մեղքերը արձակելու եւ կապելու իրաւունքն են ստանում: Այդ իշխանութեամբ է մեղքերի թուարկումից յետոյ պաշտօնեան ասում. «Աստուած թողութիւն շնորհեսցէ ամենայն յանցանաց քոց»: Տաթեւացին այսպէս է գրում. «Խոստովանիր բերանովդ քահանայի առաջ մէկ առ մէկ քո բոլոր մեղքերը եւ մի թաքցրու ամենեւին, քանի որ ինչ այստեղ թաքցնես, Քրիստոսի ահեղ դատաստանի առաջ կխայտառակուես, եւ ինչ-որ այստեղ խոստովանես՝ այնտեղ կծածկուի եւ կկորչի»: Արձակում ստանալուց յետոյ խոստովանողները ոտքի կանգնելով, համբուրում են քահանայի աջը:

Հարց.-Ինչո՞ւ են խորհրդի կատարման ժամանակ «Հրաժարիմքը» երեք անգամ կրկնում:

Պատասխան.- Մարդը, ստեղծուած լինելով Աստծու պատկերով եւ նմանութեամբ, ունի «երրեակ» բնութիւն՝ հոգի, միտք (շունչ) եւ մարմին: Այսինքն՝ ապաշխարողը հրաժարւում է հոգով, մտքով (խորհրդով) եւ մարմնով սատանային ծառայելուց ու յետոյ միայն մտնում եկեղեցի՝ իր հոգին, շունչը եւ մարմինը Աստծուն նուիրելու եւ միայն Նրան ծառայելու: Ապաշխարութիւնը զօրութիւն ունի մարդու «երրեակ» բնութիւնը մաքուր պահելու: Այդ զօրութիւնը ի յայտ է գալիս անկեղծ զղջումից ու խոստովանութիւնից յետոյ: Յոբը իր որդիների համար միշտ զոհ էր անում, մտածելով, որ նրանք կարող են իրենց սրտում մեղք գործել: Այդպէս էլ մենք, մեր զոհը, այսինքն՝ աղօթքը, զղջումը եւ խոստովանութիւնը մատուցելով Աստծուն, մաքրում ենք մեր սիրտը, միտքը եւ խորհուրդները: Ապաշխարութեան զօրութեան եւ անհրաժեշտութեան մասին Տաթեւացին Հին Կտակարանից բերում է մի քանի օրինակ:

Ա. Օրէնքի քարէ տախտակները (Ելք, ԼԲ-ԼԴ գլուխներ): Երբ Մովսէսը օրէնքի երկու տախտակները ձեռքին իջաւ լեռից եւ տեսաւ, որ ժողովուրդը, դեռ օրէնքը չստացած, արդէն օրինազանց է եղել՝ ոսկէ հորթը ձուլելով, բարկացաւ եւ կոտրեց տախտակները: Ոսկէ հորթից ազատուելուց յետոյ Մովսէսը նոր տախտակներ կոփեց առաջինի նման եւ Աստուած նոյն պատգամները

գրեց նրանց վրայ: Նոյն ձեւով էլ մարդը (երկու քարէ տախտակները) տասը զգայարաններով հանդերձ (Տասնաբանեայ օրէնքը տախտակների վրայ), Աստծու անարատ ձեռքով ստեղծուեց: Մեղքի պատճառով մարդը խորտակեց իր էութիւնը (տախտակների կոտրուելը) եւ ապաշխարութեամբ միայն վերստին նորոգուեց (տախտակները նորից կոփուեցին)՝ վանելով իրենից մեղքն ու անօրէնութիւնը (ոսկէ հորթը), որից յետոյ արդէն մարդը կարող է կատարել Աստծու կամքը (օրէնքի գրուելը նոր տախտակների վրայ):

Բ. Մովսէսի գաւազանը (Ելք, Դ գլուխ): Երբ Մովսէսը իր գաւազանը նետեց գետին, այն օձ դարձաւ, իսկ բարձրացնելով՝ կրկին գաւազան: Գաւազանը մարդու համար հաստատութիւն եւ ուղղութիւն է նշանակում, որն ընկնելով գետին՝ դառնում է օձ, սողալով գետնի վրայ (մարդու անկումը) եւ ապաշխարութեամբ դարձեալ դառնում է հաստատութեան գաւազան: Մեղքի մէջ լողացող մարդը նման է գետնին սողացող օձի, իսկ ապաշխարութեամբ նորոգուած մարդը՝ հաստատուն կանգնած մարդու:

Գ. Ձեռքի բորոտանալը (Ելք Դ գլուխ): Երբ Մովսէսն իր ձեռքը ծոցից հանեց, այն անմիջապէս ձեան նման սպիտակեց ու բորոտ դարձաւ, իսկ երբ կրկին ծոցը դրեց՝ մաքրուեց բորոտութիւնից: Բորոտ ձեռքը նշանակում է մեր գործերը, որոնք մեր մեղքերի պատճառով բորոտ են դարձել, այսինքն՝ պղծուել: Ապաշխարութեան ծոցում նրանք սրբւում են բորոտութիւնից եւ մաքրւում:

Դ. Ահարոնի գաւազանի ծաղկելը (Թիւք, ԺԷ գլուխ): Մովսէսը տասներկու գաւազան դրեց Վկայութեան խորանում եւ յաջորդ օրը միայն Ահարոնի գաւազանը գտաւ ծաղկած: Գաւազանը, կտրուելով բնից, չորանում է, նրա մէջ այլեւս կեանք չի մնում: Իսկ երբ մի գիշեր մնում է տաճարում, վերստին կենդանանում է: Այս օրինակը ցոյց է տալիս, որ երբ մեղքի պատճառով մարդը կտրւում է բնից, այսինքն՝ կեանքի աղբիւրից՝ Աստծուց, ապա չորանում է: Գիշերուայ ընթացքում, այսինքն՝ ապաշխարութիւնից, զղջումից յետոյ մեղաւորը առողջանում եւ կենդանանում է ու սկսում պտուղ բերել՝ բարի գործեր անելով (ծաղկելը):

Այսպիսով, ապաշխարութեամբ վերստին նորոգւում է մեր հոգին (Ա օրինակ), միտքը (Բ օրինակ) եւ մարմինը (Գ օրինակ), որից յետոյ միայն մարդը կարող է բարի գործերով ապաշխարութեան արժանաւոր պտուղներ բերել (Մատթ., Գ, 8):

Հարց.- Արդեո՞ք բոլոր զղջացողների ու ապաշխարողների մեղքերը ներում են: Չէ՞ որ Յուդան էլ զղջաց, բայց չներուեց:

Պատասխան.- Քանի դեռ մարդը Աստծու պատուիրանների ճանապարհով էր ընթանում, ոչ մի նեղութիւն, վիշտ ու ապականութիւն չէր կարող նրան յաղթել, բայց երբ նա սկսեց Աստծու դէմ մեղանչել եւ ապստամբեց, անմիջապէս մեղքը սկսեց իր բողբոջներն արձակել, եւ մարդն ընկաւ մահուան ու ապականութեան լծի տակ եւ փոխանակ սէր տածելու առ Աստուած՝ երկիւղով լցուեց: Բայց Աստուած, լինելով անսահման սիրոյ աղբիւր, միշտ առիթներ էր ստեղծում մեղաւորի համար, որ նա զղջայ, ապաշխարի իր կատարած անիրաւութիւնների համար, փոխի իր ընտրած ուղին, գնայ բարեգործութեան ու սիրոյ ճանապարհով, հեռու մնայ ատելութեան ու չարի ճանապարհներից: *«Երանելի է այն մարդը, որն ամբարիշտների խորհուրդներով չի շարժւում, մեղաւորների ճանապարհին ոտք չի դնում եւ յանցագործների աթոռին չի նստում»,* - ասում է սաղմոսը (Ա, 1): Ուրեմն, կասկած չի կարող լինել Աստծու ներողամտութեան վրայ, իսկ չզղջացող մարդուն մեղքի ջրհեղեղը կործանման կտանի:

Ս. Գրքում կան մի քանի պատմութիւններ, երբ առանձին մարդիկ զղջում են, եւ թւում է, թէ Աստուած չի ընդունում նրանց զղջումը: Մինչդեռ այդ պատմութիւններում զղջման մասին խօսք անգամ չկայ: Այդպիսի օրինակներ Աստուածաշնչում ընդամէնը մի քանիսն են:

Ա. Սաւուղի օրինակը (Ա Թագ. ԺԵ գլուխ) Սաւուղը, խախտելով Աստծու հրամանը եւ հետեւաբար Օրէնքը, ասում է Սամուէլ մարգարէին. *«Մեղք գործեցի, աղաչում եմ ժողովրդի առաջ ու Իսրայէլի առաջ...»* (Ա Թագ., ԺԵ, 30): Սաւուղը գիտակցեց իր մեղքը, հասկացաւ, որ խախտել է Աստծու կամքը, բայց չզգաց այդ մեղքի ահաւորութիւնը եւ չուներ ձգտում ներքին սրբարար զղջման: Նա ցաւում էր ոչ թէ նրա համար, որ կորցնում է Կենդանի Աստծուն, այլ՝ որ կորցնում է իր գահը, իշխանութիւնը: Ուրեմն այս օրինակում Սաւուղի զղջումը քրիստոնէական ընկալումով զղջում չէր, ուստի եւ չներուեց:

Բ. Յուդայի օրինակը (Մատթ., ԻԷ, 3-4): Յուդան, տեսնելով, որ Յիսուս դատապարտուեց մահուան, զղջաց եւ երեսուն արծաթը վերադարձնելով՝ ասաց քահանայապետներին. *«Մեղա՜յ, անմեղ արիւն մատնեցի»:*

Մարդ մեղք գործելուց յետոյ միշտ էլ զղջում է արածի համար, բայց ժամանակն արդէն ետ չես բերի եւ ոչինչ այլեւս չի փոխուի: Այդ մասին պէտք է մտածել մինչեւ այդ քայլն անելը: Մեղք գործելով՝ մարդ ցանկանում է երջանիկ լինել, բայց աւաղ, հակառակն է ստացւում: Մարդը, ինքն իրեն գալով եւ գիտակցելով արածի սարսափը, եթէ չզղջայ, չապաշխարի ու չխոստովանի իր մեղքերը Աստծու առաջ, նա կկործանուի, առանց ներում եւ փրկութիւն գտնելու: Յուդայի պատմութիւնը դրա ամենավառ օրինակն է: Մատնութիւնից յետոյ նա մնաց մենակ. ո՛չ քահանայապետները, ո՛չ Տասներկուսը եւ ո՛չ էլ մէկ ուրիշը նրան չընդունեցին: Նա մնաց մենակ ոչ միայն այս աշխարհում, այլեւ՝ հանդերձեալում: Այդպիսին է մեղքի վարձը: Այդ դրուագում Յուդան ոչ թէ զղջաց իր արածի համար, այլ զղջաց, որ կորցրեց իր վերջին յոյսը: Մատթ., ԻԷ, 3-ի մէջ էլ օգտագործուած յունարէն բառը, թէեւ թարգմանւում է «զղջալ» բառով, բայց բնագրում ունի «ինքն իրեն գալ» իմաստ, այսինքն՝ քրիստոնէական իմաստով «զղջում» չէ:

Տաթեւացին, Յուդայի ու Պետրոսի արարքները համեմատելով իրար, գրում է. «Նրանք երկուսն էլ նոյն մեղքը գործեցին հաւասարապէս. երկուսն էլ ուրացան Յիսուսին: Յուդան իր կամքով ուրացաւ եւ յուսահատուելով Յիսուսից՝ կործանուեց: Իսկ Պետրոսի ուրացումը «ակամայ» էր. նա իր յոյսը չկորցրեց, այլ Յիսուսի վրայ հաստատուած դառնապէս լացելով ապաշխարեց՝ գտնելով թէ՛ հոգու եւ թէ՛ մարմնի փրկութիւնը»: Հետաքրքիր է, որ Յուդան չօգտագործեց իր վարձքը. այն պէտք չեղաւ նրան ո՛չ այս աշխարհում եւ ո՛չ էլ հանդերձեալում: Վերջին ժամանակներում ոմանք փորձում են արդարացնել Յուդայի արարքը, բերելով զանազան փաստարկներ Նոր Կտակարանից, մինչդեռ Յուդայի արածներում չկայ բարոյական եւ ոչ մի լաւ բան եւ նման բոլոր փաստարկներն էլ անհիմն են ու անհամոզիչ: Տաթեւացին ասում է, որ Յուդայի մէջ մաքուր բան չկայ, չնայած որ, բերանով համբուրել էր Յիսուսին. «Եւ ապականեալ ուղեղ գլխոյն՝ ոչ ել ընդ բերանն, զի բերան նորա ոչ ապականեցաւ, որ համբուրեաց զՔրիստոս, այլ էջ ի սիրտն ապականեալ», քանի որ սրտով խորհեց մատնել Քրիստոսին: Ուստի եւ նրա ներսը, սրտի խորհուրդների հետ խառնուելով, ապականուեց եւ թափուեց փորի հետ միասին (Գործք, Բ, 17):

Հարց.- Ի՞նչ է «Մեղայ Ամենասուրբ Երրորդութեանն» աղօթքի նշանակութիւնը, որ կարդում է քահանան ընդհանրական խոստովանութեան ժամանակ:

Պատասխան.- «Մեղայ»-ն ընդհանրական խոստովանութեան ձեւն է, որն ընդունուած է Հայ եկեղեցում: Իր կառուցուածքով եւ իմաստով նա շատ նման է սուրբգրային շատ ու շատ աղօթքների: Եթէ համեմատենք Օ սաղմոսի հետ (որը կոչւում է Ապաշխարութեան սաղմոս) ապա կգտնենք բազմաթիւ նմանութիւններ: Աւելին, զղջման ու ապաշխարութեան ոգին նոյնն է երկու դէպքերում էլ: Թէ՛ «Մեղայ»-ն եւ թէ՛ սաղմոսը նկարագրում են մեղաւորի դիրքը Աստծու առաջ, Աստծու ողորմածութեան անսահմանափակութիւնը, մեղաւորին ներելու ու սրբելու պատրաստակամութիւնը: Ներումն ընդունելուց ու մեղքի ծանրութիւնից ազատուելուց յետոյ միայն մարդը կարող է ընթանալ արդարութեան եւ բարեգործութեան ճանապարհներով: Ս. Գրքի առաջին էջերում արդէն տեսնում ենք, որ Աստուած ամէն առիթ օգտագործում է մարդուն զղջման, ապաշխարութեան եւ մեղքերի խոստովանութեան առաջնորդելու: Դեռ Եդեմում Աստուած հարցրեց առաջին մեղաւորին. «Ադամ, ո՞ւր ես» (Ս. Գրքի առաջին հարցը): Առաջին հարցումով Նա առիթ էր տալիս մեղաւոր Ադամին, որ զղջայ իր արածի համար, բայց նա խոստովանելու փոխարէն մեղքը գցեց ուրիշի վրայ (Եւայի) եւ Նրան մեղադրեց, ասելով. «Այն կինը, որ ինձ տուեցիր...»: Մենք էլ ենք այսօր մեր մեղքերը փնտրում ուրիշների մէջ եւ ուրիշ տեղերում: Աստուած երկրորդ հարցը ուղղում է երկրորդ մեղաւորին՝ Կայէնին. «Ո՞ւր է եղբայրդ...» (Ս. Գրքի երկրորդ հարցը): Դարձեալ առիթ է տալիս Կայէնին զղջալու, ապաշխարելու նախքան դատավճռի արձակումը (Օ ննդոց, Դ գլուխ): Այսօր էլ մենք ենք Ադամի նման թաքնւում Աստծու ներկայութիւնից, խուսափում Առաջին հարցումին պատասխան տալուց եւ Կայէնի նման խուսափում նաեւ երկրորդ հարցումից՝ թաքցնելով մեր կատարած յանցանքները:

Քանի դեռ մեղաւորը իր սրտում փայփայում է մեղքն ու նրա հրապոյրը, նա չի կարող հնազանդուել Աստծուն, առաւել եւս կատարել Նրա պատգամները: Ի վերջոյ, Աստուած ընտրելով մարդուն, սրբում, ներում է նրան եւ յետոյ միայն առաջնորդում Իր դաշտում աշխատելու: Ս. Գիրքը սովորեցնում է, որ

չզղջացող հոգի ունեցողը չի կարող Աստծու Արքայութեան լուծը տանել:

Անկիզելի մորենու պատմութեան մէջ (Ելք, Գ գլուխ) Աստուած խօսեց Մովսէսի հետ եւ ասաց. «Մովսէս, հանիր կօշիկներդ, քանի որ կանգնած տեղդ սուրբ է»: Սուրբ է, քանի որ Աստծու ներկայութիւնն է այնտեղ: Խորանը Աստծու ներկայութեան վայրն է եկեղեցում, ուստի մտնելով եկեղեցի, հաւատում ենք, որ Աստուած ներկայ է այնտեղ: Հակառակ դէպքում եկեղեցին չի տարբերուի հասարակ շատ շինութիւններից: Հին Կտակարանում Աստուած առանձնացրեց, սրբեց ղեւտացիներին, որպէսզի նրանք ծառայեն Իրեն: Այսօր էլ պաշտօնեան (ձեռնադրուած հոգեւորականը) խորան բարձրանալուց առաջ (Ս. Պատարագի ժամանակ) զղջում է եւ խոստովանում իր մեղքերը (հանում է կօշիկները, քանի որ մեղքի լուծը տանողը չի կարող տանել սրբութեան եւ արդարութեան լուծը: «Լուացարան մեղացն մեղայն է եւ զղջումը» (Տաթեւացի) եւ որքան զղջումը անկեղծ է եւ ի խորոց սրտի, իսկ «մեղան ի լեզուն», ապա այնքան մարդը «առաւել սրբի մեղաց»: Ապաշխարութեան սաղմոսում ամէն մեղաւոր գտնում եւ ճանաչում է իրեն, գիտակցում է գործած յանցանքների ամբողջ խորութիւնն ու պատասխանատուութիւնը: Մենք պէտք է հասկանանք, որ մեր ամէն մի յանցանք եւ ապաշնորհութիւն վնաս է հասցնում թէ՛ մեզ, թէ՛ ամբողջ եկեղեցուն: Այսպէս, Զարմանեան Աքարի պատմութեան մէջ (Յեսու, է գլուխ) Աքարի մեղքի պատճառով տուժում է ամբողջ ժողովուրդը: Եւ միայն մեղքը վերացնելուց յետոյ Իսրայէլը սկսեց յաղթանակներ տանել: Ուստի, պէտք է լաւ իմանաք, որ չկայ անհատական մեղք «անհատական» իմաստով: Եկեղեցին որպէս մի միասնական մարմին ցաւ է քաշում ամէն «հիւանդ» անդամի համար: Մեզանից ամէն մէկը Աստծու եւ եկեղեցու առաջ պատասխանատուութիւն է կրում կատարած իւրաքանչիւր յանցանքի համար: Ուստի ոչ մէկը իրաւունք չունի մեղադրելու ուրիշին (ինքնաարդարացման ամենահեշտ ուղին), այլ միայն իրեն («Մի դատիր, որ չդատուես»): Օ սաղմոսն այդպէս էլ սկսւում է. մեղաւորը, կանգնելով Աստծու առաջ, զղջում է իր արածների համար: Նա լաւ գիտէ, որ մեղանչել է ոչ միայն մարդկանց առաջ, այլ նաեւ Աստծու (1-6 համարները): Այդ զղջումին հետեւում է յանցանքների թուարկումը եւ դրանց մէջ մնացողի արժանի դատաստանը: Բայց Աստծու զօրութիւնը ի զօրու է սրբել եւ ներել մեղաւորին եւ «սուրբ սիրտ հաստատել ու ուղիղ հոգի

նորոգել» (7-13 համարներ): Սաղմոսի վերջում Դաւիթն արդէն դիմում է Աստծուն որպէս մաքրուած եւ սրբուած մէկը, քանի որ վստահ է Աստուածային ներողամտութեան վրայ: «Ցնծացցէ լեզու իմ արդարութեան քում», - աղաղակում է նա: Այն լեզուն, որ խոստովանում էր մեղքերը եւ յանցանքները, արդէն կարող է ցնծալով պատմել Աստծու փառքը, իսկ «բերան իմ երգեսցէ զօրութիւն քո»: Եւ քանի որ միեւնոյն աղբիւրից չի բխում թէ դառը ջուր, թէ՛ քաղցր, ուրեմն մարդն էլ չի կարող միաժամանակ ծառայել թէ՛ Աստծուն, թէ՛ չարին ու մեղքին: Աստծու «հաճելի պատարագը» խոնարհ սիրտ ունեցողն է եւ միայն նա կարող է «շինել Երուսաղէմի պարիսպները» (18-21 համարներ):

Սաղմոսի այս ոգին ու պատգամն էլ ամփոփուած է «Մեղայ»-ի մէջ: Այն բաղկացած է տասը հատուածից.

ա. զղջում Աստծու առաջ,

բ-ը. մեղքերի եւ յանցանքների թուարկում,

թ. խնդրանք պաշտօնեային՝ բարեխօսելու համար,

ժ. արձակում՝ նոր կեանքով բարեգործութեան նուիրուելու եւ պտուղներ բերելու պահանջով:

5. ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ

Հարց.- Ի՞նչ է Հաղորդութիւնը:

Պատասխան.- Եկեղեցու եօթ սրբարար խորհուրդներից չորրորդը Հաղորդութիւնն է: Այս խորհուրդը հաստատել է Ինքը՝ Յիսուս, Վերնատանը՝ Վերջին ընթրիքի ժամանակ: Յիսուս օրհնեց հացը, կտրեց եւ տուեց աշակերտներին, ասելով. *«Առէ՛ք, կերէ՛ք, այս է իմ մարմինը»*: Յետոյ վերցնելով բաժակը՝ գինին, գոհացաւ եւ տալով աշակերտներին՝ ասաց. *«Խմեցէ՛ք դրանից բոլորդ, որովհետեւ այդ է Նոր ուխտի իմ արիւնը, որ թափւում է շատերի համար՝ իրենց մեղքերի թողութեան համար»* (Մատթ., ԻԶ, 26-28): Հաղորդութեան խորհուրդը ամենահրաշափառ եւ ամենասքանչելի խորհուրդն է, բոլոր խորհուրդների խորհուրդը, քանի որ այդ խորհրդով իրապէս հաղորդակցւում ենք Տիրոջ հետ՝ ճաշակելով Նրա փրկչական Ս. Մարմինն ու Արիւնը: «Մկրտութիւնը հաւատի խորհուրդն է, քանի որ դրանով ենք դառնում քրիստոնեայ, իսկ ապաշխարութիւնը՝ յուսոյ խորհուրդն է, քանի որ դրանով էլ ստանում ենք մեղքերի թողութիւն: Նոյն ձեւով էլ Հաղորդութիւնը սիրոյ խորհուրդն է, քանի որ այս խորհրդով Աստուած մօտենում է մարդուն, իսկ մարդը՝ Աստծուն» (Տաթեւացի):

Հաղորդութիւնը, որպէս խորհուրդ, ունի խորհրդին բնորոշ բոլոր յատկանիշները՝ զգալի նշանը, նիւթը, բանաձեւը, պաշտօնեան եւ ենթական: Զգալի նշաններն են հացն ու գինին, որոնք Ս. Հոգու զօրութեամբ փոխարկւում են Քրիստոսի Մարմնին եւ Արեանը, սակայն հացն ու գինին իրենց գոյութիւնը, նիւթը չեն փոխում, այլ Փրկչի հոգեւոր ներկայութիւնն են ընդունում իրենց մէջ եւ սրբագործւում պաշտօնեայի աղօթքով: Հացը՝ նշխարքը, պէտք է լինի մաքուր ալիւրից եւ անխմոր (բաղարջ): Չի թոյլատրւում նաեւ այդ ալիւրին խառնել այլ բաներ՝ գարի, հաճար եւ այլն: Հաղորդութեան գինին պէտք է լինի անապակ, այսինքն՝ մաքուր որթատունկի հիւթից, առանց ջուր խառնելու:

Խորհրդի բանաձեւը Յիսուսի յայտնի խօսքերն են՝ *«Առէ՛ք, կերէ՛ք...»* (Մատթ., ԻԶ, 27-28), որոնք գրեթէ նոյնն են բոլոր եկեղեցիներում:

Խորհրդակատար պաշտօնեան քահանան է կամ պատարագիչ հոգեւորականը: Ենթակաները այն հաւատացեալներն են, որոնք պատրաստուել են մօտենալու Սեղանին՝ նախօրօք խոստովանելով իրենց մեղքերը (երրորդ խորհուրդը՝ ապաշխարութիւնը): Առանց երրորդ խորհրդի՝ ապաշխարութեան կատարման չի թոյլատրւում հաղորդութիւն ընդունել:

Հաղորդութեան խորհուրդը քրիստոնէութեան ամենագերազանց խորհուրդն է, այն անհնար է ըմբռնել մարդկային մտքով եւ հասկանալ: Խորհուրդի էութեան մէջ պէտք է թափանցել հաւատով, քանի որ խորհուրդը նիւթական չէ, այլ Յիսուսի Մարմնի եւ Արեան խորհուրդն է: Հաղորդութեան խորհուրդը կոչւում է նաեւ Պատարագ, այսինքն՝ այն սրբազան արարողութիւնը, որով կատարւում է հաղորդութեան խորհուրդը: Խորհրդի մասնակիցներից նրանք, որոնք չեն հաղորդւում, ստանում են մաս, որը օրհնուած բաղարջ հացն է:

Հաղորդութիւնը այն երկնային ճշմարիտ մանանան է, որ կեանք է տալիս քրիստոնեային: Քրիստոս, բնակուելով քրիստոնեաների մէջ, միացնում է նրանց իրար: «Ադամի մարմնով մենք մարդ ենք լինում եւ դառնում մարդու որդի, մինչդեռ Քրիստոսի մարմնով լինում ենք Քրիստոս եւ Աստուծոյ որդի: Մարմնով Ադամից ենք՝ երկրից, շնչաւոր, մինչդեռ Քրիստոսի Մարմնով

լինում ենք երկնային, հոգեւոր: Ադամի մարմնով ժամանակաւոր ենք, մահկանացու, մինչդեռ Քրիստոսի մարմնով՝ անմահ եւ յաւիտեան» (Տաթեւացի):

Հաղորդութիւնը անմահութեան բալասանն է, որով մենք անապականութիւն ենք հագնում եւ յարութեան յոյսով հանդերձաւորւում:

Հաղորդութիւնը հաղորդակցութիւն եւ միութիւն է իրար հետ եւ Աստծու հետ: Սրբագործուած հացի ու գինու միջոցով ճաշակողների հոգու մէջ է իջնում Ինքը՝ Աստուած, եւ զօրացնում նրանց, ներշնչում, կենդանացնում եւ բարձրացնում ընկած մարդուն: Գերբնականը, մտնելով ժամանակաւորի մէջ, Իր կեանքից նոր կեանք է տալիս հաղորդուողին: Հաղորդութեան խորհրդի մատուցմամբ տեսանելի եւ անտեսանելի, զինուորեալ եւ յաղթական եկեղեցիները մէկ են լինում՝ կազմելով մի միութիւն:

Հաղորդութեան խորհուրդը Քրիստոսի հետ հաղորդակցուելուց բացի խորհրդանշում է նաեւ Յիսուսի քաւչարար զոհաբերութիւնը՝ ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց: Քրիստոսի մահը մէկ անգամ միայն եղաւ Պատմութեան մէջ եւ չի կարող կրկնուել: Նրա Մարմինն ու Արիւնը մի անգամ մատուցուեց Գողգոթայում, իբրեւ յաւիտենական պատարագ: Եկեղեցին, պատրաստելով Հաղորդութեան Սեղանը, շարունակաբար իրացնում եւ իրագործում է այդ յաւիտենական պատարագը այստեղ՝ աշխարհում: Քրիստոս խաչի վրայ իր մահով փրկեց մարդկութիւնը, հաշտեցրեց Աստծու հետ եւ մարդկութեանը յաւիտենական կեանքի ժառանգորդ դարձրեց: Գողգոթայի վրայ Նա Իր Արեան հեղումով Ինքն իրեն զոհաբերեց: Ս. Պատարագի խորհրդակատարման ժամանակ, ամէն անգամ դարձեալ Քրիստոս Ինքնիրեն է մատուցում, բայց քահանայի միջոցով՝ անարիւն եւ խորհրդաւոր կերպով՝ հացի ու գինու միջոցով: Ս. Պատարագի ընթացքում, սրբագործման պահին հացն ու գինին խորհրդաբար, անճառելի կերպով փոխակերպւում են Քրիստոսի ճշմարիտ Մարմնին եւ Արեան: Արտաքնապէս հացի ու գինու տարրերը նոյնն են մնում, սակայն նոր զօրութիւն են ստանում, նրանց մէջ խորհրդաւոր կերպով հաստատւում է Քրիստոսի Մարմնի եւ Արեան իսկութիւնը՝ Ս. Հոգու ներգործութեամբ: Հաղորդութեան խորհուրդը մարդկանց Աստծու հետ միաւորող կապն է, որովհետեւ այս խորհրդով Հայր Աստուած սրբագործուած հացը եւ գինին փոխում է Ս. Հոգիով Միածնի Ս. Մարմնին եւ Արեան, որպէսզի մենք, ճաշակելով այն, միաւորուենք Աստծու հետ:

Հարց.- Ովքե՞ր կարող են մասնակցել Հաղորդութեան խորհրդին: Ճի՞շտ է արդեօք երեխաներին հաղորդութիւն տալը:

Պատասխան.- Հաղորդութեան սրբարար խորհուրդը մեր առաջ պատկերում է Փրկչի մարդեղացումը, չարչարանքները, թափած արիւնը, մահը, թաղումը եւ յարութիւնը: Ուստի հաղորդութեան Սեղանին մօտեցողը անշուշտ պէտք է պատրաստուած լինի: Նախ նա պէտք է զղջայ իր մեղքերի համար, խոստովանի եւ արձակում ստանայ քահանայից: Ծայրայեղ դէպքերում պաշտօնեան կարող է հաղորդութիւն տալ՝ յետոյ խոստովանելու եւ արձակում ստանալու պայմանով: Հաղորդուողները, որպէս կանոն, պէտք է ծոմ պահեն գոնէ նախորդ օրուայ կէսգիշերից սկսած կամ էլ՝ ծայրայեղ դէպքերում, հաղորդութիւն ստանալու օրը:

Եթէ հաղորդուողը հաւատ չունի, չի հաւատում Քրիստոսի Սրբարար զօրութեանը եւ մօտենում է Սեղանին՝ ի ցոյց մարդկանց կամ կեղծաւորաբար, նրա համար խորհուրդը անօգուտ բան է:

Հայ եկեղեցում ի տարբերութիւն որոշ եկեղեցիների, հաղորդութիւն են տալիս նաեւ երեխաներին: Մկրտուած եւ դրոշմուած երեխաները չպէտք է զրկուեն երկնային անզուգական պարգեւից, մանաւանդ որ Նոր Կտակարանում մանուկներին հաղորդութիւն տալուն նպաստող համարներ կան («Արդ՝ որովհետեւ մանկունք հաղորդեսցին արեան եւ մարմնոյ...» /Եբր., Բ, 14/ եւ այլն):

Հարց.- Ի՞նչ տարբերութիւններ կան եկեղեցիներում Հաղորդութեան խորհրդի վերաբերեալ:

Պատասխան.- Եկեղեցու պատմութիւնից գիտենք, որ դարեր շարունակ եկեղեցիների միջեւ այս հարցի վերաբերեալ վէճեր են տեղի ունեցել, որոնք ոչ թէ միացրել, այլ հեռացրել են եկեղեցիներին: Վէճերի առարկայ են եղել խորհրդի նիւթերը, կատարման ձեւերը, ընթացքը եւ այլն: Այսպէս, Հռոմի կաթոլիկ եկեղեցում, ինչպէս նաեւ հայերի մօտ, օգտագործուել է բաղարջ հաց, մինչդեռ յոյները (Ուղղափառ եկեղեցին)՝ խմորեալ հաց: Թէ՛ լատինները եւ թէ՛ յոյները գինուն ջուր են խառնել, մինչդեռ հայերը կտրականապէս մերժել են այդ սովորութիւնը: Ջուր խառնելը հիմնաւորելու համար նրանք բերել են Յիսուսի տիգախոց կողից հոսած ջրի եւ արեան օրինակը: Սակայն,

ակնյայտ է, որ այդ օրինակը կապ չունի խորհրդի էութեան հետ, քանի որ խորհուրդը հաստատուել էր մինչ խաչուելը: Մեր եկեղեցու դաւանութիւնն էլ հիմնուում է Սուրբգրային պատմութիւնների եւ առաքելական շրջանից եկող կանոնների վրայ: Այսպէս, Հին Կտակարանում, Աստուած պատուիրել էր, որ Զատկական տօնին նախորդող եօթ օրերում միայն բաղարջ հաց ուտեն, որն էլ խորհրդանշել է տէրունական կուսածին մարմնի ծնունդը եւ կենաց հացը: Միւս կողմից «խմոր» ասելով Նոր Կտակարանը հասկանում է չարութիւն, անզգամութիւն, կեղծաւորութիւն (Ա Կորնթ., Ե, 7-8, Մատթ., ԺԶ, 6-12 եւ այլն): Ուստի եւ մեր եկեղեցու հայրերը կտրականապէս մերժել են հացի խմորեալ լինելը, ասելով. «Խմորեալն ոչ լինի կենդանական հաց»: Իսկ քանի որ Քրիստոսի արիւնն էլ անապական է, հայերը գինուն երբեք ջուր չեն խառնել:

Միւս վիճելի հարցը հացի ու գինու գոյացափոխութեան խնդիրն է եղել: Ըստ լատինների, հացը եւ գինին խորհրդի ժամանակ փոխում են իրենց տարրերը, նիւթը եւ իրապէս դառնում Յիսուսի Մարմինն ու Արիւնը: Այսինքն, հացի եւ գինու մարմնի եւ արեան փոխուելով ոչնչանում է նրանց առանձին գոյացութիւնը: Այս տեսակէտը անընդունելի է եղել Հայ եկեղեցու կողմից: Համաձայն Հայ եկեղեցու դաւանութեան գոյացութիւնը չէ, որ փոխւում է կամ ոչնչանում, այլ տարրերը խորհրդաւորապէս եւ անասելի կերպով փոխւում են Քրիստոսի Մարմնի եւ Արեան իսկութեան եւ դառնում Քրիստոսի ճշմարիտ Մարմին ու Արիւն: Այսինքն, արտաքնապէս հացի եւ գինու տարրերը նոյնն են մնում, սակայն ստանում են նոր զօրութիւն, որոնց մէջ խորհրդաւոր կերպով հաստատւում է Քրիստոսի Մարմնի եւ Արեան իսկութիւնը՝ Ս. Հոգու ներգործութեամբ:

Կան նաեւ երկրորդական տարբերութիւններ, որոնցից կնշենք մի քանիսը.

-Լատինները հաղորդուողներին տալիս են միայն հացը՝ նշխարքը, եւ այն չեն թաթախում բաժակի մէջ, իսկ գինին վերապահում են միայն հոգեւորականներին:

-Լատինները հաղորդութիւն չեն տալիս նաեւ մանուկներին, ասելով, որ նրանք հաւատ չունեն եւ գիտակից չեն: Այդ դէպքում տրամաբանական չէ երեխաներին մկրտելը, մինչդեռ իւրաքանչիւր մկրտուած անձ՝ անկախ տարիքից, իրաւունք ունի հաղորդուելու:

Հարց.- Քանի՞ անգամ պէտք է հաղորդուել:

Պատասխան.- Թէեւ Յիսուս չսահմանեց թէ տարին քանի անգամ պէտք է հաղորդուել, սակայն, անհրաժեշտ համարեց փրկութեան համար հաղորդուելը (Յովհ., Զ, 54): Ամէն հաւատացեալ, անհրաժեշտաբար պէտք է հաղորդուի գոնէ տարին մի քանի անգամ: Առաքելական շրջանում, Պատարագի բոլոր ներկաները հաղորդւում էին: Հայ եկեղեցում ընդունուած է գոնէ տարին հինգ անգամ հաղորդուել՝ Տաղաւարաց տօներին (Ծնունդ, Զատիկ, Վարդավառ, Վերափոխումն եւ Խաչվերաց):

Հարց.- Ե՞րբ եւ որտե՞ղ են կատարում Հաղորդութեան խորհուրդը:

Պատասխան.- Հաղորդութեան խորհուրդը կամ Ս. Պատարագը, որպէս կանոն կատարւում է կիրակի օրերին (կիրակի բառը ծագում է յունարէնից եւ նշանակում է տէրունական): Խորհուրդը կատարւում է նաեւ շաբաթ օրերին, ինչպէս նաեւ սրբերին նուիրուած յիշատակութեան օրերին: Սովորաբար Ս. Պատարագը մատուցւում է առաւօտեան ժամերին, բայց Ծննդեան եւ Զատկի ճրագալոյցին այն մատուցւում է նաեւ երեկոյեան: Աւագ հինգշաբթի օրը Ս. Պատարագը մատուցւում է ճաշից յետոյ, որովհետեւ Վերջին ընթրիքը այդ ժամին կատարուեց:

Ս. Պատարագ մատուցելու տեղը եկեղեցին է կամ էլ օրհնուած մատուռները, որոնք ունեն օրհնուած Սեղաններ: Ծայրայեղ դէպքերում (պատերազմ, աղէտ եւ այլն) թոյլատրւում է Ս. Պատարագը կատարել տաղաւարների տակ, բաց տեղերում: Հետեւաբար, տներում կամ այնպիսի տեղերում, ուր չկայ օրհնուած Սեղան, Ս. Պատարագ մատուցելը վաւերական չէ: Հայ եկեղեցում նոյն օրը նոյն քահանայի կողմից Ս. Պատարագը չի կրկնւում, ինչպէս այլ եկեղեցիներում: Ս. Պատարագի համար կան նաեւ արգելուած օրեր: Այսպէս, Առաջաւորաց Պահքի հինգ օրերին եւ Մեծ Պահքի հասարակ օրերին (ոչ շաբաթ - կիրակի օրերը) Հայ եկեղեցում Ս. Պատարագ չեն կատարում: Բացառութիւն են կազմում Երուսաղէմի եւ Բեթղեհէմի սրբավայրերը, ուր Ս. Պատարագը կատարւում է ամէն օր (բացի Աւագ Ուրբաթից եւ Բուն Բարեկենդանի երկուշաբթի օրուանից):

Հարց.- Մի՞թէ Հաղորդութիւն ընդունելը անհրաժեշտ է:

Պատասխան.- Հաղորդութեան խորհրդին մասնակցողները, որպէս կանոն բաժանւում են երկու խմբի. արժանաւորների եւ անարժանների: Մենք հաւատում ենք, որ Ս. Պատարագի ժամանակ Երկինքն իջնում է Ս. Սեղանին եւ արժանաւոր հաւատացեալները, որոնք պատրաստուել են հաղորդուելու, ճաշակելով միանում են Քրիստոսին եւ հաղորդ լինում յաւիտենական կեանքին ու յաւիտենական ժառանգութեանը: Իրօք որ, Եկեղեցին մի մեծ բացուած վարագոյր է, որի ետեւում՝ սկիհի մէջ, իջնում է Ինքը՝ Աստուած, եւ որի առջեւ գլխահակ գալիս են բոլորը, հաղորդուելու անցեալի հետ՝ կենսառողջ հաց ու գինով (Թէքէեան): Ինչպէս որ «հացը բազմաթիւ ցորենի հատիկներից է բաղկացած, իսկ գինին՝ խաղողի բազում պտուղներից, այնպէս էլ Քրիստոսի մարմինը բազում անդամներից է շաղկապուած, որը Եկեղեցին է՝ բազում հաւատացեալների միաւորութիւնը» (Տաթեւացի):

Անարժան հաղորդուողները զերծ են մնում Խորհրդի օրհնութիւններից եւ Հաղորդութիւնը նրանց համար դառնում է աւելի «դատապարտութեան» խորհուրդ, քան՝ օրհնութեան: Ուրեմն, հաղորդութեան խորհուրդը իր զարմանահրաշ զօրութեամբ միաւորում է բոլորին, եւ ամենափոքր անդամներն անգամ իրենց տեղն ունեն այդ Տիեզերական կառոյցում: Ոչ մի անդամ չի անարգւում եւ ոչ մի անդամ աննպատակ չի ապրում իր երկրաւոր կեանքը, Նրա բոլոր անդամների համար ամէն վայրկեանն իմաստաւորուած է, ունի իր ուրոյն նպատակը եւ ոչ մի անդամ չի ափսոսում իր ապրած եւ ոչ մի վայրկեանի համար: Այս Խորհուրդը այն յաւիտենական կամուրջն է, որ կապում է բոլոր ժամանակները իրար հետ, ներկան՝ անցեալի, անցեալը՝ ապագայի: Եթէ կտրուի այդ կենսական կապը, կխորտակուի եւ Եկեղեցին: Այդ պատճառով էլ, Խորհրդի կատարման ժամանակ բազում անգամ յիշատակւում են ննջեցեալները, սրբերը, նահատակները եւ այլն:

Հարց.- Ճի՞շտ է, արդեօք, ննջեցեալների համար հոգեհանգստի կարգ կատարելը:

Պատասխան.- Ինչպէս ասացինք, Ս. Պատարագի արարողութեան ժամանակ խորհրդաւոր ձեւով Երկինքն ու Եկեղեցին իջնում են Ս. Սեղանի

վրայ եւ այնտեղ միաւորում բոլոր մասնակիցներին Քրիստոսի հետ եւ Քրիստոսի մէջ: Ուրեմն, եթէ մեր մէջ եղբայրասիրութիւն կայ, պարտաւոր ենք աղօթել նաեւ ննջեցեալների հետ միասին եւ նրանց համար՝ իրար հետ մօտենալով Պատարագի խորհրդին, որովհետեւ նրանք եւս աղօթակից են մեզ հանդերձեալում: Ս. Պատարագի ժամանակ յաճախ յիշում են սրբերին ու ննջեցեալներին ոչ թէ նրա համար, որ նրանք կարօտ են մեր յիշատակութեանը, եւ կամ մեր յիշելով՝ նրանց պիտի յիշի նաեւ Ինքը՝ Աստուած: Եկեղեցին յիշում է նրանց, քանի որ՝

-Եկեղեցին կենդանի է եւ նրա մէջ մահուան ստուեր անգամ չկայ.

-ուր Թագաւորն է, այնտեղ էլ նրան հաւատարիմ զինուորներն են (Տաթեւացի).

-Խորհրդի ժամանակ ներկայ են բոլորը՝ անկախ ժամանակից, քանի որ յաւիտենականութեան մէջ ժամանակ հասկացողութիւն չկայ:

Ս. Պատարագի աւարտից յետոյ, ննջեցեալների ազգականների կամ բարեկամների խնդրանքով, Հայ եկեղեցում կատարւում է Հոգեհանգստի պաշտօն: Կարգը սկսւում է Հանգստեան շարականով («Որ յանէից ստեղծող գոյին»), սաղմոսների, Աւետարանի ընթերցումով, Շնորհալու շարականներով եւ աւարտւում «Ի վերինն Երուսաղէմ»-ով: Վերջում քահանան իր աղօթքի մէջ յիշում է ննջեցեալներին՝ անուն առ անուն եւ խնդրում. «Տէր, յիշեա՛ յաւուր մեծի գալստեան»: «Նորօրեայ» շատ հերձուածներ, սխալ հասկանալով Հոգեհանգստեան կարգը, տեղի-անտեղի քննադատում են այն, առանց հասկանալու: Շատերն անգամ ջանում են ապացուցել, որ այն չի հիմնաւորւում Ս. Գրքով եւ աւելի ուշ ժամանակների ներմուծութիւն է եւ այլն: Մինչդեռ, Հայ եկեղեցու եւ ոչ մի կարգում չկայ Ս. Գրքին հակասող եւ ոչ մի կէտ: Օրինակ, նրանք ասում են, որ Հոգեհանգստեան կարգ կատարելով իբրեւ թէ ննջեցեալի «տեղն» ենք փոխում Երկնքում, մինչդեռ նման բան չկայ կարգի եւ ոչ մի տողում: «Որ յանէից» շարականի բոլոր տները աւարտւում են հետեւեալ տողերով. «Շնորհեա ննջեցելոց քոց ծառայից, յորժամ գաս դատել զոր անարատ ձեռօք ստեղծեր»: Այսինքն՝ պաշտօնեան խնդրում է, որ Գալստեան ժամանակ (Դատաստանի օրը), Նա ողորմութեան արժանացնի ննջեցեալին, եւ ոչ թէ կարգը կատարելու ժամանակ: Նոյն սկզբունքն է արտացոլուած նաեւ «Ի վերինն Երուսաղէմ»-ում. «Վերին Երուսա-

ղէմում», այսինքն՝ Աստծու Թագաւորութիւնում, որը հրեշտակների բնակարանն է, գտնուում են Ենոքն ու Եղիան, «ծերացեալ եւ աղաւնակերպ», ինչպէս ասում է շարականը: Ենոքը *«Աստծու հետ քայլեց»* (Ծննդոց, Ե, 24) եւ առանց մահ ճաշակելու երկինք փոխադրուեց: Եղիան էլ, որը Աստծու օրէնքներին նախանձաւոր էր եւ հաւատարիմ, նոյնպէս երկինք փոխադրուեց՝ առանց մահ ճաշակելու: Իսկ Յիսուս, *«որի մէջ բնակւում է Աստծոյ ամբողջ լեցունութիւնը»* (Կող., Ա, 19), մահը ճաշակեց մեր փոխարէն՝ անմահութիւն շնորհելով մեզ: «Ուրեմն, - ասում է շարականի վերջին տողը, - Տէր ողորմած, հոգւոցն մեր ննջեցելոց ողորմեա, ինչպէս որ ողորմեցիր Ենոքին ու Եղիային, իրենց կեանքի աւարտին»:

(Շարունակելի)

ՅԱՒԵԼՈՒԱԾ

«Մեղայ Ամենասուրբ Երրորդութեանն» աղօթքի մեկնութիւն

Ա հատուած

«Մեղայ Ամենասուրբ Երրորդութեանն՝ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ: Մեղուցեալ եմ Աստուծոյ: Խոստովանիմ առաջի Աստուծոյ՝ եւ Սրբուհւոյ Աստուածածնին՝ եւ առաջի քո Հայր Սուրբ՝ զամենայն մեղս զոր գործեալ եմ: Քանզի մեղայ խորհրդով, բանիւ եւ գործով, կամաւ եւ ակամայ, գիտութեամբ եւ անգիտութեամբ՝ մեղայ Աստուծոյ»:

Խոստովանողը վկայում է Աստծու, Ս. Աստուածածնի եւ քահանայի առաջ: Այստեղ ներկայ են Ս. Երրորդութիւնը, Յաղթական Եկեղեցին (ի դէմս Ս. Աստուածածնի, Մարտնչող կամ Ձինուորեալ Եկեղեցին (ի դէմս քահանայի): Հետեւաբար խոստովանողը վկայում է, որ ինքը մեղք է գործել նախ Աստծու առաջ եւ յետոյ՝ Եկեղեցու: Մեղանչելով խորհրդով, խօսքով եւ գործերով նա առանց երկիւղի եւ ամօթի խոստովանում է ամբողջ Եկեղեցու ներկայութեամբ:

Մարդը Աստծու բանական ստեղծագործութիւնն է, ուստի ինքն է ըստ իր կամքի ընտրում բարին կամ չարը: «Լուացուեցէ՛ք եւ մաքրուեցէ՛ք, չար

գործերից հեռու մնացէ՛ք, սովորէք բարի գործել», - ասում է Եսային (Ա, 16): Այսինքն՝ եթէ կարող ենք չարութիւնից հեռանալ եւ ետ կանգնել, բարի է, իսկ եթէ ոչ՝ զղջումն ու խոստովանութիւնն են մեզ օգնում: Տաթեւացին մեղաւորների բանակը բաժանում է երեք մասի:

ա. Ակամայ մեղք գործողներ («որպէս մեղք մանուկ տղայոց»):

բ. Կամաւոր եւ գիտութեամբ մեղք գործողներ, որոնց համար «զղջման ծաղիկն ոչ կորնչի»: Այսինքն՝ մեղքից յետոյ մեղաւորի մէջ զղջում է առաջանում կատարածի հանդէպ եւ ձգտում՝ ազատուելու մեղքից:

գ. Կամաւոր եւ գիտութեամբ մեղք գործողներ, որոնց համար նա «անզեղջ մնայ սրտով եւ յուսահատեալ»: Այսինքն՝ մեղանչողը չի զղջում իր արածի համար՝ իմանալով որ արդար դատաստանի հատուցումը անխուսափելի է:

«Ակամայ» գործած մեղքերը հետեւանք են մարդու տկարութեան (մարմնական, բանական կամ հոգեւոր) մինչդեռ «կամաւորը», մտածուած եւ գիտակցուած կերպով մեղքի ճանապարհով գնալն է: «Ակամայ մեղքի դէպքում մարդը ճանապարհներն է մոլորել, իսկ կամաւորի դէպքում՝ ճանապարհն է թիւր, եւ որքան որ ընթանայ այդ ճանապարհով, այնքան կմոլորուի» (Տաթեւացի):

Ակամայ մեղանչողը հիւանդն է, որն առողջանում է դեղերով (ապաշխարութեամբ, իսկ կամաւորը մեռածն է, որը չի ցանկանում մեղքից ազատուել եւ չի ցաւում մեղքի համար՝ գրաւուելով մեղքի հեշտութիւնից: Կամաւոր մեղք գործողը քնել է այդ հեշտութեան մէջ եւ նման է կոյր եւ խուլ մարդու: Եկեղեցու զանգերը, նմանուելով Երիքովի շուրջը պտտուող շեփորների ձայնին (Յեսուի օրօք) ի վիճակի են քանդելու եւ կործանելու ամէն մի պարիսպ, որպէսզի Աստուածային խօսքն ու Ս. Հոգու զօրութիւնը բացեն մեղաւորի աչքերն ու միտքը՝ նրան զղջումի ու ապաշխարութեան առաջնորդելով: Երիքովը, ինչպէս ասում է Ս. Գիրքը (Յեսու, Զ, 1) ամուր եւ փակ քաղաք էր, ոչ ոք չէր մտնում եւ դուրս չէր գալիս այնտեղից: Այդ քաղաքը «ոչ թէ Աստծուն էր ապաւինել, այլ իր պարիսպների զօրութեանը» (Եղիշէ) Աստծու խօսքն ու Աստուածաշունչը միակն միջոցներն են՝ որ ի վիճակի են կործանել «երիքովեան» պարիսպները: Կամաւոր եւ ակամայ մեղքերը նման են

տաք ջրին եւ հնոցի հրին (Տաթեւացի): Ինչպէս տաք ջուրը կարող է զովանալ, նոյնպէս էլ ակամայ մեղքը կարող է փոխուել: Իսկ ինչպէս որ հնոցի հուրը իր ջերմութիւնը չի փոխում, այնպէս էլ կամաւոր մեղքը գիտութեամբ ջերմանալով չի զովանում եւ չի փոխուում: Զղջմամբ, խոստովանութեամբ եւ ապաշխարութեամբ միայն հնոցի ջերմութիւնը կարող է նուազել:

Ինչո՞ւ մարդը մեղքի մէջ ընկնելուց յետոյ չի ապաշխարում. չէ՞ որ տեսնելով մեղքի վնասակարութիւնը, նրա վատ ազդեցութիւնը, նա պէտք է ձգտի ազատուել դրանից: Տաթեւացին այսպէս է նկարագրում այդ ընթացքը:

«Նախ երկչոտութիւն է ընկնում սրտի մէջ, թէ՝ մեղքը մեծ է եւ անհնար է ապաշխարել: Մինչդեռ չպէտք է երկիւղել մեղքի ծանրութիւնից, քանի որ դա չի կարող յաղթել Աստծու գթութեանը: Այնուհետեւ ամօթ է մտնում մտքի մէջ եւ մեղաւորը սկսում է մտածել, թէ ապաշխարութեան ծանրութիւնը չի կարող տանել»: Մեղքի մէջ մնալու հեշտութիւնն ու սէրը համոզում է մեղաւորին, թէ՝ «դեռ ժամանակ կայ, յետոյ կապաշխարեմ»: Այսինքն՝ մտածելով թէ երկար կապրի, մեղաւորը ընկնում է ապահովութեան սին գիրկը: Իսկ թէ ինչ կլինի վաղը, ապագայում, մենք չգիտենք եւ յոյս դնել չիմացած բանի վրայ՝ սխալ է, քանի որ *«հիմա է ընդունելու ժամանակը եւ հիմա է փրկութեան օրը»* (Բ Կորնթ., Զ, 2): Ուստի պէտք է շտապ ապաշխարել եւ չյետաձգել: Երբ հրդեհ է բռնկուում տանը, անմիջապէս հանգցնում են եւ դուրս փախչում: Նոյնը պիտի անել նաեւ մեղքի հրդեհի դէպքում, որը մտնելով մեր հոգու տունը, այրում է ու փչացնում: «Երբ բանտում գտնուողը իմանում է, որ դուռը բաց է, անմիջապէս դուրս է գալիս: Մեղքը մարդու համար բանտն է, իսկ դուռը՝ ապաշխարութիւնը» (Տաթեւացի):

Երբ մարդ գիտակցում է մեղքի հասցրած վնասները, նա առանց երկմտելու եւ ամաչելու կկանգնի Աստծու առաջ եւ կապաշխարի: Մարդ ընկնելով մեղքի մէջ կորցնում է Աստուածային իր պատկերը, ապականում տաճարը, սատանային տեղիք տալիս, շնորհքի լոյսից հեռանում, աւերում այն ճանապարհը, որ տանում է դէպի Աստուած, ինքն իրեն դատապարտում է մահուան ու հինգ յիմար կոյսերի ճակատագրին արժանանում, եթէ չկայ զղջում ու ապաշխարութիւն: «Մի անզեղջ կամօք ի մեղս մեռցուք, եւ մի անապաշխար յաշխարհէ ելցուք», - ասում է Տաթեւացին: Երբ զղջում ենք,

հաշտուում ենք Աստծու հետ, երբ խոստովանում ենք՝ թողութիւն ենք գտնում, եւ երբ ապաշխարում ենք՝ ազատուում ենք մեղքի հետեւանքներից: Ուրեմն, «դառնանք Աստծուն, եւ նա կդառնայ դէպի մեզ», մօտենանք Նրան, եւ Նա կմօտենայ մեզ:

Եկեղեցու ներկայութիւնը խոստովանութեան ժամանակ ոչ միայն պարտադիր է, այլ նաեւ օգտակար զղջացողի համար: Արդարի աղօթքը օգուտ է նրանց միայն, որ զղջում են եւ խոստովանում: Ամբողջ եկեղեցին՝ Ձիներորեալ եւ Յաղթական, աղօթքով զօրավիգ է կանգնում ապաշխարողին: Իսկ չզղջացողին այդ ամէնը օգուտ չէ. «թէ ոք անզեղջ ի մեղս մեռանի, ոչ է օգուտ» (Տաթեւացի):

Առանց ամաչելու եւ առանց երկմտելու, բոլորի ներկայութեամբ խոստովանութեան եւ զղջման լաւագոյն օրինակը մեղաւոր կնոջ եւ փարիսեցի Սիմոնի պատմութիւնն է (Ղուկ., է, 36-50):

Փարիսեցիներից մէկը՝ Սիմոն անունով, Յիսուսին հրաւիրում է տուն՝ ճաշելու: Քաղաքում յայտնի մի մեղաւոր կին, իմանալով այդ մասին, գալիս է փարիսեցու տուն, բերելով մի շիշ անուշահոտ իւղ: Նա օծում է Յիսուսին, լաց լինում, արցունքներով թրջում Յիսուսի ոտքերը եւ մազերով սրբում:

Քրիստոս երեք ձեւով է այցելում մարդկանց: Նախ երբ հրաւիրում են, ինչպէս Սիմոնը: Նա պատրաստ է մտնելու այն տունը, ուր խնդրում եւ սպասում են իրեն: Երկրորդ՝ երբ Ինքն է գնում, ինչպէս Զաքէոսի պատմութեան մէջ: Երրորդ՝ շրջում եւ բախում է մեր տան դռները (Յայտն., Գ, 20): Յիսուս ուզում է գալ եւ բնակուել մեր սրտերում, սեղանակից լինել մեզ:

Մարդն արդարանալու տեղ չունի: Եթէ նա քնած է, ապա Յիսուս բախում է նրա սրտի դուռը, բացում աչքերը: Իսկ եթէ մարդն արթուն է եւ պատրաստ, Յիսուս սպասում է հրաւէրին, մարդու դարձին, զղջմանն ու ապաշխարութեանը: Եթէ մենք մէկ քայլ անենք դէպի Աստուած, Նա հազար քայլ կանի դէպի մեզ. եթէ անառակ որդու նման մէկ քայլ անենք Հօրը մօտենալու՝ թէկուզ ծառայ լինելու յոյսով, Նա մեզ հայրական համբոյրով կընդունի ոչ որպէս ծառայ, այլ՝ որդի: Տաթեւացին գրում է, որ մեղաւոր կինը երեք բանի համար եկաւ Սիմոնենց տուն.

ա. զղջաց, ուստի եւ Յիսուս ողորմեց նրան,

բ. խոստովանեց, ուստի եւ Յիսուս թողեց նրա մեղքերը եւ

գ. ապաշխարեց, որից յետոյ Յիսուս ասաց նրան. *«Գնա խաղաղութեամբ»:*

Թէեւ Յիսուս Սիմոնենց տանն էր, բայց Սիմոնը ոչ ոչ մի օգուտ չստացաւ Նրա ներկայութիւնից, ընդհակառակը, նա դատեց ինչպէս Յիսուսին, այնպէս էլ կնոջը: Յիսուս հիւրընկալեց Սինմոնենց եւ մինչեւ վերջ էլ մնաց որպէս հիւր, մինչդեռ կնոջ համար Նա հիւր չէր, այլ՝ Փրկիչ:

Ամփոփելով, Տաթեւացին գրում է, որ այս պատմութիւնից պէտք է սովորենք

-խոստովանութիւնը չձգձգել. մեղաւոր կինը լսելով Յիսուսի գալու մասին, անմիջապէս եկաւ նրա մօտ:

-չթաքցնենք մեր յանցանքները, քանի որ դրանից գարշահոտութիւն դուրս կգայ:

-խոստովանելուց յետոյ նորից մեղքին չդառնալ, այլ՝ Յիսուսին, ինչպէս այդ կինը:

-չպարծենալ ամբարշտութիւններով, այլ՝ խոնարհուել Յիսուսի առաջ, ինչպէս այդ կինը, որը չէր կարողանում վեր նայել:

Եւ որպէս հետեւանք այս ամէնի, մենք խաղաղութիւն կգտնենք, կհաշտուենք Աստծու հետ եւ կազատուենք մեղքի բեռից:

Բ հատուած

«Մեղայ հոգւովս եւ զօրութեամբ սորա, մտօքս եւ շարժմամբ սորա, մարմնովս եւ զգայութեամբ սորա: Մեղայ զօրութեամբ հոգւոյս, խորամանկութեամբ, անզգամութեամբ, յանդգնութեամբ եւ երկչոտութեամբ, շռայլութեամբ եւ ժլատութեամբ, զեղխութեամբ եւ անիրաւութեամբ, չարահաւանութեամբ, յուսահատութեամբ, եւ թերամտութեամբ՝ մեղա՜յ Աստուծոյ»:

Մարդը մեղանչել է իր ամբողջ էութեամբ, թէ՛ հոգով (եւ նրա զօրութեամբ), թէ՛ մտքով (եւ նրա շարժմամբ) եւ թէ՛ մարմնով (եւ նրա զգայութիւններով):

Դարասկզբին ոմանք կարծում էին, թէ գիտութեան եւ տեխնիկայի զարգացման զուգընթաց Աստուած դուրս կմղուի մարդկանց գլուխներից: Մարդիկ, որոնք աստղերը չէին տարբերում մոլորակներից, համոզուած քարոզում էին, որ երկինքը քննելով եւ արբանեակներ արձակելով՝ կոչնչացնեն երկնքի Արարչին եւ «Լոյսի աղբիւրին»: Բայց երբ մարդիկ սկսեցին ապրել առանց Աստծու, համոզուեցին հակառակ բանում, համոզուեցին, որ մարդն առանց Աստծու չի կարող ապրել: Ինչքան էլ նա խորամուխ լինի Տիեզերքի ճանաչման մէջ, չի կարող ազատուել իր ներքին մեղանչական բնութիւնից: Ի վերջոյ, գործած յանցանքների ծանրութիւնը կստիպի մարդուն դրանից ազատուելու ուղիներ եւ ճանապարհներ փնտրել: Այդ ճանապարհներն են՝ զղջումը, խոստովանութիւնը, ապաշխարութիւնը: Զղջման այս աղօթքում Բ հատուածից սկսւում է մեղքերի թուարկումը խումբ առ խումբ: Առաջին խմբի մէջ մտնում են «հոգով եւ նրա զօրութեամբ» գործած մեղքերը: Դրանք են.

1. Խորամանկութիւն, որ նշանակում է չարահնար արուեստ, նենգութիւն, խաբէութիւն, կեղծաւորութիւն: Երբ մարդը ծածկում է իր նպատակը եւ այլ ճանապարհներ ընտրելով՝ ձգտում դրան, ապա ասում ենք, որ նա խորամանկում է: Խորամանկութիւնը «Մեղայ»-ի մեղքերի ցանկում առաջինն է: Այդ մեղքն առաջինն է յիշատակուած նաեւ Ս. Գրքում. եդեմական պարտէզում օձը խորամանկութեամբ խաբեց մարդուն: Այսօր էլ մարդը յաճախ է խորամանկում, երբ չի ուզում ճիշտ խօսել, ամաչում է ճիշտ խօսելուց: Այսինքն՝ խորամանկութեան մեղքը, սկսած Եդեմից, «հետապնդում է» մարդուն: Ուստիեւ ոչ ոք զերծ չի մնում այդ մեղքից եւ ոչ ոք չի կարող ասել, թէ ինքն ազատուած է դրանից: Եդեմական պարտէզի պատմութիւնը ամէն մէկիս պատմութիւնն է, յաւերժօրէն կրկնուող եւ մշտնջենապէս ներկայ: Նոյն «խորամանկել» բառն է օգտագործուած նաեւ կայսրին տուրք տալուչտալու պատմութեան մէջ (Ղուկ., Ի, 23):

Մարդիկ, որոնք ուզում են արդար երեւալ, խորամանկութեամբ մօտեցան Յիսուսին եւ հարցրին. *«Վարդապե՛տ, պէ՞տք է արդեօք կայսրին տուրք տալ, թէ՝ ոչ»:*

Մենք էլ, շատ անգամ, թաքցնելով մեր մտքերը, խորհուրդները, փարիսեցիների նման երկդիմի հարցերով ոչ միայն մեզ ենք վնասում, այլեւ ստիպում ուրիշներին մեղքի մէջ ընկնելու, մեղք գործելու:

2. Անզգամութիւն, որ նշանակում է անմտութիւն, անխոհեմութիւն, չարութիւն, անպարկեշտութիւն եւ այլն: Անզգամութիւնը բխում է մարդու սրտից, ինչպէս ասում է Յիսուս (Մարկ., է, 22), եւ աւելի «ներսից եկող» մեղք է, քան

դրսից: Այդ նոյն բառն է օգտագործուած նաեւ Սաղմոս ԺԳ, 1-ում, ուր *«անզգամն ասաց իր սրտում, թէ՝ Աստուած չկայ»*: Այսինքն՝ «անզգամութիւնը» չի սիրում պարկեշտութիւն, օրինաւորութիւն, եւ այն ամէնը, ինչ խանգարում է անզգամին՝ իր ծրագրերը իրագործելու համար, մերժւում է: Հետեւաբար, երբ մարդ չի ենթարկւում աստուածային օրէնքներին, ապա նա անխուսափելիօրէն ընկնում է անզգամութեան մեղքի մէջ:

3. Յանդգնութիւն, որ նշանակում է անամօթութիւն, անչափ լկտի համարձակութիւն, անհիմն համարձակութիւն: Յանդգնութիւնը խիստ բնորոշ է անաստուածութեանը: Պօղոսը գրում է, որ վերջին ժամանակներում մարդիկ պէտք է լինեն այդպիսին (Բ Տիմ., Գ, 4): Յանդուգն էր Գողիաթը, որովհետեւ չէր գիտակցում, թէ ում դէմ է կանգնած եւ ում վրայ է բերանը բացում: Նա յանդուգն էր, որովհետեւ թերագնահատում էր դիմաց կանգնածին: Մենք էլ ենք յայտնւում այդպիսի իրավիճակում, երբ թերագնահատում ենք ուրիշին ու զմայլւում միայն մեր անձով, մեր գործերով: Երբ մարդը սկսում է կարծել, թէ ինքն է միայն ճիշտ, ապա յանդգնութիւն է ցուցաբերում եթէ ոչ գործով, ապա՝ խօսքով: Այսինքն՝ յանդգնութիւնը նաեւ անձնակենտրոնութեան արտայայտութիւնն է. իր արատաւոր էութեամբ նա ձգտում է բարձրացնել անձը՝ ստորադասելով բոլորին: Յանդուգն մարդու ականջները փակ են, իսկ քիթը՝ վեր ցցած: Նրա համար ամէն ինչի կենտրոնը իր անձն է, իր մտքերը, գաղափարները: Մենք էլ խոստովանում ենք, որ յաճախ ենք յանդուգն գտնւում, անարգելով Աւետարանն ու Աստծու կամքը:

4. Երկչոտութիւն, որ նշանակում է վատասրտութիւն, նախանձ, վախկոտութիւն: Իհարկէ, այստեղ ոչ թէ Աստծու երկիւղի մասին է, կամ այն բնական երկիւղի, որ յատուկ է համարեա մեզանից բոլորին, այլ՝ ճշմարտութիւնը վկայելու կամ խօսելու վախն է, քանի որ դրան միշտ հետեւում է հալածանք ու նախատինք: Ուստի ինքնաարդարացման համար համոզում ենք ինքներս մեզ, թէ պահը յարմար չէ խօսելու կամ վկայելու համար: Մարդը պէտք է աներկիւղ դաւանի իր Փրկչին, եւ չվախենայ ճշմարտութիւն խօսել ամէն իրավիճակում, չվախենայ արդարութեամբ քայլել՝ ինչքան էլ ծանր ու դժուար լինի. նա համոզուած պէտք է լինի, որ ճշմարտութիւնն է յաւիտենականն ու մնայունը, իսկ մնացածները անցողիկ են: Երկչոտութիւնը հետեւանքն է թերահաւատութեան՝ տկար հաւատի: Յիսուս այդպէս էլ ասաց աշակերտներին, երբ նաւակին խորտակուելու վտանգն էր սպառնում. «Ինչո՞ւ էք այդպէս երկչոտ, թերահաւատներ»: Աշակերտները դեռ չգիտէին, թէ ով է գտնւում իրենց նաւակում, չգիտէին, որ Տիեզերքի Արարչի ներկայութիւնը կցրի ամէն վախ ու երկչոտութիւն: Ուստի, երբ լաւ չենք ճանաչում Յիսուսին, վախենում ենք մահուանից, ինչպէս աշակերտները: Հիմա էլ, թերահաւատութեամբ ապրելով, կարծում ենք, թէ Յիսուս յանդիմանեց միայն աշակերտներին, այնինչ նրա խօսքերը ուղղուած են բոլոր ժամանակներում ապրող մարդկանց. «Ինչո՞ւ էք այդպէս երկչոտ, թերահաւատներ»:

5. Շռայլութիւն, որն այստեղ նշանակում է անչափաւորութիւն, անժուժկալութիւն, անխնայ վատնում: Շռայլութիւն ցուցաբերեց անառակ որդին, երբ օտար երկրում փչացրեց հօր ունեցուածքը: Շռայլ էր նաեւ այն երրորդ ծառան, որ տիրոջ դրամը պահեց եւ առանց օգտագործելու վերադարձրեց, այսինքն՝ դարձեալ փչացրեց (Մատթ., ԻԵ, 14-30): Շռայլ էր նաեւ այն հարուստը, որ իր պահեստները մեծացրեց եւ բերքը ամբարեց (Ղուկ., ԺԲ, 16-21): Հարուստի արածը, թւում է թէ, վատ գործ չէր, քանի որ լաւ բերք էր ստացել եւ այն պէտք է պահուէր: Բայց նա սխալուեց իր հաշիւներում, մտածեց միայն իր մասին եւ միայն այս կեանքի համար: Նա բաժին չհանեց ուրիշներին, կարօտեալներին, սովածներին, աղքատներին, որոնք սպասում էին բերքի առատութեանը: Ուստի նա էլ փչացրեց բերքը: Աւետարանական այս փոքրիկ պատմութիւնը աչքի է ընկնում նրանով, որ այդ մի քանի նախադասութիւններում չափից շատ են օգտագործուած «ես», «իմ», «ինձ» անձնական դերանունները: Այսպէս, միայն 17-րդ համարում «ես»-ը եւ «իմ»-ը օգտագործուած է հինգ անգամ: Այսինքն՝ պէտք է ջանանք, որ ոչ միայն մեր լեզուից վտարուեն այդ չարաբաստիկ «եսակենտրոն» դերանունները («ես ասացի», «իմ կամքը» եւ այլն, այլեւ որ գործնականում նրանք փոխարինուեն երրորդ դէմքով («Նա /Յիսուս/ ասաց», «Նրա կամքը» եւ այլն): Ամէն անգամ, երբ մենք մտածում ենք միայն մեր մասին եւ կարծում ենք, թէ ուրիշների մասին պէտք է ուրիշները մտածեն, ընկնում ենք այդ մեղքի մէջ՝ փչացնելով մեզ վստահուած հարստութիւնն ու գանձերը:

6. Ժլատութիւն, որ նշանակում է ագահութիւն, անյագութիւն, անբաւա-

ռարուածութիւն: Երբ մարդ մտածում է միայն իր մասին, նա դառնում է եսակենտրոն, եւ ամէն ինչ պահում է իրեն, միայն իրեն՝ կարծելով, թէ այդպիսով կկարողանայ գանձեր կուտակել: Այրի կնոջ պատմութեան մէջ (Մարկ., ԺԲ, 41-44) շատերն էին իրենց հարստութիւններից բաժին հանում Տաճարին, բայց Յիսուս գովեց այրի կնոջը, որը ընդամէնը երկու լումայ նետեց գանձանակը. «Նա ամենից շատը գցեց, քանի որ իր ամբողջ ունեցածը տուեց, մինչդեռ միւսները իրենց աւելացածն էին տալիս»: Հետեւաբար, այստեղ կարեւորը ոչ թէ տուածի չափն է, այլ այն, թէ տալուց յետոյ քեզ մնացածն ինչքան է մնում: Այրի կինը իրեն ոչինչ չպահեց, ուստի եւ ամենից շատը տուեց: Ժլատութիւնը ներկայ է մեր մէջ ամենուրեք, ամէն բանում: Այն չի կարելի թաքցնել, անպայման ինչ-որ բանում կերեւայ: Այրի կնոջ պատմութիւնից սովորում ենք, որ այն, ինչ տալիս ենք, նա է մերը, նա է մնում, իսկ ինչ պահում ենք, դա կորցնում ենք, մերը չէ, քանի որ *«երանելի է մանաւանդ տալն, քան առնուլն»* (Գործք, Ի, 35):

7. Զեխութիւն, որ նշանակում է շուայտութիւն, անառակութիւն, ցոփ կեանքով ապրել, մարմնական հաճոյքներին բաւարարում տալ եւ այլն: Պետրոս առաքեալը գրում է, որ պէտք է ոչ թէ մարդկանց ցանկութիւնների պէս ապրել (զեխութիւն, այլ Աստծու Կամքի համեմատ ապրել այս կեանքը (Ա Պետ., Դ, 4): Ուրեմն, այն ամէնը, ինչ դուրս է Աստծու կամքի շրջանակներից, տանում է զեխութեան:

8. Անիրաւութիւն, որ նշանակում է անօրէնութիւն, անարդարութիւն: Այսինքն, մեղաւորը, խախտելով Աստուածային օրէնքները, Ս. Գրքի խօսքերն ու պատգամները, մոռանում է Յիսուսին եւ ինքնըստինքնեան գլորւում անիրաւութեան գիրկը: Երեմիա մարգարէն գրում է, որ *«Տէրն է մեր արդարութիւնը»* (ԼԳ, 16), այսինքն՝ Յիսուսն է մեր արդարութիւնն ու իրաւունքը: Երբ Նա քնում է մեր մէջ (ինչպէս նաւակում, կամ երբ մենք մոռանում ենք Նրան, անխուսափելիօրէն ընկնում ենք անարդարութեան եւ անիրաւութեան ճիրանների մէջ: Վստահ լինենք, որ Քրիստոսի լոյսով լուսաւորուած մարդուն դժուար կլինի խաբել կամ անիրաւութեան առաջնորդել:

9. Չարահաւանութիւն, որ նշանակում է չար գործերին հաւանութիւն տալ: Չարին հաւանութիւն տալ կամ այդ չարութիւնը անել, նոյնն է: Չարահաւանը նոյն պատիժն է կրում, ինչ որ չարութիւն անողը:

10. Յուսահատութիւն, որ նշանակում է անյուսութիւն, լքում, վիհատութիւն: Յուսահատութիւնը անհաւատութեան հետեւանքն է: Մարդն իր կեանքում շատ է ընկնում ու կանգնում, բազում անգամներ փորձութիւնների ենթարկւում, շատ բան կորցնում կամ գտնում, բայց մի բանում նա վստահ է, որ աստուածային յոյսը միշտ իր հետ է: Ոչ ոք չի կարող մարդու միջից հանել կամ վերացնել այդ երկնային պարգեւը, եթէ ինքներս այդ չանենք: Ուրեմն, երբ տկարանում է մեր հաւատը, մենք սկսում ենք յուսահատուել, թերանալ, կորցնել վստահութիւնը:

11. Թերամտութիւն, որ նշանակում է թերահաւատութիւն, պակասամտութիւն: Թերահաւատութիւնը, բնորոշ լինելով մարդուն՝ միշտ «ուղեկցում» է մեզ: Թերահաւատութիւնից զերծ չէին առաքեալները, երբ շրջում էին Յիսուսի հետ: Մենք խոստովանում ենք մեր թերահաւատութիւնը, հաւատի տկարութիւնը, որպէսզի Յիսուս զօրացնի եւ օգնի մեր անհաւատութեանն ու թերահաւատութեանը (Մարկ., Թ, 23):

Գ հատուած

«Մեղայ չար խորհրդով մտացս. նենգութեամբ, ատելութեամբ, խեթիւ, մախանօք, յաչաղանօք. թուլութեամբ, պոռնկական խորհրդով, արուական, իգական, անասնական, գրաստական, գազանական, ի գիշերի եւ ի տուընջեան երազական գիջութեամբ, եւ անրջական գարշ աղտեղութեամբ՝ մեղայ Աստուծոյ»:

Այս հատուածում թուարկւում են «մտքով եւ նրա շարժմամբ» գործած մեղքերը: Մեղք գործելուց հրաժարուելը դեռեւս վերջնական յաղթանակ չէ մեղքի հանդէպ: Մինչ այդ մեղքն անցնում է իր «ապականիչ» ճանապարհը մեր սրտով, մտքով, խորհուրդներով, զգայարաններով: Երբ նա արմատաւորւում է այդտեղ, սկսում է ծիլ տալ՝ ի յայտ գալ մեր գործերում: Այդպիսով մեղաւոր մարդը հաւանութիւն է տալիս չարին եւ բարեկամանում նրա հետ: Ուստի, պիտի աշխատել մաքուր պահել սիրտը, միտքը, խորհուրդները, քանի որ սրտով մաքուրներն են տեսնելու Աստծուն (Մատթ., Ե, 8): Մեր միտքը

մարմնի եւ հոգու վրայ դատաւոր է, ինչպէս աւետարանական առակում (Ղուկ., ԺԸ, 1-8): «Եւ ինչքան որ դատողը անկաշառ է, ճշմարիտ եւ ուղիղ է դատում: Իսկ երբ նա թիւր է, դատն էլ է թիւր: Ուստի միտքը սուրբ եւ մաքուր պէտք է պահել, որ անաչառ դատաւորութիւն անի» (Տաթեւացի): Հետեւաբար, խոստովանութեան այս հատուածում մեղաւորը զղջում եւ ձգտում է իր միտքը, խորհուրդները անմատչելի դարձնել զանազան «ապականող» մեղքերի համար, որոնցից առանձնացւում են հետեւեալ մեղքերը.

1. Նենգութիւն, որ նշանակում է չարարուեստ խաբէութիւն, դաւ, գաղտնի չար դիտաւորութիւն մէկի դէմ: Առաջին հայեացքից թւում է, թէ այս կարգի յանցանքների մէջ վտանգաւոր ոչինչ չկայ, քանի որ երեւում է միայն դրանց «գեղեցիկ» քօղը, հանդերձը: Ուսուցչին խոնարհութեան համբոյրով ողջունելը գովելի արարք է, բայց Յուդայի համար դա միայն քօղ էր՝ Յիսուսին մատնելը ծածկելու համար: Դաւիթ թագաւորը երբեք էլ մտահոգուած չէր պատերազմի դաշտում ուժերի վերաբաշխման հարցերով, երբ հրաման տուեց Ուրիային ամենաթէժ տեղն ուղարկել: Այդ քօղի տակ Ուրիային սպանելու հրամանն էր թաքնուած: Փարիսեցիները ամենեւին էլ նոր բան սովորելու ձգտում չունէին, երբ երկդիմի հարցերով մօտենում էին Յիսուսին: Ընդհակառակը, այդ քօղի տակ թաքնուած էր Յիսուսին ամբաստանելու համար նիւթեր հաւաքելու ձգտումը: Ս. Գրքում առաջին նենգութեանը հանդիպում ենք եդեմական պարտէզում. բանսարկուն, թաքցնելով իր յետագայ հեռահար ծրագրերը, մօտեցաւ Եւային եւ մի «ճանաչողական» անվնաս հարց տուեց: Երբ որեւէ մէկը ընկնում է մեղքի մէջ, մոլորուելով երիքովեան ճանապարհներում (Ղուկ., Ժ, 30-37), նա անպայման ընկնում է աւազակների ձեռքը: «Բարեպաշտ» շատ մարդիկ մոլորուածին կանգնեցնելու եւ օգնելու փոխարէն (բարի սամարացու նմանաւելի են վիրաւորում նրան ու այդպէս թողնում (երիքովեան աւազակների նմաներբ մեր կարողութեան չափով չենք օգնում մարդկանց եւ բարին իմանալով՝ չէզոք մնում, ապա նենգութիւն ենք ցուցաբերում, քանի որ նրանց համար ճանապարհ ենք հարթում դէպի Երիքով (մեղքի ճանապարհները): Իսկ թէ ինչ է սպասւում մոլորուած մարդուն Երիքովում, շատ լաւ գիտենք: Նենգութիւնը այնպիսի մեղքերից է, որ հնարաւոր չէ թաքցնել, վաղ թէ ուշ այն ի յայտ կգայ՝ յայտնի

դարձնելով իր ծածուկ խորհուրդները: Ինչքան էլ աբիսողոմները շրջապատուեն աքիտոֆէլներով եւ առաջնորդուեն նրանց ծածուկ խորհուրդներով, միշտ էլ կգտնուեն քուսիներ, որոնք կբացայայտեն աքիտոֆելեան չար խորհուրդները (Բ Թագ., ԺԵ-ԺԷ գլուխներ):

2. Ատելութիւն, որ նշանակում է ոխակալութիւն, թշնամութիւն, հակառակութիւն: Ատելութիւնը միշտ եւ ամենուրեք սիրոյ հակառակն է նշանակում: Այդպէս է օգտագործուած այդ բառը Նոր Կտակարանում՝ միշտ ցոյց տալով սիրոյ հակառակ գործողութիւն (Մատթ., Ե, 43, Զ, 24, Ժ, 22, Ղուկ., ԺԴ, 26 եւ այլն): Ի տարբերութիւն սիրոյ, որը բխում է Լոյսի աղբիւրից, ատելութիւնը բխում է խաւարից եւ ձգտում խաւար սփռել լոյսի մէջ: Երբ մեր խորհուրդներում, արարքներում չի թագաւորում սէրը, անշուշտ ատելութիւնն է գլուխ բարձրացնում: Հին մարդուն կամ ադամական բնութեամբ մարդուն բնորոշ է ատելութիւնը, իսկ նոր մարդուն կամ Քրիստոսով վերածնուած մարդուն՝ սէրը: Մարդու կեանքն էլ այդ երկու սկզբունքների միջեւ ընթացող պայքարն է (Հռոմ., Է, 15): Ամէն անգամ, երբ խոստովանութեան ժամանակ յիշում ենք ատելութիւնը, վկայում եւ զղջում ենք այն բոլոր արարքների համար, որոնք գործուել են առանց սիրոյ, այսինքն՝ ատելութեամբ:

3. Խեթութիւն, որ նշանակում է ծուռ նայուածք, չարամտութիւն, շիլ, թիւր աչքերով հայեացք: Աւետարանը սովորեցնում է, որ *«մարմնի ճրագը աչքն է»* (Մատթ., Զ, 22), եւ մեր աչքից է կախուած մարմնի լուսաւորուածութիւնը: Ինչքան մաքուր լինեն մեր աչքերը, խեթ ու ծուռ չլինեն, այնքան պարզ ու լուսաւոր կլինենք եւ մենք: Յանցաւոր մարդու աչքերը պարզ լինել չեն կարող, քանի որ թզենու տերեւներով մարդ չի կարող ծածկել իր մեղաւորութիւնը: Միայն խոստովանութեամբ, զղջմամբ ու ապաշխարութեամբ կարող ենք մաքրել մեր աչքերի խաւարը եւ լուսաւոր դարձնել ամբողջ մարմինը:

4. Մախանք, որ նշանակում է չար նախանձ, չարակնութիւն: «Բոլոր ախտերի սկիզբը նախանձն է եւ չարակնութիւնը, քանի որ դա էր պատճառը սատանայի անկման եւ դրախտից Ադամի արտաքսուելու» (Մանդակունի), որի հետեւանքով էլ փուշն ու տատասկը, մահն ու մեղքը տիրեցին Ադամի սերունդների վրայ: Այսօր էլ մախանքը իշխում եւ գերիշխում է մեր կենցաղում: Երբ տեսնում ենք որեւէ մէկի յաջողութիւնը եւ այրւում նախանձից, սա մախանքն է:

5. Յաչաղանք, որ նշանակում է նախանձից չարանալ, ակնահարութիւն, չար նայուածք, կախարդութիւն, հմայութիւն: Յաչաղանքով համակուած մարդը չի ուզում տեսնել բարին եւ լաւը ուրիշների մէջ, նրա համար արեւի լոյսը խաւար է, իսկ ջերմութիւնը՝ սառնութիւն: Այդպիսի մարդու ոչ միայն աչքն է խեթ, այլ նաեւ սիրտը, միտքը, որի հետեւանքով չար ու թունոտ է դառնում նրա նայուածքը: Դրան հակառակ, քրիստոնեան պէտք է կարեկցանք ցուցաբերի ուրիշին, նրա աչքերով նայի աշխարհին, որպէսզի հասկանայ եւ կարողանայ օգտակար լինել ուրիշներին (Ա Կորնթ., Թ, 19-21):

6. Թուլութիւն, որ նշանակում է մեղկութիւն, թուլամորթութիւն: Մեր թուլութիւնը ի յայտ է գալիս այն ժամանակ, երբ ենթարկւում ենք փորձութեան: Փորձութեան ժամանակ է երեւում մեր հաւատարմութիւնը քրիստոնէական սկզբունքներին: Մեր կեանքը փորձութիւնների մի շղթայ է, եւ այդ ճանապարհին ենք սովորում վստահել Յիսուսին, Նրա խօսքին: Ամէն անգամ «Հայր մերի» մէջ մենք խնդրում ենք, որ Աստուած մեզ փորձութեան չտանի, իսկ փորձութեան մէջ ընկնելիս՝ խնդրում ենք, որ ազատի, դուրս հանի:

Թուլութեան դրսեւորում է «աշխարհի կերպարանքն» ընդունելը (Հռոմ., ԺԲ, 2), մարմնական ցանկութիւններին գերի դառնալը եւ այլն: Թուլութեան մէկ այլ արտայայտութիւնն էլ այն է, որ Աւետարանին հնազանդուելու փոխարէն, Աւետարանի խօսքն ենք «շահարկում», յարմարեցնելով մեզ՝ մեր վարքին ու գործերին «ճշմարտութեան երանգ» տալով: Դրան հակառակ, աշխարհին, մեղքին յաղթելու համար պէտք է ոչ թէ նրա կերպարանքն ընդունել, այլ Յիսուսի կերպարանքը՝ այն էլ խաչը ելած (Ա Կորնթ., Բ, 2):

7. Պոռնկական խորհուրդներ («արուական, իգական, անասնական, գրաստական, գազանական, ի գիշերի եւ ի տուընջեան երազական գիջութեամբ»), որոնք ցանկասիրութեան, վաւաշոտութեան, կրքամոլութեան եւ սեռական սանձարձակութեան արտայայտութիւններն են: Այլ կերպ ասած, այս կարգի յանցանքները աստուածադիր օրէնքների խախտումներն են՝ բնականը անբնականով փոխարինելով (Հռոմ., Ա, 26-27): Պոռնկական խորհուրդները ամենաահաւոր մեղքերն են համարուել բոլոր ժամանակներում, քանի որ ոչ միայն այդ արարքներն են ինքնին ստոր, այլեւ ձգտում են շրջապատը ստորացնել, ուրիշներին էլ պղծել: «Սոդոմական» կոչուող այս մեղքերը անխուսափելիօրէն արժանանում են Սոդոմի ու Գոմորի ճակատագրին, ուստի «թէպէտ չարաչար գլորեցար, վաղվաղեայ աղաչեա զՔրիստոս՝ որ կանգնեցնէ զգլորեալս» (Մանդակունի): Այս կարգին է դասւում նաեւ «հոգեւոր» պոռնկութիւնը, երբ մարդ (հարսը), թողնելով իր օրինաւոր Արարչին (փեսային՝ Յիսուսին), գնում է օտարների ետեւից (արեւելեան եւ արեւմտեան զանազան կրօնները):

Մանդակունին այս սարսափելի ախտի մասին գրում է. «Թէպէտ եւ յանդունդս խաւարային եւ ի խորինս իջուցին զքեզ ահեղ անօրէնութիւնք քո, այլ հայցումն եւ հառաչումն կամաւոր ապաշխարութեանդ քո հանէ ի խորին խաւարէն, բարձրացուցանէ ի կամարն երկնաւոր՝ ուր արդարոցն են բարութիւնք»:

8. Անրջական գարշ աղտեղութիւն, որ նշանակում է ցնորական, երազական խորշելի, զզուելի ամօթալի պղծութիւններ: Այս դասի մեղքերը մարդու մտքով եւ խորհուրդներով անցնող ցնորական պատկերներն են: Զղջման այս հատուածում մենք խնդրում ենք, որ Աստուած ների եւ մաքրի մեր երեւակայութիւնը, զերծ պահի անբնական ցնորքներից եւ սրբի դրա հետեւանքներից:

Դ հատուած

«Մեղայ ցանկութեամբ մարմնոյս, հեշտութեամբ, պղերգութեամբ, յօրանջմամբ քնոյ, շարժութեամբ մարմնոյս, եւ զազրագործութեամբ ի պէսպէս ախտս, հեշտալրութեամբ լսելեացս, արատութեամբ աչացս, ցանկութեամբ սրտիս, իգութեամբ ըռնգացս, պագշոտութեամբ բերանոյս. անժուժկալութեամբ, շուայտութեամբ եւ արբեցութեամբ՝ մեղայ Աստուծոյ»:

Այս հատուածում թուարկւում են «մարմնի ցանկութեամբ» գործած մեղքերը: Այս յանցանքները բացայայտօրէն գործուած մեղքերն են, որոնք ի յայտ են գալիս մեր գործերում: Այս մեղքերը բացայայտ ձեւով են ապականում մարդու վարքը, կեանքը: Դրանք են.

1. Հեշտութիւն, որ նշանակում է փափկասիրութիւն, աշխարհի ցանկասիրութիւն, զգայական կամ մարմնական հաճոյք եւ այլն: Սերմնացանի առակում, փշերի մէջ ընկած սերմերի համար Յիսուս ասում է. *«Փշերի մէջ ընկած-*

ները նրանք են, որ լսում են, բայց հոգսերով ու հարստութիւնով եւ այս կեանքի ցանկութիւններով զբաղուած լինելով՝ խեղդւում են եւ անպտուղ են լինում» (Ղուկ., Ը, 14): Հեշտութիւնն այստեղ կեանքի ցանկութիւններն են, որոնք խեղդում եւ անպտուղ են դարձնում ամէն ցանած սերմ: Նրանք, փշերի նման մեծանալով, ոչնչացնում են բարի սերմը: Ուստի մարդ չի կարող «լողալ» աշխարհի հեշտութեան մէջ եւ օգուտ բերել Աստծուն, Եկեղեցուն, մարդկանց: Ընդհակառակը, եղածն էլ կարող են անպտուղ դարձնել ու փչացնել: Հետեւաբար, չենք կարող քայլել միաժամանակ թէ՛ Աւետարանի ճանապարհով եւ թէ՛ հեշտութեան ու փափկասիրութեան ճանապարհով:

Այս մեղքն էլ է ծնունդ առել եդեմական պարտէզում. մարմնի ցանկութիւնը (հեշտութիւնը) ստիպեց Եւային ընտրել մեղքի ճանապարհը («ծառը լաւ էր կերակուրի համար եւ հաճելի աչքին... նա վերցրեց պտուղը եւ կերաւ»): Այսպիսով, մարդը մինչեւ իր մահը երկու զօրութիւնների միջեւ է կանգնած լինում՝ Աստծու շնորհի եւ այս աշխարհի, ուր իշխում են մարմնի ցանկութիւններն ու հեշտութիւնը: *«Քո շնորհը մի հանիր ինձնից եւ ունայն ու սուտ բաները հեռացրու ինձնից»* (Առակ., Լ, 7): Առաջինն այստեղ Աստծու շնորհն է, որ մեզ օգնական է ու պահապան, իսկ երկրորդը՝ խաբող ու որոգայթներում մոլորեցնող: Երկրորդ ճանապարհը ընդարձակ է ու կորստի է տանում, եւ շատերն են մտնում ու ընթանում այդտեղով, մինչդեռ առաջինը՝ կեանքի ճանապարհն է, նեղ է ու քչերն են գտնում այն (Մատթ., Է, 13-14): Հեշտութիւնն էլ այդ լայն ու ընդարձակ ճանապարհի արահետներից է (ուր «մտնում են», իսկ կեանքի ճանապարհը, նեղ, անձուկ ճանապարհը պիտի «գտնել», որն էլ Աստծու շնորհն է: «Գտնելու» համար պէտք է ջանք գործադրել, պէտք է զղջալ, խոստովանել ու ապաշխարել, որ Աստծու շնորհն էլ մեզ հանի լայն, ունայն ու սին ճանապարհից, որի մէջ էինք մենք բոլորս, երբ *«անմիտ էինք, անհնազանդ, մոլորեալ ու հեշտասէր»* (Տիտ., Գ, 3):

2. Պղերգութիւն, որ նշանակում է ծուլութիւն, անհոգութիւն, անփթութիւն, դանդաղկոտութիւն: Պղերգութեան հակառակն է ժրաջանութիւնը: Այս կեանքը պատերազմ է բարու եւ չարի միջեւ, իսկ մենք՝ զինուորներ, ուստի շատ բան է կախուած մեր արագաշարժութիւնից: Այսինքն, քրիստոնեաները պէտք է լինեն «արագահաս»՝ ամէն տեղ վազող եւ ամէն տեղ հասնող:

«Զի քրիստոնեայք նոքա են, որք զհրամանն Քրիստոսի պահեն եւ առնեն հանապազ» (Մանդակունի): Հետեւաբար, երբ սովորում ենք Աւետարանի պատգամները, իմանում Քրիստոսի կամքը եւ դրանք «հանապազ» չենք գործածում, ընկնում ենք պղերգութեան մեղքի մէջ:

Երբ մեր գործը եւ խօսքը չեն համապատասխանում իրար, մենք դառնում ենք անհոգ, դժուարաշարժ, քանի որ չենք ուզում անել այն, ինչ ասում ենք, այսինքն՝ ծոյլ ենք եւ դանդաղկոտ: Դժուար բան չէ մեծ-մեծ բաներ խոստանալ եւ կատարելու պահին՝ հրաժարուել, ինչպէս երկու որդիների յայտնի առակում (Մատթ., ԻԱ, 28-30): Նրանցից մէկն ասաց, որ պատրաստ է կատարել հօր կամքը, բայց չկատարեց (ծոյլ էր, չէր ուզում աշխատել դաշտում), իսկ միւսը, թեեւ հրաժարուեց խօսքով, բայց զղջալուց յետոյ գնաց եւ կատարեց հօր կամքը: Երբ մարդ անհոգութիւն է ցուցաբերում Աստծու խօսքի, Նրա պատուիրանների եւ Կամքի հանդէպ, վաղ թէ ուշ ընկնում է պղերգութեան մեղքի մէջ:

3. Յօրանջմամբ քնոյ, որ նշանակում է բոլոր այն գործերը, որոնք տանում են մեզ անհոգութեան, անշարժութեան, անգործունէութեան, այսինքն՝ քնացնում են: Եկեղեցին իր ամենօրեայ պաշտամունքներով զգուշացնում եւ արթնացնում է մեղքի մէջ քնածներին՝ ցոյց տալով դրա վտանգն ու հետեւանքները: Այս աշխարհն ունի երկու առաջնորդ, որոնցից մէկը տանում է արթնութեան եւ զգօնութեան, իսկ միւսը՝ յօրանջման եւ անշարժութեան: Մեղքի մէջ յարատեւող մարդը, ընտելանալով մեղքին, այլեւս ցաւ չի զգում յանցանք գործելիս, այսինքն՝ ընկնում է քնի մէջ: Եւ որպէսզի արթնանանք, *«կանգնենք մեռելներից»* (Եփես., Ե, 14) պէտք է ամէն օր ու ամէն ժամ Ս. Գրքի, եկեղեցու ամենօրեայ պատգամները մեր աչքի առաջ լինեն: Իսկ երբ մենք ինքներս, չուզենալով ենթարկուել դրան, դիտաւորեալ «քնած ենք ձեւանում», ապա նոյնն է, որ հաւանութիւն ենք տալիս մեղքին:

Հին Կտակարանի պատմութիւններում միշտ էլ գտնուել են մարդիկ, որոնք զգուշացրել եւ արթնացրել են մեղքի մէջ քնածներին: Նաթան մարգարէն յանդիմանեց Դաւթին Բերսաբէի պատմութեան համար, արթնացրեց նրան, բացեց աչքերը, որն էլ, տեսնելով իր արածի յանցաւորութիւնը, զղջաց ու ապաշխարեց: Յովնանին էլ մի անծանօթ նաւապետ արթնացրեց,

երբ նա փորձութեան պահին անուշ քնել էր նաւախորշում: Նոր Կտակարանն էլ սկսւում է մեղքի քնից արթնանալու կոչով եւ ապաշխարութեան հրաւէրով: Մինչեւ իսկ Գեթսեմանում, փորձութեան պահին, Յիսուս անձամբ Ինքն է արթնացնում քնած աշակերտներին: Գործքում էլ քնած Պետրոսին հրեշտակն է արթնացնում, ասելով. *«Ելի՛ր, գօտիդ կապիր, հողաթափերդ հագիր, հանդերձդ հագիր եւ արի իմ ետեւից»* (Գործք, ԺԲ, 7-8): Հետեւաբար աշխարհը, մեղքը մարդուն միշտ քնացնում է, մինչդեռ Ս. Գիրքը արթնացնում, որպէսզի մենք չնմանուենք աւետարանական հինգ յիմար կոյսերին:

4. Շարժութեամբ մարմնոյս, որ նշանակում է մարմնի կամ մարմնի որեւէ մասի (գլուխ, ձեռքեր, ոտքեր եւ այլն) անպատշաճ շարժուձեւերը, անկանոն ու անբնական շարժումները: Պատերազմի դաշտում զինուորի ամէն մի աւելորդ, անզգոյշ շարժում վտանգաւոր է իր իսկ համար: Այդպէս էլ այս կեանքում քրիստոնեայի ամէն մի անպատշաճ քայլ, շարժում մեծ վնաս կարող է հասցնել:

5. Ձազրագործութեամբ ի պէսպէս ախտս, որ նշանակում է զզուելի գործեր կատարել: «Ի պէսպէս ախտ» են ցանկասիրութիւնը, սրտի ուզածը կատարելը, զանազան մոլութիւնների ետեւից գնալը եւ այլն: Մեր օրերին այս մեղքի ընտանիքի անդամների ցանկը կարելի է շատ ու շատ նոր անուններով աւելացնել:

6. Հեշտասիրութեամբ լսելեացս, որ նշանակում է հեշտութեամբ լսել, ախորժելով ականջ դնել: Մարդն աւելի հեշտութեամբ լսում է *«վարձկան հովիւին»*, քան՝ *«Բարի հովիւին»*: Նախօրօք իմանալով, որ *«վարձկանը»* օտար է եւ վտանգի պահին կարող է լքել մեզ ու հեռանալ, մենք դարձեալ ու դարձեալ մերժում ենք *«բարի ու քաջ»* հովիւին ու պահանջում «վարձկանին»: Այս հատուածում զղջացողը խոստանում է այլեւս հեշտալուր չլինել *«վարձկանին»,* այլ՝ *«Բարի հովիւին»*՝ Յիսուսին:

7. Արատութեամբ աչացս, որ նշանակում է տեսողութեան տկարութեան հետեւանքով գործած մեղքերը, կարճատեսութեամբ, անհեռատեսութեամբ գործած մեղքերը: Մարդու կատարած ամէն մի քայլ պէտք է իր նպատակն ունենայ: Բոլոր այն գործերը, որոնք անիմաստ ու աննպատակ են, «աչքերի արատութեան» հետեւանք են: Ամէն պահ, ամէն ժամ, որ անց ենք կացնում

աննպատակ, այսինքն՝ խելացիութեամբ չենք գործում, «աչքերի արատութինն» է: Անիրաւ տնտեսին տէրը գովեց ոչ թէ «յանցանքի» համար, այլ՝ խելացիութեամբ վարուելու համար: Տնտեսի աչքերը «արատ» չունէին, նա կարողացաւ տեսնել ապագան եւ ըստ այդմ վարուեց:

8. Ցանկութեամբ սրտիս, որ նշանակում է ուզած բաները կատարել, սրտով անցած խորհուրդները իրականացնել: Մարդու սրտի խորհուրդները ի սկզբանէ չար են եւ սրտից են բխում բոլոր չար խորհուրդները: Ուստի զղջման այս հատուածում ապաշխարողը դարձեալ ու դարձեալ աղերսում է Աստծուն, որ Նա իր մէջ *«սուրբ սիրտ հաստատի»* (Սաղմ., Ծ, 12):

9. Իգութեամբ ռնգացս (հոտոտելիքների իգութիւնը, որ նշանակում է այս կամ այն բանի նկատմամբ «իգութիւն» ցուցաբերել, այսինքն՝ փափկութիւն, քնքշութիւն: Եղեմում Եւան այդպիսի «փափուկ» դիրք գրաւեց մեղքի հանդէպ, որի հետեւանքները մենք լաւ գիտենք: Ուստի նա՝ Եւան, պէտք է մեզ համար օրինակ լինի, մեղքի հանդէպ նման «փափուկ» դիրք չգրաւելու եւ մեղքին հեշտութեամբ անձնատուր չլինելու համար:

10. Պագշոտութեամբ բերանոյս, որ նշանակում է խենէշ բերան, լկտի, վաւաշոտ, ցանկասէր բերան ունենալ, այսինքն՝ լկտի խօսել, սուտ խօսել, մեծախօսութիւն եւ այլն: Մեր ամէն խօսքի համար մենք պէտք է պատասխան տանք (Մատթ., Ե, 22-23), թէ լաւ, բարի խօսքերի եւ թէ վատ ու չար, պագշոտ խօսքերի համար:

Գիտենք, որ «ոչ տկարեսցի առ Աստուծոյ ամենայն բան» կամ «Աստծու մօտ ոչ մի խօսք անզօր չէ», այսինքն՝ զօրութիւն ունի (Ղուկ., Բ, 37): Ժամանակակից հրատարակութիւններում այդ համարը յաճախ թարգմանում են այսպէս. «Աստծու մօտ անկարելի բան չկայ», որն ամբողջովին չի արտայայտում բնագրի իմաստը: Աստուած իր խօսքի ետեւն է կանգնած, եւ սրանում է նրա խօսքի զօրութիւնը: Մեր խօսքերի ետեւում էլ մենք ենք կանգնած, եւ ինչքան որ մենք ենք «զօրաւոր», այնքան էլ «զօրաւոր» են մեր խօսքերը: Այսինքն, պէտք է լաւ իմանանք, որ մեր ամէն մի խօսքի, նոյնիսկ դատարկ խօսքի համար մենք պատասխան պիտի տանք, հաշիւ պիտի տանք:

11. Անժուժկալութիւն, որ նշանակում է անչափաւորութիւն ամէն բանում, ներդաշնակութեան խախտում: Օրինակ, երբ մարդ չի կարողանում չխօսել

եւ ամէն բանի մէջ է մտնում, անժուժկալութեան դրսեւորումներից է: Յաճախ չխօսելով աւելի շատ բան կարելի է ասել, քան՝ խօսելով:

12. Շուայտութիւն, նշանակում է շռայլութիւն, անյագութիւն, ցոփութիւն, յղփանալ եւ այլն: Այս մեղքը շատ է տարածուած այսօր, քանի որ շատերն են իրենց յղփացած պահում: Լցնելով իրենց սիրտը կերուխումով ու գինովութիւններով՝ ծանրանում եւ դառնում են անպիտան՝ բարի գործերի համար (Ղուկ., ԻԱ, 24):

Ի տարբերութիւն *«հոգով աղքատների»* (Մատթ., Ե, 3), շուայտութեամբ ապրողները «հոգով հարուստներն» են: Նրանց պէտք չէ ոչ ճշմարտութիւնը, ոչ Քրիստոս եւ ոչ էլ ուրիշ մէկ բան, նրանք լեցուն են ամէն «կեղծ հարստութեամբ» եւ բաւարարւում են դրանով:

13. Արբեցողութիւն, որ նշանակում է հարբել, այսինքն՝ լցուել գինով կամ պիղծ ուրիշ բաներով՝ չար խորհուրդներով, պիղծ մտքերով եւ այլն:

Տաթեւացին ասում է, որ մի քանի տեսակ արբենալ կայ.

-իմաստութեամբ արբենալ Աստուածային գինով, ինչպէս մարգարէներն ու առաքեալները.

-արբենալ Աստծու ողորմութեամբ.

-արբենալ Աստուածային ցնծութեամբ եւ ուրախութեամբ եւ

-արբենալ գինով:

Այս վերջինի վտանգն էլ այն է, որ ճանապարհ է բացում միւս աւելի ահաւոր մեղքերի եւ յանցանքների համար:

Ե հատուած

«Մեղայ չարաբանութեամբ լեզուիս, ստախօսութեամբ, սուտ երդմամբ, երդմնազանցութեամբ, հակառակութեամբ, վիճաբանութեամբ, բանսարկութեամբ, շոգմոգութեամբ, եւ քսու դատարկաբանութեամբ, եւ ծաղու զրախօսութեամբ, հերձախօսութեամբ եւ անիծաբանութեամբ. տրտնջելով, դժգոհելով, բամբասելով, եւ հայհոյելով՝ մեղայ Աստուծոյ»:

Այս հատուածում թուարկւում են «լեզուի չարաբանութիւնները» կամ չարախօսութիւնները: Լեզուն մաքուր պահել նշանակում է միշտ խօսել

ճիշտ: Ս. Գիրքը ոչ միայն սովորեցնում, այլեւ պահանջում է, որ մարդ լինի ճշմարտախօս: «Մահը եւ կեանքը լեզուի ձեռքն են» (Առակ., ԺԸ, 21), այսինքն՝ լեզուով ենք խոստովանում մեր մեղքերը եւ ազատւում դրանց հետեւանքներից (կեանքը) եւ կամ լեզուով շարունակելով մեր չարախօսութիւնները՝ գնում կործանման: Լեզուի հասցրած վնասները այն աստիճան աւերիչ են եղել, որ հնում այն նմանեցրել են չար գազանի, որին պէտք էր «արգելանոց ձգել»: Այդ «արգելանոցի» արտաքին դուռը շրթունքներն են, իսկ ներքինը՝ ատամները, որոնք պէտք է ամուր եւ շղթայակապ պահէին գազանին: «Իմաստութիւնը լեզուի սանձն է, - գրում է Տաթեւացին, - իսկ երասանը (սանձի երկու պարանները): Աստծու հանդէպ ունեցած երկիւղը: Եւ եթէ մէկը չունի այս, սանձարձակ ձիու նման գահավէժ կլինի: (Հայերէնում «սանձարձակ» բառը հէնց այդ իմաստն էլ ունի՝ «սանձից արձակուած», այսինքն՝ անկառավարելի): Լեզուով ենք օրհնում, փառաբանում Աստծուն, երգում, աղօթում, քարոզում, խրատում եւ աններելի է, երբ նոյն այդ լեզուով չարաբանում ենք»: Ուստի պէտք է զգուշանալ եւ ամրացնել լեզուի սանձը, որ մարդը չպղծուի այս դիւրաշարժ մեղքերից: Այս հատուածում առանձնացուում են հետեւեալ մեղքերը.

1. Ստախօսութիւն: Սուտ խօսելը անօգուտ բան է, դատարկ ձայն, որ ոչ լսողին է օգտակար եւ ոչ էլ ասողին: Ինչ կարգի սուտ էլ լինի, «պոչաւոր» կամ «անպոչ», միեւնոյն է, անօգուտ բան է: Շատ զարմանալի է, որ այսօր կան մարդիկ, որոնք պնդում են, թէ որոշ դէպքերում սուտն օգտակար է, եւ այդպէս էլ դաստիարակում են իրենց երեխաներին: Այդ կեղծ սկզբունքը ոչ մի լուրջ հիմնաւորում չունի եւ վաղ թէ ուշ, ետ վերադառնալով, մեզ է հարուածելու: Որտեղ որ չկայ ճշմարտութիւն, կայ ստութիւն (Յովհ., Ը, 44), եւ ստախօսը, սուտ խօսելով, դառնում է խաւարի որդի: Սուտ խօսքերից ելնում են ամէն տեսակ կռիւներ ու թշնամութիւններ: Անգամ «Յայտնութիւնը» ստախօսներին դասում է նոյն խմբին, ինչ որ *«վախկոտներին, անհաւատներին, պիղծերին, մարդասպաններին»* (Յայտն., ԻԱ, 8), որոնք նետուելու են ծծմբէ լիճը: Երբ մեր խօսքերը եւ կատարած գործերը չեն համապատասխանում իրար, մենք դառնում ենք ստախօս, քանի որ ասում ենք ու չենք անում, այսինքն՝ սուտ ենք խօսում:

2. Սուտ երդում եւ երդմնազանցութիւն: Աստուած ճշմարիտ է եւ սիրում է ճշմարտութիւնը: Աստուածային օրէնքներն ու պատուիրանները դաստիարակում են մարդուն, ստիպում նրան միշտ ճիշտ խօսել: Երդուել նշանակում է մեր խօսքերին եւ խոստումներին «ճշմարտութեան» երանգ տալու համար վկայ բերել Աստծուն: Այսինքն՝ մեր սխալ կեանքը, անշուք գործերը, տկար հաւատը ցոյց են տալիս մեր խօսքերի անզօրութիւնը, մինչդեռ Յիսուս սովորեցնում է, որ մեր այո-ն լինի այո, իսկ ոչ-ը՝ ոչ: «Քրիստոնեան պէտք է այնպիսի ճշմարիտ հաւատ ու վարք ունենայ, որ երդուելու կարիք չունենայ» (Տաթեւացի): Հակառակ դէպքում մենք նմանւում ենք *«շրթունքներով պատուողներին, որոնց սիրտը հեռու է Աստծուց»* (Եսայի, ԻԹ, 13): Ուրեմն, պէտք է մեր սիրտն ու լեզուն լինեն նոյնը, որպէսզի *«Տիրոջ խօսքը մեր բերանում ճշմարիտ լինի»* (Գ Թագ., ԺԷ, 24): Ինչքան էլ մենք երդուենք, վկայ բերենք Աստծուն, միեւնոյն է, չենք կարող այն իրականացնել, այսինքն՝ կլինենք երդմնազանց: «Արդ, եղբայրներ, երկիցուք յերդմանէ քան յամենայն մեղաց եւ քան յամենայն անօրէնութիւնէ» (Մանդակունի):

3. Հակառակութիւն, որն այստեղ նշանակում է հակառակուել խօսքով, դէմ կանգնել, մերժել եւ չընդունել: Հակառակուելու ոգին շատ բնորոշ է մարդուն, քանի որ նա դժուարութեամբ է իջնում իր «նուաճած բարձունքներից», այսինքն՝ խոնարհութեան բացակայութեան հետեւանք է: Պօղոս առաքեալը, նախքան դարձը, ոչ միայն խօսքով էր հակառակւում Յիսուսին, այլ նաեւ՝ գործով: Բայց Յիսուսի մէկ խօսքը՝ Դամասկոսի ճանապարհին, բաւական եղաւ կոտրելու նրա հակառակութիւնը: Այսօր էլ նոյնն է. շատ հակառակուողներ ամենեւին չեն կոտրուի մեր «անզօր» խօսքերից ու տկար վկայութիւններից, իսկ Յիսուսի խօսքից, Աւետարանի խօսքերից ամէն հակառակութիւն կկոտրուի:

4. Վիճաբանութիւն: Այս մեղքն էլ, նախորդի նման ինքնահաստատման մի ձեւ է, երբ մեղաւոր մարդը ձգտում է ցոյց տալ իր առաւելութիւնը մէկ ուրիշի նկատմամբ: Ինչպէս էլ հիմնաւորենք մեր «վիճաբանելու ջերմ հակումը», միեւնոյն է, ի վերջոյ ստացուելու է, որ ինչ-որ մէկը ճիշտ է, իսկ ինչ-որ մէկ ուրիշը՝ սխալ: Մինչդեռ երբ որեւէ մէկն ասում է, թէ ինքը ճիշտ է, արդէն դա սխալ է: Մարդ երբեք էլ չի եղել ճիշտ ու ճշմարտացի, ճիշտն ու ճշմարտացին մէկն է՝ Յիսուս Քրիստոս: Ուրեմն, զղջացողն այս հատուածում խոստովանում է, որ ինչքան գործեր կատարել է առանց Յիսուսի ու Աւետարանի՝ մեղք է գործել: Ս. Գիրքն էլ պատուիրում է ուղղակի հեռու մնալ վէճերից (Բ Տիմ., Բ, 22), քանի որ դրանցից կռիւներ ու բաժանումներ են առաջանում: Դրան հակառակ, Ս. Գիրքը պատուիրում է վիճել ոչ թէ մարդկանց հետ, այլ՝ Աստծու, որպէսզի փարատուեն մեր կասկածները եւ տարակուսանքները: *«Երանի՜ թէ մարդ կարողանար Աստծու հետ վիճաբանել, ինչպէս իր ընկերոջ»* (Յոբ, ԺԶ, 21): Որովհետեւ այդ վէճից կշահի մարդը, քանի որ ազատուելով իր տարակուսանքներից եւ կասկածներից՝ կմաքրուի եւ կդառնայ ձեան պէս ճերմակ (Եսայի, Ա, 18):

5. Բանսարկութիւն, որ նշանակում է զրպարտութիւն, խառնակչութիւն, հակառակութիւն, չարախօսութիւն, մարդկանց մէջ կռիւ գցել եւ այլն: Բանսարկութիւնը հետապնդում է մէկ նպատակ՝ բաժանութիւն: Դեռ Եդեմից սկսած՝ տեսնում ենք, թէ ինչպէս է կեանք մտնում այդ «բաժանութիւնը»: Աստուած՝ Հայրը, միշտ միացնում է, միաւորում, իսկ դրան հակառակ սատանան՝ բաժանում: Եւ իզուր չէ, որ Յայտնութիւնը սատանային, այն առաջին օձին անուանում է Բանսարկու: Ուրեմն, բանսարկութիւնը բացայայտօրէն Բանսարկուին ընկերանալն է եւ նրա հետ համաձայնելը:

6. Շոգմոգութիւն, որ նշանակում է շաղակրատել, բանսարկութիւններ հնարել, հրահրել, գաղտնի փսփսալ եւ այլն: Այսինքն, շոգմոգութիւնը նախորդ մեղքն է (բանսարկութիւնը) ընթացքի մէջ կամ՝ գործնական բանսարկութիւնը: Շոգմոգութիւն անողը վտանգաւոր է նրանով, որ ամէն ինչ անում է գաղտնի եւ արտաքնապէս չի երեւում: Եթէ բանսարկութիւն անողի դէմ դեռ կարելի է պայքարել (երեւում է), շոգմոգութիւն անողը թաքնուած է (չի երեւում):

7. Քսու դատարկաբանութիւն, որ նշանակում է հրահրող դատարկախօսութիւն, մէկի դէմ գրգռող աշխատանք, մէկին միւսի դէմ հանելու խօսքեր, ատելութեան սերմանում եւ այլն: Ցանկացած դատարակախօսութիւն վերածւում է քսուութեան՝ առաջ բերելով թշնամութիւն, բաժանում: Ուստի պէտք է զգուշանալ այս ահաւոր մեղքից եւ հեռանալ ամէն տեսակ դատարկախօսութիւններից: Երբ լեզուն դադարում է ճշմարտութիւն խօսել, դառ-

նում է ունայնախօս:

8. Ծաղու զազրախօսութիւն, որ նշանակում է ծաղրող զազրախօսութիւն, տգեղ խօսքեր, զզուելի խօսակցութիւններ: Երբ քրիստոնեան անարգում է որեւէ մէկին, ընկնում է այդ մեղքի մէջ, քանի որ անարգել մարդուն՝ նշանակում է նրան ծաղրել: Ուրեմն, պէտք է զգոյշ լինենք, որ չանարգենք որեւէ մէկին (Մատթ., ԺԸ, 10):

9. Հերձախօսութիւն, որ նշանակում է մոլորեցնող խօսքեր խօսել, բաժանում առաջացնել: Եկեղեցու պատմութիւնը լեցուն է զանազան հերձախօսութիւններով՝ յանձինս յայտնի կամ անյայտ հերձախօսների: Համաձայն Ս. Գրքի, *«ով չի հաւաքում, ցիր ու ցան է անում»* (Մատթ., ԺԲ, 30), այսինքն՝ հերձախօս է: Բոլոր ժամանակներում եւ բոլոր հերձախօսներին բնորոշ են եղել հետեւեալ ընդհանուր գծերը.

- Իրենց գնացած ճանապարհներն իրենց ուղիղ են թուացել (Առակ., ԻԱ, 2- Իրենց սուտը ճշմարիտ են կարծել.

- Բոլորը սխալ են եղել բոլոր ժամանակներում, իսկ իրենք՝ միակ ճիշտը:

- Իրենք չգիտեն եւ ուրիշի իմացածին էլ հաւանութիւն չեն տալիս:

Այսօր էլ առկայ են զանազան հերձախօսներ, տարբեր երկրներից ներմուծուած հերձախօսութիւններով:

10. Անիծաբանութիւն, որ նշանակում է անիծել, անէծք թափել մէկի գլխին: Անէծքը հակառակն է օրհնութեան: Օրհնութիւնը հետեւանքն է սիրոյ, իսկ անէծքը՝ մեղքի ու ատելութեան: Ուրեմն, ամէն խօսք, որ դուրս է գալիս մեր բերանից առանց սիրոյ, անիծաբանութիւն է:

11. Տրտունջ, դժգոհութիւն: Քրիստոնեայի ամէն գործ պէտք է կատարուի սիրով: Առանց սիրոյ կատարած գործը տրտունջ եւ դժգոհութիւն է առաջացնում:

12. Բամբասանք եւ հայհոյութիւն: Բամբասանքի ահաւորութիւնն այն է, որ մեղանչում է ոչ միայն ինքը՝ բամբասողը, այլեւ՝ լսողը: Հայհոյութիւն է ամէն մի չարախօսութիւն, լուտանք, Աստծու հանդէպ թշնամութիւն առաջացնող ամէն խօսք ու արարք, ուսմունք ու վարդապետութիւն:

Տաթեւացին բամբասանքի մասին գրում է. «Օրէնքն հրամայում է չբամբասել, քանի որ գրուած է. *"Խուլին մի հայհոյիր եւ կոյրի առաջ գայթակղութիւն մի դիր"* (Ղեւտ., ԺԹ, 14): Բամբասանքը խախտում է այդ երկու պատուէրներն էլ. նախ, որ չարախօսում է մէկի մասին, որն այդտեղ չէ, այսինքն՝ չի լսում (խուլը) եւ երկրորդ, որ լսողը չի տեսնում նրան, ում մասին խօսում ես (կոյրը): Հետեւաբար պէտք չէ բամբասել»: Այնուհետեւ, շարունակելով խօսել բամբասանքի մասին, նա գրում է, որ «առաւել մեղք է զառաջնորդացն բամբասել», այսինքն՝ թագաւորներին եւ իշխանաւորներին: Այսօր մեր մէջ շատ մեծ տարածում է գտել այդ վերջինը: Միայն զղջալով, խոստովանելով եւ ապաշխարելով կարող ենք ազատուել այդ ահաւոր մեղքից եւ մաքրել մեր լեզուն:

Զ հատուած

«Մեղայ գողութեամբ ձեռացս՝ ագահելով, զրկելով, հարկանելով, սպանանելով, եւ ընդ գարշս ածելով՝ մեղայ Աստուծոյ: Մեղայ ամենայն յօդուածովք շինուածոյս եւ ամենայն անդամօք մարմնոյս, հնգեակ զգայարանօքս, եւ վեցեկի շարժմամբ. վերամբարձ ոտնահարութեամբ, եւ վայրաքարշ մեղկութեամբ, յաջ եւ յահեակ խոտորելով, առաջնոցն մեղանչելով, եւ վերջնոցն չար նշաւակ գոլով՝ մեղայ Աստուծոյ»:

Զղջման այս հատուածում խոստովանում ենք յաճախ կրկնուող մեղքերը, որոնք ամէն օր ու ամէն ժամ կրնկակոխ հետեւում են մեզ: Ամէն մեղք ու յանցանք, որ գործում ենք, ցոյց է տալիս մարդու յանցաւորութիւնը Աստծու հանդէպ: Այս առումով յանցանքների եւ մեղքերի մէջ մեծ ու փոքր չկայ, քանի որ երկու դէպքում էլ դրանք պատուիրանազանցութիւններ են, այսինքն՝ խախտում են Աստծու օրէնքներն ու պատուէրները: «Ինչպէս որ երկու լումայի ողորմութիւնը աւելի շատ համարուեց, քան բազում մեծամեծ ողորմութիւններ, այնպէս էլ երկու լումայի չափ մեղանչողները, որոնք չեն ապաշխարում, ընդունում են պատուիրանազանցութեան ամբողջ պատիժը», - գրում է Մանդակունին: Ուրեմն, մեզ համար կարեւոր է, թէ ինչպէս ենք ապրում եւ թէ ինչպէս ենք վկայում Յիսուսին՝ մեր Փրկչին: Խօսել քրիստոնեայի հաւատի մասին, նոյնն է, ինչ խօսել նրա գործերի մասին: Պօղոս առաքեալն էլ, երբ խօսում է հաւատի մասին (Եբր., ԺԱ գլուխ), յիշատակում

է նրանց կատարած գործերը: Այսպէս, նա գրում է, որ *«Աբէլը հաւատով աւելի լաւ զոհ մատուցեց* (գործը»), քան Կայէնը, կամ *«հաւատով Նոյը, պատգամ առնելով, տապան շինեց* (գործը») եւ այդպէս շարունակ: «Եթէ ոսկեղէն մի գեղեցիկ աման դնենք սոված ու ծարաւ մարդու առաջ, նա չի կարող ո՛չ խմել, ո՛չ էլ ուտել, չնայած ամանի գեղեցկութեանը: Այդպէս էլ հաւատը դատարկ եւ ունայն է առանց գործերի, իսկ այդպիսի հաւատ ունեցողը նմանւում է դատարկ աման ունեցողին» (Սարգիս Շնորհալի): «Օրինակ, երբ Պօղոսն ասում է, թէ մարդ գործերով չի արդարանայ, - գրում է Շնորհալին, - չի ասում, թէ գործերն անկարող են արդարացնել մարդկանց, այլ որ առանց հաւատի մարդ չի կարող արդարանալ միայն գործերով»:

«Անհաւատ է նա, որ *"անզեղջ է ի մեղս"* եւ դարձի չի գալիս, որ խոստովանութեամբ մաքրուի եւ սրբուի: Անհաւատ է եւ նա, որ մամոնային է ծառայում եւ իր հարստութիւնից բաժին չի հանում աղքատներին ու կարիքաւորներին: Անհաւատ է եւ նա, որ գողանում է, քանի որ չի հաւատում Ս. Գրքին ու չի վստահում նրան, որն արգելում է գողութիւնը», - աւելացնում է նա:

Այսպիսով, չի կարելի բաժանել հաւատն ու գործերը եւ դրանք դիտարկել առանձին-առանձին, ինչպէս չի կարելի մարմինը եւ հոգին իրարից բաժանել (Յակ., Բ, 26): Եկեղեցու Պատմութիւնը ցոյց է տալիս, որ միշտ էլ մեծ տրոհումներն առաջացել են այն ժամանակ, երբ եկեղեցիները ինչ-որ բան բաժանել են ինչ-որ ձեւով: Այսպէս, Քաղկեդոնը բաժանեց Յիսուսի բնութիւնը երկու մասի, եւ դրանով էլ Եկեղեցին բաժանուեց երկու մասի՝ քաղկեդոնականի եւ ոչ քաղկեդոնականի: Հայաստանեայց եկեղեցին, հաւատարիմ մնալով նախորդ ժողովների որոշումներին, չընդունեց «բաժանուած Յիսուսին» եւ ընդունեց կիւրեղեան յայտնի բանաձեւը՝ «Մի բնութիւն Աստուծոյ Բանին մարմնացելոյ»: Միջնադարում էլ, բողոքական շարժումը հաւատը բաժանեց գործից, ու այդպիսով բաժանեց Կաթոլիկ եկեղեցին երկու մասի՝ մի ծայրայեղութիւնից ընկնելով մի ուրիշ ծայրայեղութեան մէջ: Մինչդեռ հաւատը գործերով է կենդանի եւ գործն էլ հաւատով է կատարեալ: Տաթեւացին գրում է, որ «հաւատն ու գործը, երկուսն էլ մարդկանց պարգեւուած Աստծու շնորհներն են, երկուսն էլ լոյս են եւ լուսաւորում են մեզ, մեր միջի բարի պտուղն են»: Հաւատը եւ գործը իրար համեմատելով՝ նա գրում

է, որ «հաւատը հոգին է, իսկ գործը՝ մարմինը, հաւատը ծնողն է, իսկ գործը՝ ծնունդը»:

«Մեղայի» այս հատուածում թուարկուած մեղքերից պէտք է հրաժարուել անմիջապէս, քանի որ դրանք ապականում եւ պղծում են մեր գործերն ու հաւատը: Ամէն անգամ, երբ ընկնում ենք այդ «ամենօրեայ մեղքերի տիղմի մէջ», պէտք է շտապ մաքրուել, խոստովանել եւ ապաշխարել, քանի որ այդ բեռով չենք կարող հեռուն գնալ եւ Քրիստոսի անունը դաւանել: Այդ մեղքերն են.

1. Գողութիւն ձեռաց: Ծննդոց, Գ, 19-ի համաձայն, ամէն մարդ երեսի քրտինքով պիտի ուտի իր հացը: Ուստի, Տասնաբանեայի Ը պատուէրով Աստուած արգելում է ուրիշի ունեցուածքին տէր կանգնելը, այսինքն՝ գողութիւնը: Գողութիւնը հակառակն է ողորմածութեան, եւ ամէն ժամանակ, երբ ողորմած չենք գտնւում, գողութիւն ենք անում: Հետեւաբար, ուրիշի ունեցուածքը իւրացնելու փոխարէն պէտք է մեր ունեցածը տանք ուրիշներին, աղքատներին ու կարիքաւորներին:

2. Ագահութիւն, որ նշանակում է չբաւարարուել ունեցածով եւ ձգտել աւելի շատ ունենալ: *«Աչքը տեսնելով չի կշտանում, եւ ականջը լսելով չի լցւում»*, ասում է Սողոմոնը (Ժող., Ա, 8): Այդպիսին է ագահութիւնը. ինչքան շատ է ունենում, այնքան շատ է ձգտում էլ աւելի ունենալու: Ագահութիւնը այդ մարաթոնին անարգում է ամէն մի մարդկային արժանիք: Ագահը բարոյականութեան կարիք չունի, քանի որ բարոյականութիւնը խորթ է իր սկզբունքներին: Այդ առումով էլ Պօղոսն ասում է, որ *«ագահութիւնը կռապաշտութիւն է»* (Եփես., Ե, 5), քանի որ ագահը, թողնելով ամէն բան, գիշեր ու ցերեկ ծառայում է ունայն ու սին բաներին (կուռքերին): Ագահը նաեւ անմիտ է, որովհետեւ լաւ իմանալով, որ իր կուտակած գանձերը իրեն չեն մնալու, շարունակում է նոյնը անել: Մինչդեռ «խելացի ագահը», իր ունեցուածքը աւելացնելով, օգտակար կգտնուի ուրիշների համար, կտրամադրի իր հարստութիւնը բարի գործերի եւ այդպիսով կազատուի ագահութեան ախտից:

Արծաթասիրութիւնը կամ դրամին գերի լինելը ագահութեան ամենատարածուած ձեւերից է: Հին հռոմէացիներն ասում էին, որ «արծաթը ծովի ջրի նման է», որովհետեւ ինչքան շատ ես խմում, այնքան շատ ես ծարաւում: Նոյն այդ յատկութիւնն ունի ագահութիւնը:

Ագահութեան մի այլ դրսեւորում է նաեւ օրինազանցութիւնը: Ագահի համար սովորական բան է անարգել օրէնքներն ու պատուէրները: Հին Կտակարանում Աքարը, Սաւուղը եւ շատ ուրիշներ կուլ գնացին ագահութեան ախտին, իսկ Նոր Կտակարանում Յուդան, Անանիան, Սափիրան խեղդուեցին այդ տիղմի մէջ:

3. Զրկել, որ նշանակում է անիրաւ գտնուել ինչ-որ մէկի նկատմամբ, հալածել, ուրիշին զրկել նրա իրաւունքներից եւ այլն: Աւետարանը սովորեցնում է, որ քրիստոնեան պէտք է ոչ թէ ուրիշին զրկի, այլ ինքն իրեն զրկի որոշ բաներից՝ օգտակար գտնուելով ուրիշներին: Ամէն պետութիւն իր քաղաքացիներին տալիս է որոշ իրաւունքներ, որոնցից օգտուելու համար բաւական է միայն պետութեան հպատակ լինելը: Բացի դրանից ամէն պետութիւն իր քաղաքացիներից պահանջում է նաեւ որոշ պարտականութիւնների կատարում: Քրիստոնեաները ցանկացած պետութեան մէջ այն քաղաքացիներն են, որոնք կամովին հրաժարւում են իրենց իրաւունքներից: Մենք յաճախ յիշում ենք միայն մեր արտօնութիւնները, մինչդեռ քրիստոնեան պիտի մոռանայ այդ եւ յիշի միայն իր պարտականութիւնները: Այս կերպ միայն կարելի է ազատուել այդ մեղքից:

4. Հարկանել, սպանել: Հարկանել նշանակում է հարուածել, ջարդել, խփել, վիրաւորել, վնասել, կոտրել եւ այլն: Աստուած մարդուն ստեղծեց իր պատկերով եւ նմանութեամբ, եւ մարդու կեանքը եւ մահը միայն Աստծու ձեռքին են: Այդ առումով էլ, ով ատում է եղբօրը, մարդասպան է, ով չի օգնում կարիքաւորներին, նեղութեան մէջ եղողներին, դարձեալ նոյն մարդասպանն է: Բամբասելն ու չարախօսելն էլ նոյն մարդասպանութիւնն է, քանի որ մեր չար օրինակով շատերին ենք գայթակղեցնում եւ հեռացնում Աւետարանից ու Յիսուսից, այսինքն՝ մարդասպանութիւն ենք անում:

5. Ի գարշ ածել, այսինքն՝ քաշքշել, գետնաքարշ անել մարդկանց: Երբ ստորացնում ենք մարդուն, անարգում եւ արհամարհում ենք նրան, ընկնում ենք այդ զզուելի մեղքի մէջ:

6. Ամենայն յօդուածովք շինուածոյս, որ նշանակում է մեր մարմնի բոլոր շարժումներով, որ կատարում են մարմնի յօդուածներն ու խաղերը: Հնում մարդու մարմնի մէջ հաշուել են 365 յօդուած, եւ «ամենայն»-ը այստեղ նշանակել է հէնց այդ բոլոր յօդուածները: Այսինքն, զղջացողը խոստովանում է, որ իր ամէն մի շարժում մեղք է Աստծու առաջ եւ միայն Աստուած՝ Յիսուս, կարող է մեզ ազատել, մաքրել մեր «յօդախտը»:

7. Ամենայն անդամօք մարմնոյս, որն այստեղ նշանակում է մարդու մարմնի 12 մասերը, որոնք իրար հետ կապուած են 365 յօդուածներով:

8. Հնգեակ զգայարանօքս, այսինքն՝

- աչքերով, որոնք, նայելով լաւին ու բարուն, միայն վատն են տեսնում.
- ականջներով, որ ունկնդրում են չարին.
- հոտոտելիքով, որ մեղքի հոտն առնելով՝ ստիպում են մարդուն գնալ այդ ճանապարհով.
- բերանով, որ չի կարողանում զսպել իրեն «համադամ կերակուրներից».
- ձեռքերով եւ ոտքերով, որոնք շօշափում են մեղքը եւ անպատշաճ տեղեր գնում:

9. Վեցեկի շարժմամբ, որ նշանակում է շարժման վեց ուղղութիւնները՝ վերեւ, ներքեւ, աջ, ձախ, յետ ու առաջ: Հայրերը այս ամենին տուել են որոշակի իմաստ ու նշանակութիւն.

ա. - դէպի վեր (վերամբարձ ոտնահարութեամբ), որ նշանակում է հպարտութիւն, հայհոյութիւն.

բ. - դէպի ներքեւ (վայրաքարշ մեղկութեամբ), որ նշանակում է տիղմի մէջ մտնել, տրտմել.

գ. յաջ (յաջ խոտորելով), որ նշանակում է հոգեւոր մեղքերը, կեղծաւորութիւնը.

դ. ձախ (յահեակ խոտորելով), որ նշանակում է մարմնական մեղքերը.

ե.- յառաջ (առաջնոցն մեղանչելով), որ նշանակում է յանդգնութիւն, մեղքի յորդորանք.

զ.- յետ (վերջնոցն չար նշաւակ գոլով), որ նշանակում է ընկնել ամէն բարիքից:

է հատուած

«Այլ եւ մեղայ եօթնիցս յանցանօք՝ մահացու մեղօք: Հպարտութեամբ՝ եւ մասամբք նորին: Նախանձու՝ եւ մասամբք նորին: Բարկութեամբ՝ եւ մասամբք նորին: Ծուլութեամբ՝ եւ մասամբք նորին: Ագահութեամբ՝ եւ մասամբք նորին: Որկրամոլութեամբ՝ եւ մասամբք նորին: Բղջախոհու-

թեամբ՝ եւ մասամբք նորին՝ մեղայ Աստուծոյ»:

«Մեղայի» եօթերորդ հատուածում թուարկւում են եօթ մեղքեր, որոնք յայտնի են «մահացու» անուամբ: Իհարկէ, այստեղից դեռ չի հետեւում, որ մնացած մեղքերն ու յանցանքները «մահացու» չեն եւ կամ այս «մահացու» եօթը մեղքերի համար թողութիւն չկայ: Գիտենք, որ բոլոր մեղքերն էլ մահացու են, եթէ չկայ զղջում գործած մեղքերի կամ յանցանքների համար: Յիսուս, որպէս «Աստուծոյ Գառ», իր արեամբ թողութիւն շնորհեց եւ ազատեց մեզ մեր գործած մեղքերից, եւ եթէ *«խոստովանենք մեր մեղքերը, հաւատարիմ է Նա եւ արդար՝ մեր մեղքերը մեզ ներելու եւ մաքրելու մեզ ամէն անիրաւութիւնից»* (Ա Յովհ., Ա, 9): Քանի որ այս «մահացու» մեղքերը թուարկւում են զղջման այս աղօթքում, նշանակում է, որ զղջացողը թողութիւն կարող է ստանալ նաեւ այդ «մահացու» մեղքերի համար, հակառակ դէպքում ի՞նչ իմաստ կունենար խոստովանելը՝ նախօրօք իմանալով, որ թողութիւն չկայ դրանց համար: Հետեւաբար պէտք չէ շփոթել այս հատուածի մեղքերը Նոր Կտակարանում յիշուած այն մի քանի դէպքերի հետ, որոնց համար թողութիւն չկայ (Մատթ., ԺԲ, 30-31, Ա Յովհ., Ե, 16 եւ այլն): Հայ եկեղեցին այդ մեղքերին անուանում է «մահացու», քանի որ դրանք ապականում են քրիստոնեայի կեանքը, հեռացնում նրան Աւետարանից եւ եկեղեցուց եւ ոչ թէ «մահացու» են՝ ներում չունենալու համար: Ուրեմն, պէտք է զգուշանալ «մահացու» այս մեղքերից, քանի որ մնալով դրանց մէջ՝ քրիստոնեան չի կարող բարի գործեր անել, որովհետեւ «մեղքն ու բարեգործութիւնը հակառակ են իրար» (Տաթեւացի):

Երբ Աստուածային սէրը սկսում է պակասել քրիստոնեայի կեանքում, կամաց-կամաց նրա կենցաղն էլ է սառում՝ ճանապարհ բացելով մահացու մեղքերի համար: Եւ միայն «ի ձեռն զղջման եւ խոստովանութեան» կարող ենք «մահացու» մեղքերից ազատուել եւ առողջանալ: Իսկ Ա Յովհ., Ե, 16-ում յիշուած «մահացու» մեղքերը, որոնց համար առաքեալն ասում է, թէ «մի խնդրէք», եկեղեցու վարդապետները մեկնել են այսպէս.

«Ինչ որ մենք խնդրենք Աստծուց, ըստ Նրա կամքի, նա կլսի մեզ: Իսկ յայտնի է, որ նրա կամքն է բոլորի փրկութիւնը: Եւ եթէ մենք մարմնական եղբօր հանդէպ գութ ենք ցուցաբերում, ապա առաւել եւս պէտք է գութ ցուցաբերել հոգեւոր եղբօր հանդէպ, որն ընկել է մեղքի մէջ, կամ որին տեսնում ենք մեղքից գերուած, մանաւանդ, երբ նրա մէջ կայ կենդանութեան շունչ՝ զղջալու, խոստովանելու եւ ապաշխարելու կարողութիւն: Այդպիսի եղբօր համար աղօթքով օգնութեան ձեռք մեկնիր: Բայց ոչ բոլորի համար պէտք է "խնդրուածս առնել": Նրանք, որ նոյն մեղքը ինքնիշխան յօժարութեամբ եւ մտքի կամքով ու խորհրդածութեամբ են գործում, եւ ապա ընկնելով չարութիւնների խորքերը՝ արհամարհում ողորմութիւնը եւ արդարացնում իրենց, Աստծուց չեն վախենում եւ մարդկանցից չեն երկնչում, նրանց համար այդպիսի մեղքերը մահացու են» (Սարգիս Շնորհալի):

Իսկ թէ ի՞նչ է նշանակում Ս. Հոգու դէմ հայհոյութիւնը, որի համար Յիսուս ասում է, թէ թողութիւն չկայ, եկեղեցու վարդապետները մեկնել են այսպէս. «Ս. Հոգու դէմ հայհոյողները նրանք են, որ "անզեղջ մեռանին մեղօք", մերժելով Ս. Հոգու վարդապետութիւնը, որ խրատում է մարդկանց դարձի գալ եւ հեռանալ մեղքերից: Այդպիսիները եթէ մեռնեն, թողութիւն չունեն, որովհետեւ չխոստովանեցին իրենց մեղքերը» (Ծործորեցի):

Տասը կոյսերի յայտնի առակում հինգը անուանւում են յիմար, քանի որ իրենց լապտերների համար ձէթ չէին վերցրել (Մատթ., ԻԵ, 1-12): Երբ փեսան եկաւ, հինգ յիմար կոյսերը դրսում մնացին, մինչեւ իսկ փեսան ասաց, որ չի ճանաչում նրանց: Ժամանակակից շատ մեկնիչներ ձէթը նոյնացնում են հաւատի կամ Ս. Հոգու հետ՝ եզրակացնելով, որ դրանց բացակայութեան դէպքում մարդ կմնայ դրսում, ինչպէս յիմար կոյսերը: Բայց չէ՞ որ յիմար կոյսերի լապտերներում էլ ձէթ կար (ԻԵ, 8) եւ եթէ ձէթը խորհրդանշում է հաւատը կամ Ս. Հոգու ներկայութիւնը, ապա նրանք դրսում չէին մնայ: Նման տրամաբանական հակասութիւններից զերծ է մեր եկեղեցու վարդապետների մեկնութիւնը: Այսպէս, «ձէթը ցոյց է տալիս ողորմութիւնը, եւ մարդասիրութիւնը, - գրում է Տաթեւացին, - քանի որ ինչպէս ողորմութիւնն է մշտնջենաւոր կենաց եւ լոյսի նիւթ, այնպէս էլ ձէթն է լոյսի համար նիւթ համարւում: Ուրեմն, իմաստուն են նրանք, որոնք այս աշխարհում հոգեւոր եւ աստուածային կեանքի են ձգտում, իսկ յիմարներ են նրանք, որոնք ձգտում են մարմնաւոր կեանքի վայելքներին: Եւ փեսան չճանաչեց նրանց, քանի որ իրենց ապրած կեանքում չխոստովանած մեղքերը այլայլել էին իրենց դէմ-

քերը՝ դարձնելով նրանց անճանաչելի»: Ինչ որ մենք անում ենք այստեղ, այնտեղ՝ երկնքում պատկեր եւ ձեւ է ստանում: Եւ քանի որ յիմարները «առանց ողորմութիւնների էին մնացել» եւ իրենց հատուցումը «մարդկանց էին վաճառել» (Ծորժորեցի), այսինքն՝ իրենց «ողորմութիւնները մարդկանց առաջ էին արել՝ ի ցոյց նրանց», ուստի վարձատրուել էին նրանց կողմից եւ ոչ թէ երկնային Հօր կողմից (Մատթ., Զ, 1-4):

Եւ այսպէս, «մահացու» մեղքերը, որոնք ապականում են մեր կեանքը, ի զօրու են ի չիք դարձնել մեր քրիստոնէական կենցաղն ու բարքը, այլայլել մեր դէմքը այն աստիճան, որ նոյնիսկ փեսան չի ճանաչի: Այդ առումով էլ դրանք անուանւում են «մահացու»: Այդ մեղքերն են.

1. Հպարտութիւն, որ նշանակում է ամբարտաւանութիւն, գոռոզութիւն, սնափառութիւն, փառասիրութիւն, ինքնահաւանութիւն եւ այլն: Հպարտութեան հակառակն է խոնարհութիւնը: Քրիստոսին կարող են հետեւել միայն խոնարհ ու հեզ մարդիկ (Մատթ., ԺԱ, 29), եւ Աստուած էլ չի արհամարհում նրանց (Սաղմոս, Ծ, 19): Հպարտ մարդը արհամարհում է բոլորին, բացի իրենից: Հպարտը անձնասէր եւ անձնակենտրոն մարդն է, որի համար տիեզերքի առանցքն ու կենտրոնը իր անձն է: Հպարտութեան պատճառով մարդն ընկաւ իր բարձունքներից (Եդեմում) եւ որպէսզի նորից բարձրանայ, պէտք է խոնարհ լինի (Յակ., Դ, 10), քանի որ «Աստուած հակառակ է ամբարտաւաններին, իսկ խոնարհներին շնորհ է տալիս» (Առակ., Գ, 34): Այս հակառակութիւնից խուսափելու համար էլ, մենք զղջման այս աղօթքի մէջ սովորում ենք խոնարհուել Աստծու առաջ, որպէսզի կարողանանք օգտակար լինել թէ՛ եկեղեցուն, թէ՛ մարդկանց: Հպարտը կարծում է, թէ ինքը միշտ ճիշտ է եւ այդպէս էլ չի զղջում, մինչդեռ մեղաւորը, տեսնելով իր մեղքերը, մտածում է բժշկուելու մասին:

2. Նախանձ, որ նշանակում է ոխակալութիւն, ատելութիւն, նենգութիւն եւ այլն: Նախանձը միշտ ձգտում է բամբասանքի, արհամարհում է բոլորին, այլոց փոքր մեղքերը դիտում է խոշորացոյցի միջով՝ մոռանալով իր բազում հսկայ գերանները, այլոց բարուն չար ասում, ատում է բարեկամներին եւ հաւանութիւն տալիս Աստծուն ատելի գործերին: Այս չար նախանձը «սերմն է սատանայի» եւ չարչարում է մարդու միտքը, հիւծում նրան, հանգիստ չի տալիս եւ միշտ նորանոր չարութիւնների առաջնորդում: «Նախանձը նախ ի յիւր անձն վնասէ, եւ ապա յայլս», - գրում է Տաթեւացին: Հետեւաբար նախանձը մի այնպիսի ախտ է, որ վնասում է ոչ միայն հիւանդին, այլեւ՝ շրջապատին: «Ուստի, - շարունակում է նա, - եղբա՛յրք, յախտէ նախանձու ի բաց փախիցուք, մի՛ նախանձեսցուք, մի՛ չարակնեսցուք, մի՛ բամբասեսցուք»:

3. Բարկութիւն, որ նշանակում է ցասում, նզովել, զրպարտել, քրթմնջալ եւ այլն: Բարկութիւնը այն մեղքն է, որ ամէն անգամ զրկում է մարդուն առողջ դատողութիւնից, որի պատճառով կարող ենք ընկնել աւելի մեծ մեղքերի մէջ: «Մարդ բարկացեալ ոչ ճանաչէ զճշմարտութիւն», - գրում է Մանդակունին, ուստի պէտք է զգուշանալ, քանի որ բարկութեամբ մարդ կորցնում է Աստծու պատկերը:

4. Ծուլութիւն, որ նշանակում է անհոգութիւն, պարապ մնալ, անգործութիւն, քնկոտութիւն եւ այլն: Ծոյլը ատում է ուսումը, Ս. Գրքի ընթերցանութեամբ չի ուզում զօրանալ, եկեղեցի չի գնում եւ յօրանջելով ու շատախօսելով սպառում է այնքան թանկ ժամանակը:

5. Ագահութիւն, որ նշանակում է արծաթասիրութիւն, աւելի շատ ունենալ, անյագութիւն եւ այլն: Ագահը խաբեբայ է, յափշտակող, ողորմութիւն չի ճանաչում, գութ չունի, եղբայրասիրութիւնը նրա համար խորթ է: Ագահութեան հակառակն է ողորմութիւնն ու աղքատասիրութիւնը:

Ագահութեան ախտը այն աստիճան վնասակար է, որ Սուրբ Գիրքը դրան անուանում է կռապաշտութիւն, այսինքն՝ ծառայութիւն ունայն ու սին բաների: Այդ պատճառով էլ Ս. Գիրքը խորհուրդ է տալիս գանձերը կուտակել ոչ թէ այս աշխարհում, երկրի վրայ, ուր ցեցն ու ժանգը ոչնչացնում, իսկ գողերը գողանում են, այլ՝ երկնքում, ուր ո՛չ ցեցը եւ ո՛չ էլ ժանգը չեն ոչնչացնում ու ո՛չ էլ գողերն են գողանում (Մատթ., Զ, 19-21):

6. Որկրամոլութիւն, որ նշանակում է անյագ ուտել, որովայնը լցնել, անչափաւորութիւն ամէն հարցում եւ այլն: Որկրամոլութեան հակառակն է պահեցողութիւնը: Համաձայն եկեղեցու վարդապետների, այս մեղքը ամէն մեղքի դուռն ու բերանն է, եւ դրա համար էլ Աստուած առաջին պատուէրով ուտելու վրայ արգելք դրեց, իսկ սատանան հէնց այդ դուռը բացելով՝ ճանապարհ բացեց մեղքի յետագայ յաղթարշաւի համար:

7. Բղջախոհութիւն, որ նշանակում է պոռնկական խորհուրդներ, վաւաշոտ ցանկութիւն, անամօթութիւն, ցոփ խօսել, ապականեալ խորհուրդներով մեղանչել: Բղջախոհութեան հակառակն է ողջախոհութիւնն ու ժուժկալութիւնը:

Ը հատուած

1. «Այլեւ մեղայ ամենայն պատուիրանացն Աստուծոյ՝ յանձնառելեացն եւ հրաժարելեացն, զի ո՛չ զյանձնառականսն կատարեցի, եւ ո՛չ ի հրաժարելեացն հեռացայ»:

Այս հատուածով աւարտւում է «Մեղայ»-ի խոստովանական մասը. յաջորդ հատուածներում զղջացողը դիմում է պաշտօնեային եւ թողութիւն ստանում իր գործած մեղքերից (Արձակումը): Ուստի եւ այս հատուածում ամփոփ ձեւով ներկայացուած են վերեւում յիշուած բոլոր մեղքերը, յանցանքները: Զղջացողը խոստովանում է, որ մեղանչել է Աստծու բոլոր պատուիրանների դէմ, խախտել դրանք, դառնալով պատուիրանազանց: Այստեղ բոլոր պատուիրանները բաժանուած են երկու խմբի՝ յանձնառականի եւ հրաժարականի կամ՝ դրականի եւ ժխտականի: Յանձնառական են բոլոր այն պատուիրանները, որոնք պահանջում են կատարել ինչ-որ բան, իսկ հրաժարականները արգելող պատուիրաններն են: Յանձնառականը կատարելը եւ հրաժարականից հրաժարուելը առաքինութիւն է, մինչդեռ հրաժարականի կատարումը եւ յանձնառականից հրաժարուելը՝ մեղք: Այսպէս, Տասնաբանեան ունի ե՛ւ դրական պատուիրաններ ե՛ւ ժխտական. *«Յիշեա՛ սրբել զօր շաբաթու», «Պատուեա՛ զհայր քո եւ զմայր»* պատուիրանները դրականներից են, իսկ *«Մի՛ արասցես կուռս», «Մի՛ եղիցին քեզ այլ աստուածք»* պատուիրանները՝ ժխտականներից: Հին Կտակարանը մինչեւ Յիսուս, իսկ Յիսուսից յետոյ էլ՝ առանց Յիսուս, մնում է ծածկուած, երեւում է միայն նրա արտաքին կերպարանքը: Ամէն ժամանակ, երբ կառչում ենք Օրէնքի տառից եւ անտեսում նրա հոգին, ընդունում ենք նրա արտաքին կերպարանքը միայն (Հռոմ., Բ, 20): Յիսուսի ժամանակներում շատ ռաբբունական դպրոցներ քննում էին միայն Օրէնքի տառը եւ Օրէնքին կարեւորութիւն տալիս միայն դրանով: Այսպէս, Հին Կտակարանի պատուիրանները

դասակարգելով երկու խմբի՝ դրականի եւ ժխտականի, նրանք հաշուել են 248 դրական պատուիրան (ըստ մարդու մարմնի 248 մասերի կամ ըստ ամենայն անդամօք մարմնոյս) եւ 365 ժխտական (ըստ մարմնի 365 յօդուածների կամ ըստ ամենայն յօդուածովք շինուածոյս): Աւելի առաջ գնալով՝ շատ ռաբբիներ հաշուել են նաեւ Տասնաբանեայի տառերի թիւը (Ելք, Ի, 1-17) եւ տեսել, որ այն համընկնում է պատուիրանների թուին եւ հաւասար է 613-ի, (248+365=613): Այս եւ այլ շատ ուրիշ «տուեալներ» հաշուի առնելով նրանք պատուիրանները բաժանել են առաջնայինների եւ երկրորդականների, գլխաւորների եւ ոչ գլխաւորների: Հէնց այդ ի նկատի ունէր այն դպիրը, որը հարցրեց Յիսուսին, թէ՝ *«Վարդապետ, Օրէնքի մէջ ո՞ր պատուիրանն է մեծ»* (Մատթ., ԻԲ, 36): Մինչդեռ պատուիրանազանցութեան մէջ մեծ ու փոքր չկայ, բոլորն էլ մեղք են Աստծու հանդէպ: Ամէն մի պատուիրանի խախտում, լինի մեծ պատուիրան, թէ փոքր, միեւնոյն է, պատուիրանազանցութիւն է: Եւ ինչքան էլ փորձենք հիմնաւորել մեր խախտումները եւ անօրէնութիւնները Ս. Գրքի զանազան համարներով, միեւնոյն է, խախտումը կմնայ խախտում, իսկ խախտողին կմնայ մէկ բան միայն՝ զղջալ եւ ապաշխարել: Երբ մարդն անհոգ է Օրէնքի նկատմամբ, նա զրկւում է բարոյական արժէքներից եւ դադարում մարդ լինելուց:

2. «Զօրէնս առի՝ եւ յօրինացն հեղգացայ. ի կարգս քրիստոնէութեան հրաւիրեցայ՝ եւ գործովս անարժան գտայ, գիտելով զչարն կամաւ կորացայ, եւ ի բարեաց գործոց ես ինձէն հեռացայ», այսինքն՝ ստանալով Օրէնքը՝ ծոյլ գտնուեցի օրինապահութեան մէջ եւ քրիստոնէական կարգին ծանօթանալով՝ գործերով անարժան եղայ, քանի որ չարը իմանալով՝ կամովին շեղուեցի եւ հեռացայ բարի գործերից: Զղջման այս մասը կարծես յանդիմանում է թէ՛ մեզ, թէ՛ ամբողջ մարդկութեանը: Իրօք, եթէ «քրիստոնէական կարգի» հրաւիրուելուց յետոյ մեր գործերը վկայէին մեր հաւատը, այսօր աշխարհում աւետարան քարոզելու կարիք չէր լինի:

Այս հատուածը յիշեցնում է մեզ նաեւ Առաջին պատուիրանազանցութիւնը, որից ծնուեցին մնացած բոլոր անօրէնութիւնները: Ինչ էլ որ անենք, ուր էլ որ գնանք, միշտ պիտի յիշենք այն տեղը, որտեղից ընկել ենք եւ դասեր քաղենք այդ ամենից: Պիտի յիշենք նաեւ Առաջին անկումը, որ լաւ ճանա-

չենք մեզ եւ հպարտանալու փոխարէն հնազանդութեամբ խոնարհուենք Աստծու առաջ:

Եւ այսպէս, դարձեալ «մեղաւոր» է Եդեմը: Այնտեղ, դրախտում, սովորական ծառերից բացի կային երկու այլ ծառ եւս, որոնք տարբերւում էին միւս բոլորից (Ծննդոց, Բ, 9): Մէկը *«կենաց ծառն»* էր, միսը՝ *«բարու եւ չարի գիտութեան ծառը»:* Մեր նախածնողներին թոյլատրուած էր ուտել բոլոր ծառերից (այդ թւում նաեւ «կենաց ծառից») եւ արգելւում էր ուտել իմաստութեան ծառից: Այս պատմութեան մէջ ծառերը խորհրդանշում են Աստծու պատուիրանները, որոնք հաւաքաբար բաժանւում են երկու խմբի՝ դրականի եւ ժխտականի: Դրական պատուիրանները (բարի եղի՛ր, սիրի՛ր ընկերոջդ եւ այլն) իրօք «կեանքի ծառից» ուտել է նշանակում, քանի որ «ուտողը» անմահութեան եւ յաւիտենական կեանքի է արժանանում: Բացի դրանից այդ պատուիրանները մեզ ներքնապէս առողջ են պահում, մտքին եւ հոգուն խաղաղութիւն տալիս, մինչեւ իսկ կեանքը երկարացնում: Միւս գերբնական բնութիւն ունեցող ծառը՝ *«բարու եւ չարի գիտութեան»* ծառը, խորհրդանշում է ժխտական պատուիրանները, որոնք սկսւում են *«մի՛»* արգելականով (մի՛ գողացիր, մի՛ կեր եւ այլն): Մեղք գործել նշանակում է խախտել այդ պատուիրանները: Երբ Աստուած արգելում է մի բան, մեր օգուտի համար է այդ անում: Նա որպէս Տիեզերքի Արարիչ լաւ գիտէ, թէ որն է մեր օգուտը եւ որն է մեր վնասը, ուստի եւ արգելում է: Երբ մենք մերժում ենք Աստծուն եւ խախտում Օրէնքը, հետեւանքները վաղ թէ ուշ անպայման «հանդիպում» են մեզ: Ի վերջոյ, իւրաքանչիւր մեղանչական արարք արհամարհանք է Աստծու իմաստութեանը եւ անհնազանդութիւն Նրա կամքին: Աստուած իր կամքը երբեք չի պարտադրում մարդուն, այլ ասում է՝ «արա՛» կամ «մի՛ արա»: Շարունակութիւնը ընտրում ենք մենք: Կգան օրեր, կանցնեն երկինքն ու երկիրը, բայց Աստծու խօսքից եւ ոչ մի կէտ կամ նշանախեց չի կորցնելու իր զօրութիւնը (Մատթ., Ե, 17-18): Այստեղ յիշուած «կէտն ու նշանախեցը» եբրայական այբուբենի ամենափոքր կէտադրական նշանն ու տառն են, որոնք այդ լեզուում ունեն իրենց որոշակի նշանակութիւնը: Հնում հրեաները ամենայն բծախնդրութեամբ էին արտագրում Հին Կտակարանի տեքստերը, որ յանկարծ որեւէ կէտ կամ նշանախեց (յովտ) չկորցնեն: Կումրանում յայտնաբերուած ձեռագրերը աւելորդ անգամ ապացուցեցին այդ: Երբ լեզուաբանները «գործի անցան» եւ համեմատեցին Կումրանի ձեռագրերում յայտնաբերուած Եսայի մարգարէի գիրքը արդի տպագիր հրատարակութիւնների հետ, ամէն ինչ պարզուեց. ոչ մի կէտ կամ նշանախեց չէր կորցրել իր «զօրութիւնը». տեքստերը բացարձակապէս նոյնն էին: Ինչպէս որ ժամանակի ու դարերի ընթացքում չէր կորել ոչ մի «կէտ կամ նշանախեց», այնպէս էլ այսօր չի կորել նրանց ներքին զօրութիւնը. Աստծու պատուիրաններին պէտք է բոլոր ժամանակներում մօտենալ ամենայն ակնածանքով եւ մեծագոյն զգուշութեամբ: Կեանքը ցոյց տուեց, որ մարդն առանց ծէսի չի կարող ապրել, ինչքան էլ որ քարոզեն «ոչ ծիսական» եկեղեցիները: Օրէնքներով են ուղղւում մարդու կեանքն ու վարքը, օրէնքները պահելով ենք մենք վկայում, որ Աստծու զաւակներ ենք եւ քրիստոնեաներ: Երբ մարդը մեղանչեց Աստծու պատուիրանների դէմ եւ ճաշակեց «արգելուած պտուղը», մթնեց նրա իմացականութիւնը, տկարացաւ մտքի դատողութիւնը. մարդը կորցրեց իր կատարեալ ազատութիւնը: Բացուեցին նախածնողների աչքերը, նրանք ճանաչեցին բարին ու չարը, բայց զօրութիւն չունեցան բարին գործելու եւ չարից խուսափելու: Նրանք զօրութիւն ունեցան տեսնելու միայն իրենց մերկութիւնը: «Նրանց աչքերը բացուեցին, բայց հոգեւոր աչքերը փակուեցին», - գրում է Եկեղեցու հայրերից Որոգինէսը: Գրեթէ նոյն վիճակում ենք յայտնւում եւ մենք, երբ պատուիրանազանց ենք լինում: Այդ պատճառով էլ հնում մեր վարդապետները միշտ էլ մեծ ուշադրութիւն են դարձրել օրինապահութեան վրայ: «Պահելով պատուիրանը, - գրում է Տաթեւացին, - մարդը չի ընկնի մեղքի մէջ, իսկ եթէ գործի էլ, շուտով կապաշխարի եւ կարդարանայ»: Աւելին, Աստծու հանդէպ ունեցած երկիւղն ու օրինապահութիւնը մարդու «միտքն են պայծառացնում»: Տաթեւացին Օրինապահութիւնը նմանեցնում է պարիսպների եւ ցանկապատի, որոնք պահում են մարդուն թշնամուց: Այդ պարիսպները նա բաժանում է երեք մասի՝ ներքին, միջին եւ արտաքին:

Ա. Ներքին պարիսպը խոհեմութիւնն է, ամէն բան սկսելուց առաջ մտածելը եւ ամէն ինչում իմաստուն գտնուելը: Այս պարիսպը ետ է պահում մարդուն անխոհեմ ու անլուրջ քայլերից:

Բ. Միջին պարիսպը մեր առաքինի գործերն են՝ աղօթքը, եկեղեցի գնա-

լը, պահքը, ողորմութիւնը, ներողամտութիւնը եւ այլն:

Գ. Արտաքին պարիսպը Աստծու օրէնքներն են, որոնք պահպանում եւ կանոնաւորում են մեր կեանքը: «Իմաստութեամբ մենք պարսպապատում ենք մեր միտքը, գործերով՝ հոգին եւ օրէնքով՝ բոլոր զգայարանները, միտքն ու հոգին», - եզրափակում է նա:

3. «Վա՛յ ինձ, վա՛յ ինձ, վա՛յ ինձ: Զո՞րն ասեմ, կամ զո՛րն խոստովանիմ, զի անթիւ են յանցանք իմ, աննրելի՛ են ցաւք իմ, եւ անբժշկելի՛ են վէրք իմ՝ մեղայ Աստուծոյ»: Այս երեք վայրը համապատասխանում են Ա հատուածի երեք մեղանչումներին՝ խորհրդով, խօսքով եւ գործերով: Գիտակցելով մեղքի ու յանցանքի խորութիւնը՝ զղջացողը խոստովանում է, որ դրանք աննրելի ու անբժշկելի են եւ այստեղ էլ բացւում են հաւատի աչքերը՝ տեսնելու Յիսուսի փրկարար զօրութիւնը, Նրա ներելու անսահմանութիւնը եւ մեղքը թողելու ամենազօր կարողութիւնը:

Թ հատուած

«Հայր սուրբ, զքեզ ունիմ միջնորդ հաշտութեան եւ բարեխօս առ միածին Որդին Աստուծոյ, զի իշխանութեամբդ, որ տուեալ է քեզ, արձակեսցես զիս ի կապից մեղաց իմոց, աղաչեմ զքեզ»:

Մեղքերի խոստովանութիւնից յետոյ, ապաշխարողը դիմում է պաշտօնեային, խնդրելով, որ նա իր իշխանութեամբ արձակի իրեն մեղքերից: Արձակում ստանալուց յետոյ է, որ խոստովանողը իրաւունք է ստանում հաղորդութիւն ստանալու, այսինքն՝ Քրիստոսի հետ մէկ լինելու եւ եկեղեցու մէջ իր տեղը գրաւելու: Հետեւաբար, շատ կարեւոր է իմանալ, թէ այդ ի՞նչ իշխանութեամբ է թողութիւն տրւում զղջացողի մեղքերին եւ արդեօ՞ք եկեղեցին (պաշտօնեան) այդ իրաւունքն ունի: Եկեղեցի բառը յունարէն է եւ նշանակում է ժողով, իսկ քրիստոնէական ընկալմամբ՝ ճշմարիտ հաւատացեալների միաբանութիւնն է, որոնք հաստատուած են «ի վերայ հիման առաքելոց եւ մարգարէից», մի հաւատով, մի մկրտութեամբ, մի Հոգիով: Նիկիական Հաւատամքը բնորոշում է եկեղեցուն, որպէս «միմիայն ընդհանրական եւ Առաքելական Սուրբ Եկեղեցի»: Քրիստոսի եկեղեցին մի է, այսինքն՝ նրա բոլոր անդամները՝ տարբեր ազգեր եւ լեզուներ, թէ՛ անցեալում, թէ՛ հիմա եւ թէ՛ յետագայում հաւատում են մի Քրիստոսի, որն էլ նրա Գլուխն է: Եկեղեցին Քրիստոսի մարմինն է: Եկեղեցին սուրբ է, քանի որ Սուրբ է Ինքը՝ Յիսուս, որն իր արիւնով սրբեց եկեղեցուն: Եկեղեցին Ընդհանրական է, որովհետեւ նա որեւէ ազգի կամ ժողովրդի առանձնաշնորհումը չէ, այլ սեփականութիւնն է ամբողջ մարդկութեան: Յիսուս մեռաւ բոլորի համար, եւ եկեղեցու մէջ կարող են ընդունուել բոլորը, առանց խտրականութեան: Տարբեր ազգերի մէջ եղող եկեղեցիների գոյութիւնը չի խախտում Եկեղեցու ընդհանրականութիւնը, քանի որ բոլոր նրանք միակ ճշմարիտ քրիստոնէական եկեղեցու տարբեր ճիւղերն են: Եկեղեցին նաեւ Առաքելական է, այսինքն՝ նրա հաստատութիւնը սկսւում է 12 առաքեալներից: Եւ այս ամէնը ամփոփւում է Քրիստոսի մէջ, այսինքն, Աստծու Արքայութեան սկիզբը, վերջը, այբն ու քէն, եկեղեցու հիմքն ու գլուխը, վէմն ու գագաթը, կեանքն ու փրկութիւնը Քրիստոսն է: Հետեւաբար Եկեղեցին, լինելով Քրիստոսի մարմինը, Քրիստոսից յետոյ Քրիստոսի գործի շարունակողն է այս աշխարհում: Օձնեցին ասում է, որ ինչպէս Առաջին Ադամի կողից ստեղծուեց Եւան՝ կինը, «եւ տուաւ նմա յօգնականութիւն», այնպէս էլ Երկրորդ Ադամի կողից, «յորմէ ել արիւն եւ ջուր», ստեղծուեց եկեղեցին, որի համար Պօղոսն ասում է, որ «այդ խորհուրդը մեծ է»: Եւ այսպէս, ամէն մի հաստատութիւն պէտք է ունենայ իր նպատակը, որին եւ նա պէտք է ծգտի: Այդ նպատակն իրագործելու համար նա պէտք է ունենայ նաեւ իր կազմակերպութիւնը, կանոնները, սկզբունքները եւ, որ ամենակարեւորն է, իշխանութիւնը:

Երբ Յիսուս տաճարը մաքրում էր առեւտուր անողներից, քահանայապետերն ու ժողովրդի ծերերը մօտեցան նրան եւ հարցրին. *«Ի՞նչ իշխանութեամբ ես այդ անում, ո՞վ տուեց քեզ այդ իշխանութիւնը»* (Մատթ., ԻԱ, 23): Վերջին ժամանակներում շատ տարածուած համերգային եւ մարզահրապարակային խոստովանութիւնները, ինչ խօսք, շատ կասկածելի են, քանի որ յայտնի չէ, թէ պաշտօնեան ի՞նչ իշխանութեամբ է թողնում մարդկանց մեղքերը, եւ կամ ո՞վ է տուել նրանց այդ իշխանութիւնը: Նրանք, իհարկէ, կսկսեն հիմնաւորել իրենց արածները տարբեր տեղերից բերուած համարներով, բայց միեւնոյն է, նրանք չունեն այդ իշխանութիւնը, քանի որ իշխանութիւնը չի հիմնաւորւում, այլ տրւում է: Հետեւաբար, մենք պէտք է լաւ իմանանք, թէ ինչ իշխանութեամբ է կատարւում մեր եկեղեցում որեւէ բան: Եւ եկեղեցին, որպէս

կանոնաւոր մի կազմակերպութիւն, ամենեւին էլ նման չէ աշխարհիկ շատ հիմնարկների եւ կազմակերպութիւնների, ուր ով ինչ ուզի՝ անում է: Ուրեմն, զղջման այս աղօթքի վերջին մասում, ապաշխարողը, իմանալով այդ իշխանութեան մասին եւ վստահելով այդ իշխանութեանը, համարձակօրէն խնդրում է պաշտօնեային, որ նա արձակում տայ իրեն: Զղջացողը վստահ է, որ Եկեղեցին ունի այդ իշխանութիւնը: Ս. Գիրքն էլ է վկայում այդ մասին: Յիսուս յարութիւնից յետոյ ասաց. *«Ինձ է տրուած ամէն իշխանութիւն երկնքում եւ երկրի վրայ. ինչպէս Հայրը ինձ ուղարկեց, ես էլ ձեզ եմ ուղարկում: Գնացէ՛ք ուրեմն աշակերտ դարձրէ՛ք բոլոր ազգերին, նրանց մկրտեցէ՛ք Հօր եւ Որդու եւ Սուրբ Հոգու անունով: Ուսուցանէք նրանց պահել այն բոլորը, ինչ որ ձեզ պատուիրեցի: Եւ ես ահա ձեզ հետ եմ բոլոր օրերում՝ մինչեւ աշխարհի վախճանը» (Մատթ., ԻԸ, 18-20): Այսինքն, Յիսուս իր ունեցած իշխա*նութեամբ ուղարկում է իր աշակերտներին ժողովրդի մէջ եւ նրանց իշխանութիւն տալիս եւ խոստանում մինչեւ աշխարհի վախճանը նրանց հետ լինել, այսինքն՝ իշխանութիւնը մինչ հիմա ուժ ունի: Եկեղեցին ժամանակաւոր չէ, այլ բոլոր ժամանակների համար է, ուրեմն եւ եկեղեցում եղած եւ հաստատուած իշխանութիւնն էլ ժամանակ չպէտք է ճանաչի: Հետեւաբար, առաքեալներին տրուած իշխանութիւնը պէտք է շարունակուէր նրանց յաջորդների վրայ էլ: Բոլոր եկեղեցիները, չնայած իրենց տարբերութիւններին, համամիտ են այն բանին, որ Առաքեալների իշխանութիւնը յաջորդաբար փոխանցուեց եպիսկոպոսներին, որոնք եւ կարգաւորում էին իրենց եկեղեցիների հոգեւոր կեանքը՝ ձեռնադրելով նոր պաշտօնեաների ու այդպէս շարունակաբար մինչ մեր օրերը: Հետեւաբար մեր եկեղեցում էլ, պաշտօնեաների իշխանութիւնը գալիս է անձամբ Յիսուսից եւ առաքեալներից: Իսկ զանազան եկեղեցիների յաւակնութիւնը՝ առաջին լինելու, չի հիմնաւորւում եւ ոչ մի բանով: Այսպէս, Հռոմի կաթոլիկ եկեղեցին իրեն է վերապահում *«Երկնքի բանալիները»*, ասելով, թէ Յիսուս Պետրոսին է տուել այդ իշխանութիւնը, որն էլ իր հերթին հիմնել է Հռոմի եկեղեցին: «Յիսուս հրամայեց, որ Պետրոսի դաւանութեան վրայ շինեն եկեղեցին. նա չասաց՝ Դու վէմ եղիր, այլ՝ Դու վէմ ես, այսինքն՝ դու ինքդ վէմ ես: Եւ ոչ միայն Պետրոսը, այլ նաեւ մնացած աշակերտները հիմք եւ վէմ են» (Ճահկեցի): *«Նրա հիմքերը սուրբ լեռների վրայ են»,* - ասում է Սաղմոսը (ՁՁ, 1): Իսկ

այստեղ օգտագործուած է ոչ թէ հիմք (եզակի), այլ՝ հիմքեր (հոգնակի), այսինքն՝ երկնքի բանալիները տրուած են ոչ միայն Պետրոսին, այլ նաեւ միւս առաքեալներին: Եւ ոչ միայն բանալիները, այլեւ՝ կապելն ու արձակելը: Մանաւանդ որ, ըստ Ս. Գրքի, ամէն ինչ հասարակաց էր (Մատթ., ԺԹ, 28, Ե, 13-14 եւ այլն), այսինքն՝ «յայտնի է, որ ամենքին շնորհուեց կապելու եւ արձակելու իշխանութիւնը», - եզրափակում է Ճահկեցին: Ահա այն հիմնական համարները, որոնք վկայում են առաքեալների հաւասար իշխանութիւն ունենալը.

Մատթ., ԺԸ, 17, Յովհ., ԺԴ, 16, Յովհ., Ի, 22, Մատթ., ԻԸ, 18, Մարկ., ԺՁ, 15, Ա Կորնթ., ԺԲ, 29, Եփես., Դ, 11:

Ոմանք այս հաւասարութիւնը խախտելու համար բերում են Յովհ., ԻԱ գլխի պատմութիւնը՝ ցոյց տալու համար Պետրոսի առաւելութիւնը միւս առաքեալների հանդէպ: Երբ Պետրոս երեք անգամ վկայեց, որ սիրում է Յիսուսին, Յիսուս առաջին անգամ ասաց. *«Արածեա՛ զգառինս իմ»,* երկրորդ եւ երրորդ անգամ՝ *«Արածեա՛ զոչխարս իմ»* (Յովհ., ԻԱ, 15-17): Այստեղից էլ հետեւեցնում են, որ Պետրոս իշխան է նշանակւում «գառների եւ ոչխարների» վրայ, որոնք եւ ներկայացնում են եկեղեցին եւ եկեղեցու սպասաւորներին: Իհարկէ, *«արածեա՛»* բայի տակ կարելի է դեռ հովուելու իմաստ հասկանալ, բայց «ոչխար» բառը հովիւ իմաստով վերցնել եւ այդպիսով Պետրոսին հովիւների տեսուչ կարգել երբեք չի աւանդուած ոչ Ս. Գրքով եւ ոչ էլ աւանդութեամբ (Օրմանեան): Մինչդեռ Յիսուսի երեք հրամանները եւ Պետրոսի երեք պատասխանները միանգամայն այլ մեկնութիւն ունեն: Պետրոսը իր երեք յայտնի ուրացութիւններով կորցրել էր Յիսուսից ընդունած շնորհները, մինչդեռ միւս առաքեալները ուղղակի փախել էին Յիսուսից՝ վախից դրդուած, այսինքն՝ աւելի բարւոք վիճակում էին, քան Պետրոսը: Եւ բնական է, որ այդ ուրացութիւնները պէտք է ներուէին բացայայտ խոստովանութեամբ, որով եւ յայտնի է դառնում Յիսուսի երեք հարցումների նպատակը: Աւետարանի պատմութեան ընթացքն էլ է այդ վկայում: *«Պետրոսը տրտմեց, երբ Յիսուս երեք անգամ ասաց, թէ՝ Սիրո՞ւմ ես ինձ, քանի որ յիշեց առաջին համարձակ խոստմունքը եւ ուրացութիւնները եւ այլեւս խրոխտաբար չէր ասում, թէ՝ "թէպէտ եւ ամենեքեան գայթակղին ի քէն, սակայն ես ոչ գայթակղեցայց"* (Մատթ., ԺՁ, 33), այլ խոնարհաբար ասում էր. *"Տէր, դու զամենայն գիտես եւ զամենայն ճանաչես, եւ եթէ սիրեմ զքեզ"* (Յովհ., ԻԱ, 17): Արդ, Յիսուս պարզապէս Պետրոսին է վերադարձնում արդէն ստա-

ցած իշխանութիւնը եւ խրատում, որ այլեւս միայն խօսքով չյայտնէ իր սէրը, այլ նաեւ արդեամբ եւ գործովք՝ տոկալով դժուարութեանց մէջ եւ հաւատարիմ լինելով կեանքի չափ՝ քրիստոնէութեան տարածման, գառներին եւ ոչխարներին արածացնելու առաքելական պաշտօնին» (Օրմանեան):

Եւ այսպէս, զղջացողը, հաւատալով եւ վստահելով պաշտօնեային, իմանալով Յիսուսից նրան տրուած իշխանութեան մասին, խոստովանելով իր մեղքերը, արձակում է խնդրում նրանից, որն էլ, օգտագործելով իր իշխանութիւնը, ասում է.

Ժ հատուած (արձակումն)

«Ողորմեսցի՛ քեզ մարդասէրն Աստուած, եւ թողութիւն շնորհեսցէ ամենայն յանցանաց քոց, խոստովանացելոցն եւ մոռացելոցն: Եւ ես կարգաւս քահանայական իշխանութեան եւ հրամանաւն աստուածային, թէ զոր արձակիցէք յերկրի՝ եղիցի արձակեալ յերկինս: Նովին բանիւն արձակեմ զքեզ յամենայն մասնակցութենէ մեղաց քոց. ի խորհրդոց՝ ի բանից եւ ի գործոց. յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ: Եւ դարձեալ տամ զքեզ ի խորհուրդս սուրբ եկեղեցւոյ, զի զոր ինչ գործիցես՝ եղիցի քեզ ի բարեգործութիւն եւ ի փառս հանդերձեալ կենացն: Ամէն», այսինքն՝ «Թող ողորմի քեզ մարդասէրն Աստուած եւ թողութիւն շնորհի քո բոլոր յանցանքներիդ, խոստովանածներիդ եւ նրանց, որ մոռացել ես խոստովանել: Եւ ես էլ, քահանայական կարգի իշխանութեամբ եւ Աստծու հրամանով, որ ասում է, թէ՝ *"Ում որ արձակէք երկրի վրայ, թող արձակուած լինի երկնքում"*, այդ նոյն խօսքերով արձակում եմ քեզ մեղքի ամէն տեսակ մասնակցութիւնից, որ կատարել ես խորհրդով, խօսքով եւ գործերով Հօր, Որդու եւ Ս. Հոգու անունով: Եւ դարձեալ քեզ եմ յանձնում Ս. եկեղեցու խորհուրդներին, որպէսզի ինչ բարիք որ գործես, լինի քեզ բարեգործութեան եւ հանդերձեալ կեանքի համար. Ամէն»: Այստեղ աւարտւում է Արձակումը, եւ խոստովանողը, մաքրուած իր մեղքերից, պատրաստ է նորից լծուելու Յիսուսի քաղցր լծին: Պաշտօնեան սրբուածին խորհուրդ է տալիս այլեւս չկեղտոտուել լայն երիքովեան ճանապարհներին, այլ յանձնուել Ս. Եկեղեցուն եւ նրա զօրաւոր խորհուրդներին: Այսուհետեւ խոստովանողը մեղաւոր արահետներով գնալու փոխարէն պարտաւոր է գնալ բարեգործութեան ճանապարհներով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Երկու խօսք 4

Ա. ԾԻՍԱԿԱՆ ԵՒ ԴԱՒԱՆԱԿԱՆ ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՒ ԱՅԼ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՄԻՋԵՒ

1. ՊԱՏԿԵՐԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ

Ի՞նչ է պատկերապաշտութիւնը 5
Բայց մի՞թէ եկեղեցում պատկեր դնելը ճիշտ է 7
Իսկ ինչո՞ւ են օծում պատկերները 7
Ինչո՞վ են հիմնաւորել օծման այդ կարգը 8

2. ԱՆԱՐԱՏ ՅՂՈՒԹԵԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

Ի՞նչ է «Անարատ յղութեան» վարդապետութիւնը 8
Հռոմի Եկեղեցին ինչպէ՞ս է հիմնաւորում
«Անարատ յղութեան» վարդապետութիւնը 9

3. ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ԲԽՄԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

Ի՞նչ է «Ս. Հոգու Բխման» վարդապետութիւնը 11
Ինչպէ՞ս են հիմնաւորել «Բխման»
վարդապետութիւնը կաթոլիկ հայրերը 14

4. ՍՐԲԵՐԻ ԲԱՐԵԽՕՍՈՒԹԻՒՆԸ

Ի՞նչ է սրբերի բարեխօսութիւնը 16
Մի՞թէ բացի Յիսուսից ընդունելի է
այլոց միջնորդութիւնը 20
Ի՞նչով է հիմնաւորւում սրբերի բարեխօսութիւնը 21
Ինչ վկայութիւններ կան Ս. Գրքից, որ հաստատում են
«Բարեխօսութեան» ճշմարտացիութիւնը 23

5. ՀԱՆԴԵՐՁԵԱԼ ԿԵԱՆՔ

Ի՞նչ է հանդերձեալ կեանքը 26

Որտե՞ղ է անցնում մարդու միջին կեանքը 29
Ի՞նչ է Վերջին կեանքը 31
Ինչպէ՞ս են կատարում յուղարկաւորութիւնը հայոց մէջ:
Մի՞թէ վերջին ժամանակներում լայն տարածում
գտած արարողութիւնները ունեն որեւէ հիմնաւորում 31
Մի՞թէ ճիշտ են վարւում նրանք, ովքեր կերակուր
են տանում գերեզման եւ այնտեղ օղի խմում 35
Ի՞նչու են գնում գերեզման եօթներորդ
եւ քառասուներորդ օրը 35
Ի՞նչ խորհուրդ ունի տապանաքարը 36

Բ. ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

1. ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ի՞նչ է խորհուրդը 36
Ինչպէ՞ս են հիմնաւորում խորհուրդները Ս. Գրքով 40
Ինչպէ՞ս են կատարում խորհուրդները 40
Մի՞թէ պաշտօնեայի անձը կարեւոր է Խորհրդի
կատարման համար 41
Ի՞նչ արժէք է ներկայացնում Ս. Խորհրդի
արտաքին նշանը՝ նիւթը 44
Անհաժեշտ է՞ արդեօք ուրիշ անձանց ներկայութիւնը
խորհրդի կատարման ժամանակ 44

2. ՄԿՐՏՈՒԹԻՒՆ

Ի՞նչ է մկրտութիւնը 46
Ի՞նչ է սկզբնական մեղքը 48
Ինչո՞ւ է Հայ եկեղեցին մկրտում անչափահասներին 51
Ինչպէ՞ս է հիմնաւորում մանկամկրտութիւնը եկեղեցին 52
Արդեօք անհրաժե՞շտ է մկրտութիւնը՞ռ
Իսկ ինչո՞ւ մկրտուեց Յիսուս, չէ՞ որ նա զերծ էր
սկզբնական մեղքիցռ
Արդեօք անհրաժե՞շտ է մկրտութիւնը 53
Իսկ ինչո՞ւ մկրտուեց Յիսուս, չէ՞ որ նա զերծ էր
սկզբնական մեղքից 54
Ինչո՞վ է տարբերւում Յովհաննէսի մկրտութիւնը
Յիսուսի մկրտութիւնից 55
Ինչպէ՞ս է կատարւում մկրտութեան խորհուրդը 55
Ինչո՞ւ է մկրտութեան կարգը սկսւում
«Օրհնեալ Հոգիդ Սուրբ Աստուած ճշմարիտ»
սրբասացութեամբ, որն ուղղուած է Ս. Հոգուն
եւ ոչ թէ Հօրը կամ Որդուն 58
Ինչո՞ւ են կարգը սկսում եկեղեցու դռան մօտից 58
Ինչո՞ւ է հինգ սաղմոս ընթերցւում 58
Ի՞նչ խորհուրդ ունի նարօտը 58
Ի՞նչ են նշանակում քահանայի երեք աղօթքները 59
Ինչո՞ւ են «Հրաժարիմքը» ասում՝ նայելով
արեւմուտք, իսկ դաւանութեան խոստովանութիւնը՝
դէպի արեւելք 59
Ի՞նչ խորհուրդ ունի դռների բացուելն ու
եկեղեցի մտնելը 59
Ինչո՞ւ են օրհնում ջուրը 59
Ինչո՞ւ են երեք անգամ ընկղմում ջրի մէջ 60

3. ԴՐՈՇՄ

Ի՞նչ է Դրոշմը: 60
Ինչպէ՞ս է կատարւում Դրոշմի խորհուրդը 63
Ինչո՞ւ են Դրոշմից անմիջապէս յետոյ
հաղորդութիւն տալիս 64
Ի՞նչ է նշանակում «Միւռոնից հանելը» 64
Երեխաներն ու Ս. Հոգու պարգեւած
շնորհների զօրութիւնը 65

4. ԱՊԱՇԽԱՐՈՒԹԻՒՆ

Ի՞նչ է Ապաշխարութիւնը 65
Ի՞նչ է ապաշխարութեան նպատակը 71
Ինչպէ՞ս է կատարւում ապաշխարութեան
խորհուրդը Հայ եկեղեցում 74
Ի՞նչ են նշանակում այն եօթ սաղմոսները,
որոնք ընթերցւում են ապաշխարութեան
խորհրդի սկզբում 75
Ինչո՞ւ են խոստովանում քահանայի առաջ,
մի՞թէ չի կարելի խոստովանել առանց քահանայի 77
Ինչո՞ւ են խորհրդի կատարման ժամանակ
«Հրաժարիմքը» երեք անգամ կրկնում 78
Արդեօ՞ք բոլոր զղջացողների ու ապաշխարողների
մեղքերը ներւում են: Չէ՞ որ Յուդան էլ զղջաց,
բայց չներուեց 80
Ի՞նչ է «Մեղայ Ամենասուրբ Երրորդութեանն» աղօթքի
նշանակութիւնը, որ կարդում է քահանան
ընդհանրական խոստովանութեան ժամանակ 82

5. ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ

Ի՞նչ է Հաղորդութիւնը 84
Ովքե՞ր կարող են մասնակցել
Հաղորդութեան խորհրդին
Ճի՞շտ է արդեօք երեխաներին հաղորդութիւն տալը 87
Ի՞նչ տարբերութիւններ կան եկեղեցիներում 87
Հաղորդութեան խորհրդի վերաբերեալ
Քանի՞ անգամ պէտք է հաղորդուել 89
Ե՞րբ եւ որտե՞ղ են կատարում
Հաղորդութեան խորհուրդը 89
Մի՞թէ Հաղորդութիւն ընդունելը անհրաժեշտ է 90

Ճի՞շտ է, արդեօք, ննջեցեալների համար
հոգեհանգստի կարգ կատարելը 90

ՅԱՒԵԼՈՒԱԾ

«Մեղայ Ամենասուրբ Երրորդութեանն»աղօթքի մեկնութիւն

Ա հատուած 92
Բ հատուած 96
Գ հատուած 101
Դ հատուած 105
Ե հատուած 110
Զ հատուած 115
Է հատուած 119
Ը հատուած 124
Թ հատուած 128
Ժ հատուած (արձակումն) 132
Բովանդակութիւն 134

ՏԷՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՔ

Հայր մեր՝ որ յերկինս ես.
Սո՛ւրբ եղիցի անուն քո:
Եկեսցէ արքայութիւն քո.
Եղիցին կամք քո
Որպէս յերկինս եւ յերկրի:
Զհաց մեր հանապազորդ
Տո՛ւր մեզ այսօր:
Եւ թո՛ղ մեզ զպարտիս մեր,
Որպէս եւ մեք թողումք
Մերոց պարտապանաց:
Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն.
Այլ փրկեա՛ զմեզ ի չարէն:
Զի քո է արքայութիւն
Եւ զօրութիւն
Եւ փառք յաւիտեանս.
Ամէն:

Եկեղեցին Հայկական ծննդավայրն է հոգւոյս.
Եկեղեցին Հայկական բարձր բերդն է հաւատքին
Եկեղեցին Հայկական Հայ Հոգիին եւ Մարմնոյն
Զրահանդերձն է փայլուն՝ մինչ իր խաչերն են դաշոյն
Եւ զանգակներն են բոմբիւն, եւ երգն է մի՞շտ
Յաղթութիւն...

Վ. ԹԷՔԷԵԱՆ